Տոմսակը ձեռքս վեր կ'ելլամ սանդուխներէն... փառաբանելով հօրեղբայրս, որ պատճառ պիտի ըլլար, առանց անդիի աշխարհը ճամբորդելու, գաղտփար մը կազմել... արքայութեան աննման հեշտութիւններուն վրայ :

Entrez... S. V. P. կ'ըսէ շիք պարոն մը, որ ձեռքիս տոմսակը քննութեան բովէ մը անցուցած էր և ճիշդ անոր գէմը գտնուող գրարաբագէտ-գրագէտ մը, ձայնին մէջ տեսակ մը շեշտ դնելով.

«Մտէ՛ք ընդ դրունս սա, զի այս դուռն Տեառն է և արդարք միայն մտաննն ընդ սա... հանդերձ մէկ ուկինոց տոմսակաւ »:

Դպրոցին մէջ բաւական գլուխս ճաթեցուցած էի, այս նախադասութեան աշխարհաբարը գտնալու համար, բայց... ցաւ է ըսել թէ չէի գտած ու հիմա մէջը գտնուող տոմսակ բառէն վայրկենական լուծեցի այդ նախադասութիւնը... ներս մտնելով :

Վրձինս այնչափ լաւ չէ, նկարելու եւ նկարագրելու համար պարահանդէսին շլացուցիչ երեւոյթը, կիներուն չնորհալիութիւնն ու գեղեցկութիւնը, նայուածքներու խօսունութիւնը և խօսքերուն էն տէգօլթէները... զօնիքիրիներուն կարմիր ու կանանչ իրարու նետուիլը, զորն ասեմ կամ զորն խոստովանիմ... զի անթիւ են մարդուս խելքը գլխէն թոցընելու պատճառները :

Ելեքտրական վառ ցոլքերու տակ, ու աղւոր կիներու սեղմ շրջանակի մը մէջ գտնուէ և ելիր քարոզէ թէ արքայութիւնը հոն է ուր... մեծ պահքին ծոմբոնողները... Խաչին Արմաշ գացողները, Աշխարհաբար Նարեկ (որ թարգմանեց Քասիմ եւ ընթերցողներուն նուիրեց Մանզուլի) կարդացողները միայն կը բնակին :

Հակառակ ասոնցմէ եւ ոչ մէկը գործադրելուս, հաւատացէք որ մի միայն... տոմսակով մըն ալ այդ բանը ձեռք բերի :

Բերայի Հայ-Լայքը իր ներկայութիւնովը, եկած էր ալ աւելի փայլ մը տալ պարահանդէսին, որ արդարե հիանալի էր: Բայց չէք գիտեր ի՞նչ աղւոր, ի՞նչ անուշ էակներ կային հոն, հում հում ուտուելիք, կըրծուելիք մարմիններ, սնդուսէ մորթ, գեղեցիկ, ու կլոր պարարտութիւններ պէտք եղած տեղերը :

Մէկ հատ մը կար, մէկ հատ մը, ա՛խ, տեսնելու արժանիկուր մը: Գինովցնող, մեռցնող զոյգ մը աչքեր, համբոյրի հրաւիրող բերան մը, նուրբ, ճերմակ ձեռաքեր, ազնուականի ոտքեր, վերջապէս ան ամէն accessoiresները, որոնցմով աղւոր ըսուելու արժանի կ'ըլլայ կին մը: Եւ երեւակայեցէք ճիշդ այդ նկարագրած հուրիիս քով, Պատրիարքարանի պաշտօնեայ մը, որուն հետ արդէն սանկ ծանօթութիւն մ'ունէի: Բայց որո՞ւ խելքէն մտքէն կ'անցնէր թէ ... այդ բարեկամս, տէր եւ տնօրէնն է եղեր այդ տեսակ կնկան մը, կամուրկէ՞ուր այդ իրիկունը ձեռք ձգեր է:

Բայց այդ բարեկամս ալ նկարագրելիք թիվ մընէր, Musée de grévinի մէջ ցուցադրելիք թիվ մը, ոչ աւելի եւ ոչ պակաս: Ունայնամիտ՝ ինչպէս ոչ ոք և ինքնահաւան՝ վերջէն հարստացած մարդու մը պէս:

Երեւակայեցէք կարմիր թուշեր, սանկ թիվ մը վար կախուած, ոնգունքներ՝ որոնց մէջէն . . . ես սա՛ հասակովս անվտանգ կրնայի անցնիլ, աչքեր մը՝ որոնք . . . հիւանդանոցին մէջ շատ տիսած եմ եւ ասոնց վրայ աւելցուցէք՝ խոշրկէլ ոտքեր ու ձեռքեր, որոնք ամէն մեղքիս վրայ ձեռնոց ալ կը կրէին եւ պիտի ունենաք inventouրը անոր գլխուն:

Հայերէնս կարճ եւ տգեկութիւններ որակող ածականներուս պաշարը համեստ ըլլալուն, ակամայ կը հրաժարիմ նկարագրելէ, անոր կաղմուածքին միւս մոսերն ալ:

Սրահին ոգեւորութիւնը տակաւ իր վերջին գագաթնակէտին կը հասնէր եւ սիրաբանութիւնները միւր սահմաններէն անցնելով՝ կամաց կամաց լուրջ հանգամանք մը կ'առնէին և երկիւղալի էր որ ուրիշ բաններ ալ տեղի ունենային, եթէ Աստուած մի՛ առասցէ, այդ պարահանդէսը, որ մէկ գիշերուան հա-

մար սարբուած էր, երկու—երեք գիշեր շարունակուէր անընդհատ:

Ինչե՞ր, ինչե՞ր չպիտի ըլլային հետեւեալ օրը, ամուսնալուծումներ, էրիկ կնկան կոփիներ եւ գէշը հոն է որ . . . այս տարուան սեխերուն չափ պիտի աժաննային Commanditaireներն ու ամուսնալուծում պահանջողները:

Դադարի նշանը տրուեցաւ, տասը վայրկեանի համար, ու յոգնած, թուլցած զոյգեր, հետ ի հետ՝ պիւֆն կը յաւաշանային. յանկարծ, վերը յիշած բարեկամս ու իր ընկերուհին որ պարահանդէս մտած ատենս մէկ հեղ աեսնելէ վերջ կորսնցուցած էի և, հակառակ շատ մը վինտատուքներուս չէի գտած, եկան ճիշդ քովս նստան: Բախտը ոտքովը եկած էր և զայն փախցնելը անմտութիւն պիտի ըլլար:

Եւ դառնալով բարեկամիս, նախ սկսայ անոր հետ խօսիլ անկարեւոր նիւթերու վրայ, որոնք երբեք առնչութիւն չունէին պարահանդէսին հետ, բայց իմ միտքս տարբեր էր մէկ քարով երկու թռչուն զարնել կ'ուզէի, ի՞նչ մեղքս պահեմ:

Կամաց կամաց գեղանի ընկերուհիին հետ խօսիլ սկսած էի, որ բաւական զարգացած կին, ամէն խօսքիս պատասխան կուտար եւ ամէն բանի տակէն կ'ելլէր: Անդին բարեկամս, ուրիշի մը հետ խօսակցութեան մտած էր, եւ ես շատ տաք միւր սկըսած էի, սա ընկերուհիս հետ, որուն սրուքներուն կը դպչէին իմիններս առանց ուզելու, առանց գէշ մոքի, քանի որ . . . սրահը այնքան նեղ էր եւ բազմութիւնը այնքան շատ:

Աշխարհը իր լայն առումովը հասկցած, ուսումնասիրած ու ապրած կին մըն էր ան և ես գիտնալով ասիկա, ուզեցի սա՛նկ փորձ մը ընել ու խօսքս ուղղելով իրեն.

— Կընա՞ք արդեօք, ըսի, ձեր թեւը շնորհ ընել
ինձի յաջորդ վայսին:

— Ա՛, ամենայն սիրով, ինչո՞ւ չէ' «Սիրեցէք ձեր նմանները եւ օգնեցէ՛ք անոնց, ձեր ձեռքէն եկածին չափ» կ'ըսէ Աւետարանը: Եւ ես պատճառ մը չունի՛ հակառակը կատարելու, բայց միայն ձեռքէս եկածը, կը հասկնա՞ք, քանի որ la plus jolie fille du monde ne peut donner que ce qu'elle a: 97^o,

— Ա՛ . . . հարկաւ, տիկին —առանց գիտնալու թէ տիկին է, թէ օրիորդ —հարկաւ, ատիկա տիեզերական կանոն է, ինչպէս պիտի ըսէր Քրիզանթէմ, մարդ մի միայն ունեցածը կուտայ. ուստի եթէ անպատե-հութիւն մը չկայ, ձեր ընկերոջը խօսիմ այս մասին եւ չեմ յուսար որ այս եղանկառ թէնէն ոսկէ հնձէ.

Ու դառնալով բարեկասիս, որ ձեռքի ու առքի շարժումներով գրական բանավէճի մը վրայ կը քարոզէր.

— Ներողութիւն, սիրելի՛ բարեկամ, ըսի, կը ներէ՞ք արդեօք որ ձեր գեղանի ընկերուհին հետ վալս մը դառնալու երջանկութիւնը ունենամ:

Բարեկամս, իրմէ չսպասուելիք զայրոյթով մը ոտքի ելաւ եւ շանթահարող նայուածքով մը ինձի դառնալով՝

— Բայց մասնաւունք պարունակությունը

Ի՞նչ յուսախաբութիւն եւ ի՞նչ անկում։
Այդ ինը տարի առաջուան պարահանդէսին մէջ
գլխուս եկած ձիւնը ի՞նչ տարօրինակ էր։ Խաչ վլայ,
Հիմակուան ամուսինները շատ բռնուելիք տեղեր ունին
հիներուն քով, այս տեսակ պատիկ բաներու երբեք
կարևորութիւն չեն տար, ակսեալ յամի Տեառն 18.ի,
երբ ստեղծուեցաւ ամուսնալուծութիւնը . . . յոքինչէն։

ԲԱՆԱԳՈՂ ԼՈՌԻՑԻՒՆԵԱՆ

o r s u u c h o u r k c

Ամէն բան նոր եղած ատենը աղւոր կ'երեւնայ :
Պէտք եղած ատենը օգնութիւնը ընողը , կրկնապատիկ ըրած կ'ըլլայ :

Արհեստին չկրցածը՝ դիպուածը կ'ընէ :
Ամէն տեղ բարեկամ ունենալը աղէկ բան է :
Ամէն մարդ աղւորը իր վրայ կը բաղդատէ :
Ամէնէն հարուստները ամէնէն ծակաչք կ'ըլլան :
Հաճելի խրատները շատ քիչ անգամ օգտակար
կ'ըլլան :

Շատին աչք տնկողը բան մը չունենար :
Եթէ մէկուն ծառայութիւն մը ընելու ըլլաս ,
մտածէ որ կեանքը շատ կարծ է և ընելիքդ որքան
չուտ կատարես՝ այնքան լաւ է :

Ամէնուն ալ բարեկամ եղաղը, բոլորին ալ թշ-նամի կ'ըլլայ :

Զարախոս մարդը չկընալով մինչեւ պատռւաւոր մարդուն բարձրանալ, անոր վրայ անուանարկութիւններ կ'ընէ՝ զայն մինչեւ իրեն իջեցնելու մտքով :

Անձնագովութեան ախտէն աւելի շատ կի՞ն կը
մեռնի քան թէ սիրոյ պատճառաւ :

Աստուծոյ համար աւելի հաճելի են ողորմածութիւնն ու արդարութիւնը՝ քան զոհ և պատարագ մատուցանելը :

Ծառան մէկ տէր մը միայն ունի . փառամոլը այնքան տէրեր՝ որքան որ մարդ կայ իր բարձրանալուն ականատես :

Բարիք ընել ուզողին արգելք մի ըլլաք, և եթէ
ձեր ձեռքէն կուգայ բարիք գործել՝ դուք ալ ըրէք:

Ամէն դիրք արժանի է ներումի երբ զայն կրողը
միայն կը տառապի :

Պարզութեան մէջ ապրող արդարին զաւակները
երջանիկ կ'ըլլան :

Եթէ ձիերը չըլլային էշերուն երիվար պիտի ըսէին:
Ճերմակ հաւկիթէն շատ անգամ սեւ վառեակ մը
կ'ելլէ :

Կեանքը գործունէութիւն մը ունենալու է : Մնա-
յուն ջուրը կը նեխի : Պարապ անցուած կեանք մը
կանխահաս մահ է :

Կոյրերը հայելիի պէտք չունին :

Մոլութեան մը հետեւանքերէն վախնալը առա-
քինութեան մը տեղ կը բռնէ :

Իրեն եղած օգնութեան յարգը գիտցողը միայն
արժանի է անոր :

Ամէն մարդու ձեռք է ուղղել իր կեանքը :

Աւոտուն կանուխ ծախողը՝ իրիկուան կը պարէ :

Երբ մարդուսխիղճը իր պարտականութիւնը կը
յիշեցնէ իրեն, ամէնէն մեծ նուաստութիւնը ու պելու
է ի՞նչ ընելիքին մասին ուրիշին խորհուրդ հաւցնելը:

Խող մարդը միշտ պարտք կ'ունենայ :

Գոեհիկ փառասէրները սպասելու գերագոյն ար-
հեսաը չեն գիտեր :

Երիտասարդութեանդ մէջ չաւաքած հարսառւ-
թիւնդ՝ ճերութեանդ մէջ ի՞նչպէս ձեռք պիտի անցնես :

Աստուած չուզեր որ մէկը կորսուի, հապա ա-
մէնքն ալ զղջան :

Դաստիարակութիւնը արհեստ մըն է, որու մէջ
գիտնալու է ժամանակը օգտակար կերպով անցնել
սորվելու համար ժամանակ կորսնցնել :

Երբ պէտք չունեցած առարկադ գնես՝ վերջը
քեզի անհրաժեշտ եղածն ալ ծախելու կ'ստիպուիս :

Ապերախտի մը կօշիկները ներկեցէք, պիտի ըսէ
որ զանոնք այլրել կ'ուզէք :

Տղաքները ոչ անցեալ ունին ոչ ապագայ, և ինչ
որ մարդուն բնաւ չպատահիր, կը վայելին ներկան :

Ծոյլ հովիւը գայլին բարեկամ կ'ըլլայ :

Յաճախ տեղէն հանուած ծառը պտուղ չտար :

Առանց յանցանքի տղաքը պատժելով՝ անոնց
վատահութիւնը կը կորսնցնէք :

Շատ մարդեր իրենց կեանքի առաջին մասին մէջ
կը պատրաստուին կեանքերնուն երկրորդ մասը թըշ-
ուառութեամբ անցնել :

Խօսած միջոցին շրջահայեաց չեղող մէկը չտու
գժուարութիւններու պիտի հանդիպի :

Ամէն մարդ կ'ուզէ աղէկ երեւալ, բայց ոչ ոք
կ'աշխատի աղէկ ըլլալ :

Ամէն պարագայի մէջ անանկ ուղղամտութիւնով
մը վարուեցէք որ այլեւս ձեր մէկ խօսքին վրայ ա-
մէն մարդ հաւատայ :

Քանի լեզու որ խօսիս այնքան մարդ կ'արժես :

Անգործութիւնն է որ կ'ստորնացնէ մարդս և ոչ
թէ մարդը :

Կայ բան մը որու տեղը ուրիշ բան չկրնար բռնել
եւ որ սակայն ամէն բանի տեղ կը բռնէ . այդ է ե-
րիտասարդութիւնը :

Լաւ է բարեկամները ընտրել ճաշակի ու յարմա-
րութեան տեսակէտով, տաժանելի է զանոնք սիրա-
շահիլ շահու ակնկալութեամբ :

Աղքատին ողորմողը՝ Աստուծոյ վաշխով փոխ տը-
ուած կ'ըլլայ :



ԹՐԼՍԹՆԵՐԸ

Նոր բառ մը աւելցաւ աշխարհիս բոլոր լեզուներու բառարանին մէջ : Այդ բառը՝ որ միեւնոյնն է ի՞նչ ցեղ որ ալ ըլլայ զայն արտասանողը՝ թրլսրն է : Պահ մը մտովի Ամերիկայի մէջ կարծենք . ինքզինքնիս , Բիէրբօն Մօրկաններու , Քարնէկիներու , Ռոքֆէլլերներու երկիրը : Իրաւ որ մեծ մարդեր են ասոնք . Ռոքֆէլլեր 25 հազար գործաւորի կը հրամայէ , 200 շոգենաւ ունի եւ 70000 վակոնի տէր է . ցերեկի և գիշերուան բոլոր ժամերուն իր մարդիկը կ'աշխատին շոգենաւներու կամ կառախումբերու վրայ՝ աշխարհիս բոլոր մասերուն մէջ . այս մարդուն իշխան անունը կուտան , Բերովի իշխան կ'ըսեն իրեն : Բայց Նիւ Եռքի մէջ մէկ հատիկ չէ այս մարդը : Քարնէկին կայ , Պողպատի իշխանը , որ ամիսը 8 միլիոն ամսական կը վճարէ իր 25,000 գործաւորներուն : Հաւեմէ յըր կայ , Նախարի իշխանը որ 30 հազար հոգի կը բանեցնէ : Քլարքը կայ , Պղինձի իշխանը , Ֆարվէլ Երկարութեան իշխանը , վերջապէս Մորկան՝ Ծովի իշխանը :

Եւ երբ կը հարցնենք թէ ի՞նչպէս այս մարդիկը կարող եղեր են ասանկ հարստութիւններու տիրանալու որոնց քով՝ Եւրոպական ամէնէն մեծ դրամատէրին ունեցածը ոչինչ կ'երեւայ , սա պատասխանը կ'ընդունինք , մէկ խօսք մը միայն որ կը բաւէ բացարել թէ ի՞նչպէս այսինչը միլիառներու տէր եղած է մինչդեռ անոր դրացին աւուր հացի կարօտ կը մնայ , և այդ պատասխանն է թրլսր :

Իրաւ ալ Ամերիկայի մէջ ամէն կողմ թրլսթները

կը բուսնին . քանի մը տարի առաջ 353 թրլսթներ կային 29 միլիառ դրամագլուխով , այսօր ատոնք ալ իրենց մէջ լուծուելով՝ թիւը 183ի իջաւ , որոնք կը բովանդակեն 2029 ճարտարարուեստական ընկերակցութիւններ : 1902ին միսի թրլսթը 500 միլիոնի շահ մը ըրաւ : Վերջերս Պրն . Մօրկան հարբուխէ բռնուելով . լուր տարածուեցաւ թէ ծանր հիւանդէ և անմիջապէս ամերիկան թուղթերը ինկան մէկ միլիառ 40 միլիոնի վնաս մը պատճառելով :

Ի՞նչ է ուրեմն թրլսթը . որ այնքան բացառիկ աղդեցութիւն մը ունի ճարտարարուեստի ու սեղանաւորական աշխարհի վրայ , վնասարե՞ր է թէ ոչ օգտակար .

X

Ենթադրեցէք որ 4 — 5000 հոգինոց պկտիկ քաղաքի մը մէջ 10 հատ կարկանդակավաճառ կան : Այս տասը խանութպանները իրենց յաճախորդները ունին որոնք որոշեալ գումարէ մը աւելի չեն ծախսեր կարկանդակ գնելու համար : Դիւրին է հասկնալ թէ այդ ծախսուած գումարը գրեթէ նոյնը մնալով՝ ամբողջ գիւղին համու՞ կարկանդակավաճառներու թիւը քանի շատնայ՝ այնքան ալ անոնց իւրաքանչիւրին ծախսած կարկանդակին թիւը կը քիչնայ , հետեւարար ըրած շահերնին ալ նոյն համեմատութեամբ կը նըւազի : Ամէն մէկ կարկանդակ շինող զատ խանութի վարձք կը վճարէ , խանութ կը շակէ , աշկերտ կը բռնէ , տուրք կը վճարէ : Տասը կարկանդակավաճառի համար կ'ընէ 10 խանութի վարձք , 10 խանութի կարասի , 10 աշակերտ , եւայլն . Բոլոր այս վատնըուած դրամին լնդիմանուր ծախս կ'ըսեն : Եթէ գիւղին մէջ մէկ կարկանդակավաճառ մը միայն գտնուէր , ի-

ըեն ըլլած ընդհանուր ծախքը 10 անգամ աւելի քիչ պիտի ըլլար և 10 խանութներուն ալ յաճախորդներն ամբողջ իրեն պիտի գային, Անշուշտ այս տասնեակ խանութպաններն իրարու հետ մրցելու համար գիները պիտի զեղչեն, մէկուն քառասուն փարայի ծախածը միւսը քանի պիտի տայ, երբորդ մը 10 փարայի պիտի իջեցնէ, ուրիշ մը երեք հատը քսան փարայի պիտի տայ, և որպէսզի կարենայ շահ մը ընել այդ զեղչուած գինէն՝ իւղին տեսակը պիտի գէցնէ, գրուած ալիւրէն քիչ մը պիտի գողնայ, վար տեսակ նիւթեր պիտի խառնէ հետը, և իրը վերջաբան . . . կարկանդակները չպիտի ծախուին, որովհետեւ թէ անհամ են և թէ քաղաքին սպառումին անհրաժեշտ եղած քանակին քանի մը պատիկը աւելի կը պատրաստուին, կարկանդակավաճառները խանութին վարձքը վճարելու անկարող պիտի ըլլան, ապրուստնին չպիտի կրնան հանել ու պարտքի տակ պիտի իյնան, Ա'րդ, այս չարիքին առաջքը առնելու համար ի՞նչ կ'ընեն, Օրին մէկը 10 խանութպանները իրար կը ժողուրուին, փոխանակ զիրար կործանելու կ'որոշեն ընկերակցիլ իրարու հետ, Եօթը խանութը կը գոցեն՝ այսինքն 7 շաբթականով տղայ կը ճամբեն, 7 խանութի վարձքէ կ'աղատին և մինակ երեք խանութները կը պահեն՝ որոնք այլ եւս մրցումէ չեն վախնար, Խանութնին գոցողները ունեցած ապրանքնին երեք բաց մնացած խանութներուն մէջ կը դնեն և ի փոխարէն կ'ստանան արժէթուղթեր՝ զորս երեք խանութի տէրերուն կազմած առեւտրական ընկերակցութիւնը հրապարակ կը հանէ, Այսպէսով ընդհանուր ծախքը անհամեմատ կերպով կը քիչնայ, երկրորդ՝ փոխանակ շատ մը կարկանդակներ պատրաստելու որոնք առանց

ծախուելու պիտի հոտէին, սպառումին համեմատ կ'իջեցնեն անոնց քանակութիւնը, այսպէսով գիները չեն կոտրիր, Վերջապէս՝ եթէ ալիւրը շաղուելու կամ հաւկիթո զարնելու կատարելագործեալ մեքենայ մը կայ, խանութպաններու ընկերակցութիւնը կրնայ զայն բերել տալ, մինչդեռ առաջ եւ ոչ մին պիտի համարձակէր այդպիտի ծախքի մը տակ մտնելու, ինկատ առնելով իր գործերուն սահմանափակութիւնը; Կարկանդակավաճառներու այս նոր ընկերակցութիւնը երկու երեք անգամ աւելի քիչ ծախք կ'ընէ՝ քան առաջուան տասը խանութպանները եւ սակայն անոնց ամրողին ըրած շահը, և գուցէ ա'լ աւելին կ'ընէ իր նոր գործառնութիւններովը՝ քանի որ յաճախորդներու թիւը անփոփոխ է: Ահա շահ մը այն գործին մէջէն ուր սահմանափակութիւն միայն կը տեսնուէր, կարկանդակավաճառներու թրըսթն է այս: Ինչ որ ըսինք պղտիկ սահմանի մը վրայ, միեւնոյն սկզբունքով է որ կը կազմուին ամերիկեան արդի ճարտարարուեստական ընկերակցութիւնները: Մրցակիցներու կողմէ մեծ քանակութեամբ ու աժան գինով հրապարակ հանոււած ու չծախուելու աստիճանի հասած ապրանքի մը արժէքը բարձրացնելու համար է որ թրըսթները կազմուած են: 1873էն 1877, առեւտրական ու ճարտարարուեստի տագնապներ անպակաս էին Միացեալ Նահանգաց մէջ այդ թուականներուն: Տեղական ճարտարարուեստը զարգացնելու համար Մօրրիլ, Մաքինլի, Տինկլէյ, օրէնքներ քուէարկել տուին, որով երոպական արտադրութիւնները չէին կրնար Մ. Նահանգաց հրապարակներուն վրայ մրցակցի գիրքը բանել: Եթէ եւրոպական ո' եւ է երկիր ըլլար այս տեսակ օրէնք մը քուէարկողը՝ ներքին ճարտարարուեստի ու վա-

ճառականութեան եռանդը գուցէ պաղէր, բայց Ա-
մերիկայի պէս երիտասարդու ու գործունեայ երկրի մը
մէջ տեղական արտադրութիւնը քաջալերութիւն
գտաւ ու արագօրէն զարգացաւ, Դրամ ունեցողները
արհեստաորներուն փոխ տուին, ասոնք ալ գործիք-
նին կատարելագործեցին. և Մաքինլիի բարձրացու-
ցած պաշտպան պատնէշին առկ ամերիկեան ճար-
տարաբուեստը հսկայացաւ: Զգալով որ ինք ալ կրնայ
մրցիլ Հին Աշխարհի հետ, իր արտադրութիւններովը
ողողեց Եւրոպան: Բայց ճիշտ այդ միջոցին Եւրոպան
ալ իր գուռները գոցեց ամերիկեան արտադրու-
թիւններու դէմ, որով Մ. Նահանգները ստիպուե-
ցան իրենց մէջ ծախել իրենց արտադրածը. յաճա-
խորդները քիչցան և գիները սոսկալի կերպով ինկան-
ապրանքները սկսան չծախուիլ:

Յիշեցնենք թէ երբ ո' և է արտադրութիւն չի
ծախուիր՝ դրամատէրը ձեռք կը քաշէ գործէն եւ
գործաւորն ալ տունը կը մնայ առանց գործի ու հացի:

Գործարանատէրները իրարու հետ համաձայնե-
ցան. փիրանակ իրարու հետ մըցելով զիրար կոր-
ծանելու, ճարտարարուեստի ընկերակցութիւն մը
կազմակերպեցին՝ հիմոււած փախադարձ վատահութեան
վրայ: Քիչ գործ ընողները գործարաննին գոցեցին
և նոր ընկերակցութեան շահակից եղան, իսկ մեծ
դրամագլուխի տէր եղողները ամբողջ գործին ուղ-
ղութիւնը իրենց ձեռքն առին ու այսպէսով կարելի
եղաւ պատրաստուած ապրանքին քանակութիւնը
հաւասար բռնել անոր ունեցած սպառումին հետ: Ա-
սանկով այդ արտադրութեան յարգը կը բարձրանայ
հրապարակին վրայ:

Մինչեւ հոս աղէկ. բայց անգամ մը որ մէկ կամ
երկու դրամատէրեր իրենց ձեռքին մէջ կեղրոնա-

ցնեն ո' և է նիւթի մը առուտուրը՝ ալ անկէ վերջը
կրնան շահագործէլ զայն ուղածնուն պէս գիները
բարձրացնելով: Եւ կազմուած թրամթներուն մեծա-
գոյն մասը այս նպատակին համար է միայն:

Հիմա կարող եղանք բացատրել թէ ի՞նչ է բրլսրը:
Տեսակ մը շահագիտութիւն է որ մեծ աստիճանի
վրայ կը կատարուի:

Առաջները՝ դրամատէրները ամբողջ նահանգի մը
ցորենը կը գնեն եւ յետոյ գինը կը սղցնեն եղեր.
հիմա այդպիսի բան մը անկարելի է, քանի որ ամե-
նակարծ միջոցի մէջ երկաթուղիներն ու չոգենաւներն
ահագին քանակութեամբ պէտք եղած ապրանքէն կը
փոխադրեն հոն: Ասոր համար է որ հիմակուան շա-
հագիտութիւնները (այսինքն բրլսրը) կը կայանան
նոյն իսկ ապրանքը արտադրող կեղրոնը ձեռք ձգե-
լուն վրայ: Օրինակի համար ձիերու կամ ծառերու
թրւոթ շրլար, քանի որ ամէն ագարակապան կրնայ
ձի մեծցնել ու ծառեր բազմացնել. բայց բեթրոլի և
լօքոմօթիվի թրւաթ կ'ըլլայ, ինչու որ շատ քիչ տե-
ղերէ բեթրոլ կ'ելլէ կամ շատ քիչ գործարաններ կըր-
նան լօքոմօթիվ շինել:

Բայց թրւաթները միշտ շահով ու գիները բարձ-
րացնելով չէ որ գործին մէջէն կ'ելլէն. շատ անգամ
եւ գրեթէ միշտ կ'ստիպուին գիները ցած պահել. օ-
րինակի համար, երկաթուղիներու թրւաթը միմիայն
այն տեղերու երթեւեկութեան գիները կրնայ բարձ-
րացնել՝ ուր ժողովուրդը ստիպուած է երթալու,
բայց հո՞ն ուր պտոյտի եւ զրուանքի համար կ'երթան՝
հոնտեղի երթեւեկութեան գիները շատ աժան ըլլա-
լու են, եթէ ոչ մարդ չերթար, եւ տեսնուած է որ
երբ երկաթուղիներու ընկերութիւնները միմիայն ան-

հրաժեշտ երթեւեկութիւններու հասոյթով բաւականան՝ շուտով մնանկ կը հռչակուին :

Թարգմ.

Զ. Ն. ՊէրՊէրելն



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Իր բազգէն դժգոհ մարդ մը՝ միշտ կը գանգատէր Աստուծոյ. « Աստուած իմ, կ'ըսէր, ուրիշներուն հարստութիւն կուտաս, ինձի բան մը չես տար, ի՞նչպէս կրնամ գործ մը գտնել՝ քանի որ բնաւ ստակ չունիմ » :

Ծերունի մը լսեց այս խօսքերն ու ըստաւ.

— Կարծածիր չափ աղքատ չես դուն, միթէ Աստուած երիտասարդութիւն և առողջութիւն չէ՞ պարգեւած քեզի :

— Այո՛, կրնամ պարծիլ երիտասարդութեանս եւ առողջութեանս վրայ :

Ծերունին այն ատեն երիտասարդին աջ ձեռքը բռնեց ու հարցուց.

— Կ'ուզե՞ս այս ձեռքդ կտրել, եթէ հարիւր ոսկի տամ քեզի :

— 0՛, ո՛չ :

— Զա՞յս ձեռքդ :

— Ո՛չ ալ ան :

— Եթէ հազար ոսկի տամ, կոյր ըլլալ յանձն կ'առնե՞ս :

— Աստուած չընէ, միլիոններ ալ տաս, նորէն չեմ յանձն առներ :

— Տե՛ս, ըստ ծերունին, Աստուած քեզի ի՞նչ հարստութիւն տուեր է եւ դուն ելեր կը տրտնջաս :

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Դիշեր ատեն գինով մը փողոցները կը պարտէր՝ իր տանը ճամբան գտնելու համար, Միջոց մը աշքերը դէպի երկինք վերցուց ու տեսնելով պայծառ լուսինը՝ հարցուց ուրիշ մարդու մը. « Ի՞նչ է սա երկինքը : » Անցորդն՝ որ նոյնպէս գինիէն թմրած էր, նայեցաւ լուսինին եւ ըստաւ. « Ա՛ն, ան... աստեղացի չէ » :

Խելացի գիւղացի մը հարցուտ ագարակապանի մը այցելութեան գնաց : Գիւղացին ակնածելով՝ մէկ թիզ հեռու նստաւ ագարակապանէն, իսկ ան՝ նեղանալով գիւղացիին ընթացքէն՝ հարցուց ծաղրածու կերպով մը. « Ո՞րչափ է քու եւ իշուդ մէջ եղած զանազանութիւնը :

— Մէկ թիզ, պատասխանեց գիւղացին » :

Վարդապետ մը քարոզ տալու համար սեղանին վրայ ելաւ, եւ իբր բնաբան՝ ըստաւ. « Դուն ո՞վ ես », Այս խօսքերէն յետոյ, մի քիչ սպասեց որ ժողովուրդն մտածէր ու լաւ հասկնար քարոզին միտքը : Բայց նոյն միջոցին երկայնահասակ մէկն՝ որուն վրայ քարոզիչը իր ակնարկը ձգած էր՝ եկաւ մէջտեղն, կարծելով թէ քարոզիչն իրեն կ'ուղղէ հարցումը և ըստաւ բարձր ձայնով. « Ե՞ս, Մըկօ քըզիրն եմ ... գեղի քէ հեան եմ, եկեր եմ այս տեղ կարեւոր գործի մը համար » :

Երկու ամուսին դուրս կը նայէին պատուհանէն, երբ բարձր ձայնով էլ մը զռայ :

— Կը լսե՞ս, Գէորգ, ըսաւ կինն ամուսնոյն, քու բարեկամդ կը զռայ :

— Շատ ճշմարիտ է պատասխանեց ամուսինը, մի- այն կնկան կողմէն բարեկամ է :

— Օդին ձեր ամենամեծ թշնամին է :

— Այո՛, Տէ՛ր հայր, բայց միթէ Աւետարանին մէջ չէ՞ գրուած թէ՛ «սիրեցէ՛ք ձեր թշնամիները» :

— Այո՛, գրուած է, բայց տեղ մ'ալ չէ՛ գրուած թէ՛ թշնամիներնիս պէտք է կլլել :

— Քանի՞ տարեկան ես, հարցուցին գիւղացին :

— Երեսունըութը կամ քառասունըութը :

— Ի՞նչպէս, միթէ տասը տարին քեզի համար միեւնոյն բա՞ն է :

— Է՛հ, երկան ըրիր, ես կը համրեմ իմ ստակնե- րը, ոչխարները, բայց ոչ իմ տարիները, որովհետեւ ո՞վ կրնայ գողնալ զանոնք :

— Աս ի՞նչ կը նշանակէ, որ իմ մօրուքս ճերմկցած է, մինչդեռ քու գլխիդ մազերը :

— Կը նշանակէ որ ես գլխով շատ աշխատեր եմ, իսկ դու չենյեով :

— Մարդ մը ագահի մը տունը գնաց եւ տեսաւ որ նա ճանճ բռնելու զբաղած է. վերջապէս ճանճ մը բռնեց ու շաքարամանին մէջը ձգելով խուփը դոցեց:

Ներս մտնողն հարցուց. « Ի՞նչո՞ւ այդպէս ըրիր :

— Իմանալու համար թէ՛ ծառան շաքարը կը գող- նա՞յ, պատասխանեց ագահը » :

Վարդապէտ մը ու փոքրաւորը կը ճամբորդէին :

— Անօթի եմ, ըսաւ փոքրաւորը վարդապէտին, հայ ուտենք, հայր սուրբ :

— Հիմա ինչո՞ւ ուտենք, երեկոյին նորէն կ'անօ- թենանք, ըսաւ վարդապէտը :

Փոքրաւորը ձայն չիանեց և լուռ ու մունջ շարու- նակեցին ճամբանին : Վարդապէտը՝ փոքրաւորը բարկացնելու համար գրպանէն Աւետարանը հանեց ու կարդալ սկսաւ. իսկ անոր ձին սկսաւ քայլերը կա- մացնել: Ճանապարհին՝ մէկը մօտեցաւ փոքրաւորին և հարցուց .

— Վարդապէտը ո՞ւր կ'երթայ :

— Երկինք, պատասխանեց փոքրաւորը :

— Բայց շատ գծուար, որ դուք այս ընթացքով երթաք այն տեղ :

— Ո՛չ, կ'երթանք, ըսաւ փոքրաւորը, որովհետեւ հայր սուրբը աղօթք կ'ընէ, ես ալ ծոմ պահեր եմ :

Աղքատ մը ըսաւ հարուստի մը.

Պարոն, դուք պէտք է ինձի շատ ողորմու- թիւն տաք ձեր հարսաութենէն, որովհետեւ մենք երկուքս ալ մէկ ընտանիքի զաւակ ենք, քանի որ յառաջ եկած ենք Աղքամ ու Եւայէն :

— Այո՛, ըսաւ հարուստն, ահա՛ քեզի հինգ փա- րանոց մը, և հաւատա որ եթէ քու միւս աղգական- ներդ ալ այդչափ տան, դուն ինձմէ աւելի շատ հա- րուստ կ'ըլլաս :

Զիու վրայ նստած պարոն մը՝ գիւղացիի մը պա- տահեցաւ, որ պարկերով ցորեն բեռցուցած էր իշուն վրայ ու ջաղացք կ'երթար, Պարոնը հարցուց.

— Գիտե՞ս, ի՞նչ տարբերութիւն կայ իշու եւ ձիու մէջտեղ:

— Այն տարբերութիւն, որ էշը իր վրայ ցորենի պարկեր կը տանի, իսկ ձին՝ ապուշ մարդ մը:

մը մէջ է որ մահուան զանգակը պիտի հնչուի: Արդի գիտութիւնը կ'ընդգիւմակալէ և իր քննութեան կ'ենթարկէ այս հարցումն որ միշտ մարդոց մտածման առարկան եղած է: Ամէնէն յետնեալ բնութեան մէջ, ամէն ժողովուրդ իր ուղած կերպովը երեւակայած է այս ջնջման վէս երեւոյթն, իր հանճարին, հաւատաւիքներուն, երկրին բնութեան համեմատ պատկերացուցած է զայդ իր մտքին մէջ:

Նոր կտակարանի մէջ Յայտնութեան գիրքը այսպէս կը պատմէ աշխարհիս վախճանը: « Այն տաեն անգունդին տակէն մուխ մը եղաւ՝ նման ահագին հընոցի մը: Երկրաշարժ մը եղաւ, եւ արեւը այծի մազէ տոպրակի մը նման սեւցաւ: Լուսինը նուազած էր, երկնից լուսաւորներն երկրիս վրայ ինկան: Երկիլներ քոշուեցան նման վարագոյրի մը՝ զոր կը ծալեն: Լեռներն ու կղզիները տեղերնին փոխեցին և երկինքի մէջ մէծ պատերազմ մը եղաւ: Միքայէլ եւ իր հընշատակներն կը կոռուէին վիշապին դէմ, որ մեծ օձն էր: Յետոյ լսուեցաւ ձայն մը երկինքէն: որ կ'ըսէք. « Հիմա է փրկութիւնը, զօրութիւնը, իշխանութիւնը մէծ Աստուծոյն »: Յետոյ տեսայ նոր երկինք մը եւ նոր երկիր մը »:

Հին աշխարհին ջնջումն, նոր աշխարհի մը ծնունդը, ահա՛ կրկին պատահածը՝ զոր յայտնեցին հազարաւոր աւանդութիւնք, ըլլայ հիւսիսային, ըլլայ հարաւային երկիլներուն մէջ: Քննենք հիւսիսային ժողովուրդ մը: Բանանք Սքանախնաւիոյ սրբազնան գրուածքներն: Հոն ցուրտը պիտի ըլլայ ջնջող տարրը: սառուցեալ կլիմաներու սովորած, հետզհետէ սաստկացող ցուրտի մը մէջ է որ Սքանախնաւիացիք աշխարհիս վախճանը կ'երեւակայեն: « Այն տարին երեք յաջորդական ձմեռներ տեղի պիտի ունենայ .րո-

ԱՇԽԱՐՀԻՍ ՎԱԽՃԱՆԻՆ ՎՐԱՅ

ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Արդեօք աշխարհս վերջ պիտի ունենա՞յ օրին մէկը: Միթէ պիտի գա՞յ օր մը, արհաւրալից օր մը, որ մարդկային ցեղն ու իր գործերը պիտի ոչնչանան, որ կեանքը պիտի անհետանայ մեր մոլորակին երեսն, որ այդ մոլորակը պիտի դադրի արեգակնային գրութեան մասը կազմելէ եւ պիտի ջնջուի անհունին մէջէն: Մեռնիլն օրէնք մ'է ապրող բանի մը համար: Արարչագործութեան ամէն մասերուն պէս երկնից համաստեղութիւններն ալ այս օրէնքէն չեն կրնար խուսափիլ: Լուսինը մեռած աշխարհ մըն է անտարակոյս, ինչո՞ւ համար ուրեմն երկիրս աղատ պիտի մը-նայ բոլոր տիեզերքին վիճակուած բազդէն:

Աշխարհս եթէ պիտի վերջանայ՝ ե՞րբ եւ ի՞նչպէս տեղի պիտի ունենայ կործանումը: Ո՞րչափ ժամանակ եւս երկիրս հիմակուան դիրքը պիտի պահէ: Արդեօք ծերութեան եւ տկարութեան նշաններ կուտայ: Գերագոյն վայրկեանին հասնելու պահուն ի՞նչ երեւոյթներ տեղի պիտի ունենան: Միթէ լեռները պիտի տափակնան եւ ջուրը խուժէ երկրագնատիս մակերեւոյթը, եւ կամ միթէ խաւարին մէջ, սառնասուոյց ցուրտի՞ մը մէջ, կամ ընդհանուր հրդեհի՞

Երբ բոյսերը պիտի ջնջուին եւ անտառին ու դաշտին կենդանիները մեռնին : Լեռները պիտի սկսին դողալ, ծովը գաւրս պիտի տայ լօռերը (ջրային բոյս) . ճուկերն ու բոլոր նաւարեկեալներ, որոնք դարերէ ի վեր անդունդներուն մէջ կը թափառին : Իրարու զարնուած ոսկորներուն ձայնը բոլոր աշխարհի պիտի արձագանք տայ : Մոլորակները պիտի խաւարին, երկնային մարմինները մարին, վերջապէս Զէնրիս գայլը արեւը պիտի ուտէ եւ Մունկարմ գայլը լուսինը , մինչդեռ ծովը ցամաք խուժելով՝ կեանքը պիտի ջնջէ եւ այս աւեր երկիրը՝ առանց լոյսի ու ջերմութեան աշխարհը՝ պատերազմի դաշտ մը պիտի ըլլայ երկու աստուածներու կոիւին, Բարոյ եւ Զարի աստուածներուն : Մարդկիներուն մահուանէն ետքը պիտի գայ Պանեառօքը, աստուածներու մահը : Փճացած աշխարհի վերջին մնացորդները պիտի գլորին առանց սահմանի ովկիանոսի մը մէջ :

« Բայց ալիքներուն ծայրէն պիտի ծնանի դալարագեղ աշխարհ մը, հոն դաշտերն իրենց պտուղները պիտի տան առանց ցանուելու : բոլոր աստապտնքները պիտի դադրին եւ չարիքը գոյութիւն չպիտի ունենայ » :

Հնդկները՝ տաք երկրի բնակիչ՝ ընդհակառակն հուրը կործանիչ պատճառը կը նկատեն : Սքանտինաւիացիներու պէս իրենց համար ալ՝ աշխարհիս վախճանէն առաջ աեղի պիտի ունենայ մեծ պատերազմ մը բարոյն և չարին աստուծոյ միջեւ : Գերագոյն օրը վերջ պիտի տայ կուոյն՝ զոր կը մղեն չարերն ու բարիները՝ ստեղծագործումէն ի վեր : Բարոյն ոգին, Որմիզդ պիտի յաղթանակէ չարի ոգիին՝ Արհմին, որ խաւարչտին անդունդի մը մէջ գլորելով՝ պիտի լափուի հալած պղինձով, Բայց երկրագունան՝ այնչափ

երկար ատեն տառապանաց եւ ցաւոց բնակավայրին՝ ինքն ալ տեղի պիտի տայ նորածին աշխարհի մը : Հին աշխարհը պիտի դանդաչէ . լեռները պիտի տապալին՝ աւերիչ բոցերու հեղեղներու մէջ : Ամենայն ինչ պիտի անհետանայ . Առկէ ետքը պիտի կազմուի նոր աշխարհ մը . ուր մինակ Որմիզդ պիտի իշխէ » :

Նեղոսի պարբերական ողողումներէն արգաստաւորուած երկրի մը մէջ ապրող և այդ գետին բարութենէն կամ բարկութենէն ամենայն ինչ ընդունելու վարժուող Եգիպտացիք . Նեղոսէն զատ ուրիշ միջնց մը չէին տեսներ աշխարհիս աւերիման : « Երեք հագար տարիէն, կ'րսէին անոնք, փոխանակ իր բարերար ջուրերով ոռոգելու՝ Նեղոս Եգիպտոսը պիտի ողողէ հուրով և աշխարհ պիտի կորսուի գետին տարածած լոցերով » :

Այս նկարագրութիւններն երկրիս վախճանը կը ներկայացնեն ամէնասոսակալի երեւոյթի մը տակ . մինակ՝ հեռաւոր ժամանակի մը համար ըլլալով վախը կը փարատի . Բայց ենթագրեցէք որ մարդիկ այս աղէտները մօտաւոր ժամանակի մը համար երեւակայեն . ենթագրեցէք որ անոնք համոզուած ըլլանթէ իրենք երկրիս վախճանին հանդիսատես պիտի ըլլան, որ քանի մը օրէն, քանի մը ժամէն պիտի տեսնեն իրենց աշքով իսկ մեր մոլորակներուն վար թափիլը, տարրերուն իրար խառնուիլը և կեանքի անհետացումը : Սոսկումնին արդեօք ո՛րքան մեծ պիտի ըլլար : Եւ իրաւ ալ մարդիկ այս սոսկումը ունեցած են : Այնպէս կարծած են թէ մեր թուականին հազարերորդ տարին, երկրիս վերջին տարին պիտի ըլլայ : Հոգիները ձնչող այս արհաւերքը այնքան մեծ եղած է որ պատմութեան մէջ նշանաւոր եղած է : Թիւրէնժի մէջ վանական մը, Յայտնութեան գրքի

մէկ մութ կէտին վրայ յենլով՝ 960ին յայտնեց թէ՝ Նեռի գալուստը (Հակաքրիստոս) և երկրիս կործանումը տեղի պիտի ունենայ հազարերորդ տարիին 25 մարտին։ Մարդիկ յուսահատեցան։ սրտերնին լեցուեցաւ վհատութեամբ մը, աշխատելէ ու գործելէ դադրեցան և անէացան վերջին վայրկեանի արհակիքին մէջ։ Արտասովոր ձմեռներ, դժնդակ տաքեր վրայ հասան և շլուուծ հրաշքներ տեսնուեցան։ Օրլէանի մէջ, կը պատոմէ քրօնիկագիր մը՝ Ռառու Կլապէր, մարմարիոնէ Քրիստոսը լացաւ շատ օրեր արցունք թափեց։ Նորէն Օրլէանի մէջ և նոյն տարին պահապանները Մայր Եկեղեցին դուռը բացած ատենին ահագին մեծութեամբ դայլ մը տեսան որ զանգակատուն երթալով շուանը խածաւ և առաւտեան ժամերգութեան կոչնակը հնչեցուց։ Տարի մը վերջը քաղաքն ամբողջ մոխիր դարձաւ։ Միւնոյն ատեննթրը՝ Վեսովլ լեռը սովորականէ շատ աւելի բերաններէ դուրս ժայթքեց բոցեր, ծծումք. քաւրեր և գարշահոտ կազեր։ Ովկէանոսին մէջ հույսին կէտ մը տեսնուեցաւ, այնչափ մեծ որ արշալոյսին գլուխը տեսնուելով՝ և ձուկը միշտ լողալով, պոչը կէս օրէ երեք ժամ վերջը միայն տեսնուեցաւ. դորտերու անձրւներ տեղի ունեցան, քարերու ահագին կտորներ վար թափեցան։

Երբ ճակատագրային ժամը հասաւ, ժողովուրդը խոնուեցաւ և կեղեցիներուն մէջ՝ վերջին դատաստանին նշանին սպասելով։ Աշխարհիս վախճանը չեկաւ. քանի օրը կը յառաջանար՝ մարդիկ սիրտ կ'առնէին։

Հազարերորդ տարուան այս սարսափին տեղ եւ կաւ տարբեր ահուգող մը։ Գիտաւորի մը վախը։ Ամէն գիտաւոր աղէտի մը նախագուշակը կը համար-

ուէր. անոնց ձեւն իսկ երեւակայութիւնները վախցնելու հակամէտ էր, սուրի մը, գիւային հրէշի մը, կամ վիշապի մը կերպարանքը տեսնել կը կարծէին անոր մէջ։ ԺԼ. դարուն մէջ գիտաւորի մը երեւումը՝ աշխարհիս վախճանին մէկ նշանը համարուած էր։ «Հրաշալի պատմութիւններու» հաւաքածոյի մը մէջ կը տեսնենք «Ճառ՝ վերջին նոյեմբեր 1577ին երեւած գիտաւորին վրայ» գլուխին տակ յետագայ գուշակութիւնը։ «Արդ, բնաւ պէտք չէ կասկածիլ թէ այդ նշաններն ու հրաշքներն աշխարհիս վախճանին և Աստուծոյ վերջին դատաստանին մօտենալէն, զատ ուրիշ բան մը ըսել ուզեն»։

1773 ապրիլ 21ին, Լալանտ աստղաբաշխը յայտարած էր թէ Գիտութեանց կաճառին պիտի ներկայացնէ աշխատասիրութիւն մը «Երկրիս մօտենալու վրայ եղող գիտաւորներուն» վրայ։ Անմիջապէս կարծեցին թէ՝ աղէտ մը, կործանում մը պիտի պատահի, Բարիզի արքեպիսկոպոսին աղաչեցին որ աղօթքներ կատարել տայ երկնից բարկութիւնը մեղմացնելու համար։ Լալանտ ստիպուեցաւ հրապարակաւ ըսածներն ետ առնել։ 1861 Յունիս 30ին, երկիրս և իր արբանեակը Լուսինը՝ թափառաշրջիկ լուսաւորներու հոկայ ամպի մը մէջ միրծեցան և ամէնէն մեծ թանձրութեան մէջ կտրեցին անցան երկինքի աւելածուն՝ գիտաւորի մը պոշը։ Աստեղագէտերը երկնակամարին փոսփորափայլումը տեսան նման հիւսիսայգի մը։ Պարզ մահկանացուները բան մը չտեսան, կը քնանային. սոյն տեսարանը գիշերը տեղի ունեցեր էր։ Ուրեմն երկիրս կրնայ եղեր շըրջապատուիլ գիտաւորին պոչէն առանց վնասուելու։

Բայց ի՞նչ պիտի պատահէր եթէ ոսկեղօծ ամպամածին մէջ ընկղմելու տեղ՝ մէկէն ի մէկ գիտաւո-

րին կեդրոնին զարնուեինք : Հակառակ շատ մը գիտուններու ըսածին , ինչպէս Հէրէլ և Տապինէ , ուրոնք կը պնդեն թէ գիսաւորները տեսանելի ոչինչներ եղած ըլլան , հաւանական է որ այս մարմիններուն կեդրոնը հաստատուն ըլլայ , և երկինքէն ինկող քարերն՝ ծերութեան ախտէն բննուած գիսաւորներու բնկորներն ըլլան : Հոյակապ Լարլաս՝ նկատելով երկիս և գիսաւորի մը կեդրոնին բաղիսման հետեւանքներն , կ'ըսէ . « Երկրագնդիս առանցքն ու թաւալման շարժումը փոխուելով՝ ծովերը պիտի թողուն իրենց նախսկին դիրքերը և նոր հասարակածի մը վրայ պիտի խուժեն , ապրող էակաց մեծ մասը պիտի խեղդուին այս համաշխարհային ջրհեղեղին մէջ , կամ կրտսուին երկրագունատին ցնցումէն» : Եթէ Լարլաս գիտցած ըլլար մեքենական զօրութեան ջերմութեան փոխուելը՝ իր մարդարէութիւնն անշուշտ աւելի սոսկալի կերպով պիտի պատմէր : Երկրիս եւ գիսաւորի մը պէս հսկայական մարմիններու բաղխումը , ըստ արդի գիտութեան օրէնքներուն , անանկ ահագին քանակութեամբ ջերմութիւն յառաջ պիտի բերէր որ երկիրս շոգի դառնալով անմիջապէս հրաշէկ հեղանիւթի մը վիճակը պիտի տոնէր : Կենդանիներն ու բոյսերը , ծովերն ու ցամաքներն ալ պիտի ցնդէին մոխի պէս :

Երկրագնափառ սպառնացող վտանգը մինակ գիտաւորը չէ : Մեր գոյութիւնը կախում ունի մոլորակային կենաց մեծ բաշխիչէն՝ Արեգակէն . թո՛ղ արեւու կենդանացուցիչ ճառագայթներն անհետանան եւ երկիրը ընդարձակ գերեզմանատուն մը պիտի ըլլայ : Մեծ բանաստեղծ Պայրըն երգած է այլ եւս կորուստի գատապարտուած աշխարհի մը արհաւերներն : « Երազ մը ունեցայ , որ ամբողջովին երազ մը չէր :

Փայլուն արեգակը մարած էր : Մոլորակները իրար կը բաղխէին անհուն միջոցին մէջ , զրկուած իրենց ճառագայթներէն և առանց հետեւելու որոշեալ ճամբու մը : Սառած երկիրը՝ կոյր ու խաւար , կը ծածանէր միջոցին մէջ և զոր լուսինը ա'լ չէր լուսաւորէր : Առաւոտ կ'ըլլար կ'անցնէր ու յաջորդ առտուն կուգար առանց ցերեկ ըլլալու : Մարդիկ մոռցած էին իրենց կիրքերն այս ամայութեան սարսափին մէջ , բոլոր սրտերը սառած , անձնասէր աղօթքի մը մէջ լոյսը կը թախանձէին : Հոյակապ չէնքեր , խեղճուկ խրճիթներ , տմէն տեսակ բնակարաններ կ'այրէին՝ այս յուփանական խաւարը լուսաւորելու համար : Քաղաքները հրոյ ճարակ եղած էին , և մարդիկ հաւաքուելով իրենց հրկիզեալ բնակարաններուն շուրջը , զիրար վերջին անդամ մըն ալ կը գիտէին » :

Այդ բանաստեղծի երազն , յիրաւի երազ մը չէ , Գիտութիւնը կ'ընդունի մինչեւ աստիճան մը՝ երկրիս սոյն կորուստը խաւարին մէջ , որովհետեւ ա'լ արեգակը շի նկատեր իրեւ անշիչնելի և յաւէրժ տեւող գունդ մը : Անոր զօրութիւնը կը նուազի , ինչպէս ամէն մարմին որ ջերմութիւն և լոյս կը սփոէ : Մեծ բնագէտ Հէրմոլձ կը կարձէ թէ արդէն արեւու գրեթէ բոլորովին սպառած է այն զորութիւնը զոր կը պարունակէր մեր մոլորակային գրութեան ճնունդ տըւող նախսական միգամածը . հաշուած է թէ այդ զօրութեան ¹⁸³ մասն արդէն սպառած է : Նոյնպէս կ'երեւի թէ արեւու բիծեր կոչածնիս այդ զօրութեան նուազումին նշաններն են , նըրեգական պաղելու պարագային մեր գունդին համար աստիճանական ու գանդազ մահ մը պիտի ըլլայ : Ուշափ որ արեգակը մարի , երկրիս վրայ ալ նոյն համեմատութեամբ լոյսն ու ջերմութիւնը պիտի

պակսին, ինչ որ պիտի ազգէ բուսաբերութեան եւ կենդանիներու աճման վրայ: Այրեցեալ գոտիի բոյ սերուն տեղ պիտի գան բարեխառն կլիմայի բոյսերն իսկ ասոնց տեղ պիտի բռնեն բեւեռային բոյսեր: Միւնոյնը պիտի ըլլայ կենդանեաց համար ալ: Այս կենդանական աշխարհի աղքատացման մէջ մարդը մինչեւ վերջը գոյութիւն պիտի ունենայ: Կամաց կամաց, երբ դարեր ու շատ դարեր անցնին, ովկէանոսները՝ լեցուած սառնակոյտերով, ցամաքները՝ ծածկուած սառնարաններով, պիտի իյնան բացարձակ խաւարի մէջ: Յաւիտենականութեան մէջ ա'լ լուութիւն, ամայութիւն, մահու իշխանութիւնը պիտի տիրէ:

Դօրդ դարուն վերջացող շաբթօւան մէջ՝ ծանօթաստղաբաշխ Սըր Բօպէրթ Տօլ. ի Հոնտոն Արքայական ճեմարանին մէջ իր հինգերորդ բանախօսութիւնն արտասանեց, որու նիւթն էր « Մէծ զլոխներ բնութեան գրէին »: Խօսելով Հրատի և երկրի միջեւ հաղորդակցութեան կարելիութեան վրայ՝ անցաւ Արեգակի վախճանին, որու մասին հետեւեալն ըստ:

« Արեւը օրէ օր կը քաշուի, կը հատնի: Ճիշդն ըսելով՝ ասիկա այնպիսի իրողութիւն մըն է որ ժամանակէ մը ի վեր ծանօթ էր: Ճշգիւ հաշուելով գտած է արեգակնային շրջագծին ամփոփումը կամ կարկամութիւնը, որ օրական գրեթէ 23 սանդիմէդը է: Եւ որովհետեւ արեւուն շրջագիծը 4,376 000 քելոմէդը է, մեր անձնական մտահոգութիւնք սահմանափակ ըլլալու են: Սակայն կը տեսնուի թէ՝ արեգակն 8 քիլոմէթր կը կորսնցնէ շրջագիծէն մէն մի դարու տեւողութեան մէջ, և Վերդիլիոսի ատեն իր սահմանին ճառագայթն 80 քիլոմէթր աւելի երկայն էր քան այսօր: Վերջապէս 8600 տարիէն ճիշդ կէս

առ կէս պիտի նուազի: Դիւրին է հաշուել թէ զանգուածին ինչ ահագին նուազութեան կը համապատասխանէ շրջագծի այս ամփոփումը: Այդ ժամանակի մարդիկն ա'լ ոչ պիտի լուսաւորուին և ոչ ալ պիտի տաքնան: Աչքերնին անհունապէս խոշորցած՝ իրենց ակնակապիճներէն գուրս պիտի ելլեն, ինչպէս նաեւ կենդանիներունը: Պառզները պիտի չհասունան այլ եւս, բուսաբերութիւնը պիտի դազրի եւ չորնայ: Ոյժն ու կամքը կամաց կամաց պիտի հեռանան երկրէս: Պիտի ըսէք թէ մարդիկ ածուխով թող տաքնան, աւաղ, հանքածուխի բոլոր պաշարը սպառած պիտի ըլլայ: Մոշտակ պիտի հագնին, կ'ըսէք. բայց մուշտակաւոր կենդանիները շատոնց անհետացած՝ ջնջուած պիտի ըլլան: Եւ մարդկութիւնը՝ ցուրտէն սառած, մերկ, գինիկ ու բանատեղծութենէ զուրկ. Հոմերոսի Էսոփին պէս ի զուր վերջին ճառագայթ մը պիտի խնդրէ մեռնելու համար »:

Արեւուն զօրութիւնը ընդհակառակն կ'աւելնայ՝ ուրիշ երկնային աշխարհի մը հետ ընդհարմաք: Գիութանք ըսել թէ այս հանդիպումը բնաւ կարելի չէ: միջոցին մէջ թաւալող աշխարհները իրարմէ ահագին հեռաւորութիւններով զատուած են: Մեզի ամէնէն մօտ գտնուող լուսաւորը որ Սանթոր համատեղութեան մասը կը կազմէ, մենէ 43 միլիոն քիլոմէթր հեռացած է, իր լոյսը մեզի գալու համար 4 ու կէս տարի պէտք է:

Գիսաւորի մը պատահումը, արեգական աստիճանաբար ցրտացումը, մինակ չեն երկրիս վախճանը բացատրող ենթագրութիւններուն մէջ:

Երկրիս կեդրոնը գտնուիլ ենթագրուած հրաշեկ զանգուածին բաղդատմամբ, երկրիս կեղեւին ոչն-

չութիւնը շատերուն վախ տուած է թէ կրնայ ըլլալ
որ այդ կեղեւը փլչի : Ուրիշներ շատ հեռու չեն տես-
ներ այն օրը ուր լեռներն անձրեւներու և մթնոլոր-
տային ուրիշ ազգականերու միջոցաւ պիտի հարթա-
նան . այն ատեն երկիրս կատարեալ դունտ մը պիտի
ըլլայ , որու մակերեւոյթը ամբողջովին պիտի ծածկեն
ովկէանու ջուրերը . ա՛լ ցամաք չպիտի գտնուի , ա-
մէն կողմ ծով մը պիտի տարածուի 200 մէթր խո-
րութիւնով :

Եթէ ընդունինք այս ազէտներէն որ եւ է մին ,
կը մնայ գիտնալ թէ ո՞ր թուականին տեղի պիտի
ունենայ այդ . կարելի՞ է արդեօք մօտ ի մօտոյ հաշ-
ուել տնարիները , դարերը զոր դեռ կրնանք ապրիլ .
Ութը տարի առաջ եղած գուշակութեան մը նայե-
լով՝ 1899 Հոկտ. 19ը մեր վերջին օրն էր . այսպէս
յայտարարած էր Տոքթ . Խոտոլֆ . այս դժբաղդու-
թեանց գուշակը մեզ կը վախցնէր գիտուորի մը բնդ-
հարմամբ . սակայն գիտաւորն իր կոչին չպատասխա-
նեց . մինակ լէօնիտաներու խումբէն մի քանի ասուպ-
ներ երկինքը լուսաւորեցին :

Կրնանք ուրեմն սահման մը դնել կեանքին երկ-
րագնդիս երեսին վրայ ունեցած գոյութեան : Նշանա-
ւոր գիտուններ չեն վարանիր թուանշաններ տալու :
Պիւֆօն ըսած է թէ 25,000 տարուան մէջ ցուրտը
այնքան սաստիկ պիտի ըլլայ որ երկիրս երեսը բնա-
կիլ անկարելի պիտի դառնայ : Լըվէոփէ 35 միլիոն
տարի կը չնորհէ մեր արեգակնային գրութեան :
Լեռներու յարդարման ջատագովները 6 միլիոն տարի
կուտան . ուրիշներ կը ցուցնեն թէ 10 դարէն եր-
կիրս անապատ մը պիտի ըլլայ , դիակ մը նման լու-
սինին : Պարզ ենթագրութիւններ են ասոնք , առա-
ւել կամ նուազ մտացի տրամարանութիւններու վրայ

Հիմոււած և որոնք իրարու հետ իսկ չեն համաձայ-
նիր Ենթագրելով թէ սպառնալիքը արեգակէն դայ՝
մեզի կեանք բաշխող այդ լուսաւոր գունդը ղեռ
անհաջուելի զօրութիւն ունի պահած : Բնութեան
տեսարանները մարդոց աչքին այնչափ ատեն պիտի
շարունակուին պարզուիլ որ , մտքով իսկ չենք կրնար
յղանալ զայն , որով բնաւ տրամադիր չենք լատին
բանաստեղծին վհատումին մասնակից ըլլալ . որ հի-
անալի ոտանաւորներով կ'ենթագրէր թէ Բնութիւնը
երեւալով մարդուն կը գանդատի որ՝ ծերացած ,
յոզնած ու սպառած է :

Թրզմ. Զ. Ն. Պ.

Թէ ինչո՞ի ես ԶԵՄ ՅԱԶՈՂԻՐ

Երէկ ամենայն պարզութեամբ տօնեցինք անյա-
ջողութեանս յիսնամեակը : Շրջապատած էին զիս
զաւակներս , թոռներս , հարսերս և ազգականներս ,
ու կը չնորհաւորէին յիսուն տարի անընդհատ կենաց
պայքարը մղելուս առթիւ , և որովհետեւ այս յիս-
նամեայ գործունէութեանս միջոցին՝ օրը օրին ապ-
րելով չէի յաջուղած նիւթական ո եւ է ապագայ
պատրաստել ինձ և իմիններուս , առ ի չգոյէ ուրիշ
լաւագոյն արդիւնքի , փափկանկատութեամբ կը բա-
ւականանային դրուատել լոկ « առողջ կազմուածքս
ու ընտանեսէր ոգիս » , բան մը որ թէեւ գգուիչ է
իմ հասակ ունեցող 65 տարեկան ծերունոյ մը հա-
մար , սակայն բնաւ գոհացուցիչ չի կրնար համար-
ուիլ երբ ի նկատի առնուի որ յիսուն երկար տարի-
ներ աշխատեր , տքներ , տառապեր եմ մի միայն ո-

բապահիկ մը հայթայթելու համար, ակամայ ստիպուած ըլլալով համակերպիլ այն պատուէրին թէ « վասն վաղիւն մի հոգայցէք », մինչդեռ այս կէս դարու շրջանին մէջ քանի՛ քանի՛ անձինք չոր գետնէն ստքի ելլելով՝ իրենց բաղդը չինեցին, և հիմա ամէն երկրաւոր բարիքներ կը վայելեն :

Իրա՞ւ, ես ինչո՞ւ չի յաջողեցայ, կ'ըսէք, արդեօք: Եթէ վայրկեան մը կը կասկածիք որ ծոյլ էի, ցոփակեաց էի, շուայլ, գինեմոլ, անառակ էի, գիտցած եղիք որ պարտական պիտի մնաք, որովհետեւ այդ մոլութիւններէն մէկուն գերի չըլլալէ ի զատ. ընդհակառակն առւանց անձնագովութեան կը համարձակիմ ըսել թէ շատ պարկեցտ, աշխատասէր և քիչ մըն ալ առաքինի էի :

Արդ, այսքան բարեմասնութիւններով ինչո՞ւ չի յաջողեցայ հապա:

— Զեմ գիտեր. ես խօսիմ, գուք դատաստան ըրէք:

×

Ճիշդ այսօրուան պէս միտքս է՝ 1842 Աստուածածնայ Վերափոխման երեքշաբթի օրն էր, առաւոտուն հայրս զիս շուկայ բերելով ոսկերիչ Ա... աղային քով աշակերտութեան տուաւ. այն ատեն 45 տարեկան էի ու քիչ շատ գրել կարդալ գիտնալուն՝ սոյն թուականը արձանագրեցի ժամագրքիս ետին:

Ոսկերիչի աշակերտ ըլլալը դիւրին բան չէր մեր օրերը. չեմ գիտեր հիմակ ինչպէս է: Այն շատ մը քիմիական բաղադրութեանց կարմիր, կանաչ գոլորշիներն ու արտարուրած գարշելի հոտերը մինչեւ մէկ երկու շաբաթ այնքան տաղտկացուցին զիս որ չնչին պատճառներ կը փնտուէի խանութէն հեռանալով մա-

քուր օդ չնչելու, ու այն ջուրի հաստափոր սափորները — որոնցմով ջուր կրել ուրիշ պարագաներու մէջ գուցէ պատիժ համարէի — հիմա մէ յմէկ յուսոյ հրեշտակ կ'երեւային աչքիս, ու ակնդէտ կ'սպասէի որ խանութին ջուրը սպասի եւ ես ալ սափորները լեցնելու պատրուակաւ երթամ դեգերիմ:

Երկար չտեւեց այս տաղտուկն. ընտելացայ ամէն տեսակ ծուխի ու մուխի և սկսայ մասնակցիլ կամաց կամաց խանութին աշխատութիւններուն: Այն միակ բանն որ սոսկում կը պատճառէր ինձ, վարպետիս տունը երթալն էր. ո՛րչափ կը փափաքէի որ վարպետս հեռաւոր թալ մը նստած ըլլար եւ կամ բնաւ ընտանիք ունեցած ըլլար. որովհետեւ լուր օրերը տուն կը զրկէր զիս ու հոն շարաշար կ'աշխատցնէին, մերթ ազբիւրէն ջուր կրել տալով, մերթ բաղնիքը ծրար զրկելով, մերթ տղան խաղնել տռաջարկելով և մերթ ալ տասնեւչորս գրկաչափ խորունկ հորէն ջուր քաշել տալով, մինչդեռ մեր տունը ո՞վ պիտի համարձակէր այսպիսի նուաստ ծառայութիւնները սպասել ինձմէ :

Երեք տարիի շափ այսպէս կէս մը աշակերտութիւն և կէս մը սպասարութիւն ընելով՝ արհեստին մէջ բաւական հմտութիւն ստացայ, և եթէ քիչ մըն ալ համբերութիւն ունենայի՝ կարելի է առաջնակարգ ոսկերիչ մը ըլլայի, սակայն նկատելով որ վարպետու շատ չնչին շաբաթական մը կուտար, և ժամագործ մըն ալ գոհացուցիչ շաբաթական վճարել կը խոստանար, մանաւանդ որ ժամագործութիւնը աւելի օիմ և աւելի շահարեր արհեստ մըն էր, վարպետս ձգելուս պէս ժամագործին խանութը տեղաւորուեցայ: Ոսկերչութեան մէջ ունեցած վարժութիւններս շատ նպաստեցին ինձի և տարի մը շանցած սկսայ վար-

պետիս հաւասար ժամագործ մը նկատել ինքինքս ,
ըստ որում ինչ որ վարպետս երկու ժամ աշխատելով
չէր կրնար շինել , կէս ժամուան մէջ կը շինէի ևս և
յուսացուածէն շատ աւելի լաւ : Հայք , իսենդութիւն
չէ՞ր այլեւս սպասել որ վարպետս հարիւրները դըր-
պանը լեցնէ և շաբթու գլխուն մատին ծայրով բան
մըն ալ ինծի տալ բարեհաճի : Այս իսնդիրը ի նկատ
առնելով կը տոշորուէի զատ խանութ մը բանալու
երեւակայութեամբ . սակայն դժբաղդաբար ո՛չ վար-
պետէ մը պահանջուած տարիքն ունէի և ոչ ալ պատ-
կառանքն , ուստի կամայ ակամայ ստիպուեցայ ժա-
մագործի խալֆայութիւնս շարունակել երեք չորս
տարի , ամէն ամսագլուխ խանութը թողուլ սպառ-
նալով և շաբաթականի յաւելում ձեռք բերելով :

×

Քսանը հինգ տարեկան էի երբ իղձերուս պատ-
ուիլը տեսայ . ժամագործի վարպետ եմ , զոտ խա-
նութի տէր , ալ ինչ կ'ուզեմ . ինծի այնպէս կը թուի
որ ամէն մարդ մատով կը ցուցնէ զիս և փողոցներէն
անցուդարձիս աղջիկները իրարու կը փախսան . «Թա՛,
կ'անցնի կոր , ժամագործն է » : Շուկային մէջ ա-
ռիթներ կ'ստեղծեմ ժամագործի տիտղոսու յեղյեղե-
լու և ամէն անգամ որ աշակերտս տեղ մը զբկեմ ,
խանութէս բաւական հեռանալէն ետքը կը պօսամ .
« Ծօ՛ , ինծի նայէ՛ , չմոռնաս հա՛ , ես սահաթճիրն
աշկերտն եմ , սահաթճին մախսուս բարեւ ըրաւ ըսէ ,
սախըն վարպետս չըսես հա՛ , մարդը չի հասկնար ,
սահաթճին ըսէ հա՛ » :

Վերջապէս առջի ամիսները ամբողջ ուշա գըաւողը
« սահաթճին » ու « ժամագործն » էր , և չորս կողմա
երիտասարդներ տեսնելով՝ կը զարմանայի թէ ի՞նչ

Երեսով ընկերութեանց մէջ կընային մտնել առանց
ժամագործ ըլլալու » : Հաստատ համոզումս այն էր
որ ինծի նման զատ խանութի տէր ժամագործի մը
պարզ մէկ հաճութիւնը բաւական էր ուզած աղջիկն
իրեն կնութեան առնելու , սակայն նկատելով որ
ինքնօգնութեամբս փառաց գագաթնակիշտը հասած
եմ , և թէ պէտք չունիմ կնկանս շնորհիւ անուն մը
շինելու , որոշեցի թողուլ մեծատունները եւ ամուս-
նացայ աղքատիկ՝ այլ պարկեշտ ու գեղեցիկ աղջկան
մը հետ :

Տարիներու հետ մէկտեղ ժամագործութեան մօ-
տան ալ կամաց կամաց կ'անցնէր , ու սրտիս խորէն
կը մտածէի թէ՝ ժամագործ մը ի՞նչ կրնար ըլլալ ,
շատ շատ ընտանիք մը կրնար ապրեցնել , եւ այս բա-
ւական չէր ինծի համար , աւելի լաւագոյն գործ մը
կը փնտռէի , որ ընտանեացս ապագան ապահովէի ,
որովհետեւ երեք զաւակներու հայր եղած էի :

Օր մը քանի մը գիւղացիներ խանութ գալով՝
հինգ վեց կտոր հին դրամ ծախել ուզեցին ինծի , թէ
եւ այդ դրամներուն արժէքը չէի գիտեր , սակայն
կշռելով՝ արծաթի գնով առի , եւ հետաքրքրութենէ
մղուած իսկոյն դիմեցի մէկ քանի անթիվանիներու . ո-
րոնք իմ գնածէս յիսնապատիկ աւելի գին առաջար-
կեցին , գումար մը՝ զոր ես ամսուան մը մէջ չէի կըր-
նար շահիլ ժամագործութեամբ :

Մնաս բարո՞վ ժամագործութիւն . այն օրուընէ
սկսեալ անթիքածի էի այլ եւս , ու խելքս միտքս
տուած էի հնութիւններ ձեռք ձգելու . եթէ դժուա-
րին կէտ մը կար , ան ալ արհեստէն չհասկնալս էր ,
սակայն այնչափ եռանդ ունէի՝ որ քիչ ատենէն հը-
րապարակի վրայ գտնուած անթիքաճիներուն մեծա-
գոյն մասին չափ կը հասկնայի հնութիւններէ : Այլ

եւս ստակ շահելու միջոց մը չէր ինծի համար անթիքանութիւնը, այլ պարզապէս մոլութիւն մը որ գիշեր ցերեկ ետեւէն ճգած կը քաշէր կը տանէր զիս հոն, ուր հնութիւն մը, կամ հնութեան վերաբերեալ խօսակցութիւն մը կար. կը փափաքէի որ բոլոր տուներուն ծակուծուկը պտտէի ու գտնուած հնութիւնները երեւան հանէի ։ Քանի՛ քանի՛ շաբաթներ ջընջին յոյսերով մեծամեծ ծախքերու ենթարկուած եմ հնութիւն մը ճեռք անցնելու համար ու չեմ յաջողած. իրաւ է որ ժամագործութենէ խիստ շատ կը շահէի այս արհեստովս, սակայն կանոնաւոր շահ մը ըըլլալով՝ եկածին պէս կ'երթար. շատ անգամ ամբողջ շաբաթներ հինգ փարա չէի շահեր, եւ օր մ'ալ մեծ գումար մը ճեռք անցնելուս պէս՝ հին ծակերուն տեղը կը գոցէի :

* * *

Եգիպտոս կը գտնուիմ, հնութեանց որրանը, կը գիտեմ չեմ յագենար. մէկ կողմէն կը գնեմ, միւս կողմէն կը ծախսեմ երոպացւոց եւ ջուրի պէս ստակ կը շահիմ, ի՞նչ տեսակ անթիքաներ կ'ուզէք որ առած ու ծախած չըլլամ. սակայն այս կեանքն ալ զարմանալի երեւոյթ մը ունի, շատ կը շահիմ եւ կը ծախսեմ, ընտանեացս կը դրկեմ, եւ ամսագլխուն մեծ գումար մը չեմ աւելցուցած, այնպէս որ եթէ հիւանդութիւն մը կամ ծախսորդութիւն մը պատահի, հողին վրայ եմ:

Աւելի լաւագոյնը գտնելու յոյսով Եգիպտոսէն կ'անցնիմ երոպա, կը պտտիմ չոռմ, Բարիզ, Լոնտրա եւ Աթէնք; Գործերս յաջող են, բայց ոչ ապագայ մը շտկելու չափ, ըստ որում ինչպէս կը տնսնաք, թէեւ շատ կը շահիմ, սակայն շատ ալ կը ծախ-

սեմ անհրաժեշտ պէտքերուս համար. որովհետեւ եւ ապրուստի ետեւէ չեմ պտտիր, այլ մեծկակ շահ մը կը փնտուեմ այսչափ աշխատութիւններուս փոխարէն,

Թրիէսթէ գտնուած ժամանակս բարեկամներէս մէկը կը համոզէ զիս որ մեծ քանակութեամբ շաքար առնենք եւ առանձին նաւ մը վարձելով Պոլիս բերենք ծախսնք, ու այնչափ մեծ շահեր կը ցուցնէր որ անթիքան, հնութիւնը, եգիպտոսն ու Եւրոպան բոլորն ալ մոռնալով ունեցած ստակնիս կը վճարենք մնացածին համար ալ մուրհակ մը տալով նաւ մը շաքար կը բեռցնենք եւ կը դառնանք Պոլիս Երկու ամիսէն կը ծախսնք կը փոխսնք եւ խնդումերես կը վերադառնանք ի թրիէսթ, Երկրորդ նաւ մ'եւս՝ Երրորդին արդէն մեծ հարուստ մը ըլլալու մատ մը մնացեր էր, սակայն անակնկալ պատճառներ այնչափ կը կոտրեն շաքարին գինը, որ Պոլսոյ մէջ մեր դրամագլուխը վրայ տալէ զատ, մեծկակ գումար մ'ալ պարտական կը մնանք գումար մը՝ զոր կարելի չէ վճարել ո՛չ ժամագործութեամբ եւ ոչ ալ անթիքանիութիւնով :

Ա՛լ այնուհետեւ հարիւրաւոր անգամներ կ'իյնամ ու կ'ելլամ, մերթ շահելով, մերթ կորսնցնելով, մերթ Եւրոպա, մերթ Եգիպտոս, մերթ Հնդկաստան, մերթ Կովկասիա Երթաւ գալով եւ տեսակ տեսակ պարանքներ առնելով ու ծախսելով, Վերջապէս այսօր 65 տարեկան հասակիս թեւակոխած եմ, 50 տարի է առեւտրական ասպարէզին մէջն եմ եւ նիւթական որ և է ապագայ չեմ յաջողած ճեռք բերել, այն միակ դըրամագլուխը՝ որ ճեռքս մնացած է այժմ, փորձառութիւնն ու խրատն է. բայց դժբաղդաբար ո՛չ նըպարագաճառէն եւ ո՛չ հացագործէն կարելի չէ քրէտի

ձեռք անցնել՝ խրատն ու փորձառութիւնը երաշխա-
տորութիւն տալով :

Հսէք, կ'աղաչեմ, ես ինչո՞ւ չեմ յաջողիք :

ՔԱՍԻՄ

ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻ

— Ինչո՞ւ համար չափահաս աղջիկները դիւրա-
խար չեն ըլլար :

— Փորձուած ըլլալնուն համար :

— Ինչո՞ւ համար աղջկան մը սիրտը յարդի է :

— Շատերէ խնդրուած ըլլալուն համար :

— Ի՞նչպէս ամէն բան կարելի կ'ըլլայ :

— Վարժութեամբ :

— Ե՞րբ երեւան կ'ելլէ երկու սիրահարաց գաղտ-
նիքը :

— Երբ նորը յաջորդէ :

— Ե՞րբ աւելի հիւանդ կ'զգայ կին մը ինքզինքը :

— Երբոր ամուսինը հարստանայ :

— Մարդ իր ամենամեծ հաճոյքը ո՞ւր տեղ կընայ
փնտոել :

— Իր տան մէջ :

— Դժբաղդութիւնը մինա՞կ կուգայ :

— Երբե՞ք :

— Ո՞ր աղջիկները վարժուհի կ'ըլլան ընդհանրա-
պէս :

— Անոնք որ աւելի բաներ սորվելու փափաք եւ
սէք ունին :

— Հիմակուան երիտասարդներն ե՞րբ կ'ուզեն ա-
մուսնանալ :

— Երբոր դրամնին հատնի :

— Ե՞րբ կը մնանկանայ վաճառական մը :

— Երբոր կ'ամուսնանայ :

— Ասելութիւն մը ի՞նչչէս ծախու կ'առնուի :

— Ապերախտ մը հարկադրելով :

— Ի՞նչ է հնարքի մայրը :

— Պէտքն ու կարօտութիւնը :

— Ո՞րն աւելի խելացութիւն է, ամուսնանա՞լը՝
թէ չամուսնանալը :

— Երկուքն ալ :

— Որո՞նք եղան բատրիլին յարգը կոտրողները :

— Մանկանց պարտիզպանուհիները :

— Ի՞րն է բարձր ձեռքը :

— Ան՝ որ կուտայ ազնուօրէն :

— Ի՞նչ կը պահանջէ խոհեմութիւնը :

— Պէտք է ժամանակ տալ ժամանակին :

— Ի՞նչ բանով կը ճանչցուի մարդուս արժանիքը :

— Խօսէ՛, որպէս զի ճանչնամ զքեզ :

— Ե՞րբ կ'սկսի ծերութիւնը :

— Քոքողութեան թուականին :

— Ի՞նչ տեսակ բան է նորելուկ ազնուականու-
թիւնը :

— Զորիին հարցուցին թէ հայրդ ո՞վ էր : — Զին
մօրեղբայրս է, պատասխանեց :

— Աղուէսը ե՞րբ կը հսկէ :

— Երբ հաւը կը ննջէ :

— Ինչո՞ւ համար ամառը մէկ երկու ամիս արձա-
կուրդ կը տրուի ուսանողաց :

— Գիտցածնին ալ մոռցնել տալու համար :

— Ինչո՞ւ համար Զատկի եւ Ծնունդի առթիւ այ-
ցելութեան կ'երթան :

- Օդին գէշութեան վրայ խօսելու համար :
 — Ե՞րբ վարձակալ մը նստած տունին չհաւնիր :
 — Երբոր վարձքերը դիպուին :
 — Ինչո՞ւ համար գործուած մեղքերու թողութիւն
 Կը տրուի :
 — Կրկին գործուելու համար :

ՅԱԿՈԲ ՀԱՃԵԱՆ



ԱՆԻՈՂԵՄ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Ա. Ռ Չ Ա. Գ. Ա. Ն Վ Ի Ւ

- Սիրե՞ս տեսնել՝ բարի կուսական
 Դեմքն հայուհեաց նորաբողոջ ... — Ո'չ :
 — Ի՞նչ, անոնց մեջ միքէ չիկա՞ն
 Անկեղծ սիրտեր սիրադրողոջ ... — Ո'չ :
 — Զի՞ մտներ մեջն անոնց ունկան
 Քարոզին խատն յեկեղեցւոջ ... — Ո'չ :
 — Է՞ն, զեր զիսե՞ն փակել բերան
 Կամ խօսիլ ի վայել տեղւոջ ... — Ո'չ :
 — Հոգւո՞վ ալ բարձր, ազնուական
 Զե՞ն մեր տիկնայի հարուս ու զոջ ... — Ո'չ :
 — Հնազա՞նդ են իրենց երկան
 Իբրև իրենց միակ տիրոջ ... — Ո'չ :

- Յարդ կ'ընծայի՞ն գէր տեւական
 Իրենց աւագ տալ ու ներոջ ... — Ո'չ :
 — Հապա գորով, սէ՛ր տեւական
 Չիկա՞յ ընդ մէջ հարս ու կեսոջ ... — Ո'չ :
 — Մարդ նեռատես ու խոհական
 Պարտի՞ անսալ խօսին կնոջ ... — Ո'չ :
 — Պատասխաններդ են միտական
 Զանո՞նք կրկնեմ ես մեծագոջ ... — Ո'չ :
 — Կանանց ձեռքեն ուրա՞ն որ կան
 Ա՛լ չե՞մ կրնար փրկել իմ պոչ ... — Ո'չ :

Ա. ՂԵՐԱ. Գ. ՓԱՆՈՍԵՍ. Ն

ԿՆՈՉ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Ա. Ր Չ Ա. Գ. Ա. Ն Վ Ի Ւ

- Մարդը կ'ըմբռնի՞ քէ մատաղ կուսին,
 Սիրող սիրտն ի՞նչ նուրբ ծաղկի բողբոջ է ... — Զի՞ :
 — Կառզրւիլ առանց դրամօմիքի յոյսին,
 Կ'ըսպասուի՞ այսօր ո՛ եւ է մանջէ ... — Զի՞ :

- Ե՞ն, կ'արժէ՞ որ կոյսն ըսպասուած փեսին
Համար երազուն, անձկա՞ւ հառաջէ... — Զէ:
- Հեգ, հըմայաքափ ամէն նոր հարսին
Ողբն ու գանգատանին հովու տրտո՞նց է... — Զէ:
- Ամէն մարդ, իբրեւ հայր, եւ ամուսին,
Եր ստանձնած պարտերն աղէկ կը նանչէ... — Զէ:
- Գիտէ՞, նախ, երբու նստին, կամ խօսին
Միրով ակնածիլ աներ-զոքանչէ... — Զէ:
- Երբ իր քով անկեղծ գուրգուրանի պակսին:
Եր կնոշն զորով, սէր կը ներշնչէ... — Զէ:
- Ինքն անգին գա՞նձ մ 'ե յատկութեանց մասին
Որ կնոշն այնքան խստապահնց է... — Զէ:
- Կը զգա՞յ իր վարմունին յանախ կուս ու սին
Որով կնոշ զոդու հոգի՞ն կը տանջէ... — Զէ:
- Մարդոց սրնապարծ եւ անմիտ ԵՍին
Կին, յար զլխիկոր, այո՛, մրմնչէ... — Զէ:
- Միւս փառաւորուի՞ արեւու լոյսին
Դամանն այն զոր կինն երիկ կը կոչէ... — Զէ:

ԱՂԵՔԸ. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

ՆՅԱՆ Վ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Վ. Պոլիս, Պապը Ալի Ճատտէսի, Խցամ լրագրին դեմ

ԹԻՒ Յ 8

ՔՍԱՆ ԵՒ *** ԴԱՐՈՒ ՃԱՇ ՄԸ

Սնունդներու խնդիրը տարրաբանական հարց
մըն է : Ածխական բրուեն՝ ածուխ առնելով,
ջուրեն՝ ջրածին եւ օդին ալ բրուածին ու
բորակածին առնելով կարելի պիտի ըլլայ ա-
ռանց ուրիշ նիւրի օգնութեան պատրաստել
մեզի անհրաժեշտ սնունդը :

Է. Պէրթէլէ

Իրաւ որ ստորնացուցիչ բան է մտածել թէ եօ-
թանասուն տարեկան մարդ մը իր կեանքին Վեց
ամբողջ տարիները անցուցած է մի միայն կերակուր
ուտելու համար :

Եւ սակայն ապրելու համար մարդ ուտելու է
ինչպէս որ կը քնանայ կամ կը խմէ . պէտք է մար-
սողութեամբ եւ նիւթերու իւրացումով՝ մարդկային
մարմինին մաշած գործարանները նորոգուին :

Դժբաղդպար , որկլամոլութեան եւ նրբաճաշա-
կութեան հետեւանքով , մարդիկ սնանելու տեղ կ'ու-
տեն : Արդարեւ աշխատող մէկուն օրական պէտքը 120
կրամ ալպինմին , 90 կրամ ճարպ եւ 330 կրամ օոլայ ,
ընդամէնը 540 կրամ է 24 ժամուան համար , բայց
ապրելու համար մարդ օրական 540 կրամէն շատ ա-
ւելի բան կ'ընդունի , որովհետեւ իրեն սնունդին ան-
հրաժեշտ այս տարրերը խառնուած են մեծ քանա-
կութեամբ անպէտ նիւթերու հետ : Ակռաներուն ,
լեզուին , ստամոքսին , աղիքներուն դերը ճշդիւ կը
կայանայ կերուած ահագին քանակութեամբ կերա-
կուրներուն մէջէն զատելով ձեռ 540 կրամի անհը-
րաժեշտ սնունդը , մնացեալն արտաքսելու համար
մարմինէն գուրաս : Թէեւ կերակուրներուն պարունա-
կած ոչ-օգտակար մասը բաւական մեծ քանակութիւն
մըն է , սակայն մոռնալու չէ ջուրը՝ որ ահագին հա-
մեմատութեամբ մաս կը կազմէ մեր կերածներուն ,
օրինակի համար , գետնախնճորին 100ին 4ը՝ անօ-
գուտ է , բայց 100ին 75ն ալ ամբողջ ջուրէ կազմուած
է , նոյնպէս միսին 100ին 5ը օգտակար չէ՝ բայց 100ին
62ը ջուր է :

Գիտունները՝ որ ամէն բան պարզելու եւ դիւրացընելու եւ շուտով կատարել տալու կ'աշխատին, անշուշտ պիտի փորձեն սնունդներուն մէջէն զատել հանել բոլոր աւելորդ նիւթերը եւ մանաւանդ զանոնք ուռեցնող ահագին քանակութեամբ ջուրը; Ասանկով պիտի յաջողին ամբողջ ճաշ մը կազմող սնունդի նիւթերը սեղմեցնել պղտիկ հապի տուփի մը մէջ. բայց այն ժամանակ չպիտի կրնանք ա'յս ինչ կերակուրը սիրել եւ ուրիշ մը չսիրել, մեր բարեկամներուն գեղեցիկ համադէամներ հրամցնել, որովհետեւ այն ատեն բոլոր կերակուրները անկերպարան, անճանաչ

բան մը պիտի ըլլան, նարտի խաղի զարի չափ խո-
րանարդ մը պիտի ներկայացնէ մեր աղւորիկ ձու-
կերը, խորոված միսի խոշոր կտոր մը պատիկ բուլի
մը ձեւը պիտի առնէ. գաւաթ՝ մը կաթը՝ սիսեռի չափ
գունտ մը պիտի դառնայ, նոյնպէս մեր թէյը, գի-
նին, ջուրը, եւայլն :

Այս դրութեամբ 300 քիլոնոց ահագին կով մը ,
զտուելով , ձնչուելով . $7\frac{1}{2}$ քիլոյի սնունդ տուող պըզ-
տիկ կոյտի մը պիտի վերածուէր : Եւ մարդ մը , որ
սովորաբար , տարուան մը մէջ իր ծանրութեան եօթ
անգամ աւելի զանազան ուտեստեղէն կ'սպառէ , այս
կերպով հաղիւ $1\frac{1}{2}$ անգամ սննդատու հիւթերու պէտք
պիտի ունենայ :

Ճնշեալ սնունդիներու գիւտը միակ անհատական տե-
սակէտով օդտակար չպիտի ըլլայ, երկրախոյզներ,
ճամբորդներ ամենամեծ դիւրութիւն մը պիտի վա-
յելեն: Բեւեռախոյզ Նանզէն եթէ ուղէ նորէն Հա-
կարջային սառոյցներու մէջ նոր արշաւախումբ մը
կազմել, չպիտի ստիպուի իր շոգենաւին ամբողջ կէսը
ուտեսատեղէնով լցնել: Մինակ ինքը պիտի կրնայ
քաշել տանիլ բալխիրի մը մէջ՝ երեք տարիներ բա-
ւելու չափ սնունդ:

Բայց մի՛ կարծէք որ հոս կանգ կ'առնէ սնունդ-
ներու վրայ եղած յառաջադիմութեան գաղափար-
ները . Երբ տարրաբանական գիտութիւնը իր ձեռ-
քին տակ ունենայ պէտք եղածին չափ զօրութիւն
արտադրող ոյժ մը . այն ատեն մարդուն սննդառու-
թեան միջոցները հիմնովին պիտի փոխուին, որովհե-
տեւ սովորական կերակուրներուն կամ անոնց չտուած
նիւթերուն տեղ մարդուն պիտի մատակարարէ ուղ-
ղակի այն նիւթերը, որոնք մարմինին կենդանի մը-
նալուն անհրաժեշտ նիւթերը կը ձեւացնեն . այն տ-

տեն արուեստակեալ կերպով պիտի շինեն իւղը, շաքարը. նոյն իսկ ասոնք կազմող պարզ մարմիններու միջոցաւ: Ալ գիւղացին կամ երկրագործը չպիտի վախնայ կարկուտէն կամ երաշտութենէ, որովհետեւ ո՛չ արտ պիտի ըլլայ մշակուած, ո՛չ ալ այդի: Քիչ մը սեւ պղպեղ առնելու համար, փոխանակ նպարավաճառին դիմելու՝ դեղագործին պիտի դիմէք. նոյն պէս իւղ, շաքար ևայլն, ամէն ինչ գնելու համար: Թթուածին, բնածուխ ջրածին եւ ուրիշ քանի մը պարզ մարմիններու միջոցաւ՝ գործարաններու մէջ պիտի պատրաստուին հաց, միս, կաթ, գինի եւլն. Եւլն: Անշուշտ ան ատեն ղեկաւոր օդապարիկը հընարուած կ'ըլլայ: Զբոսաշրջիկները՝ իրենց թղթապանակին մէջ քանի մը ամսուան ուտելիքը դնելով՝ պիտի հեծնան այդ ղեկաւոր օդապարիկներուն մէջ եւ օդին մէջ բարձրերէն թռչելով՝ աշխարհիս շրջանը պիտի ընեն:

Սիրուն կեանք չէ՞ ասիկա:

Թարգմ.

Զ. Ն. ՊէրՊէրեան

Օ Գ Տ Ա Կ Ա Ր Խ Օ Ս Ք Ե Ր

Երբ կը տեսնես որ բանի մը կը տեն ջաս՝ ատիկա անարգէ, չսխալելու միակ միջոցն այս է:

Դանդաղօրէն հնազանդիլը՝ հնազանդիլ չէ բնաւ: Գեղի սիրողին վէրքերը՝ քեղի ատողին տուած համրոյներէն աղէկ է:

Խելացի մարդն ո՛չ ուրիշին գործերուն կը խառնուի, ո՛չ ալ կը թողու որ ուրիշները իր գործերուն միջամտեն:

Մի՛ ըսէք « Ահա՛ մեղք գործեցի, պատիժս ալ պիտի գայ », որովհետեւ Աստուած ամէն բան իր ժամանակին կ'ընէ :

Անձարակ դերձակը՝ յանցանքը մկրատին վրայ կը ձգէ:

Առատաձեռնութիւնը շատ տալուն մէջ չկայանար, այլ յարմար ատենին հասնելուն:

Ամէն մարդու հետ սիրով վարուէ, բայց եւ ոչ մէկուն խորհուրդ հարցուր:

Կանխիկ դրամէն աւելի պերճախօս բան չկայ:

Դատ ունեցող ագահը՝ անպատճառ կը կորսնցընէ դատը:

Փորձը կը հաստատէ թէ՝ իր անձին համար ներողամիտ, եւ ուրիշին համար խիստ ըլլալը՝ մի եւ նոյն պակասութեան արդիւնքն է:

Արդէն աղքատ եղողը՝ մի՛ տրտմեցնէք, եւ տառապողին օգնութեան հասնելու համար մի՛ դանդաղիք:

Չեր գործերուն մէջ ջանացէք օդտակար ըլլալ և ո՛չ թէ փայլիւ:

Գործունէութիւնը յաջողութեան մայրն է:

Աստուած կը հսկէ ուղղամիտ մարդուն վրայ եւ անոր գործերը կը պաշտպանէ:

Յարդի կապոցին մէջ ասեղ չեն փնտոեր:

Ընտանի օջախէն աւելի տաք կամ աւելի պաղբան չկայ:

Կեանքին վախճանը սկիզբին հետ համաձայնեցընել գիտողը՝ ամենէն երջանիկ մարդն է:

Մեղաւորին ինչքին ու հարստութեանը մի՛ նախանձիր, որովհետեւ չես գիտեր թէ անոր վախճանը ինչ պիտի ըլլայ:

Գէշ հողի վրայ աղւոր պարտէղ ըլլար:

Ամէնէն աւելի գեղեցիկ յատկութիւններն են զորա
շարերը իբր գէշ կը դատապարտեն :

Դուք բարիք ըրէք, թո՛ղ ուրիշներ ուզածնին
ըսեն :

Քիչ կտաւէն՝ կարճ հագուստ կը շինուի :

Անկեղծ բարեկամութեան մէջ անուշութիւն մը
կայ, զոր չեն կրնար հասկնալ գէշ սիրտ ունեցող-
ները :

Դատելէ առաջ՝ արդարութիւն սորուեցէք եւ խօ-
սելէ առաջ բան գիտցէք :

Ժամանակը կ'ամրացնէ բարեկամութիւնը, բայց
մէրը կը պակսեցնէ :

Հզզար բարեկամը քիչ է, մէկ թշնամին շատ է:
Ինքնիրեն եկող հիւրը կշտացնելը շատ դժուար է:
Եթէ գործունեայ ըլլաք, հունձքերնիդ առատ
կ'ըլլայ եւ անօթութիւնը ձեզնէ միշտ հեռու կը փախ-
չի:

Երջանիկ ըլլալու համար սիրտը հաշտեցնելու է
պարտականութեան հետաւ

Քու թշնամիիդ մեռնելուն վրայ մի՛ ուրախանար,
որովհետեւ ամէն մարդ ալ պիտի մեռնի :

Սիրոյ մէջ կիները՝ այրերէն շատ աւելի հեռու-
ները կ'երթան, բայց էրիկ մարդիկ կը գերազանցեն
զանոնք բարեկամութեան մէջ :



Ն Շ Ա Ն Ա Լ Ո Ր Մ Ի Ա Կ Ա Ն Ի Ն Ե Բ

Աննիպալ. — Կարգեգոնացի զօրավար, Հռովմա-
յեցւոց դէմ ըրած արշաւանքին միջոցին՝ ճահիճներու
մօտ բանակ դնելով՝ ծանր հիւանդութիւն մը ունե-
ցաւ եւ Քանի ճակատամարտէն քիչ առաջ՝ մէկ աչքը
կորսնցուց :

Պաեապիկս. — Անսիրի պատերազմին մէջ յաղ-
թուելով Թամէրլանի առաջը տարուեցաւ, տեսնելով
որ այս վերջինը զինք տեսած ժամանակ կը խնդայ,
անոր երեսին տուաւ որ, այս կերպով կ'անպատուէ
իր յաղթութիւնը :

— Ո՛չ, ըստ Թամէրլան, քու զժբաղդութիւնդ
չէ՝ որ կ'անարգեմ, այլ խնդալս չեմ կրնար բռնել,
երբ կը մտածեմ որ Աստուած որչա՛փ հոգը ըըներ
եւ բանի տեղ չի դներ մարդկային զօրութիւնը, եւ
զայն ինձի նման կաղի մը եւ քեզի պէս միականիի
մը ձեռքը կը յանձնէ :

Քամոյենս. — Բորթուկալցի նշանաւոր բանա-
տեղ, Մաւրիտանացւոց դէմ կռուած ժամանակ ի
Սէօթա, հրացանի հարուած մը մէկ աչքը պայթե-
ցուց :

Ֆլոր Բիկր. — Փիլիպպոս Գեղեցիկի նշանաւոր
նախարարը :

Լեռն Կամպերքա. — Ճարտարախօս եւ քաղա-
քագէտ Ֆրանսացի; Հստ ոմանց տղայութեան ատեն
ընկերներէն մին խաղի ժամանակ ժախաւելութեամբ
մէկ աչքը վնասեց. ուրիշներ ալ կ'ըսեն թէ՝ երկա-
թագործի մը աշխատիւը դիտած ժամանակ հրաշէկ
երկաթի կայծ մը դուրս ձգեց աչքը :

Լիգուրկոս . — Սպարտացի օրէնսդէտ , իրարանցումի մը մէջ գաւազանի հարուած մը աչքը հանեց :

Փիլիպոս . — Հայր Մեծն Աղէքսանդրի : Փիլիպոս՝ Ասթէր անուն ճարտար նետածիդ մը նախատած էր իբր անվարժ : Ասթէր անգամ մը Փիլիպոսին պաշարած մէկ քաղաքին մէջ գտնուելով՝ զինքը նախատղին նետ մը արձակեց , որուն վրայ գրուած էր , « Փիլիպոսի աջ աչքին » : Նետը նպատակին հասաւ : Փիլիպոս զայն քաղաքը նետել տուաւ սա արձանագրութեամբ . « Երբ Փիլիպոս քաղաքն առնէ՝ Ասթէրը կախել պիտի տայ » : Քաղաքն առնուեցաւ , Ասթէր կախուեցաւ , բայց Փիլիպոս միականի մնաց :

Բէկլիս Հօրասիուս Քօֆիս . — Հռովմայեցի , մինակ ինքը պաշտպանած է Տիրերիս գետին կամուրջը , ուրկէ Բօրսէնայի զինւորներն անցնելով Հռովմ պիտի մտնէին : Երբ Հռովմայեցիք կամուրջը փլցնելով անցքը գոցեցին , Հօրասիուս գետը նետուեցաւ եւ ընկերներուն միացաւ : Կ'երեւի թէ՝ այս միջոցին իր մէկ աչքը կորսնցուց :

Ա.ԶՔԵՐՈՒ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ .

Աչքերը որ ամէնէն փափուկ գործարաններն են մարդուն , անգամ մը տկարանալէն ետքը , ա'լ չեն կրնար առաջուան գորութիւնն ու առողջութիւնը վերստանալ :

Զեր եւ ձեր տղոց անկողինները բնաւ պատուհաններու առջեւ մի' ձգէք , այնպէս որ լոյսը ուղղակի աչքին զարնէ , նոյնպէս աշխատութեան սե-

զաննիդ մի' դնէք անանկ ձեւով մը որ ձեր կոնակը պատուհանին դարձած ըլլայ . կարդացած ժամանակնիդ նայեցէք որ լոյսը ամբողջովին ձեր գիրքին վըրայ իյնայ եւ որքան որ կարելի է քիչ զարնէ երեսնուդ : Այս խրատները մեծ բաներ չեն , բայց շատ օգտակար են :

Տղաքները — եւ շատ անգամ ալ մեծ մարդեր — կարդացած ժամանակնին սովորութիւնը ունին քթերնին գրքին մէջ խօթելու , մինչդեռ գլուխը շիտակ բռնելու է եւ գիրքը կամ տեսրակը բարձր : Այս ունակութեան չվարժեցնելու համար դպրոցականի դրասեղաններուն վրան շիտակ շինելու տեղ՝ լաւ է բարձր ու քիչ մը ծուռ շինել : Խոկ ոտքի վրայ՝ գիրքը ձեռքը կարդալու համար՝ անիկա այն քան բարձր բռնելու է որ առանց գլուխը ծռելու կարելի ըլլայ տեսնել :

Դիշերը վառած արուեստական լոյսերն ալ մեծ ազգեցութիւն ունին աչքերնուս վրայ : Երբ լամբարով կամ ճրագով կ'աշխատիք , միշտ ձախ կողմերնիդ դրէք զայն . ասիկա շատ դժուար բան մը չէ , բայց լուսաւորուելու համար ամէնէն ընտիր միջոցն է : Ասկէ զատ լամբարին տաքութիւնը գլուխնիդ չզարնելու համար լուսամիուի դրէք :

Զօրաւոր եւ ուղղակի աչքի զարնող լոյսը շատ գէշ հետեւանքներ կ'ունենայ աչքին վրայ , եւ նոյն խոկ հիւանդութիւններ յառաջ բերելով՝ կուրութիւն կրնայ պատճառել : Հասարակածային այրեցեալ երկիրներուն բնակչաց աչքերը միշտ կծկուած ու դարախոտ են՝ արեւուն կիզիչ ճառագայթներուն պատճառաւ . նոյնպէս հիւսիսային սառուցեալ դաշտերու բնակիչները ենթակայ են աչքի տեսակ մը հիւանդութեան , որ յառաջ կուգայ անդադար ձիւնին ցո-

Ապցիկ սպիտակութիւնը դիմակելէն :

Անկողինի մէջ պառկած կարդալն ամէնէն գէշ սովորութիւնն է աչքերուն համար :

ԵՐԿՐՄՎՈՐԾԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

Սառած ցորեններ. — Սառած ցորենները կարելի՞ է միթէ աղասիել աղբի կամ պարարտութեան միջոցաւ, երբ բոյսերուն ցօլունները տակաւին ուժով են : — Ո՞չ՝ որովհետեւ անգամ մը որ բոյսին արմատը սառի, այլ եւս չկրնար իր նախկին առողջ վիճակին վերադառնալ, եւ ցորենի հասկը եթէ հասուննայ իսկ՝ հիւանդութեան շատ ընդունակ կ'ըլլայ : — Սառած դաշտ մը նորէն հերկելէ ու ցանելէ զատ լաւագոյն միջոց մը չկայ : Այս երկրորդ հերկին համար կը գործածուի աշնան ցորեններ՝ որոնք ուշ հասունցող կ'ըւլան :

Զիուն ՏՐՈՒԵԼԻ խնամքները. — Առողջ ձի, — Առողջ ձին ո՞չ վէրք կ'ունենայ եւ ո՞չ ալ տկար կ'ըլլայ, շատ քիչ կը պառկի, իր վրայ ամէն ինչ զուարթութիւն մը կը ցուցնէ. աչքերը պճլտուն կ'ըլլան եւ գլուխն ու ականջներն միշտ կը շարժեն : Միշտ ու շագիր վիճակ մը կ'ունենայ, հանգիստ կեցուածք մը կը ցուցնէ եւ դիւրութեամբ տեղէ մը ուրիշ տեղ կ'երթայ, Աչքին թարթիչները միշտ թրջած կ'ըլլան, բերանը՝ պաղ, երիկամունքը կակուղ եւ ճիռն, շընչառութիւնը հանգարտ ու կանոնաւոր, մազերը դիւրաւ չեն փրթիր, ձաշի պահուն, ձին կը ցուցնէ թէ՝

անօթի է : Ախորժակը գոհացուցիչ ու կանոնաւոր կ'ըլլայ : Աղբը՝ սովորական ձեւով, եւ մէզը վտիտ և դեղնագոյն,

Հիւանդ ձի. — Հիւանդ ձին վիրաւորած կ'ըլլայ կամ անանկ տկարութիւններ կ'ունենայ որ կ'արգիւն զինքը աշխատելէ եւ կամ աշխատութեան ատեն անհանգատութիւն կուտան իրեն :

Սրտաքին վէրքերը եւ դուրսէն ունեցած հիւանդութիւնները տեսնելը դիւրին է, եթէ այդ տկարութիւնները թեթեւ ըլլան, ձին կը պահէ իր առողջութեան ժամանակի ունեցած յատկութիւնները :

Երբ հիւանդութիւնը ներքին է՝ ձիուն արտաքին տեսքը գուշակել կուտայ այդ :

Հիւանդ կենդանին բոլորովին անտարբեր կ'ըլլայ զինքը լրջապատող առարկաներու նկատմամբ, տխուր արտայայտութիւն մը կ'ունենայ . Գլուխը կախ կը մնայ, իրթնած անդամներն միշտ կը փոխէ կամ չորս ոտքերուն վրայ անշարժ կը քամուի . Երբեմն կ'ըլլայ որ շատ կը պառկի, երբեմն ալ բնաւ, ախորժակը անկանոն կ'ըլլայ եւ շատ անգամ յարդին վրայ յառած կը մնայ առանց ուտելու : Գրեթէ միշտ չերմ կ'ունենայ, աչքերը կը կարմրին, կը դեղնին կամ տժգոյն կը մնան, թերանը տաք կամ չոր կ'ըլլայ, և թուքը ցամքած, երիկամունքը՝ եթէ մատով կոխուի թեք ու անզգայ կը մնայ, եւ երբեմն ալ շատ կը ցաւի . չնչառութիւնը կ'արագանայ եւ անկանոն կը դառնայ, երակի զարկը խիստ արագցած կամ անզգալի, չերմութիւնը շատ բարձր, մէզը՝ թանձր ու կարմիր, քալած ժամանակը ցաւառիթ բան մը ունենալը կը մատնէ :

Անսովոր պէտքին հոգալը, պնդութիւնը կամ փորհարութիւնը՝ մարսողական խողովակի հիւանդու-

թիւն մը կը ցուցնեն : Յարաճուն ու ցաւառիթ հազը, եւ կարձ՝ նեղուած կամ խիստ արագցած շնչառութիւնը կոկորդի կամ կուրծքի տկարութիւն մը կը մատնանշեն :

Զերմ ունեցող ձիեր . — Զիու մը ջերմ ունենալն հասկնալու համար շնչառութիւն, երակներու զարկին ու մանաւանդ մարմինին ջերմութեանը կը նային : Երբ շնչառութիւնն արագ է, երակներն խիստ շուտ զարնեն և մարմինին տաքութիւնն ալ բարձր է՝ կը դայ հասկցուիլ որ կենդանին ջերմ ունի :

Նեշառութիւնը ի՞նչպէս նննել . — Զիու մը շնչառութիւնը քննելու համար՝ կենդանիին առջեւը կը կենան ուսին մօտ, կամ մէկ կողմը՝ քիչ մը ետեւօք՝ անանկ որ կարելի ըլլայ լաւ տեսնել կուրծքին ելևէջն : Երբ ձին առողջ է, այդ շարժումն ծանր ու կանոնաւոր կերպով տեղի կ'ունենայ : Չափահաս ձիուն կուրծքի ելեւէջն տասը կամ տասներկու անգամ տեղի կ'ունենայ մէկ վայրկեանի մէջ, իսկ պղտիկներունը՝ տասնը չորսէն տասն և հինգ անգամ .

ԱԿՆՑԻ ՍԱՐԱՓ ՄԸ

— Բարի՛ լուս, եէէն աղա :

— Ասծու բարին, լիւկ, ի՞շ կու բտուտես Փէօստեղվանուցս :

— Էֆէնտըմ, բամբանքիդ եկա ուր, բան մը իւ ֆատէ տի անիմ, չգիտեմ թը՝ խապուլ տի անէք՝ թը չէ՛ :

— Խոսէ տեսնիմ թը ի՞նչ է, ձառքէս ուր գայ

նը պաշ իւստիւնէ . մընչու թէօրոս, նըկէց խայֆէ ըսէ :

— Էֆէնտըմ, վէլիկաթէն մեր Բոթիկէօնց հաճի Նիկողոս աղային, էֆէնտըմ, աղբօրորդին եկեր է, արզու կանէ ուր տեղ մի սարֆութիւն անէ . հալ պու քի մինակ որ անէ նը՝ զաննս չի տի կրաար պէճէրմիշ անէր, քընչիւմ, Ըստըմպօլու հիմակու շան տղութենէն մալիւմաթ մը չի կալլեր :

— Զըսես թը, իշուն մէյն է եղեր : Ըստըմպօլու շանտըղութիւնը իշ ճիվերս է ուր, էս քանի աս ուր ես գիտեմ նը, Պիթ-Բազարի թէօրը Փրութաախ կու դարձնեմ :

— Նիհայէթ էֆէնտըմ, իրիյկունը ծառադ իրենց օտան կօնչեցին, իֆատէի հալէրնին քէսպ արի, վէ ըսի թը հէլէ քրչիյ մը սապու արէք ուր, Կթլիկէօնց հաճի աղան տեսնեմ ըսիմ ուր, ան ինչ ուր կամինը անպէս ընենք . չգիտեմ թը ի՞նչ էմր տի անէք :

— Էֆէնտըմ, էկէր Կթլիկէօնց հաճի աղան եսիմ ուր նը, մէյ մը տի բերես ատ տղան ուր տի տեսնիմ, ըս գիտեմ թը փարա ունի :

— Էֆէնտըմ, չը գիտեմ ամմա զաննս տաս տասվերկու օսկի կու կալլէ, վէ ինքն ալ զաննս ֆէօս է, դուրսը կօյներ է, էմր արէք ուր ներս գայ :

— Մնչու թէ՛օրոս, դի՛րաը մէյմին է կօյներ, կօնչէ ուր ներս գայ :

— Կօնչե՛մ, աղա . . . : Տղա՛, իս նայէ ուր ըսիմ, աղաս քեզ կը կօնչէ, էթէյներդ վրայ բեր ու մտի ներս :

— Հը՛, էկայ . . . ծառայ իմ աղա, պաքնիմ ձեռվիդ, բարի լու :

— Ասծու բարին, միչու, որոնցմէ՞ էս ուր :

— Ծառայ իմ աղա, թէզպէկէօնց Մերուքին թէօնիմ, զաննս տի ճօշնաս :

— Մնչու, գիտես թը տի ճօշնամ, չըսե՞ս ուր
մեզի խնամի կու սեպուխու:

— Ծառադ չը գիտիմ. Փախաթ վիլաեաթը մեծ
աղրօրս կնիյը կ'ըսէր թը՝ Ըստմազոլ ուր էրթաս նը,
կթլիկէօնց աղան քեզի բարեգործութիւն մը ունմիշ
կ'անեմ ուր անէ, քընչիւյ, կ'ըսէր թը բամանքիդ
համար, աստուածապաշտ հէրփին մէյն է:

— Ատ աստուածապաշտութիւնը տիկէր մատուէ
է, Փախատ, արզու կանեմ ուր քեզ քովս առնեմ
վէ մարդ անիմ ամիս, անկըճիդ ծակը տի գոցես,
աշվիդ տի բանաս, ֆէս տեղը Պիթ. Բազարի կասին,
մարդուն գլխի Փէսը ուսուլիյ մը վար կու ծգին վէ
« Եէրտէն պուլտուք » բաելով մէզաթը կու հանին.
որո՞ւ տիւն կու կարդասու:

— Ատ խուսուսին էֆքեար մի կալլէր, դուք ուր
իս խապուլ ուր անիք նը, ես գիտեմ ուր ի՞չ թա-
գուր տիխաթ տի անեմ զործիս:

— Խապուլ կանիմ. Փախատ քովդ բանի մը
օսկի կու կալլես եղէր, ատ տի տաս ուր սա՛ սուխը
աը ձգիմ, քընչիւյ քովտ ուր ձգիմ նը՝ խելքո բան
մը չի կը յրեր:

— Կու համինամ թը իշ կու խօրթես. հրամանէ,
10 օսմանցի ու Զ ֆրանսուզ է:

— Տիւր ու օնցիր էֆէնտըմ սանտուխին գլուխը
նստի ուր, թէնպիհամս ասօր թէքմիլ տի անիմ. ա-
կօնչդ իս արէ:

— Խօսէ՛ տեսնիմ, էֆէնտըմ:

— Էֆէնտըմ, մեր սարքութիւնը աճայիպ ար-
հեատ մին է, մէսէլա, կը տեսնես ուր մէկը քրանկ-
սուզի օսկի մը կու բերէ, վէ կըսէ թը « Սարաֆ
շունու պօզ ». կ'առնես էֆէնտըմ վէզնէին աշքը կու
դնիս, էքսիւք տիւր կըսիս ու հիյ տասը դուրուշ

կուտաս ձեռքը ու տէֆ կանես. աշվիդ բանաս ու
գործիդ տիխադ ուր անխս նը, բարան իր վէօտքովը
քեզ կուգայ կու գանէ:

— Ես ուր ըսեմ նը խելքս կը կը յրէ ուր ատ քէռ-
թէները ույտուրմիշ տի անիմ:

— Ինչ ուր է նը, հիմայէկս էս Ղալաթա տի
օնցնիմ քեզ ֆէս բերող հէրփին հետ, քեզ տես-
նիմ, տիխաթ արէ, կեցիր բարով:

X

— Է՛օֆ, Է՛օֆ, Է՛օֆ. փառք գթութեանդ,
Տէր, փառք, բա՛ց էֆէնտըմ ողորմութեանդ դուռ-
ութիքը, զրկէ տեսնիմ եալլու պալլու միւշմէրի մի
ուր ժամ մի առաջ սիլա անիմ Սամսոնի թարիխէօվ:

— Պաքսանա՛, սարաֆ, լիրայը մէճիտիյէ իլէ
գաչա՞ պօզուեօրսուն:

— Էֆէնտըմ, հէլէ վէր կէօրէմ ալթունըն եիւ-
զիւնի քի սէօյլէմ:

— Թօհագի, ալթըն կէօրմէտին մի հիչ, ալ պա-
գալըմ, եէնի օսմանլը լիրասը սանա:

— Հը՛, տրկից վէզնէն ներս բեր, Թէօրոս:

— Ճանըմ վէզնէ իլէն նէ՞ իշին վար:

— Էֆէնտըմ, սապու էթ ուր սէօյլէմ, պու ալ-
թուն էքսիւք տիւր:

— Օլա՞ն, էքսիք ալթըն օլո՞ւր մը հիչ. սէն քաչ
քուրուշ վէրէնէքսէն օնու սէօյլէ:

— Էֆէնտըմ, եէթմիշ պէշ զուրուշ վէրէսլիւլիւ-
րիւմ, քիւմչի, պու հէմ քէսիւք տիւր, հէմ էքսիւք
տիւր, պէօյլէ էկէր վէրփիրէն իկիրմի փարա տա պէն
քաղանուրում:

— Զա՛թ, փա՛թ, քի՛ւթ:

— Նէ՛ վուրույօրսուզ էֆէնտըմ, պանա սարաֆ-
լըգ մը էօյլէտէնէքսիւզ:

- Սէնի կիտի խըմպըլ , էքսիք , հէ ,
- Մնչիւ թէօրոս , նըկէց զափթիեէ մին կօնչէ
ուր հասկցնիմ սրվէօր տատին ու կաթին :
- Հա՛ թամամ , չաղըթթըլը զապթիյէի քի
սանա կէսոթէրէ յիմ :
- Բէք էյի , հէլէ պիր ազ տուր քի սէօլէ յէմ ,
ահա կէլիեօր . պաքսանա չափուշ աղա , շու հէրիֆի
ալսանա :
- Քալտըր պագալըմ շու հէրիֆի , էքսիք տիր ,
հէ :
- Պուեռուրուն պագալըմ , աղա :
- Մնչո՞ւ թէօրոս , իս կու տանին ,
- Ի՞նչ տըլի , այօլ . իշթէ աղաս է ու կուդայ
դարնիգաս :
- Մնչո՞ւ , իշ կու փտռուեն հոս աս մարդիկը ,
ի՞շ կու բանիք :
- Պաքսանա՛ , ուստա , պունա էվէլ սարաֆլըք
էյորէթ տէ սօնրա թէզկեահա օթուրթտուր :
- Էֆէնտըմ , հօշ կէօրիւն , ճահիլիկինէ վէրիւն :
- Վալլահա սէն կէլմէզսէ իտին քէնտի չաղըթթ-
արը զապթիյէ իլէ սիւրիւք սիւրիւք կէթիրտէնէք
իտիմ . իշտէ պէն կիտիյօրում , պու աղայա տուա իտին :
- Տիւն՝տավրի մնչու , աս ի՞նչ է ուր բաներ էս :
- Ճանըմ , ո՞ւր սայպէր ես ուր կերթայ . րռնէ
ուր միւրաֆա տի ըլլիմ . տեսնիմ թը ան վէօ՞վ է
ուր իս տի ծեծէ . աճապ բամմանքդ գիտե՞ս թը . . . :
- Հիւրիւլթիւ մի աներ ուր ըսիմ . էս ան հէ-
սիփն ուր կու ծօջնիմ նը , գէշ մարդ մին չէ . էճապ
ի՞նչ արիր ուր քնթիդ բերնիդ բակուց :
- Ճանըմ , բան չիկար , ինծի շես հաւտար նը
թէօրէօխին հարցուր :
- Ծէօ , թէօրոս , չիտտակը տի խօրըթես , տայ-

նուվրայ ի՞շ կար ուր աս խըռլթուն հանեցիք :

— Էֆէնտըմ , չիտտակն ուր կ'ուզես նը թէնպիհա-
թիդ կէօրէ թարիիս մի բռնեց վէ ասկէ խաթի նա-
զար էրկու օր է ուր վիլայէթէն էկէր է , ուզեց ուր
վաղը սիլա մի անէ . Ես աս տարիքնիմ էկեր եէթմիշ
հինդ զուրուշ Օսմանցիի օսկի չիմ տեսեր ու չիմ լսեր :

ՅԱՐՍԻ ՄԸ ՊԱՏՐԱՆՔԸ

Կեսուրս ութսուննոց պառաւ մըն է եւ չգիտեմ
ինչո՞ւ դեռ կը շարունակէ ապրիլ . եթէ հասարակ
կիներէն ըլլար՝ բնաւ մտահոգութիւն չպիտի պատ-
ճառէր ինձ իր գոյութիւնը : Բայց Աստուած իմ , ա-
սանկ արարած ալ կ'ըլլայ եղե՞ր աշխարհիս երեսը :
Աղջիկուսի եկած օրը ի՞նչ փափուկ էր , այն ի՞նչ
լեզու , ի՞նչ գորով , ի՞նչ սէր : Երբ նշանուեցայ՝
պարզապէս կը գուրգուրար վրաս , եւ իր այցելու-
թիւններուն ժամանակ բնաւ չէր ներեր , որ վայր-
կեան մը ոտքի վրայ կենամ : Իմ ամենաթեթեւ մէկ
աշխատանքս անհնարին վիշտ կը պատճառէր իրեն ,
եւ ժամերով ծարաւէ կը տանջուէր , որպէսզի չզրկուի
իմ ներկայութենէ՞ն երբ ջուր բերելու երթամ , վայր-
կեանէ վայրկեան խանդաղատանքը կ'աւելնար վրաս
եւ միջոց չէր անցներ որ քանիցս չհամրուրեր զիս :

Ամէն անգամ որ մեզի հիւր մնար , ուրիշ բան չէր
խօսակցութեան նիւթը՝ եթէ ոչ աննման գեղեցկու-
թիւնս , հիանալի հանճարս ու անսղիւտ առաքի-
նութիւններս : Արդեօք ո՞ր բանը կար , որ ես ըրած
ըլլայի ու հիացում չաղդեր իրեն . միշտ բոլոր ա-

բարքներուս ազէկ կողմէն կը նայէր եւ մինչեւ իսկ շատ մը տղայական յիմարութիւններուս տարբեր մեկնութիւններ կուտար: Օր մը պատահմամբ գաւաթ մը կոտրեցի, և կեսուրու այնշափ ուրախացաւ, այնշափ բարի հետեւութիւններ հանեց այս գաւաթին կոտրուելէն, որ փոխանակ ձախաւերութեանս վրայ ամէնալու՝ քիչ մնաց որ կեսրոջս աւելի հաճոյք պատճառելու համար երկրորդ գաւաթ մը եւս կոտրել ուղէի:

Որովհետեւ հասակս կարճ էր՝ միշտ արհամարհանքով կը խօսէր երկայնահասակներուն վրայ, յաճախ բացագանչելով. « Աղջիկ ըսածդ հարսնցուիս պէս կորիկ ըլլալու է, արեւուն մեռնիմ », եւ այնշափ կը դրուատէր կարճահասակ կնոջ առաւելութիւնները, որ ծնողքս, հակառակ իմ կարճ հասակս նկատմամբ իրենց տածած առջի մոռահոգութեան՝ հիմա այս գաղրած տարիքնուն մէջ՝ ոգեւորութիւն մը կ'զգային՝ գաճաճներու նոր սերունդ մը մատակարարելու :

Ճաշի ժամանակ զիս քովը կը նստեցնէր, եւ ծընողքէս գաղտնի միսին համեղ կտորներն ու միրգեռուն ընտիրները պնակիս մէջ կը տեղաւորցընէր, քթին տուկէն կամացուկ մը «կե՛ր» մռլաւալով. որո՞ւն բերնին էր ինկեր՝ սեղանին գլուխը ինձ հրաման մը տալու. իսկոյն երեսը կը թթուեցնէր ու սեղանէն կը քաշուէր, «հարամ ըրիք, զաւկիս քիթէն բերնէն բերիք, որը էր գիտես որ », եւ ուրիշ գդզոհական ձեւեր ու արտայայտութիւններ ընելով:

Կեսրոջս մեր տունը եղած օրերը անկարելի բան էր, որ ես առտուն կանուխ քունէս ելլէի. առջի իրիկուընէ զիս ծոցը կ'առնէր, ու գլուխս թեւին վրայ հանգչեցուցած՝ մերթ մազերս կը շոյէր եւ մերթ ալ

սիրազեղ համբոյըններ կը դրումէր ճակատիս «ձագո՛ւկս, տես Աստիկը (նշանածս) Հաճի Պէքիրէն չէքեր առեր է քեզի, հատ մը կ'ուտե՞ս, անուշի՛կս», և ճառելով մեր ապագայ երջանկութեանը վրայ՝ հեշտօրօր երազներու մէջ կը քնացնէր զիս: Աշխարհէ կ'անցնէր, եթէ առտուան իրմէ առաջ անկողնէս ելլելը տեսնէր. իսկոյն շալը կը փնտուէր, որ ձգէ տուն երթայ, եւ ես կեսրոջս կամքին հակառակ չի վարուելու համար՝ կ'ապատէի անկողնիս մէջ որ ինքը գար ու գորովալից համբոյըններով զիս արթնցնէր. — «ձագո՛ւկս, ե՛լ ալ»:

Իսկ ծնողքս, տեսնելով կեսրոջս ինձ նկատմամբ տածած արտակարգ գորովը, ուրիշ բանի չէին կը նար վերագրել այս բարեբալգութիւնը՝ եթէ ոչ այն ուխտերուն ու աղօթքներուն, որոնցմով խնդրած էին իրենց մէկ հատիկ աղջկան համար այնպիսի բաղդ մը որ աչքերնին բաց չերթային մեռած ատեն, եւ շատ անգամ երբ առանձին կը մնայինք՝ մայրս թեզանիքները վեր քաշելով կ'ըսէր հօրս :

— Քա՛, ոտքդ պազնեմ, ասանկ սէր ըըլլար, կեսուրը պիտի խենթենայ Աղաւնիխս վրայ :

— Գիտե՞ս ինչ աղնուական կնիկ է ան, ամիրայի թոռ է, հարստութիւն տեսած մարդու զաւակ :

— Ո՞ւյ կայծակներու գայ սա Սուրբիկը, որ խօսք խառնեց տէ, քիչ մնաց պատճառ պիտի ըլլար աղջրկանս խսմէթին :

— Ինչ որ է, իշթէ աչքովդ կը տեսնես կոր եա՛, գիտցի՛ր կնկանը արժէքը տէ՝ աղջկանը բախտը ձեռքէ մի՛ փախցներ, ան որ Աղաւնիխն աշխատելուն կը նեղուի կոր նէ՝ պէտք չէ ըրածը, գուն աշխատէ անոր տեղը:

— Քա՛, խե՞նթ ես, ո՞վ անոր գործ կը ձգէ,

աղջկանդ խենդութիւնը , որ աչք մանեմ լսելով՝ ամէն բանի կը վաղէ , կեսուրն ալ կը բարկանայ : Քա՛ տեսնաս , Արթաքի աղա , Երէկ Շազիկը հոս էր , անշափ գովեց մանչը որ արեւուն մեռնիմ , քովս նըստեցնէի տէ կարօսա առնէի :

«Հայրն ի՞նչ գործէ՝ որդին նմին նման» , մայրը չը տեսնա՞ս , անիկա որի՝ տղան է :

Ու այսպէս ամէն կողմէ բարեբախտ՝ անհամբեր կ'սպասէինք Մեծ Պահքի վերջանալուն ու Առջի Պըսակին գալուն :

Եւ եղաւ օր մը , կեսուրս մեզի եկաւ խոժոռ գէմքով , կոտրած սրտով , երեսէն իյնողը հազար կտոր կ'ըլլար :

— Խե՞ր է , հաճի խնամի , ցա՞ւ մ'ունիք .

— Երնէ՛կ թէ մէկ ցաւ ունենայի . Աստիկս օրթախէն կը զատուի կոր :

— Թո՞ղ զատուի , ի՞նչ կայ ատոր մէջ հոգ ընելիք :

— Անանկ մ'ըսեր , խանութին մէջի ապրանքներուն ստակը առալու է . չէ նէ օրթախը ուրիշին պիտի ծախէ :

Եւ այս յառաջարանէն վերջը կ'սկսի երկար «Երեմիական» մը . թէ ի՞նչ չարիքներ պիտի ծագին խանութին ապրանքներուն ուրիշին ծախուելէն , և թէ Աստիկ ո՞չափ պիտի վնասուի ասանկ շահաւոր գործ մը ձեռքէ փախցնելուն . թէ մեր ամուսնութիւնը քանի՛ հաւանական վատանդներու պիտի ենթարկուի այս դժբաղլութենէն , և թէ ընդհակառակն նշանածիս այս խանութին տիրանալը ի՞նչ երջանկութիւն պիտի բերէ թէ՛ մեզի եւ թէ ծնողացս համար , ևլն . ևլն . :

Բայց կարծեմ չըսի . թէ հայրս ի՞նչ կարողու-

թեան տէր էր : Իր ամբողջ հարստութիւնը կը կազմէին տուն մը ու խանութ մը , զոր իր ծնողքներէն ժառանգելով՝ երիտասարդութենէն ի վեր անոնց վրայ ո՛չ բան մը աւելցած էր եւ ո՛չ ալ պակած . պահեստի ստակ ալ չունէր , օրէ կը վաստկէր . օրէ կ'ուտէր :

Իմ նշանուելէս առաջ հօրս ծրագիրը պարզ էր . տուն-փեսայ մը առնել ու ծերութեան ժամանակ մէկտեղ իյնալ մէկտեղ ելլալ , սակայն խնդիրը փոխուեցաւ երբ ես նշանուեցայ , որովհետեւ կեսրոջս խօսքին նայելով՝ նշանածս այնչափ շատ կը վաստկէր որ ծնողքս չէին կրնար հաւատալ այնպիսի մէկու մը տուն փեսայութեան լուծին տակ մտնելուն ; Բայց իրենց համար հոգ չէր թէ ի՞նչ պիտի ըլլային , բաւական էր որ ես երջանիկ ըլլայի ամուսինովս ու կեսուրջմովս , զիրենք ալ հարկաւ Աստուած կը հոգար , մանաւանդ թէ կեսուրս այնպիսի խոստումներ կ'ընէր իրենց և այնչափ խնամք ունէր իրենց վրայ որ այս տեսակ պաշտպան մը ունենալէ վերջ՝ ապագայի վրայ խորհիլ պարզապէս էւելհոգութիւն էր , որովհետեւ կեսուրս ինչ որ խոստանար՝ կը կատարէր անպատճառ , որուն բազմաթիւ օրինակներն արդիւնքով ցայց տուած էր շատ պարագաներու մէջ :

Աստիկին օրթախէն բաժնուելուն և խանութէն ելլելուն ինդիրը քիչ մը զգուար էր , չէ թէ դրամագլուխին բաժնուելուն և բազդին կաղալուն համար , այլ մանաւանդ որ կեսրոջս ուղղակի մեզի դիմելը պարզապէս այս աւետիսը տալու դիտումով չէր , այլ թաքուն նպատակ մը կար ատոր տակ , ու մեր ընտանիքի անդամներէն և ոչ մէկին համար գաղտնիք մ'էր այլեւս թէ՛ օգնութիւն մը կ'ուզուի հօրմէս , եւ այն ալ ի՞նչ օգնութիւն , 500 սոկիի գու-

մար մը՝ խանութին ապրանքները գնելու համար, գումար մը զոր կարելի էր ձեռք բերել միմիայն մեր տունն ու խանութը գրաւի դնելով։

Այն և յաջորդ գիշերները ամենեւին աչքս չի գոցեցի. արդեօք Աստիկս կը տառապէ՞ր, արդեօք ներքնապէս կը վշտանա՞ր ընկերէն բաժնուելուն, արդեօք հայրս պիտի ընէ՞ր այդ զոհողութիւնը, արդեօք երջանկութիւնը ընդգրկելու պահուս պիտի հարուածէ՞ր զիս բախտը։ Ամրող կեա՞նքս կուտայի՝ եթէ հնար ըլլար նշանածիս օգնելու, կը սիրէի զայն, եւ ի՞նչ սէր... վայրկեան մը երեւակայութենէս չէի կրնար հեռացնել կորովի կազմուածքն ու ժպտուն դէմքը, ալու աչերն ու առնական հասակը. ո՞հ, կը սիրէի, այս՛, գերին եղած էի իր կատակներուն, եւ կարծես դեռ ականջիս կը հնչէր իր վերջին «մնառարով»։ Հապա նայուա՞ծքը... եթէ ինծի մնալու ըլլար, չէ թէ տուն մը, չէ թէ խանութ մը, բուլր աշխարհի հարսառութիւնը կը յանձնէի իրեն։ Բայց հայրէն, — որովհետեւ ինք չէր Աստիկին նըշանածը. — բոլորովին տարբեր կողմէն կը նայէր գործին։

— Ի՞նչ կ'ըսես, կնի՛կ, աճապա մեր գլխուն տօլապ մը պիտի դարձընեն։

— Քա՛, ինչի՞ս տօլապն է. քուկին հինգ հարիւր ոսկիիդ կարօտ էին զահէր. օրթախէն զատուեր է նէ, փարա կ'ուզէ քի տայ։

— Աղէկ ամիս, ես ծերութեանս ատենը Փրկիչ չեմ կրնար նետուիլ. տունն ու խանութը երթայ նէ մեզի ջուրը տուր։

— Քա՛, ու՞ր պիտի երթայ. ան որ հաւատար մութիւն չունիս նէ աղջիկդ ալ մի՛ տար. տունդ աղջկանմէդ արժէքաւո՞ր է զահէր. տունդ չպիտի

ծախսս, տարուան մը համար բէհինի պիտի դնես. տարի մը ետքը կէնէ քուկդ է. մէ յ մ'ալ ետքը որի՞ պիտի մնայ որ, աննման ախաօ՞րդ, որ ծախէ ըրախիի տայ։

— Խելքդ շհասնիր կոր, կնի՛կ, տունն ու խանութը առնելէն ետքը, մեզի դուրս ձգեն նէ՛...

— Քա՛ մեղայ, Աստուածամար, մարդ շլսէ. ատի՞նչ խօսք է որ, Արթաքի աղա, է յէր որ Աղաւանին կեսուրը լսէ նէ, հեղ մըն ալ տուներնիս ոտք չկոխեր. մեր վրայ կը խենթենայ նէ՛. Ան ի՞նչ կնիկ է քի, հիշ ատանկ բան կ'ընէ։

Վերջապէս մօրս համոզկեր խօսքերն մէկ կողմէն, իմ գաղտադողի արցունքներս միւս կողմէն, ստիպեցին խեղճ հայրս համակերպելու, և շաբաթ մը վերջ, գրաւի դրուելու համար տունն ու խանութը նշանածիս անունին փոխանցուած էին։

×

Եթէ եսայի մարգարէ մը ըլլայի, «Լո՛ւր երկին և ունկն գի՛ր երկիր » ով պիտի սկսէի այս պարբերութիւնը, բայց բանը բանէն անցնելէն վերջ ի՞նչ օգուտ։ Ո՞հ, արցունքներս կը խեղդեն զիս, ու շեմ կրնար այլ եւս շարունակել, բայց ինչո՞ւ լսեմ, աշխարհ արարած թող լսէ գլխուս եկածն ու անփորձները թո՛ղ խրատուին իմ թշուառութենէս։

Մեր ամուսնութեան առաջին շաբաթէն սկսեալ կատարելապէս հասկցայ թէ ամուսինս՝ Աստիկը, ոււրիշ բան չէր եթէ ոչ կեսրոջս ձեռքը խաղալիք մը, որ ուզած կողմը կը գարձնէր. հո՛ս գնա, հոն մ'երթար, կնկանդ հետ խօսէ՛, մի՛ խօսիր, աս բանը ըրէ, ան բանը մի՛ ըներ — բնաւ դիտապութիւն մը, ընդդիմութիւն մը, կամքի արտայայտութիւն մը չի

կար իր կողմէն մօրը դէմ. եւ եթէ ընդդիմանալ ու-
զէր իսկ՝ չէր կրնար, որովհետեւ առնական ձեւե-
րու, մաքուր զգեստներու տակ սքողուած ապուշ մըն
էր պարզապէս, և եթէ մայրը չըլլար՝ զինքը շատոնց
տարած էին ջուրերը: Զգացում ըսուած բանը բնաւ
բարեւ տուած չէր աս մարդուն, և ես հակառակ աղ-
ջիկնութեանս տածած երազներուս՝ օր մը սէր մը,
գուրգուրանք մը, գգուանք մը չտեսայ ամուսինէս
որ անով մխիթարուէի: Շուկայէն դառնալուն՝ շի-
տակ թալին սրճարանը կը վազէր թուղթ խաղալու.
սրճարանէն գինետուն կ'անցնէր, ուր լաւ մը գինով-
նալէն ետք՝ կէս գիշերին տուն կը հասնէր, ու առ-
անց բան մը ուտելու կամ երկու խօսք փոխանակելու
անկողնին մէջ կը շնթրկէր:

Բայց կեսուրս մոռցանք, կեսուրս՝ զոր յաւէտ
մոռնալիք չունի՞: Ո՞ւր է նշանած ատենուան կե-
սուրս, ո՞ւր է վրաս հիացողը, օրը հարիւր անդամ
զիս համբուրողը. հիմայ կը հասկնամ օր Յուդայի
համբոյրներ են եղեր, բայց շա՞տ ուչ: Ա.յլ եւս ա-
նուն չունիմ տան մէջ, անունս պօտու է, եւ ամէն
անգամ որ նեղուի, եօթը դուռ հեռուէն լսուելու
աստիճան բարձր կը պօռայ. «Տունս տեղս քրքրե-
ցի՞ր, փատցա՞ծ հաւ, կէտինն անցնիս, դուն ալ,
թրախօմադ ալ, տունդ ալ, խանութդ ալ. ուզուր-
սուզ ոտքդ եկաւ, մեր հինուց ունեցածն ալ տարաւ»:
Ու ես, մէկ կողմէն այս նախատինքները կրելով,
միւս կողմէն ալ հօրս տանն ու խանութին անդառ-
նալի կերպով անդունդ գլորին զգալով՝ օր օրի կը
հալէի ու կը մաշէի, ինչ որ շատ աղէկ կուգար կես-
րոջ գործին՝ տղան կարգելու պատրուակով ուրիշ
յիմար մըն ալ գտնելու և մեծկակ գումար մը ձեռք
անցնելու համար: Եթէ պատահէր օր մը, օր եւ է

անհանգստութեան պատճառով քիչ մը ուշանայի ան-
կողնոյս մէջ՝ իսկոյն դուռ դրացի գլուխը կը ժողուը-
տէր եւ կ'սկսէր ձայնը հասածին չափ պօռալ. «Մեղ-
քը շինլինքնիդ, թրախօմայով աղջիկ մ'առնէք. քա-
ռտքերնիդ պագնեմ, մարիկնե՛ր ու քուրիկնե՛ր, կէս
օր եղած է, տահա անկողնին մէջն է. մէկ համբերէ,
երկուք համբերէ, քա՛ ամէն օր է աս, ամենեին
քաշուելու տէրտ չէ՛, Համի Պէքիրի շեքէր կ'ուզէ,
քա ո՞ւրկէ գտնամ ես ամէն օր ըռահաթի լօխումը»:
Այս եւ այսպիսի հազար լուտանք, անարգանք. բայց
որո՞ւ դիմեմ. ամուսին շունիմ գրեթէ, ծնողքս ալ
եթէ լսեն անցած դարձածները՝ կաթուածահար կ'ըլ-
լան. ուրեմն լուռ ու մունջ կը քաշեմ, բախտիս վը-
րայ ողբալով:

×

Մեր ամուսնութենէն տարի մը վերջ, օր մը սե-
ղանաւոր մը կը ներկայանայ հօրս խանութը:

— Արթաքի աղա, սա խանութին ու տունին վարձ-
քը բանի մը նմանցնենք:

— Ի՞նչ խանութ, ի՞նչ տուն, ի՞նչ վարձք:

— Է, մի՛ կրակորիր, մենք փեսիդ հետ լմնցու-
ցինք գործը. հէօճէթները իմ անունիս դարձուցինք. կ'ուզես դուն նստէ՝ վարձքը տուր, կ'ուզես ել՝ ու-
րիշ ուզողներ կան, անոնց տամ:

Հայրս այս գոյժն առնելուն պէս՝ ուղղակի կե-
սուրոջս վրան կը վազէ:

— Սս ի՞նչ բան է, հաճի խնամի, սարաֆը եկեր
տունն ու խանութն առի կ'ըսէ:

— Աս աղէկ... դուն ի՞նչ գործ ունիս տունին
10

ու խանութին մէջ, աղջկանդ թրախօմա չի տուի՞ր :

— Ի՞նչ թրախօմա :

— Քա՛ աս մարդուն խելքին է եկե՛ր . (բարձր պօռալով) . Քա՛ տարու մ'ալ եղանք . պօտու աղ չիկը հարս ընելէն ետքը եկեր թրախօման ետ կ'ուզէ կոր, սանքի չգտնուած հինտ խումաշի էր աղջիկդ . տէ՛, նահա, խէրը տե՛ս, առ հետդ տար, իմին աս- լանի պես տղուս աղջիկ շա՛տ . ոտքը պագնողը, փէ- շին փակողը թող տայ :

Որովհետեւ առուծախի գործողութիւնները կանո- նաւորապէս կատարուած ըլլալուն համար՝ ամիս մը վերջ տունն ու խանութը կը գրաւուին, ու հայրս չի կրնալով տանիլ այսչափ վիշտերուն՝ կաթուածահար կ'իյնայ, խեղճ ու անշուք տնակի մը մէջ, զուրկ ու է նիւթական միջոցէ, միմիայն մայրս ունենալով գըլ- խուն վերեւ :

Թէեւ երկար տարիներ անցած են այս դէպքերէն ի վեր, կեսուրս իրեն արժանի պատիժը գտած է, չորս հինգ տարիէ ի վեր անդամալոյծ պանկած է, սակայն դեռ մինչեւ հիմա առջեւէս չհեռանար այն դժբաղդ տեսարանը՝ ուր տառապեցան ծնողքս :

Արդեօք կրցա՞յ հասկցնել սրտիս ցաւը :

ԳԱՍԻՄ



ԱՇԽԱՐԴԻՍ ՎՐԱՅ ՄԻՆԱԿ ԿԵՆԱԼՈՒ ՏԵՂ

ԹՐԻՍՏՈՍԻ ՅԱՅՈ ԹՈՒԱԿԱՆԻՆ

Երբ մարդ սոսկումով մը համակեալ կը խորհի այն ժամանակին վրայ ուր ալ ածուխի հանքերը պի- տի սպառին՝ կարծես բնաւ չի մտածեր ուրիշ աւե- լի մօտալուտ եւ աւելի լուրջ վտանգի մը վրայ թէ՛ մեր ածուխի հանքերը սպառելէ առաջ երկիրը պիտի լեցուի, եւ ա՛լ անկարող պիտի ըլլայ ուրիշ կեանքեր պարունակելու :

Թէեւ չատեր կը կարծեն թէ Ծռազատկին պիտի գայ, բայց իրապէս հեռու չէ այն ժամանակն, ուր ստիպուած պիտի ըլլան երկրի վրայ փակցնել՝ հան- րակառքերու հետեւեալ ազդը՝ « Մինակ կենալու տեղ : » Յաւակնոտութիւն մըն է թէ՛ բնակիչներն իրենց աճան համեմատութիւնը կը պահեն եւ եթէ սխալ մը կայ այն ալ ատոր նուազելուն կողմը պիտի ըլլայ : Ամէն պատահականութեան հասնելէ առաջ ընդարձակ տեղ մը պիտի ըլլայ ժողովուրդներուն ա- մենամեծ աճման համար : Հնդհանուր եւ սխալ կար- ծիք մըն է թէ՛ Պելճիքա աշխարհիս ամէնէն բազ- մամարդ երկիրն է : Իրաւ է թէ՛ Պելճիքայի իրա- քանչիւր քառ. մղոն 580 բնակչաց միջին թիւ մը կը կրէ, գրեթէ 1.10 ակրոն (4045 մէթը քառակուսի) իւ- րաքանչիւր բնակչի, բայց Անգլիոյ մէջ ալ 600ի մօտ բնակիչ կայ իրաքանչիւր քառ. մղոնի վրայ, այն- պէս որ Անգլիա տեւի շուտ պիտի հասնի այն ար- դիւնքին « մարդ զլուխ մեկ ակրոն : » իտալիա բարձր դերք մ'ունի բազմամարդ երկիրներու մէջ, իր 284

բնակիչներով, իւրաքանչիւր 20 մղոնի վրայ, այսինքն մէկ մարդ 2¹/₄ ակրոնի վրայ: Գերմանիա մէկ բնակչի համար ունի 2,6 ակրոն, իսկ Աւստրիա՝ մէկ ակրոնէ քիչ: Սպանիա հազիւ կրնայ 91 բնակիչ դնել մէկ քառ. մղոնի վրայ և Եւրոպական Ռուսիա՝ 51 մարդ: Ասիական Ռուսիոյ մէջ նեղուելու հարկ չկայ, մարդ: Իւրաքանչիւր բնակիչ 180 ակրոնի տարածութեան մը վրայ հանգիստը կը նայի, կամ պիտի նայէր՝ եթէ կարենար: Զինաստան հակառակ իր անթիւ միլիոններուն՝ մեր բնակութեան հետ բաղդատելու՝ դեռ կրնայ առնուազն 600 միլիոն բնակիչ պարտկել, որովհետեւ իւրաքանչիւր քառ. մղոն միջին հաշուով 200 բնակիչ ունի, եւ չնդկաստան՝ իր 170 բը նակիչներով՝ մէկ քառ. մղոնի վրայ, դեռ բազմամարդ է: Սակայն հետաքրքրաշարժ է դիտել թէ՝ Պոմայ աշխարհիս բազմամարդ մէկ քաղաքն է, որովհետեւ իր շրջապատին մէջ իւրաքանչիւր ակրոնի վրայ 760է աւելի բնակիչ կը բնակի:

Սակայն կան ցամաքներ՝ ուր կարելի է անհամար միլիոն մարդ բնակեցնել առանց բազմամարդ սեպուելու: Ամբողջ Ամերիկեան ցամաքը միջին հաշուով 14,5 բնակիչ ունի մէկ քառ. մղոնի վրայ, այնպէս որ իւրաքանչիւր Ափրիկէցիի կարելի է 43 նոր բնակիչ աւելցնել առանց Անգլիոյ բազմամարդութեան հասնելու: Քարի գաղթականութիւնը իւրաքանչիւր քառ. մղոնի համար 5,8 բնակիչ ունի, Նաթալ՝ 3,2, Թրանսվալ՝ 6,3 եւ Օբանժ՝ 43: Այսպէս Անգլիական բազմամարդութեան հիման վրայ Թրանսվալի մէջ ընդարձակ տեղ կայ՝ 39 միլիոն նոր գաղթականի համար. Օբանժ՝ նոյնպէս կրնայ 16 միլիոնի համար տեղ գտնել, որով կարելի է Հարաւ. Ափրիկէի մէջ տեղաւորել առնուազն Բրիտանիոյ բնակիչներուն կը բ

կինը, առանց որ եւ է անպատեհութեան:

Քանատայի մէջ՝ Թրանսվալի մէջ եղածէն շորս անգամ աւելի տեղ կայ, որովհետեւ Քանատա գրեթէ 2 քառ. մղոն տեղ կրնայ տալ իւրաքանչիւր երեք բնակիչի: Աւստրալիոյ մէջ, ուր 1,5 բնակիչ կայ, մէկ քառ. մղոնի վրայ՝ քիչ մ'աւելի տեղ կայ՝ քան թէ Ֆրանսայի մէջ:

Բայց դժբաղդաբար, երկրիս սնուցիչ զօրութիւնը սահմանափակուած է, եւ ըստ գիտնոց, այս սահմանը պիտի հասնի՝ երբ բնակչաց թիւնը ըլլայ 6,000 միլիոն, այսինքն, հիմակուան թիւին չորս անգամն. որովհետեւ երկիրս իր զաւակներն կը կրկնապատկէ առէն 140 տարին անգամ մը, դիւրին է հաշուել թէ՝ 280 տարուան մէջ, կամ 2180ին այլ եւս տեղ չպիտի ըլլայ, եւ մինչեւ եթէ այն ժամանակ միջոց մը չգտնուի՝ միւս մոյորակները գաղթելու, հարկ պիտի ըլլայ լուրջ միջոցներ խորհիլ՝ աճման համեմատութիւնն սահմանափակելու:

Եթէ որեւէ միջոցաւ մրկարելի ըլլայ այդ գժուարութիւնը վերցնել եւ եթէ ժողովուրդներն արդի համեմատութեամբ աճին, ա'լ աւելի գժուար խնդիրի մը պիտի հարկ ըլլայ դիմագրաւել 1000 տարի վերջ, 3160 թուականին, որովհետեւ այդ թուականէն սկըսեալ — զոր բարեբաղդաբար մէկերնիս չպիտի տեսնենք, — երկրիս սերունդն այնքան պիտի աճի որ մէկ քառ. մէթրէ պակաս տարածութեան մը վրայ երեք մարդ պիտի գտնուի. իւրաքանչիւր բնակիչ այսպէս երեք քառակուսի ոտք տեղ ունենալով իր ըոլոր պէտքերուն, թէ՝ սննդեան և թէ՝ բնակութեան: Հոս խնդիրը մէկ կողմ կը թողունք. խոսովանելով մեր անկարողութիւնն աւելի սռաջ երթ...

լու եւ անձնասիրութեամբ կը չնորհաւորենք ինք-
զինքնիս թէ՝ մեր ժամանակները դեռ երկիրն ըն-
դարձակ տեղեր կը նուիրէ մեզի եւ թէ ուտելու հաց
եւ հանգիստ պառկելու տեղ ունինք:

Թարգմ.

Զ. Ն. ՊէրՊէրեԱն

ԾԽԱԽՈՏԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

Ծխախոտ սերմանող երկրագործը ամէնէն առաջ
կը փնտուէ այնպիսի տեղ մը՝ ուր արեւուն ճառա-
գայթները կարելի եղածին չափ պակաս չըլլան,
հոն պիտի չինէ եասըրի մը. կը գծէ ձեւը, տախ-
տակներով կամ շիղերով հիւսելով կը կազմէ՝ երկու
կանգուն լայնութեամբ ու յարմարութեան հո մեմատ
ալ երկայնութեամբ շրջանակ մը. նոյն շրջանակին
մէջ մէկ թիզ բարձրութեամբ կը լեցնէ ձիու թարմ
աղբ, որու պաշտօնն է հողը տաք պահել ու չուտ
հասցնել ծխախոտի տունկերը, քանի որ ժամանակը
ցուրտ է և երկրագործը ստիպուած է փետրուարին
սկսիլ իր գործին: Այս ալբը շրջանակին մէջ զետե-
ղելէ անմիջապէս վերջ, չորս կամ հինգ մատ լայ-
նութեամբ հին ալբախտան սեւ հող կը մաղէ վրան.
այս հողին վրայ է որ պիտի ցանուի հունտը, արդէն
շաբաթ մը առաջ հունտը լաթի մը մէջ գրուած թըր-
ջուած ու թարմ ալբի մէջ պահուած կ'ըլլայ:

Եասըրին այս աշխատութիւնները լմցնելէն ան-
միջապէս վերջ կը հանեն հունտը իր թաքստոցէն,
որ հիմակ ճաթրտկած կ'ըլլայ ալբին տաքութենէն,

կը խառնեն ճերմակ մոխիրի մէջ ու կ'սկսին մաղ-
ուած սեւ հողին վրայ հաւասար քանակութեամբ
ցանել, հոգ տանելով որ հունտը քանի մը տեղ
կրկին ու կրկին չցանուի: Այս հոգէն աղատելու հա-
մար է որ մոխիրի մէջ կը խառնեն հունտը, անոր
ճերմակութենէն օգտուելով հասկնալու համար թէ
հաւասար քանակութեամբ ցանուած է: Ասկէ վերջ
կէս մատ հաստութեամբ բարակ հող մըն ալ ցանելով
վրան թեթեւ մը կը ջրեն ու կը մեկնին: Այն օրէն
կ'սկսի ա'լ երկրագործին աշխատութիւնը. մինչեւ որ
ծխախոտին հունտերը բուսնին՝ անիկա ամէն օր եր-
կու կամ երեք անգամ ջուր կուտայ և հոգ կը տանի
որ տաք մնայ եասըրիս: Վերջապէս կը բուսնի պղտիկ
ծխախոտը՝ ամէնէն առաջ երկու փոքրիկ տերեւիկ
դուրս տալով. կ'ուրախանան երկրագործները այն
ատեն ու ոգեւորութիւն մը կուգայ իրենց վրայ
գործին փարելու. ալ շատ չեն հեռանար անոր քո-
վէն, մէկ կողմէ աւելորդ խոտերը կը մաքրեն՝ որոնք
մեր պղտիկ ծխախոտները նեղելէ զատ ուրիշ կո-
չում մը չունին. ամէն օր ջուր կուտան, առտու ի-
րիկուն՝ մանաւանդ խոտերը մաքրելէ անմիջապէս
վերջ լաւ մը կը ջրեն յատուկ գործիքով մը՝ որպէս
զի հողը իր տեղը նստելով ծխախոտին արմատները
բացը չմնան: Այս աշխատութիւնը կը շարունակուի
մինչեւ որ ծխախոտին տունկերը ի վիճակի ըլլան
հանուելու և արտին մէջ անկուելու:

Մինչեւ որ տունկերը այս վիճակին հասնին՝ ար-
դէն երկրագործը երկու անգամ փորած կ'ըլլայ իր
արտը ու կ'սկսի անոր գիծերը քաշելու:

Գիծ քաշելու գործողութիւնը շատ հաճութեամբ
կը կատարէ երկրագործը. նախ արտին մէկ ծայրէն
մինչեւ միւս ծայրը չուան մը կը կապէ, ու առաջին

գիծը կը քաշէ այս չուանին ուղղութեամբ, անկէ վերջ չուանը վերցնելով կ'սկսի երկրորդ գիծը քաշէլ, պայմանաւ որ աչքովը երբեք չհեռացնէ նախորդ քաշուած գիծէն. բահը ձեռքը մէկ կողմէ հողին զարնելով ու ետ ետ երթալով աչքը կը հետեւի նախորդ գծին, հաւասար հեռաւորութիւն մը դնելով գծերուն մէջ, ու այս գնացքով միւս գիծերն ալ քաշելով՝ ամբողջ արար կը գծէ :

Կը պատահի որ նոյն օրերուն լաւ անձրեւ մըն ալ կուգայ. այն ատեն երկրագործը իր տրամադրելի բոլոր ոյժերը ժողուելով կ'սկսի գործի, Անիկա արդէն ունի իր մարդկը կամ օրականով կը գտնայ. իրենց օրական աշխատութեան համեմատ անմիջապէս քանի մը հազար հատ փոքրիկ տունկեր քաղելով եասրիսէն՝ կը տանին արտը, ու կ'սկսին նոյն գիծերուն մէջ մէկ մէկ կանգուն հեռաւորութեամբ տնկել. այս միջոցիս բոլոր արար գտնուողները տնկելէ զատ ուրիշ պաշտօն մը չունին. իւրաքանչիւր տնկող իր առջեւ պարկի կամ լաթի մէջ կապած է տերեւները, աջ ձեռքը կը գտնուի մէկ թիզ մեծութեամբ հողը ծակելու փայտ մը. թաց է արդէն արար քանի որ անձրեւ եկաւ. անիկա կը ծակէ հողը աջ ձեռքով, ձախ ձեռքով ծխախոտին տունկին ծիլը անոր մէջ կը զետեղէ. ու արմատը լաւ մը սեղմելով կը մեկնի, չմոռնալով նաեւ ծակը հողով լեցնելու, ապա թէ ոչ տունկին արմատը օդ առնելով կը չորնայ :

Այսպէս նպաստաւոր օդով մը տնկելու գործութիւնը կ'աւարտի ու երկրագործը այն ատեն գործունակ սրտով լայն շունչ մը կ'առնէ :

Բայց եթէ արտին գիծերը քաշուած ու ծխախոտին տունկերն ալ ի վիճակի ըլլան տնկուելու, ու միւս կողմէ անձրեւ ալ չտեղայ օրերով, այն ատեն երկ-

բագործը իր գործը ետ չթողելու և առանց անձրեւ գլուխ հանելու համար դարձեալ կ'սկսի գործի: Ասիկա ամէնէն տաժանելի աշխատութիւնն է թէպէտե երկրագործին համար, բայց ստիպուած է կատարելու, քանի որ անձրեւ գալու յոյս մը չկայ գեռ երկինքին վրայ: Անիկա կ'ըսէ իր « Հայր մեր » ը ու իրեններով յուսահատ սրտով մը կը գիմէ արտը. նախ կը քաղեն իրենց օրուան պէտքին համեմատ ծխախոտի տունկերէն, կը լեցնեն մեծ կողովի մը մէջ ու լաւ մը կը ջրեն և կը ծածկեն՝ արեւուն տաքութենէն պաշտպանելու համար: Եթէ տնկելու գործողութիւնը ստանձնողները չորս հոգի են, ասոնցմէ միայն մէկը կրնայ տնկել. միւսներուն գործը տարբեր է: Արախն մէջ ջուր չկենար շատ անգամ ու քիչ մը հեռուն կամ մօտիկը կ'ըլլայ. մին ստիպուած է մինչեւ իրիկուն ջուր բերել ամանով մը. մէկն ալ իր ձեռքը ջուրով լեցուն ամանով գիծերուն մէջ մէկ մէկ կանգուն հեռաւորութեամբ տեղ տեղ երկու քաշի շափ ջուր կը լեցնէ ու կ'անցնի. ասկէ անմիջապէս վերջ կուգայ բուն տնկողը, ինչպէս բացատրեցինք քիչ մը վերը: Ամէնէն վերջը կուգայ ուրիշ մը՝ ձեռքերը վայրի ծառերու ճիւղերով լեցուն. տնկուած իւրաքանչիւր տունկի վրայ մէկ մէկ քիչ ճիւղ ճգելով, ան ալ իր կարգին կը հետեւի միւսներուն. այնպէս որ մէկ գծի մէջ երեք աշխատաւոր իրալու ետեւ մին ջրելով, միւսը տնկելով ու վերջինն ալ անոնց վրայ ճիւղի կտորներ ճգելով, կը յառաջանան մինչեւ գծին ճայրը: Այս աշխատութիւնն ալ այսպէս կը լմննայ: Մինչեւ որ անձրեւ տեղայ կամ տունկերը բաւական զօրանան, ամէն իրիկուն տունկերուն վրայ ճգուած ճիւղերը կը վերցնեն ու առաւօտուն դարձեալ կը դնեն :

Եթէ շատ չորցած է արտը , երկրագործը գոնէ երկու օրը անգամ մը ջուր կուտայ տունկերուն : Մէկ կողմէ չորցածներուն տեղը ուրիշներ տնկելով ու միւս կողմէ արտին մէջ բուսած վայրի խոտերը մաքրելով պարտական է միշտ արտին մէջ գտնուիլ : Ընդհանրամբ տաք օդերուն երեւան կուգայ ծխախոտի որդը՝ որ շատ մնասակար կենդանի մըն է . հողին մէջ կ'ապրի , երբեք գործին չի գար երկրին վրայ ելլել : Այս որդը իրեն բան գործ կ'ընէ հողին մէջն ճամբայ բանալ ու հասնիլ ծխախոտի տունկին քով . անգամ մը որ հոն հասաւ , ա'լ կամաց կամաց կ'սկսի գործի , կը ծակէ տունկին հողին մէջի գտնը-ուած մասը . մէջը կը մտնէ և ուտելով վեր կ'ելլէ . այն ատեն տունկը կ'սկսի դեղնիլ , կամ մէկէն ի մէկ ծռելով գետին փոռուիլ : Երկրագործը կը հասնի ճար-տար բժիշկի մը պէս տունկին բունը կը խուզարիէ և որդը գտնելով գլուխը կը բրցնէ :

Վերջապէս այս ու այսպիսի աշխատութիւններով երկրագործը առաջ կը տանի իր գործը մինչեւ որ տունկերը մէկ ու կէս թիզի չափ խոչըրնան ու տասը կամ տասերկու տերեւ դուրս տան :

Այն ատեն կ'սկսի : առաջին պեղումը ընել անոնց շուրջ . մէկ կողմէ արտին խոտերը կը մաքրէ ու միւս կողմէ պղտիկ տունկերուն տակերը փորելով հողը կը կակղեցնէ , աւելի շատ հող տալով արմատին տակ : Ծխախոտի տունկերուն մօտիկ աւելորդ բաներ՝ գետ-նախնձոր , դղում եւլն . երբեք չանկեր , որպէս զի արգելք ըրլան ծխախոտին մեծնալուն ու անոր ոյժը երենք չքաշեն :

Մէկ երկու շաբաթ վերջ , արդէն բաւական մեծ-ցած կ'ըլլան տունկերը , մէկ կանգունի չափ՝ քիչ մը աւելի կամ պակաս : Այն ատեն անոնց տակի տիպ-

ալրըի փոքր հողոտ տերեւները , որ երկու երեք հատ հազիւ կ'ըլլան , փրցնելով կը նետէ ու առատ հող կուտայ անոնց տակ , այնպէս որ երկու գիծերուն մէտեղի հողերը երկու կողմի վրայ կը քաշէ ու տունկին տակ կուտայ , այն տաեն նախապէս քաշ-ուած գիծերը կէս կանգունի չափ կը բարձրանան գետնի հաւասարութենէն , ու երկու գիծերուն մէջ-տեղն ալ ինքնաբերաբար նոր գիծ մը կը բացուի : Ասկէ վերջն է որ ծխախոտը արագ արագ կը մեծ-նայ , ու քանի մը շաբաթէն ալ իր տիպը կոտրել տալու վիճակին կը հասնի :

Այն ատեն երկրագործը կը պատրաստուի ծխա-խոտին առաջին բերքը , տիպը առնելու : Իր մարդե-րով կը մտնէ արտին մէկ ծայրէն , կարգաւ սկսելով իւրաքանչիւր տունկէն երեքական կամ չորսական տերեւ կտրելով առաջ կ'երթայ մինչեւ արտին միւս ծայրը : Եթէ այս գործողութենէն վերջ անգամ մըն ալ փորուի ծխախոտներուն տակը աւելի լաւ կ'ըլլայ . բայց շատ տեղեր ա'լ պէտք չեն տեսներ , քանի որ ծխախոտի տունկն պէտք եղածին չափ մեծցած է :

Ծխախոտի տունկը իր տերեւները դուրս տալով մէկտեղ , անոնց հետ միասին դուրս կուտայ նաեւ ա-մէն տերեւի տակէն մէկ մէկ խօլրուխ . գործին քաջ տեղեակ երկրագործը երբեք շմողուր որ այս խօլ-րուխները մեծնալով տերեւներուն ուժը իրենց քա-շեն , եթէ ասոնք ձգուին իրենց քմահաճոյքին . կը մեծնան արագ արագ ու տունկին ամրող ոյժը կը սպառեն . տերեւները կը կորսնցնեն իրենց իւղը ու առանց եփուելու շուտ մը կը գեղնին . ամէն անգամ որ այս խօլրուխ ըսուածները մատի կամ բռնուելու չափ կը մեծնան , անմիջապէս կտրել նետելու է , երբեք երես տալու չէ որ մեծնան , Տիպէն վերջ ալ

Հետզհետէ կ'սկսին կոտրել տիպ իւսրիւն, օրբան, պեօյլիք անան եւլն. մինչեւ որ հասնին տօրուգին, Բայց ամէն անգամ որ երկրագործը նոր տերեւ փըրցնելու հրաման պիտի տայ, նախ համոզուած պէտք է ըլլայ թէ իւրաքանչիւր տունկերէն երեք, չորս կամ հինգ տերեւ կրնա՞յ կոտրուիլ, հասա՞ծ են տերեւները, թէ ոչ կը վնասէ իր գործին:

Երկրագործներէն մեծագոյն մասն առանց նկատի առնելու այս պարագան, կը մտնեն արտին մէջ ու կ'սկսին իրենց կոտրտուքը, կը բաւէ որ նախորդ կոտրտուքէն մինչեւ այն օրը տասն օր մը անցաւ, ալ հոգ չեն ըներ տերեւին հասունն ու խակը. բայց իրենց այս տգիտութիւնը շատ չանցած կը հասկնան երբ կը տեսնեն թէ Միքայէլ աղային ծխախոտն իրենց ծխախոտէն տասնապատիկ աւելի լաւ հոտ, գոյն, իւղ ու ծանրութիւն ունի:

Երկրագործն ամէն անգամ որ տունկերէն տերեւ մը կը կտրէ, անոնք լաւ մը իրարու վրայ, կոթը գետինը պասխը կը դնէ, ու այս վիճակին մէջ կը թողու քանի մը օր, մինչեւ որ լաւ մը դեղնին տերեւներն, այն ատեն անոր բոլորտիքը շարուելով հինգ վեց կանգուն երկայնութեամբ չուաններու վրայ կ'անցնեն յատուկ շիշերով ու երկայն ցողերու վրայ առնելով, գուրաը արեւը կը կախեն:

Այսպէս մէկ կողմէ չուաններու վրայ առնուածները գուրս կը հանէ, ու միւս կողմէ լաւ մը չորցածները — որ 10-15 օրէն հազիւ կը չորնան եթէ օդը լաւ է — ներս առնելով բարձր տեղ մը առաստաղին վրայ յատուկ գամուած գամերու վրայ կ'անցնէ, հոն մնալու համար մինչեւ ելփազիին ժամանակը. Այս միջոցիս երկրագործին գործի ամէնէն տաք ժամանակը կ'ըլլայ: Կը պատահի որ արեւը

հանուելիք քանի մը հազար ձող ծխախոտ կ'ունենայ, պարտական է այսչափ ձողերը ի պահանջել հարկին ներս կամ դուրս տանելու. Երբեք ծուլութիւն չպահանջեր գործը, ապա թէ ոչ իր բոլոր աշխատութիւնն ալ վրայ կուտայ: Կան տեղեր որ սալաշներու տակ կը չորցնեն առանց դուրս ներս տանելու. այս կերպը թէպէտեւ վերջին նորաձեւութիւնն է, բայց ընդունելի չէ մեզի համար, քանի որ ուզզակի չստանար արեւու ճառագայթներն ու անձեւի ժամանակ ալ բարակ թացութիւն մը կ'ունենայ: Ինչպէս ըսի, ծխախոտի ձողերը դուրս կամ ներս տանելու պարագային հաճութեամբ ու սրտով աշխատելու է, պզտիկ անհոգութիւն մը կրնայ շատ մեծ վնասներու տեղի տալ, ու մոխիրի վրայ նստեցնել խեղճ երկրագործը:

Երբեք մտքէս չելլեր 14 տարեկան պղտիկ տղայ մըն էի. գիշեր մը ժամը վեցին յանկարծ իրարանցում մը սկսաւ մեր տան մէջ, ամէնքնիս ալ արթընցանք ու հասկնալ կ'ուզէինք թէ ի՞նչ էր պատահած կամ պատահելիքը:

Մայրս կ'ըսէր. « Մա՛րդ, կէս գիշերուն ասանկ մութին ինտո՞ր երեք ժամուան ճամբայ պիտի երթաս լեռներուն մէջէն. մոմդ մարի ի՞նչ պիտի ընեա»: Հայրս ծանը գլուխ մարդ մը, « Քու խելքդ չհասնիր Սիրվարդ, անպատճառ երթալու եմ, նայէ երթալով վեր կ'ելլան կոր տումանները, վերջէն աշխատութիւննուս խէրը տեսիր »: Հայրս յաղթեց վերջապէս մօրս խօսքերուն, առաւ քանի մը հատ խոշը մոմ, լուցկիի լեցուն տուփ մը ու ճամբայ ելաւ, Վախ ըսուած բանը երբեք գոյութիւն չունէր հօրս համար. գիշեր, ցորեկ, գող, աւազակ վայրի վնասակար կենդանիներ երբեք տասնոց մը չէին արժեր հօրս առ-

ջեւ, այս ամէնքը պարտական էին հօրմէս վախնալու, քանի որ անանկ կ'ուզէր. եւ արդէն քանի մը անգամներ ալ պատահած է որ շատ մը գողեր յաղթուին հօրմէս, որոնք հարիւրին հարիւր գողութիւն ընելու նպատակաւ գացած էին մեր ծխախոտի արտը:

Անիկա ունէր Պապա Քրիսիւին պէս իր Աստուածաշունչն ու Սաղմոսը, ասոնք էին հօրս զէնքերն որ միշտ կը պահէր արտն իրեն մօտիկ. երբ կը գուշակէր որ եկողները գող են, ակնոցը կը գնէր ու կը սկսէր Աստուածաշունչն կտորներ հարդալ անոնց: Հասկցնելու համար թէ աշխարհի վրայ Աստուածոյ տեղը մոռնալով ասոր անոր իրաւունքը յափշտակող մարդիկ ալ կան, որոնք ուղղակի դժոխք պիտի երթան. եւ զարմանալին սա էր որ ամէն անդամ ալ կը յաջողէր: Անգամ մը երեք գողեր որ ծխախոտ շորթելու եկած էին. պարապ պարկեր առնելով իրենց հետ, այնչափ զգածուեցան որ լալով հօրս ձեռքը պագնելով մեկնեցան, բայց հայրս ետ կանչելով զանոնք, քաշ մը ծխախոտ տուաւ անոնց որ մէջերնին բաժնեն:

Մոռցայ ըսելու թէ նոյն իրիկունը հայրս ծխախոտի արտէն տուն եկած էր կիրակիի առթիւ: 2000է աւելի ձողեր դուրսը ձգելով. գիշերը քունը չէր տարած, շարունակ դիտած էր իզմիտի լեռներն, մինչեւ որ բարակ սեւ ամպ մը նշմարելով աճապարանօք ելած էր անկողնէն ու մեկնած: Նոյն գիշերը սաստիկ հով մըն ալ կար, այնպէս որ հօրս լապտերն հարիւր յիսուն անգամէն աւելի մարած էր ճամբան: Դեռ մեր արտը չհասած կը նայի որ ճամբուն վրայ շատ մը երկրագործներու ծխախոտներն ալ դուրսն են. ամէն մարդ վստահելով իրիկուան օդին պայծառութենէն առանց ներս առնելու գիւղ գացած էին: Պահ մը կը

մտածէ թէ սա խեղճերուն ծխախոտները կարգաւ ներս առնէ ու անկէ վերջն երթայ մերիններուն, քանի որ քիչ մը վերջը պիտի ոչնչանային. բայց կը մտածէ թէ մոմերն հատնելու վրայ են եւ դեռ ինք կէս ժամուան ճամբայ ունի, « երթամ « կ'ըսէ մըտքէն, « երթամ ամէնէն առաջ մերինները ներս առնեմ, ու եթէ ժամանակ ունենամ կուգամ ասոնք ալ կ'առնեմ, ու կ'սկսի քալել, բայց հազիւ 10 վայրկեան կը քալէ, կը հասնի հեմ Արթինին արտը, հոն ալ կը տեսնէ որ իրենց ունեցածն ամբողջ դուրսն է, ալ սիրտը չդիմանար « Աս մարդը շատ խեղճ է, » ըսերով կ'սկսի, կէս ժամ չարաչար յոդնելէ վերջ կը յաջողի երեք չորրորդը ներս առնել, բայց յանկարծ կը դիտէ որ անձրեւը թափթփիլ սկսաւ, նորէն ճամբայ կ'ելլայ աճապարանօվ մերիններուն հասնելու. կը հասնի վերջապէս. դուրսը գտնուած բոլոր ծխախոտներն ներս կ'առնէ, հազիւ քանի մը ձողեր կը մնան դուրսը, կ'սկսի տեղատարափ անձրեւ մը՝ որ 12 ժամ կը տեւէ. ա'լ հայրս եղած տեղէն դուրս չկրնար ելլել: Այսպէս շատ մը երկրագործներ մոխիրի վրայ նստեցան այն տարին: Վերջապէս երկրագործ մը կողմանի գիտակցութիւններով լեցուն ըլլալու է, գործին մէջէն յաջողութեամբ դուրս ելլելու համար:

Իր ծխախոտի տեսակներուն արժէքն ու կարեւորութիւնը պէտք է որ հասկցած ըլլայ. բան մը որ ամէն երկրագործի յատուկ չէ. ընդհանուր ապրանքին մէկ աչքով նայելու չէ: Օրինակի համար. ծխախոտին ամէնէն սքանչելին կարելի է ձեռք ձգել տուրզի տերեւներուն մէջէն, տօնուլու առաջին կարգի — սա Պոլսեցիններուն ծխած առաջին կարգին չհասկցուի — ըսուած ծխախոտն այս տորովի տերեւերը

կարտադրեն։ Երկրագործներէն հարիւրին երկուքը հազիւ կը հասկնան ու. կը ճանչնան սոյն ծխախոտն, եւ արդէն շատ քանակութեամբ չգտնուիր։ Հաղար քաշ ծխախոտին մէջէն հազիւ մէկ ու կէս քաշ կարելի է գտնել։ Օրը երկու հարիւր սիկառ ծխող թիւեափի մը համար բաւական է այս ծխախոտին միայն մէկ սիկառ։

Այս ծխախոտին քաշը թէժին համար կ'արժէ նոյն իսկ 20, 30, 40 տակի։ Գիւղացին որովհետեւ չճանչնար մեր ակնարկած ծխախոտն, իր ապրանքին հետ խառն կուտայ թէժին։ ա՛լ անկէ անդին թէժին մէջ բան գործ կ'ընեն ու ծխախոտին հակերը քակելով տերեւ տերեւ կը զատեն։ 60 քաշնոց հակի մը մէջէն 15—20 տերեւ գտնան՝ « պէրէքեաթ վէրսին » ըսելով՝ ապահով տեղ մը կը պահեն ու կը կղպեն։

Երկրագործն առնկերուն խօլրուխները փրցուցած առեն երբ կը տեսնէ թէ տունկերն իրենց ծաղիկն ալ դուրս տալու վրայ են կամ տուած են, այս գագաթի ծաղիկն ալ կոտրելով կը նետէ ու տունկին վրայ տերեւէն զատ ուրիշ բան չթողուր։ միայն թէ՝ առաջիկայ տարուան համար իր պէտքեղող քանի մը ուժեղ տունկերուն ծաղիկները կը թողու, ու առ մէնէն վերջը անոնք կոտրելով կը կախէ ու կը չոր ցընէ անոնց հունան յաջորդ տարին ցանելու համար։

Երբ չորցնելու գործողութիւնն ամբողջապէս աւարտի, ալ կարգը կուգայ անոնց ելիփագին։ անկէ անդին վախ չունի երկրագործն։ Եթէ օդը խոնաւ է՝ կակուղ կ'ըլլան արդէն չորցած ծխախոտներն, վար կ'առնեն ու պարպելով չոււանին վրայէն, չորս կողմն դարձեալ կը նստին, ու այս անդամ կ'սկսին լաւ մը շտկելով ու բանալով տերեւն, որ բաւական ճմբթկած

կ'ըլլայ, իրարու վրայ զետեղել 15—20 տերեւի չափ ու անոնց գլուխներէն եգիպտացորենի կեղեւով մը կապելով մէկ կողմ դնել։

Վարպետ երկրագործն հոս ալ ներկայ կը գտնուի ու իր գործաւորներուն խստիւ կը պատուիրէ որ չըւ անէն պարպուած ծխախոտներն խառն ի խուռն իրարու վրայ չզետեղեն, հապա իւրաքանչիւր տեսակ մեծ պղտիկ իրենց կարգին զատ զատ ելիփագէ ընեն։ Ասանկով թէ՝ ապրանքն իրար չխառնուիր եւ թէ կրնայ հասկնալ թէ իւրաքանչիւր տեսակէն քանիկակական քաշ ծխախոտ ունի։ Իսկ եթէ օդը չոր է, ծըխախոտները կակուղնելու համար կը ստիպուին խոնաւ տեղեր կամ հորերու մէջ կախել։ Անկէ վերջ կը հանեն ու կ'սկսին դարձեալ ելիփագին։ Այս է ելիփագէ ըսուածն։

Ա՛լ աւելի չերկարելու համար գրութիւնս, պիտի ջանամ մնացածն աւելի կարճ կապել ու լմնցնել, քանի որ ծխախոտի մշակութիւնը ընդարձակ գործ մըն է, որուն վրայ կարելի է աւելի երկարօրէն գրել։

Ելիփագէն վերջ եկած է արդէն ծախելու ժամանակն։ Երկրագործն 50—70 օխանոց հակեր կը կապէ ու կը տանի թէժին։ Աւելորդ կը համարիմ հակ կապելու գործողութիւնը բացատրել, քանի որ ամէն երկրագործ ունի անոր գործիքն ու կը կապէ հակը։ Միայն սա ըսել կ'ուղեմ թէ՝ այս հակ կապելու գործողութիւնն ալ բաւական դժուար է գործէ հակցողի մը համար։ անիկա ամէն անդամ որ գործիքին մէջ ծխախոտի նոր շարք մը պիտի սկսի, կը հաշուէ ու ամէն մէկ կարգ հաշով կը վերջացնէ։ Հակ կապելու գործիքին մէջի կողմի երկու գլուխներէն կէս կէս կանգուն վար գիծ մը կը քաշէ ու կ'սկսի հետղէետէ

շարել ծխախոտներն գործիքին մէջ։ Հակին երկու կողմը կը շարէ տիպ ըսուած ծխախոտէն քանի մը կարգ, մէջտեղն ալ նոյն տիպէն կամ արժէք չունեցող տեսակէն եթէ ունի՝ կը շարէ։ բայց անանկութեղ մը կը շարէ որ հակը Ռէժին բացուած ժամանակ մէջտեղի կամ աւելի ճիշդն երկու գլուխներուն մօտ խնամով շարուած անարժէք ծխախոտներն երբեք չեն երեւիր, ու ասանկով վաթսուն քաշնոց հակի մը մէջ կրնայ զետեղել քսան քաշի չափ ստորին ծխախոտ։ ինչպիս ըսինք անդին ուրիշ երկրագործ մը հակ կապած ըլալու համար միայն կը լեցնէ ծխախոտներն գործիքին մէջ, աճապարանօք կը շարէ հակը, կը կապէ ու դուրս կը հանէ զործիքէն։ Ռէժին ալ տարուած ժամանակ հակը կը քակուի ու ամէն անգամ որ կը պատռուի հակն, ամէնէն ստորին տեսակներն միայն կ'երեւան։ ասանկով ապրանքին արժէքն ալ կը կորսուի ու պակաս գինով կը վաճառուի ծխախոտը։

Այն ամէն երկրագործներն որոնք միշտ հաշխով սկսած են գործի, ու զիտակցութիւնն ունենալով մտած են գործին մէջ, ամէն անդամ ալ յաջողած են ու իրենց աշխատութիւնները առատապէս վարձատրուած։

ՅՈՎՃԱՆՆԵՍ ԷՍԿԻԵԱՆ



ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Սիրահարը. — Պարո՞ն, անշուշտ այցելութեանս պատճառը ձեզի ծանօթ է։

Հայր. — Կարծեմ կ'ուզէիք աղջկանս հետ ամուսնանալով՝ երջանիկ ընել զինքը, այնպէս չէ։

Սիրահարը. — Անտարակո՞յս . . .

Հայր. — Շատ լաւ, ուրեմն իրեն հետ մի՛ ամուսնանաք։

— Տասն եւ հինգ օր է որ ծախքերուն համար ստակ մը չունիմ, կ'ըսէր մեծ տան մը մատակարարն իր տիրոջ։

— Իրա՞ւ. Եւ ի՞նչպէս ըրիր ծախքերը։

— Կրցածս ըրի։

— Շա՛տ լաւ, շա՛տ լաւ, դարձեալ այնպէս շառունակէ։

Կիբը. — Տե՛ս, սա օրիորդն որ տասնեռութ տարեկան է եւ վաթսունը չորս տարեկան մարդու մը հետշամուսնացեր է։ Խե՞զ աղջիկ . . .

Ամուսինը. — Շատ բարի էք, տիկին, աւելի լաւ է ըսել՝ խե՞զ մարդ . . .

Դեռատի տիկին մը, օր մը գոհարավաճառի մը խանութը գնաց զոյգ մը ադամանդեայ ող գնելու

Համար : Գոհարավաճառն ցոյց տուաւ քանի մը զոյգ օղեր, որոնցմէ գեղեցկագոյնն ընտրելէ վերջ՝ տիկինն խնդրեց որ տուն տանի զայն եւ ամուսնոյն հետ լաւ մը քննելէ վերջ եթէ հաւնի, հետեւեալ օրն ամուսինը վճարէ փոխարէնն :

Գոհարավաճառն որ կը ճանչնար անոր ամուսինն՝ հաւանեցաւ :

Երկու օր վերջը տիկինն ետ բերաւ օղերն, ըսելով թէ՝ հաւանած չէր :

— Ինչո՞ւ, ըսաւ գոհարավաճառն, երեկ գիշեր Կիպրիկ աղային հարսնիքին ներկայ էի, շատ աղէկ վայլած էր ձեզի :

Պարտապահնջը . — Մինչեւ որ վճարես պարտք՝ ամէն օր պիտի գամ :

Պարտահերը . — Ուրախ եմ, այն ատեն մեր պարզ ծանօթութիւնը՝ մշտնջենական բարեկամութեան մը կը փոխուի :

— Շա'տ կը ցաւիմ, ըսաւ մէկն իր ընկերին, շատ կը ցաւիմ սա խեղճ Գրիգորին վրայ, սեպէ թէ աչքերը բոլորովին կուրցան, բան մը չտեսներ :

— Թո՛ղ ամուսնանայ, պատասխանեց ընկերն, եթէ այն ատեն աչքերն չբացուին, կը նշանակէ թէ՝ հիւանդութիւնը անբուժելի է :

— Տէ՛ր հայր, Տէ՛ր հայր, կերակուրներով լեցուն սեղան մը կը տանին, ըսաւ լուսարարը :

— Ինձի ի՞նչ :

— Զեր տունը կը տանին :

— Քեզի ի՞նչ :

Օ Գ Տ Ա Կ Ա Ր Խ Օ Ս Ք Ե Ր

Բարոյախօսները առաջնորդներ են, որոնք անանկ ճամբաներ կը ցուցնեն՝ ուրիէ մարդ չանցնիր :

Հաւատքը՝ մարդո ամէն փորձանքէ լ'ազատէ :

Մարդոցմէ վախցողը շուտով կ'իյնայ, բայց Աստուծմէ երկնչողը՝ միշտ պիտի բարձրանայ :

Հարստութիւնը նախ նպատակ մը՝ յետոյ միջոց մը կ'ըլլայ :

Բարիքի փոխարէն չարիք հատուցանողին տունէն դժբաղդութիւնը դուրս չելլեր :

Մարդիկ պակասութիւն մը կը նկատեն կնոջ բոլոր յատկութիւններն՝ զորս իրենք չունին :

Գէշ սրուած դանակը՝ փայտը կտրելու տեղ մատը կը կտրէ :

Անօթութեան ամուսինը՝ ծարաւն է :

Ուրիշին յանցանքը մէջտեղ հանողը՝ բարեկամ շունենար :

Պղտիկ ծախիքէ մը ազատելու համար՝ ագահը պատիւն ալ փառասիրութիւնն ալ կը մոռնայ :

Աղքատին ձայնը չի լսելու համար ականջները գոցողը՝ ինքն ալ պիտի աղաղակէ՝ բայց իրեն մտիկ ընող չպիտի ըլլայ :

Հին պտուկներու մէջ եփուած ապուրը աւելի համով կ'ըլլայ :

Մէկը քեզի բարեկամ ընելէ առաջ՝ հետը շատ աղու հաց կեր :

Փառասիրութիւնը անանկ կիրք մըն է՝ որով մարդիրմէն զատ ուրիշ ո՛չ ոքի կարեւորութիւն կուտայ :

Շողոքորթութիւնը ամօթալի արհեստ մըն է, որ շողոքորդին միայն օգտակար է :

Թթուած գինին ակռաները կճրտեցնել կուտայ :

Աղնիւ անձերու հետ յարաբերութիւն ունենալով՝ մարդ բան չկորանցնէր :

Կասկածոտ մարդ մը՝ դիմացն ելլոլէն. կը վախնայ՝ թէ զինքը կը խափէ :

Քիչ խօսողին գործը շուտով կը յառաջանայ :

Բոլոր անարդանքներէն ծալրանքն է որ չի ներուիր :

Փառքէ յառաջ եկած երջանկութիւնը՝ մէջը պարապ պղնձէ արձանի կը նմանի :

Համբերութիւնը՝ բան գիտնալէ լու է :

Քիչով ապրողը՝ բանի մը պէտք շունենալ :

Քիչ ցանողը՝ շատ չի հնձեր :

Բացականերուն ու մեռնողներուն վրայ գէշ խօսելու չէ :

Նախանձը կը կրծէ հոգին, ինչպէս ժանդը կը մաշցնէ երկաթն :

Թշնամիի գէմ ինքզինքն ապահովելու միջոցն՝ զայն իրեն բարեկամ ընելն է :

Երիտասարդները՝ տան մէջ իրենց ծնողքներէն քաշուելու են, մինակ եղած ատեննին՝ իրենցմէ :

Երեւոյթէն դատելով՝ ո՛չ գովեցէք, ո՛չ ալ դատապարտեցէք :

Պատուաւոր մարդիկ՝ իրենց պարտականութիւն-

ներուն գերին են, մինչեւ որ զայն չկատարեն՝ հանգիստ չեն ըլլար :

Բարեկենդանէ ետքը՝ գլուխը կը քերեն :

Շատ կերուխում ընողը՝ շուտով դագաղ կը մտնէ :

Շատ զգայուն սիրտերը՝ վերջին ծայր երախտագէտ կ'ըլլան :

Մահը քաղցր է՝ երբ վերջին վայրկեանին մարդկոնայ ինքզինքը միսիթարել իր անցեալովը :

Ապերախտին տրուածն՝ երկու անգամ կորսուած է :

Հակառակութիւնը՝ մարդուն տկարութիւնները մէջտեղ կը հանէ :

Համինիլ ու մեկնիլ, յուսալ եւ յիշել՝ ահա՛ ամբողջ կեանքն :

Հոգնիլ չգիտցողը՝ շուտ կը գործէ :

Վաղուան վրայ մի՛ հպարտանաք, որովհետեւ չէք գիտեր թէ՛ ծագող օրը ի՞նչ կը բերէ :

Զերին շհանդուրժած դժուարութիւնը՝ մի՛ թողուք ուրիշ մը կը :

Համբերութիւնը՝ ամէն բանի դեղ է :

Իրաւունք ունեցողը՝ առանց քաշուելու կը խօսի :

Ուրիշներուն պղտիկ ըսելով՝ ինքզինքը մեծ ցուցունել ուղելն աղւոր բան չէ :

Բնաւ ուրիշին չարիք մի՛ ընէք եւ մէկը ձեզի գէշութիւն չպիտի ուզէ :

Առնելը՝ տալէն շատ աւելի դիւրին է :

Իրականութիւնը՝ վիժած աղջիկ մըն է որ հօրը երազը կ'ուրանայ :

Հարիւր ունեցող եւ հարիւր պարտական եղողը՝ բան մըն ալ չունի :



ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ՓՈՒԹՈՎ ԿԱՏԱՐԵԼԻ

Ս Պ Ա Ր Ա Ն
Փիսադրութեան
ուղարկութեան մասին
Սույն է տպագրութեան մաս

Կազմակերպութիւններ եւ կը սպազրէ առել
տեսակ գործիր, մաս-
եր, հանդիսներ, ողջ արքայականներ, հարասիլի իշխանագիրներ,
ալիքագործներ, այշաբարդեր, ու սպազրութեան վերաբերեալ ա-
շխակ պիտոններ, — Տպարանից սփիսկան 2000k անհին-
կերներ յանաբորդաց տրանսպորտին սակ են ձրի,
Անցյալի մայուրին եւ նըրազանութիւն,

ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄՆԵՐՈՒ ՀԵԶՈՒՆ

Ծաղկներու լեզուէն ետքը՝ նամակադրոշմներու լեզուն։ Եթէ առաւելութիւն մըն ալ չունենայ, գէթ նորութիւնն ունի իրը արժանիք։

Երկու սիրահարներ ի՞նչպէս կը հասկնան զիրար նամակի մը պահարանին վրայ նայելով. — Նամակ կադրոշմին փակցուելու կերպէն :

Ազ անկիւն վերի կողմը

Երբ շիտակ փակցուած է, գլուխը վեր, կը նշանակէ . — Զեր տեսութեան կարօտը կը քաշեմ :

Գլխիվայր . — Այլ եւս մի՛ զբէք ինծի .

Հորիզոնական . — Զիս կը սիրէ՞ք :
Ծուռ . — Շուտով պատասխանեցէք :

ԱՅ անկիւն վարի կողմ

Եիտակ փակցուած : — Կը սիրեմ ձեզի :

Զախ անկիւց յերի կոս

Շիտակ. — Զեր սէրը զիս շատ եղջանիկ կ'ո՞նէ :

Հորիզոնական . — Սէրս ուրիշն տուած եմ :

Գլուխվայր. — Բարի լոյս սիրելիս ։

Զախ անկիւն վարի կողմ

Շիտակ. — Հաւատարիմ պիտի մնամ ձեզի:

Հորիզոնական . — Մի՛ թողուր որ սէրս մարի :

Գլխիվայր . — Ամէն բան դժուար է :

ԱՅՆՈՒԹԻՒՆ ԲԵՏ ՄԵԿ զՃԻ ՎՐԱՅ

Շիտակ փակցուած. — Ընդունէ՛ սէրս:

Ծուռ. — Ծատ կը փափագիմ ձեզ տեսնել :

ՏԻԿԻՆ ՄԱՔ-ՈՒՒԼԵԸՄՍ ԵՒ ՓԱՅԼԱԿԸ

— Այո՛, պարոն, շարունակեց Պ. Մաք Ուհիլերմս, փայլակը մարդկային ամէնէն ահարկու ախտերէն մինէ : Այս հիւանդութիւնը սովորաբար կիներուն յատուկ է, բայց մարդոց վրայ ալ կը տեսնուի : Կին մը կարող է նոյն ինքն սատանին դիմագրաւ ըլլալ, բայց փայլակի մը շղչւնը բաւական է՝ անոր հաւասարակշռութիւնը կորսնցնելու : Իր կրած սարսափը յաճախ արգահատելի է : Արդ, կ'ըսէի ձեզ, բա՛րեկամ, թէ քունէս ընդուստ արթնցայ՝ լսելով ձայն մը, որուն ուղղութիւնը չէի կարող որոշել «Մօրթիմէ՛ր», Մօրթիմէ՛ր» : Այս ձայնը ականջիս կ'աղդէր : Հաղիւ գաղափարներս ամփոփած՝ սկսայ մութին մէջ փնտռել՝ գոչելով.

— Իվանժէլի՛ն, իվանժէլի՛ն . ի՞նչ կայ նորէն, ո՞ւր ես :

— Ո՞ւր պիտի ըլլամ, կօշիկներու դարանին մէջ փակուած եմ : Զե՞ս ամչնար որ այսպիսի փոթորկաւից ատեն մը անկողին մտած կը քնանաս :

— Ամչնալ, կ'ուզէի իմանալ, տիկի՛ն, թէ ինչպէս կարելի է ամչնալ՝ երր մարդ կը քնանայ : Այդ ըսածդ ողջմտութեան հակառակ է :

— Մօրթիմէ՛ր :

— Լա՛ ուրեմն, հոգի՛ս, ի՞նչ է պատահածը :

— Դեռ կը յանդգնի՞ս այս օդին անկողինդ մնալ :

— Անչո՛ւշտ, յետօ՞յ :

— Շուտով ելի՛ր, կը կարծէի թէ քիչ մը կեանքը կը սիրես, եթէ ոչ քու շահուգ՝ գէթ իմ եւ զաւկըներուդ սիրոյն համար :

— Բայց սիրունիկս...

— Մի՛ խօսիր այդպէս, Մօրթիմէր : Գիտես թէ՝ փոթորիկի պահուն անկողինէ մը աւելի վասնգաւոր տեղ չկայ : Բոլոր դիտական գրքերը այս մասին համաձայն են . իսկ զու դեռ պառկած կը մնաս՝ մի միայն ինձ հակառակելու հաճոյքէն մղուած, և ...

— Ո՛չ, Իվանժէլի՛ն, ո՛չ, ահա ոտքի ելած եմ, ես ...

Խօսքս ընդմիջուեցաւ փայլակէ մը, որուն անմիջապէս յաջորդեց Տիկին Մաք-Ուհիլերմսի սուր մէկ աղաղակը եւ որոտման խլացուցիչ թնդիւն մը :

— Ահա՛, աչքովդ տեսար ըրածիդ արդիւնքը : Կարելի՞ է Մօրթիմէր, որ այսպիսի տագնապալից վայրկեանի մը մէջ հայհոյելու ոճիրը գործես :

— Ես չհայհոյեցի տիկի՛ն, եւ ըսած արդիւնքդ ալ ատկէ չէ՛ . ընէի կամ ոչ՝ իրողութիւնը անվրէպ պիտի զատահէր . եւ գիտե՛ս, կամ պարտաւոր էիր գիտնալ թէ՛ երբ մթնոլորտը յագենայ ելեքտրականութեամբ ...

— Այո՛, այո՛, պատճառաբանէ , ուզածիդ չափ պատճառաբանէ : Զե՞մ ըմբռներ թէ՛ ի՞նչպէս կընաս այսպիսի ընթացք մը ունենալ, երբ լաւ գիտես թէ՛ մօտերը շանթարգել չկայ, եւ թէ այս միջոցիս հէք կնոջդ եւ զաւկըներուդ կեանքը նախախնամութեան ձեռքն է : Բայց ի՞նչ կ'ընես հոդ . լուցկի վառել առանկ օդի մը : իրաւ որ խենդ ես :

— Տէ՛ր Աստուած, բայց ի՞նչ մնաս կը ծագի ասկէ, սենեակը թանձր մութի մէջ է :

— Մարէ՛, չուտով մարէ՛ լուցկին, մեզ մեռցնե՞լ է միաքդ : Գիտես թէ՛ կայծակը ամէնէ աւելի լոյսին կը դիմէ : (Ֆօք, — քրա՞ք, — պլում, պո՛ւմ, պո՛ւմ) : Կը լսե՞ս, հիմա ըրածիդ հաւնեցա՞ր :

— Հաւնուելու բան մը չըրի որ : Լուցկի մը թե-

րեւս կարենայ փայլակը իրեն քաշել, բայց չկրնար անոր պատճառը ըլլալ, այդ մասին պահով եմ, մանաւանդ որ լուցկին քսեւ եւ փայլատակելը մէկ եղաւ, գրաւ կը դնեմ, այո՛, մէկի դէմ միլիոն գրաւ կը դնեմ, եթէ . . .

— Ա.մ՛թ քեզ, Մօրթիմէ՛ր, ահա կը տեսնես որ այնքան մօտ կը գտնուինք մահուան, եւ այսպիսի հանդիսաւոր բոպէի մը մէջ կը յանդգնիս այդ ծաղրական լեզուն գործածել. Մօրթիմէ՛ր, միթէ աղօթքը ըրի՞ր :

— Միտք ունէի, տիկի՞ն, բայց տասներկու անգամ տասներեքին քանի ընկելը մտածելով (Ֆր՛ըք, — պո՛ւմ, պո՛ւմ, պո՛ւմ, պո՛ւմ, քրա՛ք) :

— Ա՛հ : Կորսուեցա՛նք, կորսուեցա՛նք այդ իրարանցումին մէջ՝ ինչպէս չկրցար այս վտանգին վրայ մտածել :

— Բայց քիչ առաջ ամէն բան հանդարտ էր, երկնից երեսը ամպի նշոյն անգամ չկար : Ի՞նչպէս կրնայի գուշակել թէ՝ ակնթարթի մը մէջ ամէն ինչ տակնուվրայ պիտի ըլլայ : Մանաւանդ որ այսպիսի անակնկալ դէպքեր անսովոր չեն : Իմ մասիս, չորս տարի առաջուան Զիքակօի երկրաշարժէն ի վեր՝ առաջին անգամ է որ այսպիսի ցաւալի մոռացում մը կ'ունենամ :

— Մօրթիմէ՛ր, այդ ի՞նչ լեզու կը գործածես. մոռցա՞ր գեղին տենդը :

— Երկրաշարժին համար գուցէ ըսելիք չունենամ, բայց կրողը տանի զիս՝ եթէ անձս պատասխանատու համարիմ այն անիծեալ դեղին տենդին, որ . . .

(Ֆր՛ըք, պո՛ւմ, պո՛ւմ, պո՛ւմ, պո՛ւմ, տա՛նկ, քրա՛ք)

— Ա՛հ, հիմա ապահով եմ որ կայծակը տեղակութել :

ինկաւ : Մօրթիմէ՛ր, ալ չպիտի տեսնենք վաղուան լոյսը. ի՞նչ օգուտ որ յանդիմանութիւններս ապարդիւն պիտի մման, բայց Մօրթիմէ՛ր :

— Լա՛ւ, ի՞նչ կ'ուզես նորէն,

— Զայնդ այնպէս մը կը հնչէ՝ որ կարծես . . . Մօրթիմէ՛ր, շըլլայ թէ այս պահուս վառանին դիմացը կեցած ըլլաս :

— Ա.յո՛, ճիշդ այդ մահացու ոճիրը գործելու վըրայ եմ :

— Հեռացի՛ր ուրեմն . միթէ որոշա՞ծ ես ամենքս ալ ի կորուստ մատնել : Չե՞ս գիտեր թէ ելեքտրականութեան լաւագոյն հաղորդիչն է վառարանը, որ արտաքին օդին հետ յարաբերութեան մէջ կը գտնըուի : — Հիմա, ըսէ՛ նայիմ, ո՞ւր կը գտնուի՞ս :

— Առ այժմ պատուհանին առջեւն եմ :

— Ա՛խ, Աստուած իմ, արդեօք խելքի՞դ է եկեր : Շո՛ւտ մէկդի քաշուէ, այսօր կաթնակեր մանուկներն անգամ գիտեն թէ պատուհանէ մ'աւելի վտանգաւոր տեղ մը չկայ . . . Մօր . . . թի . . . մէ՛ր . . .

— Ի՞նչ է :

— Ա.յդ ի՞նչ աղմուկ է :

— Աթոռները կը շարժեմ հողաթափներս վնտըռելու համար :

— Լա՛ւ, հիմա ալ սկսար կարասիները տեղափոխել : Չե՞ս գիտեր թէ՝ այդպիսի գործողութեամբ օդը կը շարժի : Բաւական չէր մեզ բնութեան պատուհասը, եւ ահա սննուի պատճառներով այդ աղէտքը կը ծանրացնես : Բայց յանուն Աստուծոյ, կ'աղաչեմ, մի՛ երգեր այդէս, միթքդ ի՞նչ է, սիրելիս :

— Կը մտածեմ թէ ըրածէս վնաս մը չծագիր :

— Հազար անգամ ըսի քեզի թէ երգը մթնոլորտին մէջ թըթուս մներ յառաջ կը բերէ, որոնք ելեք-

տրական հոսանուտին ընթացքը կը խափանեն : —
ի՞նչ կ'ընես դրան կողմը :

— է՛հ , . զայն բանալու կ'աշխատիմ , միթէ այս
ըրածս ալ յանցանք է :

— Յանցանք . . . բայց սիրելի՛ս , այդ ըրածդ
կրնայ մահացու ըլլալ : Աճէն ուսեալ անձինք գիտեն
թէ օդի հոսանք գոյացնելը՝ կայծակնահար ըլլալու
ապահովագոյն միջոցն է : Գոցէ՛ դուռը եւ բանալին
դարձուր որ փեղկը չի զարնէ , ապա թէ ոչ՝ կոր-
ուած ենք : Մօրթիմէ՛ր , ի՞նչ ընելու վրայ ես :

— Ոչի՞նչ աղբիւրին ծորակը կը փնտռեմ՝ դէմքս
եւ ձեռքերս զովացնելու համար . կը տեսնես որ հոս՝
խեղդուելու աստիճան տաք կ'ընէ :

— Ա՛հ , այս անգամ խելքիդ մնացորդն ալ փախ-
ցուցիր : Քանի՞ անգամ կրկնած եմ քեղի թէ՝ կայ-
ծակը 99 % ջուրին մէջ կ'իյնայ . Հիմա՝ հասկցայ որ
ալ ազատելու ճար չունինք : Նորէ՞ն աղմուկ , դարձ-
եա՞լ խլրտում :

— Բան մը չէ՛ , տիկի՞ն , միայն թէ կատուն . . .

— Կատո՞ւն , ո՛հ , ի՞նչ գժբաղդութիւն , բռնէ
զայն եւ պահարանը խոթէ : Շո՛ւտ ըրէ , հոգի՞ս ,
վասնդի այդ կենդանին ելեքտրականութեան սոսկալի
ընդունարան մըն է :

Շուտով գործի սկսայ՝ գլուխս , ոտքերս ու ձեռ-
քերս զանագան արգելքներու զարնուելով , որոնցմէ
ոմանք խիստ կարծր , ուրիշները սրածայր կամ հա-
տու էին . վերջապէս այդ վտանգաւոր որարդութիւնը
կատարեցի : Կատուն բռնուած եւ պահարանին մէջ
բանտարկուած էր : Տարակոյս չկայ որ իր սուր ճան-
կերուն տակ ճերմակեղէններուս մեծ մասը բզիկ բզիկ
ըրաւ : Այն ատեն՝ տիկինը , հազիւ լուսելու չափ
մեղմ ճայնով հետեւեալ հրահանգը տուաւ :

— Մօրթիմէ՛ր , ամէնէն ապահով միջոցն այս է :
Սենեակին մէջտեղ աթոռի մը վրայ կանգուն կեցիր՝
կանխաւ չեղոքացնելով անոր ոտքերը վատ հաղոր-
դիչ մարմիններով : Այս՛ , սիրելի՛ս , ա՛յս է լաւա-
գոյնը : Զորս հատ պնակ դիր դետնի վրայ եւ . . .

(Փը՛սդ , պո՛ւմ , պո՛ւմ , պո՛ւմ , քրա՞մ)

— Կը լսե՞ս , Մօրթիմէ՛ր , օ՞ն շտապէ՛ դեռ հար-
ուածը չի հասած :

— Կրցածս ըրի՝ պնակները դնելու համար . մեծ
մասը ջարդ ու բուրդ ընելէ ետք՝ յաջողեցայ չորսը
գետնի վրայ շարել , ապա աթոռի մը ոտքերը չե-
զոքացնելով՝ նոր հրահանգներու սպասեցի :

— Մտիկ ըրէ՛ , Մօրթիմէ՛ր , գիտես որ մետաղ-
ները շանթարգելի դերը կը կատարեն . գլուխտ դիր
հրցէջի սաղաւարտդ , որ ամբողջովին պղինձ է :

Հնազանդեցայ , բաւական փնտռելէ ետք՝ գտայ
այն առարկան որ ահագին ծանրութիւն մը ունենա-
լով՝ ամառնային այդ տաք գիշերուան մէջ առատ
քրահինքով մը ողողեց զիս . կը կարծէի թէ՛ ա՛լ բա-
ւական պաշտպանուած եմ կայծակի դէմ . բայց ո՛չ ,
դեռ քաշելիք ունիմ եղեր :

— Մօրթիմէ՛ր , մարմնոյդ վերի մասը լաւ պաշտ-
պանուած է . հիմա վարի կողմն ալ ապահովելու հա-
մար պարտաւոր ես մէջքդ կապել զինուորականի
սուրդ : Մի՛ դանդաղիր , կ'աղաշեմ :

— Կրկին հնազանդեցայ , եւ գիշերազգեստիս
վրայ կոճկեցի սուրիս կամարը :

— Այժմ Մօրթիմէ՛ր , կը մնայ ոտքերդ պաշտպա-
նել . խթաններդ դի՛ր :

Լութեամբ կատարեցի իր պատուէրը՝ կատա-
ղութիւնս զսպելով :

— Յայտնի է թէ՛ զանգակի թնդիւնը՝ շանթը

կը հեռացնէ , այդպէս կ'ըսէ ֆրանսերէն գիրքն ալ :
— Այդ գիրքը ֆրանսացիներուն պէս քիչ մը
շատախօս ու կասկածելի կը թուի ինձ . բայց . . .

— Մօթիմէ՛ր , ժամանակ կորսնցնելու ատենը
չէ , ձեռքդ բռնէ ճաշի խոշոր զանգակը , որ աջ
կողմը նախասենեակին մէջ կը գտնուի , ա'յդ միայն
պէտք է վտանգէ զերծ մնալու համար : Ա'հ , բարե-
կամ , երբ կը մտածեմ թէ վերջապէս ազատելու կէ-
տին հասած ենք :

Մեր փոքր ամարանոցը՝ ձորակի մը վրայ նայող
բլրակներու ամէնէ բարձր կատարը կը գտնուի : Մեր
շուրջը բազմաթիւ ագարակներ կան , որոնց ամէնէն
մօտաւորը չորս հարիւր քայլ անդին է :

Լա՛ւ ուրեմն աթոռին վրայ ելայ՝ այդ ծանր
զանգակը ձեռքս բռնած , եւ սկսայ ամենայն խըլճ-
մոռութեամբ զարնել : Հազիւ 7 - 8 վայրկեան անցած
էր , ահա յանկարծ պատուհաններուն փեղկերը ուժ-
գնութեամբ բացուեցան դուրսէն , կանթեղի մը շող-
շողուն լոյսը ներս թափանցեց և հաստ ձայն մը պօ-
ռաց :

— Ի՞նչ է ան , ի՞նչ կ'ընէք հոդ :

Բոլորովին ամօթահար՝ գետին դնելով զանգակը
և աթոռէն իջնելով ըսի .

— Բան մը չէ , բարեկամք , փոթորիկին պատճա-
ռաւ անհանգիստ ըլլալով կը ջանայի կայծակը հե-
ռացնել :

— Փոթորիկ , կայծակ , այդ ինչ խօսքեր է ,
պարոն Մաք-Ռելերմն , արդեօք ցնորեցաք . գիշերը
շատ պայծառ է . լուսինը ամէնուրէք կը փայլի եւ
փոթորիկի նշոյլն անգամ չկայ :

Դուրս նայեցայ , ապշութիւնս ա'յնքան մեծ եղաւ

որ արմանքէս զարմանքէս բաւական ատեն անխօս
մնացի : Վերջապէս ըսի .

— Եխտակը բան մը չեմ հասկնար . վարագոյրնե-
րու բացուածքէն և փեղկերու ճեղքերէն կատարե-
լապէս տեսանք փայլակներն , և մինչեւ իսկ որո-
տումն ալ լսեցինք :

Դրան առջեւ հաւաքուած հետաքրքիրները իրա-
րու ետեւ գետին փոռուեցան ըստ հաճոյս ինդալու
համար . անոնցմէ երկուքը խնդալէ ճաթեցան մե-
ռան . ողջ մնացողներէ մին դիտել տուաւ .

— Զարմանալի է որ չմտածեցիք անգամ մը գուրս
նայիլ , սա' բլրին կատարը : Զեր լսածը թնդանօթի
որոտումն է , իսկ փայլակ ըսածնիդ՝ անոր արձակած
բոցն է : Հեռագիրը ճիշդ կէս գիշերին բերաւ լուրը
թէ կարֆիլտ նախագահ ընտրուեցաւ Միացեալ Նա-
հանգներու :

ՄԱՔ ԹՈՒԿՑՆ



ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔ

Տախտակամածին վրային մելանի բիծեր հանել .—
Սենեակներուն մէջ , ուր տախտակամածը գորգով կամ
խսիրով ծածկուած չէ , դպրոցականին գրասեղանին
բոլորախիքը՝ գետինը աղատուած կ'ըլլայ մելանի կա-
թիլներով : Ասոր համար թո՛ղ մայրիկները չնեղա-
նան : Մելան եղած տեղերը քիչ մը կիրի քլօրուկով
(քերէն մէհլէմի) ծեփեցէք և յետոյ պարզ ջուրով լաւ
մը լուալով ապակիի կտարով մը քերթեցէք :

Գորգերը մարել .— Փոշիապատ գորգերը լաւ մը

մաքրելու ամենադիւրին միջոցն է հետեւեալը; կաղամբի տերեւները մանր մանր ջարդեցէք եւ գորգին վրայ ցանեցէք. յետոյ աւելով մը՝ որու շիւղերը կարծր ըլլալու են, լաւ մը շփեցէք: թէ փոշին կ'ելէ գորգին թելերուն մէջէն, և թէ՛ բուրդին նախկին դոյնը տեղը կուգայ:

Զուանները երկար ժամանակ դիմացկուն պահել. — Գործածել սկսելէ առաջ քանի մը որ ամառուան արեւին ձգեցէք եւ կամ փուռի մը մէջ չորցուցէք, որպէս զի լաւ մը չորնայ, յետոյ կեօզ բաըը լուծուած ջուրի մէջ թրջեցէք 48 ժամ:

Հին պատկերներու վրայէն աղտը հանել. — Հին պատկերներու թուղթին դեղնութիւնը անցնելու եւ առջի ճերմակութեան բերելու համար՝ պատկերին մեծութեան համեմատ տափակ ամանի մը մէջ օ Տը ծավել լեցուցէք ջուրի մէջ խառնուած: Երկու վայրկեանի չափ պատկերը մէջը ձգեցէք եւ անմիջապէս բաց ծուրակի մը ջուրին տակը բռնեցէք: Այս գործողութիւն բաւական ճարպիկութիւն կը պահանջէ՝ պատկերն ալ չաւրելու համար:

Սեւ թիւլերը մաերել. — Քանի մը անգամ՝ ծալլելէ ետքը ճերմակ լաթ՝ մը, դրէք զայն սեղանին վրայ: Թիւլն ալ վրան փոեցէք լաւ մը պրկելով: Շատ կակուղ սպունգ մը թաթիւցէք թէյի կամ ջուրով խառնուած քացախի մէջ եւ թիւլին երեսը անով թրջեցէք: Երբ լաւ մը ծծէ հեղուկը, քիչ տաք արդուկով մը վրայէն անցէք: Թիւլին գոյնը վրայ կուգայ ու բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնէ:

Թրջած մուծակները շտկել. — Մուշտակը փոեցէք սեղանի մը վրայ եւ վրան թիւրեղի ձեւով ասիս պօնիք (գեղագործներուն քով գտնուածին պէս) ցանեցէք ու ամբողջ գիշերը այդպէս թողուցէք: Առտուն պիտի տեսնէք որ ասիտ պօռիքը ծծեր է ամբողջ խոնաւութիւնը եւ փոշիի վերածուեր է, այն ատեն բարակ թելէ վրձինով մը մաքրեցէք մուշտակին թելերուն ուղղութեամբը զայն շարժելով:

Ճերմակ ձեռնոցներ մաերել. — Մածնացած կաթի մէջ նուրբ սպունգ մը թաթիւցէք եւ մարսիլիական աճառով մը փրփրցուցէք: Ճերմակ ձեռնոցը լաւ մը պրկելէ ետքը սոյն սպունգով ամէն կողմը սրբեցէք: Գործողութեան միջոցին սպունգը քանի մը անգամ քամեցէք եւ նորէն կաթին ու աճառին թաթիւցէք: Երբ աւարտէք՝ ձեռնոցը լաւ մը չորս կողմէն քաշելէ յետոյ կախեցէք որ չորնայ:

Դանակները մաերել. — Սեղանի դանակները մաքրելու համար լեմոնի ջուրով լաւ մը շփեցէք, մինչեւ որ վրան մմացած արատները անհետին. յետոյ յեսանի վրայ սրեցէք: Միշտ հոգ տանելու է զանոնք տաք ջուրի մէջ չճգելու, որովհետեւ ամէնէն կարծր պողպատն իսկ կ'աւրուի:

Մորբեր պահել. — Քանի մը տեսակ կենդանիներ կան, ինչպէս, կատու, նապաստակ, չուն, ճագար եւ այլն, որոնց մորթերը պահել կ'ուղենք երբեմն, ահա՛ թէ ինչպէս յարդարելու է զանոնք:

Մորթը կենդանիին վրայէն հանելուն պէս քսան եւ չորս ժամ պաղ ջուրի մէջ ճգելու է. յետոյ բթացած դանակով մը վրայէն միսն ու իւղը քերծելու է: Այս նախնական գործողութիւնը կատարելէ յետոյ

առէք (միջակ մեծութեամբ մորթի մը համար) 6 կամ 7 հօխա ջուր, տաքցուցէք եւ մէջը լուծեցէք կէս հոխա պաղլեղ ու 100 տրամ կերակորի աղ, լաւ մը եռացուցէք, յետոյ ձգեցէք որ պաղի, Երբ ջուրին տաքութիւնը այնչափ քիչնայ որ ձեռք դիմանայ, մորթը մէջը ձգեցէք, քառորդ ժամու չափ աճուցէք և երկու օր թաթխուած ձգեցէք հոն, մորթը հանելով ջուրը նորէն տաքցուցէք եւ առջի գործողութիւնը կրկնեցէք :

Վերջապէս երկորդ անգամ ջուրէն հանելով շիտակ տախտակի մը վրայ գամեցէք ձգտելով և շուքին մէջ թողէք որ չորանայ : Երբ խոնաւութիւնը կէս մը անցնի, ամէն օր մէկ երկու անգամ լաւ մը քաշեցէք չորս կողմէն որպէս զի կակուղնայ ու ճերմըկի : Բոլորովին չորնալէն յետոյ մուշտակին երեսը մաղած մոխիր ցանեցէք, որպէս զի խոնաւութիւնը առնէ : Քսան եւ չորս ժամէն ետքը պղտիկ քանակով մը փոշիները թողթուցէք եւ ուզած մորթերնիդ պատրաստուած կ'ըլլայ :

Տոմսակնիդ, Պարնայի, Երէ կը հանիի :

— Պարո՛ն Սմիթսըն, կ'ըսէ դատաւորը՝ ամերիկացի ամբաստանեալին որ արդէն պատասխանած է սովորական հարցումներուն, ամբաստանուած էք երկաթուղիի պաշտօնեայ մը ծեծելով վիրաւորելնուդ համար : Անցեալ փետրուար 23ին, Բարիզէն Մարսիւա մեկնող ճեպընթացին մէջ կը գտնուէիք : Երբ Մօրէ կայարանը հասաք, երկաթուղիի պաշտօնեայ

մը ներկայացաւ ձեզի և քաղաքավարութեամբ մը՝ զոր կը վկայեն ճամբու ընկերներնիդ իսկ, ձեր տոմսակը ուզեց : Նստարանին վրայէն, ուր պառկած էիք ..

— Կը քնանայի, ընդմիջեց Սմիթսըն :

— ... Վեր ցատքեցիք և անբացատրելի շարժումով մը կով մը սպաննելու չափ բաւական ուժով կառուփի հարուած մը տուիք պաշտօնեային դէմքին : Պրն. Պրիւն, այս է անոր անունը, ինքզինքը կորսնցուց, և մինչդեռ ձեզի կը ձերբակալէին՝ հարուածեալ պաշտօնեան բնակարանը կը փոխադրուէր արիւն փսխելով : Երկու շաբաթ անկողին մնաց : Հիմա առողջանալով ձեզի դէմ դատ կը վարէ և իբր հատուցում 200 ֆրանք կը պահանջէ . իր պահանջումը ...

— Շատ քիչ է, միջամտեց Սմիթսըն : Զէի կարծեր որ այնքան ու ժով զարկած րլլամ, բայց քանի որ եղեր լմնցեր է, կ'ուզեմ կատարեալ հատուցում մը ընել և պատրաստ եմ 200 տոլար յանձնել իրեն, ձեր դրամով կարծեմ 1000 ֆրանքի չափ կ'ընէ :

Պրիւնի փաստարանը ոտք ելլելով՝

— Կ'ընդունիմ, յայտարարեց, ամբաստանեալին առաջարկը : Յաճախորդս՝ իմ բերնով՝ կը գոհանայ իրեն եղած հատուցումով և ետ կ'առնէ գանգատը :

Սմիթսըն կարծեց թէ դատավարութիւնը լմնածէ և ձեռքը գրանը տանելու վրայ էր, երբ նախագահը շաբումով մը կեցուց զայն :

— Դրամնիդ պահեցէք, պարոն Սմիթսըն, ըսաւ դատաւորը, նկատի պիտի առնենք ձեր առատաձեռնութիւնը և գանգատող կողմին ետ քաշուիլը : Բայց դրամը վճարելէն ետքն ալ յանցանքը կը մնայ նորէն և պէտք է օրէնքն ալ գոհացնել : Ա'րդ, ձեր

վրայ առնուած տեղեկութիւնները շատ պատուաբեր են : Ամերիկեան գաղթականութիւնը ճեզ կ'ընդունի իբր կատարեալ ճենթլմէն մը , լաւ դաստիարակուած ու խիստ բարեկիրթ : Զենք կրնար գտնել պատճառ մը որու հետեւանքով խեղճ պաշտօնեայի մը վրայ այնքան վայրագ գործ մը կատարել ուղեցիք : Հաճեցէք այս կէտը բացատրել :

— Անհամբերութեան շարժումի մը տեղի տուի , պատասխանեց Սմիթսը . հինգերորդ անգամն էր որ տոմսակս կ'ուղէին . . . ես այնպէս կ'ենթադրէի որ երկաթուղւոյ ընկերութեան վճարած դրամս ոչ միայն զիս Բարիզէն Մարսիլիս փոխադրել կ'երաշխաւորէր , այլ նաեւ իմ հանգստութեանս ալ հոգ տանիլ կ'ենթադրէր : Ես քննանալու իրաւունքիս մէջ բռնաբարուած էի , և այնպէս վարուեցայ՝ ինչպէս պիտի վարուէր իմ տեղս ուրիշ ամէն ամերիկացի :

Նախագահն ու դատաւորները ապշած իր երեսը կը նայէին :

— Ի՞նչ տեսակ մարդիկ են այդ ֆրանսաց ները , շարունակեց Պրն . Սմիթսը , որ երկաթուղի նատելու համար այդքան խրթին գործողութիւններ կը կատարեն : Ի՞նչ կը նանակէ այս հազարումէկ պաշտօնեաններու երթեւեկը , կատարուած խիստ քօնթքուը : Ապուշ բան մըն է պարզապէս . մենք ատոնց եւ ոչ մէկը գիտենք :

« Ահա՝ օրինակ մը :

« Առնունք Տօյթընէ Միսիսիպի գետին բերանը երթեւեկող կառախումբն . առնուազն վեց օրուան համբորդութիւն մը կատարէ ան :

« Տօյթընի մէջ երկաթուղիի կայարանը թաղին քովիկն է , տեսակ մը վրան գոց հրապարակ՝ ուրտեղ ամէն մարդ կը մտնէ կ'ելլէ : Ազատ էք ուղածնուր

պէս պտտկելու , ճամբաներուն վրայէն կը ցատկէք , շարժման մէջ եղող կառախումբերու մէջտեղէ կանցնիք . բան ըսող չկայ . եթէ փորձեր կատարող վայրաշարժ մը ետեւնուգ հասնի եւ ճեղի կոխոտէ , ջախջախէ , բաւ իրաւունք չունիք գանգատելու , եղածն ցաւալի բան մըն էր . բայց յանցանքը ձերն է , կեանքը այնքան պարապ բան մը չէ որ մարդ անգամ մը ետին նայելու ձանձրանայ : Ո՞ւր երթալ կ'ուղէք , այսինչ կամ այնինչ քաղաքը . կայարանը կառախումբը մը կայ որ շոգիի վրալ կ'սպասէ . կ'երթաք վակոններէն մին կը նատիք , տոմսակ ունենաք կամ ո'չ , ասիկա կարեւորութիւն չունի բնաւ :

« Նայիք մէկէն ի մէկ վայրաշարժը կը սուլէ և ճամբայ կ'ելլէ : Գիւղէն ելլելուն ընդարձակ դաշտն է որ կը տալածուի : Անմիջապէս նոր կեանք մը կ'սկսի կառախումբին մէջ . խումբեր կը կազմուին թղթի սեղանին բոլորտիքը , կամ քանի մը հոգի միասին կը խօսակցին . ուրիշներ կը պտտկին ասդին անդին , վակոններէն գուրս կ'ելլեն եւ կառքերը իրար միացընող փայտէ նեղ անցքին վրայէն կառախումբին մինչեւ ծայրը կ'երթան . մարդ բան չըսել իրենց . բայց եթէ վար իյնան ու մէկտեղերնին կոտրեն՝ բնաւ իրաւունք չեն ունենար գանգատելու : Երկաթուղիի ընկերութիւնը անշուշտ ստիպուած չէ անձարակներուն վճարումներ ընել իրենց կատարած տիմարութիւններուն համար :

« Ասանկ օր մը կ'անցնի . յետոյ երկրորդ օր մը , կառախումբը միշտ կը յառաջանայ . գետերու քովէ կամ վրայէ կ'անցնի . նեղ կիրճերու մէջէ կը սողուկի , ընդարձակ ամայի ու անբեր դաշտերու մէջէ կը սուրայ :

« Յանկարծ առաջու մըն ալ վակոնին դուռը կը

բացուի եւ կառախումբին պետը ներս կը մտնէ։
 « — Տոմակնիդ, պարոննե՛ր, եթէ կը հաճիք։
 « Ա՛րդ, ենթադրենք որ երեք ձէնթլմէններ զմե-
 լինով մէյմէկ փայտի կտորներ տաշելով կը խօսին։
 Ասոնցմէ առաջինը փայտն ու զմելին քովիկը կը դնէ,
 թղթապահակէն տոմսակը կը հանէ եւ պաշտօնեային
 կուտայ։

«Այս վերջինը կը քննէ զայն եւ չնորհակալ ըլլա-
 լով կը վերադարձնէ։

« Երկրորդ պարոնը կ'ըսէ. — Տոմսակ չունիմ։

« — Զեր իրաւունքն է այդ, պարոն, ո՞ւր
 կ'երթաք։

« — Այս ինչ տեղը։

« — Սա՛ չափ պիտի վճարէք։

« — Ահաւասիկ։

« — Շնորհակալ եմ, կ'ըսէ պաշտօնեան։

« Կարգը կուգայ երրորդին։

« — Տոմսակնիդ, պարոն, եթէ կը հաճիք։

« — Տոմսակ չունիմ։

« — Զեր իրաւունքն է. ո՞ւր պիտի երթաք։

« — Այսինչ տեղը։

« — Սա չափ է։

« — Այդքան դրամ չունիմ վրաս։

« — Հոգ չէ՛, պարոն, վնաս մը չունի։

« Ասոր վրայ պաշտօնեան ձեռքը կը վերցնէ և
 չուան մը կը քաշէ. զանգակ մը կը զարնուի և կա-
 ռախումբը կանգ կ'առնէ։

« — Հաճեցէք իջնել, կ'ըսէ պաշտօնեան։»

Պարոն նախագահը այս լսելուն սոսկումէն վեր
 ցատքեց։

— Վա՞ր իջնել, բայց ո՞ւրտեղ։

— Ուր որ ալ ըլլայ։

— Բնդարձակ ամայի դաշտերո՞ւն մէջտեղը։

— Հո՛ն կամ ուրիշ տեղ, խնդիր չէ։

— Բայց վայրենութեան, գաղանութեան վերջին
 խօսքն է այդ, գոչեց պարոն նախագահը ինքզինքէն
 ելած։

— Ինչո՞ւ վայրենութիւն, ինչո՞ւ գաղանութիւն,
 կրկնեց Ամերիկացին հանդարտ ձայնով մը, երբ
 մարդ դրամ չունի, երկաթուղի չի նստիր։

Դատարանը՝ մեղմացուցիչ պարագաներ մէջ բե-
 րելով, Պարոն Սմիթսըն դատապարտուեցաւ 50
 ֆրանք տուգանքի։

ՄԱՅՐ ՈՒ ՏՂԱՑ

Կան մայրեր որոնք իրենց զաւակը ամուսնացնել
 կուզեն երեսանց, մինչդեռ ներքուատ ոգւով չափ կը
 խորչին հարսի երես տեսնելէ. այս տեսակ մայրերը
 կը նմանին այն կարդ մը ագահներուն որոնք շահիլ
 կը տենչան և չեն համարձակիր իրենց դրամը շա-
 հագործելու։

Ահաւասիկ Ըուընտիկ տուտուին առջինեկը, որ
 գործունեայ և գեղեցիկ երիտասարդ մը եղած է, ա-
 մուսնանալ կը փափաքի, բայց իր մայրը դեռ շատ
 տհաս կը գտնայ զինքը դրախտէն արտաքսելու։

Քան եւ հինգ տարին դեռ չէ լրացուցած. բանի
 գործի տէր, ինչպէս կ'ըսեն ընդհանրագէս. եկու տես
 որ այս մայր ու զաւկին աղջիկ հաւաքնելը շաբթը-
 ուան պահք եւ ուտիք օրերուն կը նմանի. Մայրն
 աղջան ուտելէ անդին չանցնիր, մինչդեռ զաւակն
 ախորժակի ամէն պահանջում ընդունելի կը դտնայ։

Պարոն Համբիկ , իր մօրը անկատար խոստում-ներէն՝ որ միշտ կ'ապահովէր թէ իրեն գեղեցիկ հարս մը պիտի դանայ , ա՛լ յոյսը կտրելով՝ խորհեցաւ ինքն իր գլխուն ճարը տեսնել : Եւ տեսաւ : Օրիորդ Արմիկին սիրահարեցաւ , որ իրենցմէ չորս տուն վար կը բնակէր :

« Զի՞ք ինչ ծածուկ որ ոչ յայտնեցի » կ'ըսեն : Ըստիկ տուտուն նախ կասկածներ ունեցաւ , բայց անցած կիրակի , որ Առջի Պատկ էր , իր զաւկին չի գանգատելը տեսնելով՝ ա՛լ բոլորովին համոզուեցաւ թէ՝ Պարոն Համբիկ աղջկան մը սիրահարած է ուստի մտադրեց գործն ստուգել :

Առջի իրիկուն , գիշերուան ճաշէն յետոյ , Ըստիկ տուտուն իր զաւկին ըսաւ .

— Երեկ Սամաթիայէն աղջկան մը համար խապար բերին , աղւորութեան ուեարը չիկայ եղեր . Երկու հատ տուն , հարուր քէսէ նախըտ . էր աղէկ ալ ըռ-զակ ունի ըսին . կալ շաբթու երթամ տեսնամ կ'ը-սեմկոր :

— Վա՛զ անցիր մարի՛կ քիմ պիլիր ի՞նչ ալլը-ման է :

— Ծո տուն ալ , կարգուիմ , կ'ըսես կ'ըսես , աղ-ջկան մ'ալ չես հաւնիր :

— Ես , եօխսա գուն , երկու տարիէ պէրի աղջը-կան մը չկրցիր հաւնելու , մարիկ . քեզի բան մը ըսե՞մ , հեռուները փնտուելնուս , մեր քովի Նիկողոս աղային աղջիկը ամէնէն խէրովն է . ուսեալ , աղւոր , հայրն ալ օլտուխնա վարիյէթը տեղը պատուաւոր էսնաֆ մարդ է :

— Քա սա Արմիկի՞ն համար է ըսածդ . հեռունե՞ր ըլլայ . ճիտդ քար մը կապէ տէ տար ինքինքդ ծովը նետէ :

— Հա՛ , ծովը պիտի նետեմ , ան պիտի առնեմ . տահա ըսելիք մը ունի՞ս :

— Իրարու խեր տեսնաք , վաղուցնէ թէզը չիկայ , ես կլոխս կ'առնեմ կ'երթամ :

— Քեզի բան մը ըսեմ , դուն տեղդ նստէ , ես կ'երթամ օտա մը կը բռնեմ , գլուխս տինձ կը նստիմ :

Այս միջոցին տանը դուռը զարկին :

— Քա՛ աս ատեն ո՞վ է նայիմ , ըսաւ Ըուրնտիկ տուտուն դրան չուանը քաշելով :

— Պարեւ ծեզ , աշվընիտ կը խաղա՞ր կոր , ձայ-նեց ծանօթ ձայն մը :

— Վա՛յ , դուն ե՞ս , Ալէմ տուտու , հրամմեցէք . կերակուր կերա՞ծ ես :

— Հապա՛ , հուսա տեղ մըն էի , կերակուրի վար դրին . հայտէ՛ ըսի ճամբուս վրայ է . խախվէն ալ հոս խմեմ ըսի : Ընտո՞ր ես Համբիկ աղա , տահա քեզի փեսայ չպիտի՞ ընենք :

— Ի՞նչ ընենք , Ալէմ տուտու , մայրս աղջկան մը չկրցաւ հաւնելու քի , հարսնիք մը ընէինք :

— Սուտ է , թէպէրին աղջիկը կըտայ , չուզեց , ի՞նչ ունէր , խումբիի պէս աղջիկ էր :

— Կեցէր ինծի անանկ պազապուրին խօսքը կ'ը-նէ . փատաննայի մը կտոր . սուտուէի մը մէջ երկու խօսք անգամ չկրնար ընել :

— Կէշ աղջիկ չէ ամա քիչ մը թութուի է , ըսաւ Ալէմ տուտու , թէ՛ մօրը եւ թէ զաւկին համամիտ գտնուելու համար :

— Զահէր հարսս մէջլիսներու էյլէնէ պիտի ը-նէի . ես մօրմէս ինչ եմ տեսեր նէ ան կ'երթամ . մեղքդ քաշեմ Ալէմ տուտու , նոր հարս էի նէ , լման իրեք տարի կեսուրոջս տէմը էլփէնչէ կեցած էի :

— Անանկ է եա՛, հալիսին աղջիկը զահէր քուկին գերիդ էր:

— Ի՞նչ ըսել է, մենք հոգի շունչի՞նք:

— Կիւճդ չիկայ ամա, Ըստնտիկ տուտու, հիմակու աղջիկները պաշխա զանցայով մեծացած են. ան մեր տանի րուտումին նայելու ըլլաս նէ, տանը տուլիկը կ'աւլուի. ամա չէմ ըսեր քի ամպարտաւան թապի-յէթ ունենայ. էլպէթտէ քի հարս ըսածիդ վարքը բարքը տեղը ըլլալու է:

— Աստուծոյ համար դուն ըսէ, Ալէմ տուտու, սա մեր քովի նիկողոս աղջիկն աղջիկը գէ՞շ աղջիկ է, հարցուց պարոն Համբիկ:

— Աղէկ, թէրպիյէլի է տէյի լսեր եմ ամա, եավրում, ներսի դին ո՞վ գիտէ:

— Քա՛, առտուընէ մինչուկ իրիկուն սիւսէրը կուտայ. բէնձիրէյին առջին կը նստի:

— Էյ, աղջիկ մը պատուհանին առջին նստելով ի՞նչ կ'ըլլայ. այդ հաշով աղջիկան տէր եղողը տանը պատուհան շինել տալու չէ:

— Տահա քուկին կլիսէդ սամ եկլի կը փչէ, անոր անտեղը ես կիտեմ:

— Քեզի բան մը ըսեմ, մարիկ, ես կարգուելէ վազ անցայ, իմ աեզս դուն կարգուէ, երկու խօսք պակաս կ'ըլլայ, կը լմայ, ըսելով՝ պարոն Համբիկ իր խուցը քաշուեցաւ,

Հետեւեալ իրիկունը պարոն Համբիկ տուն չէր գացած: Ըստնտիկ տուտուն՝ յայտնի ընել չէր ուղեր, բայց իր զաւկին բացակայութեան նկատմամբ մեծ անձիութեան մէջ էր.

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

ՃԵՐԱՄՆԵՐՈՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Երբեմն շերամի որդը բնաւ տկալութեան նշան մը ցոյց չի տար, սովորականին պէս կ'ուտէ. յետոյ մէ-կէն ի մէկ տերեւները կրծելէ կը դադրի, շարժում-ները կ'ընդարմանան, պաղ ճերմակ գոյն մը կ'առնէ՝ կը կակուղնայ ու կը մեռնի: Քանի մը ժամ վերջը մարմինը կը չորնայ և թուխ գոյն մը կ'առնէ՝ որ մանիշակագոյնի կը փոխուի, և ի վերջոյ ճերմակ բորբոս մը կը պատէ ամբողջ մարմինը:

Ամէնէն աւելի հինգերորդ շրջանին կը պատահի այս հիւանդութիւնը: Թրթուրները, որոնք ճիւղերէն վեր մագլցիլ սկսած էին, մէկէն ի մէկ կանդ կ'առ-նեն, կը մեռնին և ետեւի ոտքերնուն վրայ կախ-ուած կը մնան: Սոյն հիւանդութեան պատճառ կը կարծուի տեսակ մը մակարոյծ մանրագիտական սունկ որ թրթուրին մարմինին մէջը կ'աճի:

Երբ աշխատանոցի մը մէջ այս հիւանդութիւնը տեսնուի, անմիջապէս բոլոր թրթուրները ուրիշ սենեակ մը տանելու է, և առջի սենեակն ալ լաւ մը ամէն կողմ հականեխելու է:

ՓԵԹԱԿՆԵՐՈՒ ՏԵՂԸ ՈՐՈՇԵԼ

Մեղուները խոնաւութենէ շատ չեն ախորժիր, կետեւարար փեթակները գետնէն բարձր տեղ մը

հաստատելը նախապատիւ կը համարուի : Նոյնպէս ուշադրութիւն ընելու է սովորաբար փչող հովերու ուղղութեան . ցուրտ հովերը վնասակար են , ուստի փեթակին մուտքը անանկ ձեւով մը շինելու է որ անցնմէ պահպանուին : Ցուրտ տեղի մը չափ անյարմար է նաեւ շատ արեւ զարկած տեղ մըն ալ . որովհետեւ մեղրամոմը կը հալի . ամառուան տաքերուն մէջ այս անպատեհութեան առաջքը առնելու համար յարդով կը ծածկեն փեթակները :

Երբ փեթակները դաշտին մէջ բաց օդին դրուին , ցանկի մը երկայնքը կը շարեն և եթէ հողը խոնաւ է՝ ցիցերնւ վրայ բարձր բռնեցնել կուտան : Այս դիրքով , այսինքն , բացօդեայ հաստատուած փեթակներէն աւելի դիւրութեամբ մեղր կը հաւաքուի , զանոնք մաքրելն ու կարգի դնելն ալ կը դիւրանայ : Անձրեւու գաւառներու մէջ փեթակները կը ծածկեն յատուկ շինուած տախտակէ ծածկոցներու տակ :

ՎՆԱՍԱԿԱՐ ՄԻԶԱՏՆԵՐԸ ԶՆՁԵԼ

Զերմոցներու մէջ բոյսերը կրծող միջատները ջնջելու համար ծխախոտի փոշի կը ցանեն անոնց վրայ . այս միջոցը թէեւ օգտակար է , բայց շատ դժուարաւ կը գործադրուի . պէտք է ջերմոցին բոլոր բոյսերուն քով երթալ եւ մէկիկ մէկիկ վրան ծխախոտի փոշի ցանել :

Նոյնպէս , ջերմոցին վառարաններուն մէջ կը տաքցնեն երկաթի թիեր՝ կարմրնալու աստիճան եւ կը բերեն ջերմոցին մէջ , վրան կը ցանեն ծխախոտի փոշի՝ որ անմիջապէս ածխանալով թանձր մուխերու

ամպեր կը ձեւացնէ : Կամաց կամաց ծխախոտի մուխը խտանալով կ'իջնէ բոլոր բոյսերուն վրայ և կը ջնջէ ամէնէն գաղտնի խորչին մէջ պահութած թրթուրը : Սոյն միջոցը թէեւ արագ ու խնայողական է սակայն մեծ անպատեհութիւններ ալ ունի . նախ գործողութեան ամբողջ տեւողութեան միջոցին ներսը կենալու չէ . ջերմոցին մէջ հասունցած պտուղները և բանջարեղէնները լուալէ կամ խաչելէ ետքը միայն ուտաելու է . վերջապէս կան ծաղիկներ որոնց գոյները կ'աւրուին ծխախոտի գործածութեամբ :

ՄՐՅԱԿԻՆՆԵՐԸ ՀԵՌԱՑՆԵԼ

Մրջիւնները հեռացնելու ամէնէն պարզ ու աժան միջոցն է անոնց ճամբուն վրայ խոշոր աղ ցանել : Եթէ այս աղը բոյնին մէջ ալ թափէք , շուտ մը կը ձգեն կը փախչին : — Պաղատու ծառերու վրայ ելելնին արգիլելու համար , գետնէն մէկ թիզ մը վեր ցօղունին վրայ կը կապեն բուրդէ հիւսուած չուան մը որ թրջուած կ'ըլլայ նաւթի մէջ կամ նիքոթինով լուծուած ջուրի մէջ : Այս չուանին վրայ հասնող մրջիւնները կը սատկին :

Իսկ տուններու մէջ՝ թաց լաթի մէջ կտոր մը քամիր (քեաֆիրի) պահուած տեղը բնաւ մրջիւն չի մօտենար :

ՀԱԽՈՑ ՈՒ ՀԱԽԻԹ

Հազար ու մէկ նեղութիւններ ու պատճառներ հաւերուն վրայ կրնան ծանր հիւսնդութիւններ բերել և նոյն խակ ամենափոքր տկարութիւն մը հաւին

ածելէն կարուելուն պատճառ կ'ըլլայ։ Հաւ պահելը շատերուն վնասաբեր կ'երեւի, որովհետեւ պէտք եղած խնամքները ի գործ չորուելով հաւերը չեն տար ինչ որ պարտաւոր են։ Ծանր հիւանդութիւններէ պատահելիք հոգերէ զատ մանր խնամքներ կան, որոնք որչափ հոգածութեամբ կատարուին, այնքան ալ պահուած հաւը շահաբեր կ'ըլլայ։ աս խնամքներուն առաջինը և ամէնէն գլխաւորը սա է. աշխատիլ որ հաւերը չի ոջլուին։

Ասոր համար հաւնոցը ամէնամաքուր վիճակի մէջ պահելու է. կենդանիներուն տրուած ջուրը վճիտ ըլլալու է. արդէն բնական բերումով ամէն կենդանի ինչ որ ալ ըլլայ, մաքուր տեղ պառկիլ և մաքուր ուտելիք ունենալէ շատ կ'ախորժի։ Հաւնոցին պատերը, թառերը, կողովները, ամէն առարկայ յաճախակի լուալու է մէկ օխա ջուրի մէջ 5 - 10 կրամ ասիտ ֆէնիք դնելով։ Խոշոր աւել մը այս ջուրին մէջ թաթխելով հաւնոցին չորս կողմը կը սրսկեն, բոլոր պատերը կը լուան, և երբ չորս կողմը չորսայ թուխաի տեղերուն յարդը կը փոխեն, եթէ պէտք ըլլայ՝ ծծումրի ծաղիկ (քիւքիւրտ չիչէ յի) կը սրսկեն հաւերուն վրայ և հաւնոցին պատերը կիրով կը ճերմակնեն։ Նոյնպէս հաւնոցին ներսիդին մէկ անկիւնը կը դնեն քանի մը դոյլ մոխիր՝ հետը քանի մը ափ փոշիացած կիր և ծծումրի ծաղիկ խառնուած, երբ հաւերը նեղուին ճճիներէ կամ ոջիներէ, այս մոխիրին մէջ կը մտնեն և ամբողջ մարմիննին մէջը կը թաթխեն։

* * * Շատեր հաւ կը պահեն հաւկիթը առնելու համար. ասոնք եթէ կ'ուզեն շահաւոր գործ մը ընել ամէն տարի անխատիր բոլոր չորս տարեկանէ վեր հաւերը կամ ծախելու են։ Երեք տարեկան

հաւ մը ամէնէն շատ հսւկիթ կ'ածէ, չորրորդ տարին թէեւ հաւկիթներն աւելի խոչոր կ'ըլլան, բայց թիւը շատ կը նուազի։ Ա՛լ անկէ ետքը արտադրութիւնը կը քիչնայ. հինգ տարեկան հաւ մը՝ երեք տարեկանի մը չափ սնունդ կ'սպառէ եւ անոր կէսին չափ հաւկիթ չիտար։ Ուրեմն լաւ ուշադրութիւն ընկլու է, երբ հաւ մը չորս տարեկանը կ'անցնի, անմիջապէս ծախելու կամ կտրելու է։ Նամանաւանդ որ երիտասարդ հաւերը կամ տարւոյն սկիզբները ածել կ'սկսին և կամ ածելու եղանակին ամէնէն ետքերը. եւ այս տաեններն է որ հաւկիթին գինը կը սղէ։ Առյն հաշվով երբ մէկն հաւնոցին մէջ մէկ տարեկան, երկու տարեկան, երեք տարեկան եւ չորս տարեկան հաւեր ունի, կրնայ ապահով ըլլալ թէ՝ ամբողջ տարուան միջոցին թարմ հաւկիթ պիտի ունենայ։

ՆՅԱՆ Կ. ԹԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. Պոլիս, Պապը Ալի Ճաստակի, Կիցտամ լրագրին դէմ

Թ Ի Ւ Յ Տ



ԱՇԽԱՐՀԻՍ ՆԱԽՆԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐԸ

Երկիրը միշտ ունեցած չէ այն տեսքն, զոր հիմա մենք կը վայելենք։ Այն ժամանակներէն ի վեր, ուր մեր հրավառ երկրագունտը կամաց կամաց պաղեցաւ, շատ ու շատ անդամներ փոխեց իր « գէմքը », իր բարեխառնութիւնը, մթնոլորտը, վրան ապրող կենդանիներն ու աճող բոյսերը անհուն փոփոխութիւններու ենթակայ եղած են։ Հօկայ բուսաբերութիւն մը, որու բբածոյ մնացորդները տակաւին կը գտնենք հողի խաւերուն տակ, անհետացած է՝ ինչպէս նաև հրէշային կենդանիներն։

Ամայի երկրիս երեսը կամաց բնակիչներ ունեցած է, որոնց առաջինները ձուկերն եղած են, յետոյ եկած են սողունները, միջատները, թռչունները, ստնաւորները եւ վերջապէս մարդն՝ արարչութեան յետինն ու գլուխ գործոցն։

ԱԱԽՆԱԿԱՆ ԴԱՅԸ. — Այրեցեալ կիմայի մը բուսաբերութիւնը ամբողջ երկիրս կը ծածկէ. — Անհուն ծովեր, քիչ խորութեամբ եւ տեղ կղզեակներով լցուած՝ որոց եղերքներէն լոռեր կը կախուին, ահա՛ այս է պատկերն երկրագունտիս՝ նախնական դարերու մէջ։ Այրեցեալ մթնոլորտն ծանրաբեռնը ուած է թանձը շոգիներով՝ որոնց մէջէն արեւու ճառագայթները չեն կրնար անցնիլ, մշտնջենական գիւշեր մը գրեթէ։ Մինակ խեղճուկ խեցեպատեան մը եռախորչը՝ որ հիմակուան նեպուկին (թէզպիհ պէօքէկի) ձեւն ունէր եւ անոր պէս կրնար կլորնալ, կ'ապրէր այդ լուին անհունութեան մէջ՝ քանի մը ձուկերու հետ, որոնց մարմինը խեցիով պատած էր։ Սակայն մթնոլորտին տաքութիւնը կամաց կամաց

պաղիլ սկսաւ. զայն մթագնող շոգիները թեթեւցան եւ արեւուն ճառագայթները կարող եղան թափանցել երկրիս վրայ։ Այն ատեն ահագին բուսաբերութիւն մը սկսաւ զարգանալ. բոլոր հողերը բեւեռէն մինչեւ հասարակած ծածկուեցան ամենախիտ անտառներով՝ որոնց գաղափարը կուտան Ափրիլէի հօկայ սեւ անտառներն։

Տակաւին գաղջ ջուրերու ճախճախուտներու վրայ բարձրացան ահագին պտերներ (էյրէլթի օթու) որոնք հիմակուան ամենաբարձր ծառերուն չափ խոշոր էին, Բայց եւ ոչ իսկ ծաղիկի հատ մը կը զարդարէր այս միօրինակ կանանչի տարածութիւնը. ո՛չ մէկ աղմուկ, ո՛չ մէկ ձայն արձագանք կուտար անոնց մէջ։ Մինակ երկակենցաղ սողուն մը գլուխը վեր հանելով ջուրերէն՝ կը չնչէր մթնոլորտի թանձը օդը, և քանի մը հատ միջատներ կը թրթռային լճացեալ չուրերուն վրայ։

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԴԱՅԸ. — Ճիւաղներու ծնունդը, մեծ սողունները. — Դարերու տեւողութեան միջոցին այրեցեալ չերմութիւնը կ'սկսի բարեխառնիլ. ա՛լ անձրեւններն՝ հեղեղներու պէս վար չեն թափիր, Երկինքը պայծառացած է, եւ արեւը իր ճառագայթները կը ցոլացնէ։ Բուսաբերութիւնը տակաւին հըսկայ, չծածկեր սակայն բոլոր աշխարհին երեսը, Ածխաբեր շրջանի ծառաբերձ պտերները նորէն գլուխնին հովուն տուած կ'օրօրին. Բայց անոնց մօտ կը բարձրանան նաև կրնաբերներ՝ նման հիմակուան նոճիններուն, բանտանի ծառերու գագաթը՝ լայն տերեւններու պսակի մը մէջ խոշոր պտուղներ կը կախուին։

Դաշտերու մէջ կը բուսնին արմաւենիները, ան-

դեն ու կը թռչոին . ծովերու մէջ կակլամորթեր եւ խեցեմորթեր կը բնտկին :

Երկրիս երեսն որ մինչեւ այս ատեն ստորին գասակարգի արարածներ տեսած է , կամ ճիւաղ կենդանիներ , հիմա կը բնակուի ստեառներու մեծ ընապանիքովը , կապիկները կը վազգեն անտառներու մէջ :

Կովերու խուժերեր կորոճան ընդարձակ դաշտերու մէջ , ձիերու երամներ կը վազգեն մարգերուն վըրայ :

Խոշոր կենդանիներ համերաշն կեանք մը կը վարեն այս համոյալի բնութեան միջեւ : Մեծամարմին ու հսկայ ժանիքներով զինուած պակածանիներ , սոսկալի մեծագազանը՝ խոշոր ու ճիւաղային ճանկերով զինուած ոտքերով :

Ասի խոշոր թանձրամորթերու դարն է :

ԶՈՐՈՌԴԱԿԱՆ ԴԱՐ. — Արդի ածխարհի արշալոյսը . — Ահա՝ աշխարհիս կազմութեան վերջին երեւյթը : Հիմակուան ապրող բոլոր կենդանիները ծնունդ կ'առնեն : Հողերը հիմակուանին պէս կը կազմուին : Խոշոր՝ բայց խաղաղաէր թանձրամորթեր կը լեցնեն կանանչորակ մարգերը : Անտառներու կամ քարանիքները մէջ գարանի կը կենան վագրերը . փորենիները արջերը . գիշակեր որսի թռչունները ժայռերու մէջ կը թառին :

Զորորդական դարը , արդի ժամանակին պիտի նմանէր՝ եթէ երկրիս երեսէն անհետացած չըլլային մամութեները , հսկայ ոնդեղջիւրները , եւայլն : Այն դարուն մէջ եւրոպայի գրեթէ ամբողջ արեւմտեան մասն եւ Ալպեան լեռնագոտիներէն սկսեալ ծածկը-ուեցաւ սառնակոյտերու ահագին խաւով մը : Սոյն

տառներու մէջ կ'աճին նշդարիներն , լաստենին (գը-զըլ աղաճը) , ընկուզենին :

Այս դարուն մէջ ամբողջ աշխարհիս բնակչութիւնը կը կազմեն սողուններ : Կրիան երեւան կ'ելլէ և ի-րեն կ'ընկերանան այն հսկայ մողէսազգիներն՝ ձըկ-նամողէզը , մերձամողէզը , որոնց ամէնէն կարծը 10 մէթը երկան է եւ որոնք ջուրերուն մէջ կ'ապրին : Վկապական կենդանի մը՝ մաշկամատը՝ ձուկի պէս կը լողայ , թռչունի պէս կը թռչի :

Երկրիս երեսն այս պահուս միանգամայն հետաքրքրական է ու զարհութելի . ծովերուն երեսը՝ հըսկայ կարապներու պէս՝ մերձամողէզներ կը սուրան իրենց որսին ետեւէն . երբեմն ալ երկու ճիւաղներ իրարու հանդիպելով հրէշային կուի մը կը սկսին ի-րարու դէմ : Ջուրերուն վրայ՝ շերեփագիներ՝ մեր մժզուկներուն նման՝ կը թռչունին : Պողիպոտներն ի-րենց բուսատէ (մէրճան) պատերը կը հիւսեն : Խոշոր ձուկերու խումբեր ծովերու խորերը կը բնակին :

ԵՐՐՈՐԴԱԿԱՆ ԴԱՐ. . — Ստնաւորները կը տեսնուին երկրիս վրայ . — Վերջապէս երկրիս հաստատուն կեղեւը թանձրացած է եւ կեդրոնական կրակին իր մակերեւոյթին վրայ ըրած ազդեցութիւնը նուազեցուցած : Անձրեւները կանոնաւորուած են . արեւը կը կենդանացնէ բոյսերն ու կենդանիները : Խոշոր գետեր իրենց ճամբան պեղած են . երկրիս երեսը քօղարկող չոփէտ թանձր խաւն այլ եւս գոյութիւն չունի : Հիմակուան կաղնիներուն ձեւով ծառեր կը ծածկեն դաշտերն , ուր կաղամախներն դէպ ի վեր կը ցցեն իրենց սուր գագաթները՝ ծաղիկներու ճշմարիտ գորգեր դարձած են , որոնց վրայ հազարումէկ գունագեղ միջատներ կը խայտան : Թռչունները կ'եր-

սառերուն քաշուելէն ետքն է որ մարդս երեւան ելաւ։ Մարդուս այս սկզբնական երեւումին ժամանակ ունեցած վիճակն շատ հեռու էր հիմակուան վիճակն։ գրեթէ համահաւասար մըն էր այն ատեն զինքը շրջապատող կենդանիներուն, սակայն չնորհիւ իր իմացականութեան հասաւ այսօրուան ամենաբարձր դիրքին։

Թարգմ.

Զ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԱՅԾԵԱՄԻ ՈՐՍԸ

Քանի մը տարիէ ի վեր, երեք ընկերներ ու ես, որսորդութեան եղանակին կուգայինք քանի մը ամիս անցնել Ք... գիւղին մէջ, որուն շրջակայ ա՛ տառներն անսպառ էին եղնիկներով ու մանր երեւերով։

Անտառին ճամբուն վրայ կը գտնուէր մեկուսացած հիւղակ մը որու պարտէղին մէջ՝ ամէն առտու կը տեսնէինք ազնիւ դիմագծերով անձ մը, որուն շարժուծեւերը չէին համապատասխանէր՝ հագած գիւղացիի ճոխ հագուստներուն։

Քաղաքարարութեամբ կը բարեւէր մեզի, բայց բնաւ չէր խօսեր։

Գիւղին մէջ «Պարոն Մատթէոս» հասարակ անունով կը ճանչցուէր, բնաւ զբաղում չունէր և մարդու հետ չէր տեսնուեր։ Գիւղացիներուն կարծիքով շատ հարուստ ըլլալու էր ինչու որ ամէն տարի կարեւոր գումար մը կը յանձնէր քաղաքապետին՝ աղքատներուն բաժնուելու համար։

Իր ժամանակը կ'անցնէր կարդալով, պարտէզը մշակելով կամ անտառին մէջ երկար պառյտներ ընելով։ Տասը տարիէ ի վեր հոտ կ'ապրի եղեր ծերուկ սպասուհիի մը հետ, որ ինքն ալ գիւղացիներուն գիւղածէն աւելի բան մը չէր գիտեր այդ արտակարգ պարոնին անցեալին վրայ։ Սակայն գիւղացիները դժգո՞ ըլլալու տեղ մը չունէին անկէ, ընդհակառակն շատ վայելած էին անոր առատաձեռնութիւնները, ուստի հանգիստ կը ձգէին անիկա եւ միշտ տեսակ մը յարգանքով կը բարեւէին։

* * *

Օր մը ուշ մնացած ըլլալով՝ ընկերներս արդէն մեկնած էին, սինակս անտառին եղերքն հասած էի եւ չէի գիտեր որ ճամբան բռնելս, երբ պարոն Մաթէոս դէմս ելաւ։ բարեւեցի եւ հարցուցի թէ արդեօք կրնա՞յ բարեկամներուս ուրկէ գացած ըլլալուն վրայ տեղեկութիւն մը տալ։ Տուած պատասխանը՝ բարձր դասու ընկերութեան մը յատուի քաղաքավար շեշտով՝ կը ցուցնէր թէ անտառին ամենամանը ճամբաններն իսկ կը ճանչնայ եւ որսորդութեան ալ շատ վարժ է։

— Որսորդութեան մասին շատ վարժ մէկը կ'երեւիք ըսի, եթէ հաճէիք գալ մեզ հետ եղնիկ մը սպաննելու՝ ընկերներս եւ ես շատ գոհ պիտի ըլլանք։

— Ծնորհակալ եմ, պատասխանեց, բնաւ չեմ որսար։

— Բայց որսորդութենէ շատ լաւ հասկնալ կ'երեւիք։

— Ժամանակով շատ կ'որսայի։

Առանց որից խօսք մը ըսելու՝ Պարոն Մաթէոս բարեւեց ու հեռացաւ։

Այս կարճ տեսակցութիւնը աւելի գրգռեց զիս։

քիչ մը մօտէն ճանչնալու այդ տարօրինակ մարդն : Քանի մը օր վերջն , տեսայ որ պարտէզին մէջ նըստած է , առջի օրուան առուած տեղեկութիւններուն համար շնորհակալ ըլլալու պարտուակով ներս մտայ : Յետին ծայր բարեկրթութեամբ ընդունեց զիս և հրացուց սրահ՝ մը որ եթէ ճոխ չէր՝ նորոր ճաշակ մը կը մատնանիշէր : Խօսակցութիւնը երթալով կը մտերմանար և ես կը զարմանայի թէ՝ ասանկ բարեկրթութիւն առնող մէկը ինչպէս կուգար ճդնաւորի կեանք մը կ'անցնէր գիւղի մը խորը : Սակայն չէի համարձակեր հարցում մը ընել այդ մասին : Այցելութիւններս շարունակեցի , եւ գտած ընդունելութիւնս երթալով աւելի սիրալիք կը դառնար : Սակայն հիւրընկալս կը մերժէր բոլոր հրաւէրներս որսին մասնակցելու համար :

* * *

Յաջորդ տարին գիւղ դառնալուս պէս անմիջապէս գացի այցելութիւն տալ Պարոն Մաթէոսի : Զերմ ընդունելութիւն մը ըրաւ ինծի եւ ճաշի վար դրաւ :

Սեղանատան պատին վրայէն երկու հրացաններ կախուած էին , թէև մաքուր վիճակի մէջ կը գըտնուէին , բայց հին մօտէլ մը կը յատկանշէին : Ասիկա առիթ տուաւ ինծի խօսակցութիւնը որսի վրայ դարձնելու . խօսակիցս շատ մը մանրավէպերով ցուցուց թէ՝ ժամանակով խիստ ճարպիկ որսորդ մը եղած է :

— Ինչո՞ւ համար այլեւս չէք որսար :

— Տիուր պատմութիւն մըն է ատիկա , ըսաւ խօսակիցս , զոր եւ ո՛չ մէկուն պատմած եմ , բայց անցեալ ձմեռէ ի վեր ինծի խօսելէ արգիլող պատմառն այլ եւս գոյութիւն չունենալով , կրնամ ձեզի պատմել : Այս տեղին մէջ խոկ ականատես եղայ որսի անակ զարհուրելի միջադէպի մը որ , երդում ըրի

այլեւս հրացան չառնել ձեռքս , եւ քսանեւհինդ տարիէ ի վեր խօսքս կը պահէմ : Անշուշտ իմացած էք կօնկրիէր մարքիզին մահուան պարագաները :

— Այո , լսած եմ որ որսի ատեն սպաննուած է :

— Ճի՛շտ է : Պ . աը կոնկրիէր , ասկէ քանի մը մղոն հեռուն գտնուող դղեսակի մը տէրն էր : Ամէնէն սիրելի , ամէնէն հիւրամեծար մարդն էր : Որսի եղանակին , իր դղեակը՝ շրջակայ աղնուականներուն համելի ու սիրուն ժողովատեղին էր :

* * *

Կարճ լրութենէ մը եաքը Պ . Մաթէոս շարունակեց :

— Այդ որսորդութեան կը նախագահէին մարքիզն ու իր աղջիկը Տիան :

Անունին ազգեցութիւնն էր՝ թէ ոչ կանուխէն մայրը կորանցուցած ըլլալուն՝ հօրմէն ստացած քիչ մը առնական կրթութեան հետեւանքով էր որ Օրիորդ Տիան՝ մենէ աւելի սէր տուած էր որսորդութեան : Մենի աւելի կ'ըսեմ , որովհետեւ ես ալ դղեակին ամէնէն յաճախադէպ հիւրերէն մին էի : Օր . Տիան շատ լաւ նշանառու էր և իսկատ քիչ անգամ նտպաստակը կամ ճնճղուկը կը պըծէին հրացանին բերնէն : Սակայն իրեն տրուած արտօնութիւնը ատիէ աւելին չէր ներեր . մարքիզը միշտ կը մերժէր իր աղջկան մասնակցելու մեծ որսերու , ինչպէս եղնիկի որսին . որու համար հրացանը մեծ գնդակով մը միայն կը լեցնեն :

Այդ տարին , Օր . Տիան այնչափ աղաչեց իր հօրը , և մենք ալ միանալով իրեն , վերջապէս մարքիզը հաւանեցաւ եղնիկի որս մը պատրաստել իր աղջկան ընկերութեամբն :

Երիտասարդ աղջկան հրացանը լեցուցին ամենամեծ խնամով , և զինքը խումբին ամէնէն ճարպիկ ու

իոհեմ որսորդին հսկողութեան տակ դնելէն ետքը
ճամբայ ելան :

Բնաւ չպիտի մոռնամ այս մեկնումը, զուարթ,
աղմկալից որսորդներու խումբը ցնծագին շրջապա-
տած տօնին դիւցազնուհին :

Երբ անտառ հաստնք, Օր. Տիան եւ իր հսկող
ընկերը մացափի մը քովը կեցան, իսկ մարքիզը, ե-
ռեսուն քայլ հեռու դարձնեցաւ : Որսը սկսաւ ընդ-
հանուր աղմուկի մը մէջ. այն ատենները անտառը
լեցուն էր երէներով . առաջին պահուն շիկերէ մը
ցատկեց ճամբուն վրայ, եւ ընկերուհիս հրացանի
մէկ հարուածով գետին տապալեց զայն . շուտով մը
հրացանը լեցուցի՝ երբ քանի մը ձայներ պօռացին .

— Ուշադրութիւն եղնիկին . . . :

Հինգ սիրուն կենդանիներու խումբ մը՝ շուներէն
հալածուած, դէպ ի մեզ կը դիմէր և արդէն մար-
քիզին ու աղջկան մէջտեղը հասեր էր : Ճիշդ քովն
էի . երիտասարդ աղջիկը հրացանը ուսու դրաւ եւ
ես ձայն հանելու ժամանակ չ չունեցած երկու անդամ
կրակեց . սոսկալի ոռնում մը լսուեցաւ եւ մարքիզը
դէպ ի առաջ երեք քայլ առնելով գետին փոռու-
ցաւ : Հրացանի երկու գնդակ ընդունած էր՝ մին
կուրծքէն միւսը գլուխէն . մեռած էր :

Ասոր յաջորդող տեսարանը չեմ կրնար պատմել
ձեզ . բոլոր որսորդները վազեցին եկան : Ուսանք
թշուառ մարքիզին մարմինը կը վերցնէին, իսկ մի
քանիները կը ջանային տիսուր տեսարանէն հեռացը-
նել թշուառ աղջիկը, երբ նէ դիսակի մը պէս տըժ-
գոյն, աչքերը բոցավառ ու սպառնացող . հարցուց .

— Ո՞վ ըրաւ :

Այն ատեն, իրեն ընկերացող որսորդը՝ իրմէ ա-
ւելի տժգոյն, յառաջացաւ ու ըսաւ . « Իս . . . » :

Օրիորդ Լօնկրիէր, բառ մը չարտասանեց . ձեռ-
քովը ճամբան ցուցուց յանցաւորին, որ հեռացաւ
գլուխը կախ :

* *

Այդ յանցաւորը, շարունակեց Պ. Մաթէոս, աշ-
խարհէ քաշուեցաւ, սպայ էր՝ հրաժարեցաւ իր աս-
պարէզէն, նոյն իսկ անունն ալ թողոց . որովհետեւ
եթէ մէկը այդ անունը տար, քովինը ականջն ի
վար պիտի աւելցնէր « Լօնկրիէր մարքիզը սպաննողն
է » : Երկար տարիներէ ի վեր ծանօթ մը չունի, մի-
նակ կ'ապրի այն տեղին մօտիկը, ուր տեղի ունեցաւ
սոսկալի տուամը : Ցաւալի յիշատակով կեանք մը կը
վարէ, թէեւ խզձի խայթ բնաւ չունի, որովհետեւ
այդ յանցաւորը . . . անմեղ է :

Օրիորդ Լօնկրիէր . վերջէն ամուսնանալով տիկին
վօտրէօյլ եղաւ . նէ անցեալ ձմեռ մեռաւ, ուստի
հիմա կրնամ ըսել թէ հայրը սպաննող գնդակը՝ աղ-
ջիկը նետած էր . իր ընկերը բնաւ հրացանը պար-
պած չէր : Բայց այդ սոսկալի պահուն հասկցած էր
թէ՝ ի՞նչ ահուելի կեանք մը պիտի բոլորէր այդ սի-
րուն արարածը՝ եթէ գիտնար ճշմարտութիւնը և
ինքզինքը զոհած էր ներա համար :

Սակայն, գոչեցի՝ ալ կասկած չունենալով որ
այդ մարափիրուս խօսակիցս է, ի՞նչ պատճառ ունէիք
այդպէս վարուելու :

— Կը սիրէի Տիան տը Լօնկրիէրը, պատասխա-
նեց Պ. Մաթէոս :



ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Ամբակում հիւանդ է :

— Ի՞նչ ունիս , կը հարցնէ թժիշկը :

— Մեծ ջերմ մը :

— Հսել է ձիու ջերմ ըլլալու է որ շատ մեծ է :

Օրաթերթի մը ընթերցողները , առառու մը զարմանալով կարգացին հետեւեալն՝ թերթին ճակատը .

(Ա. ի տեղ Ֆ դրուած է) :

« Ներում կը խնդրենք մեր ընթերցողներէն ֆյուրուֆն թիւը ֆյու կերպով հրֆատֆրֆկելնուս հֆմֆր :

« Ֆրդէն ծֆնուցֆծ էինք թէ թերթիս տփուերը պիտի նորոգուին , ֆրդ ֆյոօր հին գիրերը թֆիելով նորերը չֆրեցին գրֆշֆրները , սֆրուֆփով տեսափն որ հոս պֆկոող գիրը (ա) բնփւ չկփր ձուլֆրֆնէն եկֆծ նոր տփուերուն մէջ . թէեւ վփղը ֆուէն բփն կը կֆրգֆդրուի , բֆյց ֆյոօր թերթը ետ չձգելու հֆմֆր պֆկիս տփուերուն տեղ ուրիշ գիր գրինք . որու հֆմֆր ընթերցողներուն ներողֆմտութիւնը կը խնդրենք » :

Երեւակայեցէք թէ ամրող թերթը այս ուղղագրութեամբ շարուած էր :

Ամբակում հոգեւարք է :

— Երեսուն տզրուկ ապսպիրեր էի , կ'ըսէ թժիշկը :

— Բայց , տօքթօր , չբոնեցին , կը պատասխանէ հիւանդապահը :

Ամբակում աչքերը կէս մը բանալով .

— Փարան չիտաք հա՞ :

Կառախումբին մէջ , ճամբորդ մը գլուխը դուրս կը հանէ եւ սոսկումէն մազերը ցցուած ետ կը քաշուի :

— Կորսուեցա՛նք , կ'ոռնայ . . . դիմացնուս ուրիշ կառախումբ մը կուգակոր :

— Շուն շան որդի՛ , կը գոռայ Ամբակում , հապա ես երթուղարձի տոմսակ առեր ե՛մ :

Հնութիւններու հաւաքիչին սիրտը :

Անձարակ սպասաւոր մը աննման ու մէկհատիկ սափոր մը կը կոտրէ . Յանցաւորը շուտով կը վունտուի , բայց հաւաքիչը չկրնար միսիթարուիլ :

Իր աղջիկը , տասը տարեկան հրեշտակ մը , վիզը կը նետուի :

— Հայրիկ , ինչո՞ւ կը ցաւիս այդշափ :

— Այնչա՛փ աղւոր էր :

— Քու աղջիկներդ ալ աղւո՞ր չեն . քոյլս միթէ գեղեցիկ չէ :

— Ի՞նչ ընեմ , աղջիկներս երկու հատ են , իսկ կոտրած սափորը . . . մէկ հատիկ է՛ր :

Սրճարանին մէջ երկու բարեկամներ մէյմէկ գտաթ գարեջուր կը խմեն : Անոնցմէ մին թաշկինակին ծայրէն 20 զրուշնոց մը կը հանէ :

— Անպիտա՞ն , կ'ըսէ բարեկամը , արդեօք ասանկ քանի՞ հատ ունիս :

— Մե՛ղք որ չունիմ , անզաւակ այրի մըն է այս դրամը :

Ընկերութեան մը մէջ Ղաղարու յարութեան վրայ
կը խօսին :

— Այս դարուն մէջ, կըսէ Ամբակում, մեռելները
դիւրաւ գերեզմանէն դուրս չեն ելլեր :

— Անչուշտ, կը պատասխանէ տոքթ. Ք... բը-
ժշկութիւնը մեծ յառաջադիմութիւններ ըրած է.

Ամբակում այցելութեան կ'երթայ հարուստ տիկինի
մը որ նոր զաւակ ունեցեր էք :

Տիկինը՝ ծծմայրին բերել կուտայ պղտիկը եւ այ-
ցելուին ներկայացնելով կ'ըսէ .

— Բոլոր բարեկամներս կը պնդեն թէ շատ կը
նմանի ինձի... դուք ի՞նչ կ'ըսէք, պարոն Ամբակում:

Ամբակում պահ մը կը մտածէ պէպէքը դիտելով ,
եւ յետոյ համոզուած շեշտով մը կը դոչէ.

— Ո՛հ, այսո՛, շատ կը նմանի :

Եւ զարմացումի շեշտով մը կը յարէ .

— Սակայն դէմքը շատ տգեղ է:

Կառապան մը ոստիկանապետին առջեւ :

— Վերջապէս, ձեր անուշադրութեամբ պատճառ
եղաք այս արկածին :

— Իսյց պարո՞ն, անցորդները՝ կենդանիներէն
աւելի ապուշ են :

— Ի՞նչպէս :

— Հապա՞... ծառուղիները թռչուններով լեցուն
են, միթէ անոնցմէ մէկը կառքի տակ ճմլուած է մէկ
օր մը :



Կանոնի Հարսանեաց

Կանոն Ա. — Ամենեքին նոքա որք կամին ամուս-
նանալ, կամ ծնողք եւ աղգականք նոցին հարց ու
փորձ արասցեն զմիմեանց աւուրս ինչ. եւ տեղեկաս-
ցին կերպարանաց, բարուց եւ կացութեան իրերաց :
Եթէ երկոքին կողմունքն համ եւ հաւան գտանիցին,
կոչեսցեն զքահանայս եւ ծանուցեն զկամեցողու-
թիւնս իւրեանց. եւ քահանայքն քննեսցեն զհասն և
զչհասն, եթէ հաս իցեն՝ զինամիս առեալ բերցեն ի
Պատրիարքարանս ի սահմանեալ աւուրն՝ որ է ուր-
բաթ. եւ ատցի նշան :

Եւ յործամ այս ամենայն լինիցի, այնուհետեւ ա-
ռանց բանաւոր պատճառի մի՛ քակեսցի հարսնախօ-
սութիւնն: իսկ եթէ վասն բանսարկութեան քառ ան-
ձանց ոմանց, կամ վասն ագահութեան եւ փառա-
սիրութեան, եւ կամ վասն որպիսի եւ իցէ սնոտի եւ
անբաւական պատճառի կամիցին քակել զհարսնա-
խօսութիւնն, անաչառ դատաստան լինիցի ի Պատ-
րիարքարանս, բանսարկուք պատժեսցին եւ ինքն-
եանք իւրատեսցին զգաստանալ :

Բայց երբ կամակորութեամբ նէֆսանիյէթ արաս-
ցին քակել, եթէ ի կողմանէ տղային իցէ յամառու-
թիւնն, նշանն որբ աղջկանց մնացէ՝ որպէս սովո-
րութիւն է ի վաղուց հետէ: իսկ եթէ աղջկան իցէ,
գին նշանին տացի որբ աղջկանց, եւ դիմադարձ
ով ոք եւ իցէ՝ ըստ արժանուոյն դատեսցի՝ որպէս եւ
արդար իրաւունքն պահանջեն :

Կանոն Բ. — Որովհետեւ ըստ սովորական եւ քա-

զաքական կարգի՝ բովանդակ վիճակ ազդիս ի չորս գլխաւոր աստիճանն որոշի, ամին իրի նշանն ըռզակըն, ձէհէզն՝ ի չորս առևակս որոշեցան ըստ պատշաճի իւրաքանչիւր աստիճանի այսու օրինակաւ,

Նշանն լինիցի բուպիէ ոսկի ըստ յարմարոթեան աստիճանի իւրաքանչիւրոյ. բայց ծաղիկ, թէլ, չէքէլ, ամենեւին մի՛ գտանիցի, եւ մի՛ ոք երկու նըշան արասցէ, զմինն յայտնի տալով, և զմիւսն ծածուկ ի տուն աղջկան առաքելով։

Նշանն առաջին էլայի՛ 50 բուպիէ, եւ արծաթ տուփ մի, եւ մէկ չէվրէ, և ըռզակն մինչեւ տասն հազար զուրուշ եղեցի: ձէհէզն չորս խաթ, տիւզ պուհուր էնթարի, սէվայի էնթարի, սէլիմիյէ էնթարի, իփէկլի փէսէնտ իշէմէ էնթարի. և քիւրքին՝ վարչախ, սամուռ, էլմա, քաքում, և երեք շալ, գլխու կապելիք կանաչ գունով ամենեխն մի՛ լիցի։

Նշանն երկրորդ էլայի՛ 40 բուպիէ. արծաթ մի, և մէկ չէվրէ. եւ ըռզակն մինչեւ հինգ կամ վեց հաշզար զուրուշի, ձէհէզն երեք խաթ լիցի, էնթարիքն՝ սէվայի, սէլիմիէ, շալաքի, և քիւրքին՝ սամուռ, էլմա և քաքում, և երկու շալ լիցի, և կանաչ գունով գլխու կապելիք մի լիցի։

Նշանն էվսատի, 30 բուպիէ, մէկ արծաթ տուփ, եազմա տէստիմէլիով, և ըռզակն մինչ երեք հազար զուրուշի. ձէհէզն երեք խաթ, էնթարիքն՝ սէլիմիէ, շալաքի, ագուէզա եւ քիւրքին՝ սամուռ, էլմա, զընճապ, եւ մէկ շալ լիցի։

Նշանն առաջին էտնայի՛ 10 բուպիէ, մէկ հասարակ եազմայով, ըռզակն մինչեւ հինգ հարիւր զուշ եղեցի. ձէհէզն երկու խաթ լիցի, էնթարիքն՝ թէլի հագիր, և չէթարի, քիւրքին՝ նաֆէ զընճապ, և մէկ ինկիլիզ շալ։

Նշանն երրորդ էտնայի՛ հինգ բուպիէ, մէկ տէստիմէլով, եւ ըռզակն մինչեւ հարիւր զուրուշ լիցի: ձէհէզն մէկ խաթ, մէկ թեթեւ հագիր էնթարի, մէկ նաֆէ քիւրք, կամ մէկ չուխա չաքէթա, եւ մէկ թեթեւ ինկիլիզ շալ։

Կանոն Դ. — Ի հանդերձս հարսին մի՛ գտանիցի մարգարտով, փուլու, թըրթըրլը, թէփէշալի միսիլլի բանած լաթեղէն և կամ սարգարտով, փուլով թըրթըրով բանած գլխու կապելիք, բանուած կամ անվայելու կերպ կերպ շապիք, կամ հարսի չէտիք փաղուճի վրայ կըլապտանլը սրմալը բան. կամ կըլապտան կամ սըրմայ խարճով կամ մարգարտով թախտայ բապուճի, թէոլիք, Փիլառ, նալըն, քարեղնով զարդարուած սանտր, և այլ այսպիսի ինչ։

Կանանչ գունով լաթեղէն ամենեկին մի՛ գտանեցի։ Պօխճալըս փեսայի կամ կնքահօր կամ ուրիշի, և կամ փոխանակ պօխճալըսի այլ ինչ ընծայ՝ բոլորովին մէն եղեալ է։

Կանոն Դ. — Քէսէպիչէ անունն ամենեկին մէն եղեալ է. այլ ըստ սովորութեան, մէկ շաբաթ առաջ քան զհարսանիքն՝ հարսանեաց տեարքն ընդ քահանայից իւրեանց ի միասին եկեալ խօսք կապ արասցեն առ ի որոշել և յատկացուցանել զօրն հարսանեաց։

Բաղանեաց ստակ ամենեւին չըլլայ, և հարսնացուն հասարակ աւուր պէս ի բաղանիս տանին ամենայն պարկեշտութեամբ, ամենեւին հանդիսութիւն չըլլայ, և բաղնեպանին ուրիշ ժամանակ ինչ հախկուտային՝ նոյնչափ տան. հարսանեաց պատճառաւ մէկ փարայ աւելի չտան. եթէ բաղնեպանն աւելի փարայ ուզէ, գան ի Պատրիարքարան խազար տան։

Կանոն Ե. — Քօղքն սատէ չիչէքլի սէլիմիէ լինիցի, միօրինակ էլափի, էվսատի և էտնայի, և ո՛չ բնաւ յայլ նիւթոյ զի արգիլեալ է ամենեւին:

Էլա և էվսատ հարսնետէրքն՝ յետ լրանալոյ հարսանեաց առաքեսցեն զայն քօղքն յեկեղեցի թէմին իւրեանց՝ առ խնամակալուն որբ աղջկանց. զի յորժամ որբ և աղքատ աղջկունք ամուսնացեն, տացի նոցա ձրի, զի արասցեն քօղք և շինեսցեն յետոյ հանդերձ և զգեցցին, և աղօթող լինիցին վասն պարգեւողաց նոցա:

Քօղքի վրայ էլմասեղէն բան կապել կամ թէլէ պսակ կապել ամենեւին մէն եղեալ է. փափաք ունեցողն եթէ թէլփէչէ ունիցի, ի վերայ քօղքին զայն թէլփէչէ կապեսցէ փոխանակ պսակին:

Կանոն Զ. — ԱՏեարք հարսանեաց մի կոչեսցեն զբարեկամս կամ զդրացիս իւրեանց ի հարսանիս. եւ եթէ կոչեսցեն եւս՝ հրաւիրեալքն մի' գնասցեն վասն եկեղեցական ազգային կանոնաց, և մի բնաւ ուղարկեսցեն ընծայս՝ ինչ՝ աշքիլոյս, կամ երեստեսէ, կամ այլ ինչ անուամբ՝ թէ առուրս հարսանեաց և թէ յետոյ, իսկ եթէ առաքեսցեն ոմանք՝ տեարք հարսանեաց մի ընդունեսցին զընծայսն՝ այլ յետս դարձուացեն:

Կանոն Է. — Կոչեսցեն ի հարսանիս ազգականքն և կնքահայրն, նաեւ փեսայն եթէ ունիցի վարպետ և նոքա եւս սէլէ յով շէքէլ կամ քեսսէ յով անուշ մի տանիցեն, զի այսպիսի ընծայք յամենայն ժամանակս բոլորովին արգիլեալք են:

Կանոն Ը. — Կնքահայր կամ կնքամայր առնուլ թէ ի հեռի և թէ ի մօտ տեղ՝ յաւուր կիւրակէի բնաւ մի երթիցեն, այլ քանի մի օր յառաջ առանձինն հրաւիրեսցեն:

Կանոն Թ. — Ի հարսանիսն չէնկի մի գտանիցին եթէ այր իցէ չէնկին և եթէ կին, և սազը մի լինիցի և ի ճանապարհին չալզը մի' չալեսցի:

Կանոն Ժ. — Ի կերակուրս հարսանեաց խամուր իշի բնաւ մի լինիցի, և առաջին էլային կերակուրքն հանդերձ անուշեղէնօք տասը տեսակ եղիցի, եւ երկրորդ էլային վեց տեսակ, և էվսատին չորս տեսակ, և առաջին էտնային երեք տեսակ, և երկրորդ էտնային երկու տեսակ եղիցի, և ոչ աւելի ամենեւին:

Կանոն ԺԱ. — Ի կիւրակէ օրն հինա տանել մի' լինիցի, այլ օր առաջ ի կողմանէ փեսային այր մի առեալ զքողքն և զմոմն տարցէ ի տուն հարսին, և եթէ կամին՝ կին մի ևս ընդ նմա երթիցէ:

Կանոն ԺԲ. — Տուն հարսին եթէ հեռի իցէ՝ կամ ծով աշըրը, զհարսն Փէրաճէյով բերցեն ի ցերեկի յաւուր կիւրակէի, և մի' հանդիսիւ ի գիշերի:

Կանոն ԺԳ. — Հարսին և փեսին մոմն այսպէս լիցի. մոմն առաջին էլային չիփթը հինգ օխա, երկրորդ էլային չորս օխա, էվսատին երեք օխա, առաջին էտնային երկու օխա, երկրորդ էտնային մէկ օխա, և աւելի քան զսոսա մի' լիցի. և մոմերուն վրայ թէլ կամ սուտ ծաղիկ մի' գտանիցի՝ սատէ լինիցի. և թէ ոք ունիցի փափաք, թէլսիզ գորտէլա կապեսցէ, և ո՛չ այլ ինչ:

Կանոն ԺԴ. — Ի ձեռս փեսային թուր, կամ ի վիզն պօյուն եալլըզի, ի գլուխն թէլ կամ սըրմայ կամ էլմասեղէն զարդ ամենեւին մի' գտանիցի. այլ միայն նարօտն լինիցի նշան փեսայութեան և մի ի տուն հարսին թէլ կամ սըրմա կապեսցի ի գլուխ փեսային, զի արգիլեալ է ամենեւին:

Կանոն ԺԵ. — Եթէ հարսնետունն մօտ իցէ և հար-

սառ երթիցեն, ի ճանապարհին եկեղեցական զգեստ,
շուրջառ, շապիկ մի' զդեցցին. զօնչայ կամ չալզը
մի հանցին առաջի փեսային, և դռնչէք ընծայ մի'
տայցեն փեսային զի արգիլեալ է :

Կանոն ԺԶ.— Հարսն և փեսայն քանի մը օր յա-
ռաջ քան զպսակն խոստովանեսցին և հաղորդեսցին,
և զպսակն զինի կէս գիշերին՝ օր լուսանայ երկու
շաբաթի, պսակառութիւնն հարսանեաց եւս ի նոյն
առաւոտ լինիցի, և լրացի հարսանիքն, և ամենայն
հարսնեւորք առանց ճաշ ինչ առնելոյ ի տուն հար-
սանեաց՝ երթիցեն ի տունս իւրեանց :

Կանոն ԺԷ.— Ի կողմանէ ծնողաց կամ փեսային
կամ ազգականաց, և կամ ի կողմանէ կնքահօրն՝
երեստեսէ կամ այլ ինչ ընծայ մի' տացի հարսին, և
ո՛չ հարսն տացէ ընծայ ինչ նոցին :

Կանոն ԺԸ.— Ի ձեռք պագի օրն ի տուն աղջկան
բազմութեամբ մի' երթիցեն, և հացկերոյթ մի' լինի-
ցի, և փեսային ընծայ մի' տացի :

Կանոն ԺԹ.— Եէտի անունն ամենեւին արգիլեալ
է, բայց յետ առուրց ինչ ի կողմանէ աղջկանն ի տե-
սութեան հարսին երթիցեն, բայց ընծայ ընաւ երբեք
մի' տանիցեն :

Եւ յառաջին Բարեկենդանին ի գնալն իւրեանց ի
տուն փեսային, և յառաջին Զատկին ի բերեն զհար-
սըն ի տուն իւրեանց, փեսային կամ հարսին ընծայ
մի' տայցեն, և մի' առնուցուն :

Նոյնպէս ի կաղանդի կամ ի տօնի Ծննդեան և ի
սուրբ Զատկի մինչ երթայ փեսայն ի չնորհաւորու-
թիւն առ ազգականս հարսին, նոր փեսայ է ասելով
ամենեւին ընծայ մի տացի. ո՛չ չէվրէ և ոչ այլ ինչ :

Կանոն Ւ.— Պէշիկն և նորին թախըմըն ի կող-
մանէ հարսին մի' յուղարկեսցին, և մի' ևս փոխանակ

պէշիկի ընծայ տացի, և մի' ընաւ ի կողմանէ փեստ-
յին պահանչեսցին. զի այսպիսի ընծայք բոլորովին
մէն եղեալ են :

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Կինս հոս է, ո՞հ ի՞նչ կայան,
թէ իր և թէ իմ հանգստեան :

* * *

Ցուրտ շիրմիս ներքեւ
Հանգչի իմ կնիկ՝
Զեմ պատճառ թէկ
Բայց ո՛գոհ եմ սաստիկ :

— Սատանան ժամանակաւ Յորին դէմ ապստամ-
բելով անոր հարստութիւնը, առողջութիւնը և զա-
ւակները առաւ, բայց հոգին աւելի աղէկ ցաւցնելու
համար կինը անոր թողուց :

Գեղեցիկ կնոջ մը ամուսինը որ սոսկալի կերպով
տգեղ էր, օր մը ճամբորդութիւն կատարելու համար
մեկնած պահուն՝ ըստ կնոջը.

— Տիկին, կը պատուիրեմ քեզ որ մանաւանդ այս
բացակայութեանս ատեն ուրիշը չսիրես :

— Ո՞հ, մի' վախնաը, բարեկամս, բսաւ կինը, այդ
բանը միայն քու ներկայութեանդ ատեն միտքէս
կ'անցնի :

ԱԿԱՄԱՅ ԳԻՒՂԱՑԻՆ

Եփրեմ. աղա չկրցաւ տակաւին դառնալ գիւղէն
ուր գացած էր ամառն անցնելու համար :

Ընդհանրապէս անոնք կ'երթան գիւղ՝ որ գիւղ
երթալու կարողութիւն ունին կամ անոնք որ գիւղ
երթալու կարողութիւն չունին :

Առաջինները կ'երթան պարզապէս զուարձանալու
համար, իսկ երկրորդները կ'երթան քիչ մը մաքուր
օդ ծծելու համար. եթէ ոսկի չունինք՝ գոնէ քիչ մը
մաքուր օդ ունենանք ըսելով: Առաջիններն ալ իրա-
ւունք ունին, երկրորդներն ալ, միայն թէ՝ առա-
ջինները կրնան ամենայն գիւրութեամբ դառնալ
գիւղէն, մինչդեռ երկրորդները մեծ դժուարութեամբ՝
կը յաջողին, եթէ երբէք յաջողին, դառնալ իրենց
տունը, ապա թէ ոչ կ'ստիպուին գիւղացի ըլլալ,
այսինքն միշտ մաքուր օդ ծծել:

Գիւղ երթալը շատ գիւրին է, գործն անկից
դառնալուն վրայ է: Եփրեմ աղա կանխաւ եթէ հա-
մոզուած ըլլար այս ճշմարտութեան՝ ցարդ կրնար իր
ընտանիքով իշնել գիւղէն առանց կրելու այն դժու-
արութիւններն՝ որոնց ներքեւ կը մաշի այսօր:

Ամէն գիւղ գացող նախ և առաջ պարտի գիտ-
նալ թէ՝ պարտաւոր է կողոպտուիլ տեղացիններէն
այս գիւղին, որուն օդը ծծելու կը յանդգնի: Ինչ որ
գիւղացին կ'ուտէ երկու դահեկանի, հիւրը կ'ուտէ
չորսի: Բացարձակ ճշմարտութիւն մ'է աս: Զեմ ու-
տեր, պիտի ըսես. կը սխալիս, ուտելով պիտի ուտես,
բռնի կը կերցնեն քեզի: Ինչո՞ւ հեռուն երթանք,
ահաւասիկ կենդանի օրինակ մ'է Եփրեմ աղան, որ
Վոսփորի գիւղերէն մին գացած է այս տարի օդա-

փոխութեան համար:

Եփրեմ աղա իր ընտանիքը տեղաւորցնելէ յետոյ
այն տան մէջ զոր վարձած էր՝ դուրս կ'ելլէ ուտե-
լիքի, խմելիքի, վառելիքի և այլն պատրաստու-
թիւններ տեսնելու:

Նախ և առաջ կը մտնէ նպարավաճառի մը խա-
նութը:

— Օ՛օ՛, Եփրեմ աղա, բարի եկաք, աս տարի հոս
եկէր էք, շատ աղէկ ըրեր էք, գիւղերնիս, շիտակը
խօսելով, շատ աղէկ է, ուրիշ գիւղերու չնմանիր:
Եփրեմ աղա բան մը պէտք է նէ տանք:

— Ոյո՛, քիչ մը ձէթ, քիչ մը պանիր, բրինձ, սա-
եաղի, բաթաթէս, մաքարօնի, լուրիա, ձիթապառող:

— Շատ աղէկ, շատ աղէկ:

Նպարավաճառը կը պատրաստէ նպարներն և սպա-
սաւորին հետ տուն կը զրկէ:

— Պարտքերնիս ի՞նչ է:

— Թո՛ղ մնայ հիմա, թող մնայ, պղտիկ բան մ'է,
գնա՞ քէյ դդ նայէ: Տունէն բան մը պէտք ըլլայ նէ՝
իմաց տան կը զրկեմ ես:

Եփրեմ աղան կ'ուրախանայ նպարավաճառէն
ասանկ վարկ մը գտած ըլլալուն վրայ և ինքնիրեն
կ'ըսէ. ի՞նչ կրթեալ մարդիկ են այս գիւղին նպարա-
վաճառները:

— Եփրեմ աղա՛, փայտ, ածուխ չպիտի՞ առնէք,
կը հարցնէ մէկը խանութին առջեւ կայնած:

— Առնեմ պիտի:

— Ծօ՛ տղայ, երկու չէքի փայտ, չորս պարկ ածուխ
կը ու զրկէ Եփրեմ աղային տունը:

— Բանիէ՞ն կուտաք կոր:

— Մի՛ վախնար կոխ չենք ըներ, Եփրեմ աղա:

— Զէ՛, այսինքն ստակը տամ:

—ՄԵՆՔ ՍՊԱԼ ՀԵՆՔ առներ, բանդ գնա . կը պատասխանէ վաճառողն Եփրեմ աղային ուսը ծեծելով :

—Շատ լաւ, չնորհակալ եմ, կ'ըսէ Եփրեմ աղան և դէպ ի մսավաճառին կերթայ,

—Օ՛օ՛, Եփրեմ աղա, քանի օխա զրկեմ:

—Չորս օխայի չափ պիտի առնեմ, քանի՞ն կուտաք կոր:

—Բան մը չէ. կը համաձայնինք. բաներնիդ գացէք, ես տղուն հետ կը զրկեմ:

Եփրեմ աղան գոհ է այս դիւրութիւններէն :

Աս մարդիկը կը ճանշնայի՞ն Եփրեմ աղան . Ամենեւին ոչ. կարասիներուն փոխադրութեան օրը կամ տունը վարձած օրը, գիւղացիները սորված են անոր անունը, մականունը և արուեստը :

Եփրեմ աղան դեռ առաջին օրը ճանշցուած է գիւղացիներէն և այլ ևս չկրնար չորս քայլ տունել առանց պատասխանելու այն հարցմանց, որ այլ և այլ խանութներէն կ'ուղղուին իրէն:

—Եփրեմ աղա, քանի մը օխա ելակ զրկե՞մ տունը :

—Եփրեմ աղա, կօշիկներդ ներկել չե՞ս տար :

—Եփրեմ աղա, սա սթաքօզին չե՞ս գրուիր :

—Եփրեմ աղա, սա պարպունիայէն քանի մը օխա զրկե՞մ.

—Եփրեմ աղա, ընկուզներէն չառնե՞ս քիչ մը, տղայք կ'ուտեն :

—Եփրեմ աղա, պատուական գինի ունիմ, պինլիխ մը զրկե՞մ տունը:

—Եփրեմ աղա, մեղնէ առուտուր չե՞ս ըներ, քիչ մը խավեար տա՞մ:

—Եփրեմ աղա, տղաքներդ մեր դպրոցը չե՞ս զրկեր:

—Եփրեմ աղա, միսը ուսկի՞ց կ'առնես կոր:

—Եփրեմ աղա, երկու սագ կայ, բիանքօյի դրի, քեզի ալ զրե՞մ քանի մը թիւ:

—Եփրեմ աղա, ծխախոտն ինչո՞ւ ինձմէ չես առներ:

—Եփրեմ աղա, երկու երեք դոյգ պօթին զբկե՞մ տունը տղոց համար:

—Եփրեմ աղա, հիւանդ ըլլաս նէ ինձի պիտի կանչե՞ս եա:

—Եփրեմ աղա, ջուրն ինչու համար ուրիշ տեղէն կ'առնես կոր:

—Եփրեմ աղա, ջղային տկարութիւն չունի՞ս քիչ մը:

Եւ Եփրեմ աղան այս հարցմանց կը պատասխանէր ժամելով հաւանութեան նշաններով, և կը գնէր գիւղին խանութպաններէն միշտ ապագային վճարելու առաւելութեամբ: Եւ երբ տուն դառնար՝ կը յանդիմանուէր կնոջմէն՝ որ թեւերը բանալով կ'ըսէր:

—Եփրեմ աղա՛, խենթեցա՞ր ի՞նչ եղար, քառասուն օխա Փասուկիան ե՞րբ պիտի ուտենք:

—Բառասուն օխա՛ մի:

—Եփրեմ աղան խրկեց ըսելով՝ կը բերեն ու կը բերեն, մինակ Փասուկիա՞ս, բաթաթէս ալ բերին, բրինձ ալ, պանիր ալ, ի՞նչ գիտնամ, քիւէրը լեցուեցաւ... դուռ բանալէն զոցելէն ժամանակ չեմ կրնար կոր գտնել:

—Կ'ուտենք կնիկ, կ'ուտենք, չպիտի նետենք ա՛: Ելլանք քիչ մը քազինօն երթանք:

Այսպէս Եփրեմ աղան, առանց ստակի նեղութիւն քաշելու, կ'ուտե՛ր, կը խմէր, և ուրախ կ'ըլլար և կը կարծեր թէ պարտական չէր օր մը վճարելու:

Բայց խասըմը կը մօտենայ, ամառուան համար եկողները հետպհետէ կ'իջնան: Եփրեմ աղան ալ կը

պատրաստուի իջնելու: Նախ և առաջ հաշիւները
մաքրելու է: Հացավաճառ, մսալաճառ, նպարավաճառ
և այն ամէն բառերն որ վաճառ կը վերջանան՝ վաթ-
սուն ոսկոյ մօտ գումար մը կը պահանջեն: Բացի
հացէն, ամէն բան կրկին գնով նշանակուած է: Եփ-
րեմ աղան դիտողութիւն կ'ընէ դինելու վրայ: Դի-
տողութիւն չեն ընդունիր վաճառավերջ խանութ-
պաններն գիւղ գնացողը ստակին խնայելու չէ,
կ'ըսեն, ձմեռը մենք ինչո՞ւ հոս կ'սպասենք կոր,
կ'ըսեն, ամառը քանի մը զրուշ վաստկելու համար:

Եփրեմ աղան մանրուք չունի, գնումները կը
դադրին:

Վաճառավերջ խանութպաններն ամէն առաւօտ՝ և
ամէն երեկոյ նաւամատոյցը կ'երթան և Եփրեմաղային
կը մօտենան:

—Եփրեմ աղա, ե՞րբ պիտի երթաք:

—Եփրեմ աղա, ինծի կը հանդիպի՞ս:

—Եփրեմ աղա, մոռցար մեզի:

—Եփրեմ աղա, այս իրիկուն կ'սպասեմ քեզի:

Եփրեմ աղան չուարած մնացած է:

Մէկ երկու օրէն Եփրեմ աղան նորէն կը շրջա-
պատուի նաւամատոյցին վրայ խանութպաններէն, որ
իրարու հետ կը խօսին:

—Պապա մարդ է Եփրեմ աղան... քօնսօլը շատ
աղէկ է:

—Քանարէներն ալ գէշ չեն:

—Հայելիներն այսօր ծախէ նէ՝ երեսուն ոսկի
ամէն մարդ կ'առնէ:

Եփրեմ աղան հեռուանց կը տեսնէ այս խանութ-
պաններն և զանոնք չտեսնել կը կեղծէ: Խանութ-
պաններն կը մօտենան անոր:

—Ի՞նչ կայ, ի՞նչ չկայ Եփրեմ աղա:

—Մեզի չհանդիպեցա՞ք, Եփրեմ աղա:

—Ե՞րբ պիտի տեսնուինք, Եփրեմ աղա:

Եփրեմ աղան փոխառութեան կը դիմէ և պար-
տուց կէսը կը վճարէ: Խանութպաններն վատահ են
թէ իրենց առնելիքներն ամբողջապէս պիտի առնեն,
որովհետեւ Եփրեմ աղային նոյնքան վարկ բացեր են
որքան կ'արժեն անոր կարասիքը:

Եփրեմ աղան չկրնար սակայն մնացած պարտքը
վճարել և որոշում կուտայ այս տարի գիւղը ան-
ցունել:

—Եփրեմ աղա, ե՞րբ պիտի իջնաք:

—Այս տարի հոս պիտի մնամ, օդը շատ աղէկ
եկաւ մեր տիկինին, վար իջնամ ի՞նչ ընեմ. խոնա
է, նստուելու տեղ չէ որ:

—Շատ աղէկ խորհեր էք, Եփրեմ աղա, իսին ալ
գործ ներեր նէ՝ ես ալ չէի իջնար:

Տիկինը իջնալ կ'ուղէ:

—Եթէ չպիտի կրնայիր իջնալ նէ, ինչո՞ւ հոս
բերիր ինծի, կը հարցնէ ամէն գիշեր:

—Գէ՞շ ըրի կնիկ:

—Աղէկ ըրիր, բայց ձմեռն ի՞նչ ընեմ հոս միսմի-
նակ պայխուշի պէս:

—Բան մը կ'ընենք:

—Ես կ'երթամ տուն նստէ:

Խանութպաններն ի ժողով կը հրաւիրէ Եփրեմ
աղան, անոնց կարծիքն առնելու համար: Խանութ-
պաններն մեծամասութեամբ կ'որոշեն որ Եփրեմ
աղային համար շահաւոր է գիւղ մնալը: Ուստի Եփ-
րեմ աղան կ'ստիպուի խանութպաններու որոշումը
գործադրել և օդափոխութիւն ընել ձմեռն ալ:

Ո՞վ որ իւր քանարէն որոշումը չի գործադրեր, կը
ստիպուի խանութպաններու որոշման համակերպիր:

Բայց Եփրեմ աղան, այժմ չաբաթը չորս անգամ Պոլիս կ'իջնայ և երբ իր բարեկամաց հանդիպի, կ'ըսէ անոնց.

— Կը զարմանամ կոր ձեր վրայ, ի՞նչպէս կը նստիք կոր այս խոնաւ տեղերը, գիւղի օդին վարժուեցայ տէ՝ այս կողմերը մութ կ'երեւան կոր ինծի:

Յ. Յ. ՊԱՐՄԱՆԻԱՆ.



ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Շատ մարդիկ կը վիճաբանին, կը կռուըտին շուկայի խնդիրներու վրայ, մինչեւ իսկ իրարու հետ ամէն յարաբերութիւն կտրելու կ'սպանան՝ անանկ պատճառի մը համար որուն ինչ ըլլալը և ո'չ մէկերնին լաւ հասկցած են.

Այս տեսակին կը պատկանի նաեւ Դրամագլուխ և Դրամաներ կամ Աշխատութիւն եւ Աշխատաւոր բառերը Ասոնց իմաստը լաւ մը հասկցուած չէ և շատ անգամ երկդիմի վիճախօսութիւններու տեղի կուտան:

×

Ենթադրենք պահ մը որ Աւարալիա գաղթող Անգլիացի կամ Ֆրանսացի գործաւորներ կրող նաւ մը ճամբան փոթորիկի բանուելով, Խաղաղական Ովկէանոսին մէկ պատիկ ու ամայի կղզիներէն մէկուն եղերքներուն վրայ խորտակուի, և այդ ճամբորդներէն տասը հոգիի շափ՝ մազապուր պրծելով՝ ցամաք ելլին միմիայն իրենց անձը ազատելով։ Ասոնց մէջը կայ մեքենագէտ մը, կօշկակար մը, որմնադիր մը, Ժամագործ մը, եւայլն։ Այս մարդերը կը ներկայացնեն ահագին ազգակ մը՝ Աշխատութիւնը։

Ի՞նչ պիտի ընեն։ — Պիտի ջանան ինքզինքնին ապրեցնել։ Եթէ կղզիին վրայ բոյսեր կը գտնուին, եթէ քանի մը որսացուելիք կենդանիներ կան՝ նաւաբեկները չպիտի մեռնին անօթութենէ, բայց իրենց վիճակը շատ արգահատելի պիտի ըլլար։

Պիտի կրնա՞ն կեանք վարել։ — Շատ կասկածելի է այդ : Կօշկակարը՝ որքան ալ որ ճարպիկ ըլլայ իր արհեստին մէջ, նորէն չպիտի կրնայ զոյգ մը կօշիկ շնել՝ ինչպէս որ կը պատրաստէր կոնտոնի մէջ։ Նոյնպէս մեքենագործը չպիտի կրնայ հեծանիւներ շնել, ո'չ ալ ժամագործը՝ ժամացոյց մը մէջտեղ հանել։ Բոլոր այս առարկաները նոյն գործաւորներուն ձեռքէն կ'ելլային, սակայն մեր ենթադրած պարագային մէջ ամէնքն ալ անկարող են բան մը արտադրելու։ Ըսել է այդ առարկաները մինակ աշխատութեան արդիւնք չեն եղեր։

Ի՞նչ կը պակսի այս գործաւորներուն։ — Գործիքներ, շինութեան նախնական նիւթերը, պէտք եղած աշխատանոցները։ Արդ, այս գործիքները, նիւթերը եւլն. կը ներկայացնեն Դրամագլուխ ըստածը։

Ենթադրենք հիմայ որ, մօտակայ կղզիէ մը մարդիկներ նաւակով՝ գործիքներ, և ամէն տեսակ նիւթեր բերին։ Մեր նաւաբեկեալները կարող պիտի ըլլան իրենց արհեստը ի գործ դնել՝ քանի որ գործիք եւ նիւթ ունին։ Բայց այդ գործիքները երկինքէն չինկան, դրացիներն էին որ Հայթայթեցին զանոնք։ Կը կարծէ՞ք որ պարապ տեղը նուէր տուին անոնց, անշուշտ ո'չ, անոնք փոխ տուին նաւաբեկեալներուն պայմանաւ որ պատրաստուած առարկային կամ յառաջ եկած հունձքին մէկ մասը իրենց պատկանի։ Դրամագլուխէն օգտուելով՝ աշխատութեան յառաջ

բերած արդիւնքին այդ մասը կը կոչուի Տոկոս կամ
Հասոյք :

Մեր քաղաքակիրթ ու կազմակերպեալ քաղաք-
ներուն մէջ միեւնոյն սկզբունքին վրայ հիմուած են
ամբողջ գործառնութիւնները : Ճարպիկ գործառը մը
որ երկու բազուկներէն զատ ուրիշ բան չունի , չի
կրնար օգտակար առարկայ մը յառաջ բերել : Իրեն
Դեռ շատ բաներ կը պակսի՝ շինուածանիւթեր եւ
գործիքներ : Հետեւաբար շինուած առարկայ մը՝ զոյգ
մը կօշիկ , հեծանիւ մը , ժամացոյց մը , եւլն . միմիայն
սոսկ աշխատութեան արդիւնքը չէ , այլ յառաջ ե-
կած է աշխատութեան՝ գործիքներու միջոցաւ՝ կա-
շին , մետաղին եւլն . վրայ կատարած գործողու-
թիւններէն , այսինքն Դրամագլուխին միջոցաւ :

X.

Հիմայ հարցնենք . այդ դրամագլուխը ուսկի՞ց
եկաւ : Արդեօք լեռան խոտին պէս ամէն տեղ կը
բուսնի՞ և ուզողը կրնա՞յ զայն հաւաքել . թէ ո՞չ ,
նախորդ աշխատութեան մը արդիւնքն է ան :

Կը բաւէ պահ մը խորհիլ տեսնելու համար թէ
ամէնափոքը դրամագլուխը , ամէնաչնչին մէկ գործիքը
աշխատութեան մը արդիւնքն է :

Ահա կացին մը . Աշխատութեան արդիւնք է այն,
զոր մարդ մը շինած է : Շինողը՝ զայն կը յանձնէ
ուրիշի մը որ ծառերը պիտի կտրէ : Այս երկու մար-
դերն ալ հաւասարապէս իրաւունք ունին այդ կա-
ցինին վրայ : Փայտահարն ի՞նչպէս պիտի փոխարինէ
կացինը շինողին աշխատութեան իրեն ըրած ծառա-
յութիւնը : Անշուշտ կարած փայտէն մաս մը տալով
անոր : Արդ , կացինը կը ներկայացնէ մեր դրամագլ-
ուխ ըսածը , փոխարէն արուած փայտն ալ՝ տոկոս ,
տահաբաժին , եւայլն ըսուածն :

Գործի մէջ այդ անհրաժեշտ գործիքը , դրամագլ-
ուխը ունեցողն , բուն իսկ այդ գործիքը փոխ չի
տար , հապա , զայն գնելու համար հարկ եզած դը-
րամը կը հայթայթէ : Կերպաս հիւսողին , օրինակի
համար , չելլար ժագառի գործիք մը տար , հապա
զայն ծախու առնելու չափ դրամ , բայց դրամ տայ
եւ կամ գործիքը , արդիւնքը մի եւ նոյն բանն է
փոխ առնողին համար :

Հիմա հարցնենք թէ ի՞նչ է աշխատութիւնը : Այս
բառը գրեթէ միշտ մեր մտքին առջեւ կը բերէ
ձեռքի աշխատութիւնը՝ որ կը հոգնեցնէ մարմինը ,
կը քրտնցնէ եւ անդամները կը ջախջախէ : Այս գա-
ղափարը խորհրդանշան մըն է , բայց չբացատրեր աշ-
խատութեան ամբողջ իմաստը ներկայ դարու մէջ ա-
նոր առման տեստկէտով : Որովհետեւ , եթէ մինակ եր-
կաթագործներ ու փայտահարներ գտնուէին իբր աշ-
խատող՝ մարդկութեան վիճակը չպիտի տարբերէր
երկաթի դարու մէջ ունեցածէն . Արդի ճարտարա-
ռուեստի հրաշալիքներու ծնունդ տուողը՝ ձեռքի աշխա-
տութեան տեղը՝ մտքի աշխատութիւնը բռնելն է .
ամէն նոր մեքենայ աւելի ուշիմութիւն կը պահանջէ
եւ աւելի քիչ կը յոգնեցնէ : Գիտութեան ամէկ մէկ
նոր գիւտն՝ մտքէն մաս մը աւելի ուշադրութիւն
եւ ուշիմութիւն կը պահանջէ եւ աւելի քիչ կը յոգ-
նեցընէ : Հետեւաբար դրամագլուխին արժէքը բարձ-
րացնող աշխատութիւնը՝ շատ անգամ մտքի աշխա-
տութիւնն է :

Ահաւասիկ շատ մը անցորդներ . մին լրագիր կար-
գալով իր գրասենեակը կ'երթայ , սեծ վաճառատան
մը մէջ պաշտօնեայ է , չենք կրնար ըսել թէ արհես-
տաւոր մըն է սա . բայց ո՞վ կրնայ պնդել թէ պա-
րապորդ մըն է : Ահա՝ մեքենավար մը , որու ամբողջ

պաշտօնը ելեքտրական քանի մը կոճակներու վրայ կրիսել եւ շարժիչին վրայ հսկելու մէջ կը կայանայ . բնաւ չոգնիր , ձեռքերն իսկ չաղտոտեր : Շոյլ մըն է արդեօք :

Միւս կողմէ փոշիի ամպի մը մէջ կը հասնի մէկը՝ մուշտակ հազած , ուեւ ակնոցներով , աթոռակի մը վրայ ելած , քանի մը ժամուան մէջ 150 քիլոմէտր ճամբայ կտրած է . ոտքի վրայ կենալու կարողութիւն չունի , քրտինքի ու փոշիի մէջ թաղուած է . հազիւ քանի մը վայրկեան միջոց ունի հանգչելու : Այս մարդն է , կ'ըսենք ինքնին ճշմարիտ աշխատողն : Անիկա կը հանէ իր ակնոցներն եւ կը ճանչնաք որ միլիառատէր մըն է դիմացիննիդ . իր հաճոյքին համար է որ կը յոգնի ան եւ ըրած աշխատանքը բանի մը չծառայեր : Ուրեմն , հակառակ երեւոյթին , յոգնութենէ պարտասեալ այս մարդն աւխատող մը չէ , ընդհակառակն՝ աշխատողն՝ վերը տեսած անցորդներն են . անոնք թէեւ քիչ կը յոգնեցնեն իրենց մրաններն , բայց մտքերնին միշտ աշխատութեան մէջ է . անոնց ըրածը կը ներկայացնէ յարատեւ ու արդիւնաբեր ջանքը որ կը տրուի որոշեալ գործի մը որ չի կրնար վաղուան յետածգուիլ : Ահա՝ այս է աշխատութիւնը :

Աշխատանոցներու , հանքերու , գործարաններու , մեծ վաճառատուններու մէջ մտաւոր եւ մարմական աշխատութիւնը միանգամայն գոյութիւն ունին : Նիւթական աշխատութիւնը չուտով կը տեսնուի . մինչդեռ մտաւորականը քիչ մը դժուարաւ կարելի է նշմարել . որովհետեւ՝ ուղեղին մէջ է որ տեղի կունենայ . բայց ասի չուղեր ըսել թէ օգտակար չէ ան :

Առանց այս վերջնոյն՝ ճարտարաբուեստը բնաւ գոյութիւն չպիտի ունենար , եւ այսօր եւ ոչ մէկ

յառաջադիմութիւն պիտի ունենայինք :

Արդարեւ մարդկութեան օգտակար ամէն գիւտ , մասաւոր աշխատութեան մը արդիւնքն է : Երբ ժօղիա Մազօն յաջողեցաւ կալվանազօծումը հնարել և հազարաւոր գործաւորներու կեանքը խնայել զանոնք աշխատելով մնդիկի չոգիէն , հանքի մը մէջ աշխատող ու քրտինք թափող գործաւորի մը տքնութիւնը չունեցաւ երբեք : Նոր զիւտ մը ընող ամէն գիտուն՝ հազարաւոր գործաւոր սերունդներու ներկայացուցած ոյժին համարժէք զօրութիւն մը ստեղծած կ'ըլլայ : Հսել է « աշխատութիւն » բառը մինակ մարմնական յոգնութեան վերապահելու չէ , եւ ոչ ալ « աշխատող » բառը՝ մինակ ձեռքերը գործածող գործաւորին :

Բայց մինակ խելի չբաւեր , ճարտարուեստի ձեռնարկի մը յաջողութեան համար գիտէ՞ք ուրիշ ի՞նչ պէտք է որ հնարիշն իր քովկ ունենայ . քննական ոգիի տէր օգնական մը . պէտք է որ գիտութիւնը ամբողջացուի գործերու հասկացողութեամբ : Ասիկա բուրովին տարրեր բան մըն է : Ծիւփո մեծ ձեռնարկուն , որ ամբողջ քաղաքի մը սալայատակումը կը ստանձնէր , բնաւ դաստիարակուած չէր եւ ճարտարապետական յատակագերերու մէջէն բան մը չէր հասկընար : Վանտէրպիլտ հայրը՝ որ Միացեալ նահանգաց չոգենաւններու առաջին ընկերութիւնը կազմողն եղաւ , չէր կրնար առանց տառասխալի նամակ մը գրել : Ասոր փոխարէն , այս մարդիկը անձնայատուկ յատկութիւններ ունին գործունեայ , յարատեւ , գործ մը լաւ դասող , յամառ են , եւ կը ներկայացնեն տարրեր տեսակ աշխատութիւն մը , այն է ձեռնարկուի , վարիչի կամ տնօրէնի յատկութիւնը :

Ի՞նչ է գործատէրի մը պաշտօնը : Նախ ձեռնարկութիւնը , գործարանը , վաճառատունը կը բանայ , 15

կ'ստեղծէ : Բարիզի մէջ , եւ զրեթէ Եւրոպայի մէջ ; Լուվիի նորաձեւութեան վաճառատունը մէկ հատիկ է . անոր երեք հիմնադիլները երր սրճարանի մը մէջ ժամադրութիւն տուին ընկերակցութեան պայմաներն որոշելու համար , այնքան նիւթական աննպաստ պայմաններու մէջ կը գտնուէին որ իրենցմէ մին , Հէրիօ , մէկուկէս ժամ իր ընկերները սպասեցնել տուաւ , չի կրնալով բացակայիլ այն վաճառատունէն , ուր կը ծառայէր , վախնալով որ ճամբայ կուտան իրեն , դեռ նոր ստանձնելիք պաշտօնին մէջ չհաստատուած :

Ասկէ կարող էք դատել թէ ի՞նչ ահռելի ջանք եղած է այս մարդոց ըրածը , որոնք կամաց կամաց ստեղծած են Լուվիի վաճառատունը :

Գործատէրին երկրորդ աշխատութիւնը վարելն է : Ասիկա ալ՝ բնական ձիրքեր կը պահանջէ , նախատեսութիւն , մաքի յատակութիւն , ճիշդ որոշում մը տալ : Այս յատկութիւնները շատ քիչ կը գտնուին : Առևտուրի մէջ գրեթէ շատեր տեսած ու դիտած են ասիկա . լաւ պաշտօնեայ մը որ իր գործն հիանալի կերպով կը կատարէ , օր մը կ'ելլէ իր հաշւոյն գործի կ'սկսի . ինքն ալ ունի այն վիճակը , զոր իր գործատէրը ունէր , երբ գործի սկսաւ : Բայց մեր պաշտօնեան չյաջողիր . գործատէր ըլլալով կը սնանկանայ . եան չյաջողիր . գործատէր ըլլալով կը սնանկանայ . մինչեռ պաշտօնեայ եղած ատեն շատ լաւ կը կամինչեռ պաշտօնեայ այս աշխատութիւն յ'ալ կը կաթէ : Գործ մը վարելու այս յատկութիւնն է որ տարէր իր գործն : Ինչէ՞ն յառաջ կուգայ այս : Սա է թէ գործատէրը զատ աշխատութիւն յ'ալ կը կակ'ուղիէ ձեռնարկի մը ընթացքը : Եթէ այդ յատկութիւնը պակսի , ձեռնարկը չի յաջողիր հակառակ գործաւորներուն ճարպիկութեան :

Այս բնական յատկութիւններէն զատ , ամէն վայրկեանի յարատեւութիւն մը պէտք է : Մեծ ձեռնար-

կութիւն մը սկսողին համար զիշեր , ցերեկ . հանգիստ չկայ բնաւ : Երբ յաջողութիւնը սկսի , նայիս մրցակիցներ երեւան կ'ելլեն : Պէտք է որ գործատէրը վերսկսի իր աշխատութիւնը՝ բոնած դիրքը չկորսնցնելու համար : Այս յարատեւութիւնը գործարանի մը մէջ տիրոջմէն զատ մէկը չի կրնար ունենալ , եւ եթէ ունենայ իսկ՝ ո՛չ անոր չափ : Որովհետեւ գործատէրն աւելի մօտէն կը քննէ , կը տեսնէ իր գործերն . եթէ գէշ գործեր ըլլան՝ գործաւորը շատ շատ իր օրականը կը կորսնցնէ , մինչդեռ գործատէրը կրնայ սնանկանալ , վրայ տալով իր պատիւն , կեանքն , եւ նոյն իսկ վասել ընտանիքին պատիւն ալ :

Վերջապէս , գործաւորին պաշտօնը կը կայանայ պատրաստուած վաճառքը ծախելուն մէջ : Որովհետեւ աշխատողին համար խնդիրը մինակ բան մը շինելը չէ , այլ շինածը ծախելու է : Արդ , գործաւորը չի խառնուիր այս կէտին , իր օրականը կը գանձէ ու կը քաշուի . մինչդեռ գործատէրը պիտի ջանայ պատրաստուած ապրանքը դրամի փոխել , անով վճարելու համար գործաւորն ու իր անձնական շահը :

Հիմակ կը տեսնէք որ ո եւ է ճարտարարուստի մը յաջողութիւնը քանի՛ տարրերէ կը բաղկանայ : — Դրամագլուխ մը շահագործել տալու համար մարմանան աշխատութիւնը պէտք է , Մարմական աշխատութիւնը կատարեալ ընելու համար՝ մտքի աշխատութիւն պէտք է : Վերջապէս՝ ձեռնարկը յաջողութեամբ պսակուելու համար վարիչ խելք մը պէտք է : Ասկէ երեք հետեւութիւն կրնանք հանել :

Եթէ արդի ճարտարարուեստին հոգին եղող մտաւոր աշխատութիւնը պակսի , բնական է որ գործը ըընաւ չկատարուիր : Ուրեմն բնական է որ արտասովոր յատկութիւններ ունեցող մարդիկ՝ արտասովոր թո-

շակներ ստանան՝ քանի որ իրենց կատարած ծառա-
յութիւնը հասարակ մարդ մը չի կրնար կատարել։
Օրինակի համար ապակեղինաց գործարանի մը մէջ,
լաւ շիշ փշող գործաւոր մը մինչեւ օրը կէս ոսկի
կրնայ շահիւ՝ մինչդեռ անոր քովը կեցող եւ շիշերը
մէկիկ մէկիկ իրեն տուող գործաւորն հազիւ 10—15
դրուշ կ'ընդունի։ Նոյնպէս ալ, երբ ճարտարագէտ
մը անհաւատալի շահ մը կ'ընէ մեծ ձեռնարկէ մը, ա-
մէն մարդ, համեմատութեան դնելով պաշտօնեայի ա-
մէնէն բարձր ամսականին հետ, կ'ըսեն ինքնիրեն-
նուն թէ՝ ճարտարագէտին ըրած շահն օրինաւոր չէ,
առանց սակայն խորհելու որ եթէ անիկա միայն իր
աշխատութիւնը ետ քաշէր՝ գործն ամրողջո-
վին պիտի վիժէր։

Երկրորդ հետեւանքն է, երբ գործատէրը կը տեսնէ
որ շահերն իր ակնկալածին չափ չեն եւ իրեն բաժին՝
գործաւորի մը ամսականին պէս բան մը միայն կը
մնայ, կը քաշուի գործէն եւ ձեռնարկ մը առանց վա-
րեշի կը մնայ ու կը կործանի։

Նոյնպէս երրորդ հետեւանքն է դրամագլուխին
ինկած շահու բաժինին քիչութիւնը, որով, դրամ ու-
նեցողն՝ աւելի շահաւոր գործեր ունենալով կամ ա-
նոր ակնկալութեամբ դրամագլուխը կը քաշէ կ'առնէ։

Թարգմ.

Զ. Ն. ՊԵՐՊԻՌԵԱՆ

Օ Գ Տ Ա Կ Ա Բ Խ Օ Ս Ք Ե Բ

Աստուծոյ չուզածը՝ սուրբը չի կրնար։
Նիհարները գեր մարդերէն աւելի կ'ուտեն։
Մարդ՝ չունեցած բանը չի կրնար կորսնցնել։

Ուրիշները չենք գովեր վախնալով որ մենէ վեր
(գերադաս) կը համարուին անոնք։

Տկար միտքերը իրենց հասողութենէն վեր գըտ-
նուած բաները կը դատապարտեն։

Երկայն լեզու ունեցողին ձեռքը կարձ կ'ըլլայ։

Երեք գժուար բաներ կան, գաղտնիք մը պահել,
նախատինք մը մոռնալ, պարապ ժամանակ
անցնել։

Առանց աշխատութեան հաճոյք չկայ։

Աշխարհիս վրայ անուն մը շինելէ աւելի դժուար
արհեստ չկայ։

Աշխատինք ինքզինքնիս բանի մը օգտակար ըլլա-
լու վիճակի մէջ դնել, մնացեալն ուրիշի գործն է։

Աղքատին հացը՝ փուռին մէջ կը սառի։

Կորսուած մէկ օրուան պարապը՝ բնաւ չլեցուիր։
Աւելութեան պղտիկը չըլլար։

Չարախօսելով քնացողը՝ բամբասելով կ'արթննայ։

Մեր յոյսերուն համեմատ խօսք կուտանք և վախ-
ածնուս չափ՝ խօսքերնիս կը պահենք։

Ազնիւ հոգի մը իրեն հանդէպ արդար չեղողնե-
րուն հետ իսկ արդարութեամբ կը վարուի։

Գոհ չեղող մէկը, չկրնար ուրիշը գոհացնել։

Վախցիր շատ խօսղէն, մանաւանդ շատ լաւ խօ-
սողէն։

Երանի այն մարդուն, որու մեղքը Աստուած երե-
սին չզարներ։

Շատ քիչ խօսելով է որ մարդ կրնայ խօսիլ։

Մեծ հարուստ մը, մեծ զանգակ մը, մեծ գետ մը՝
երեք գէշ դրացիներ են։

Երբ հոգին ծարաւէ է՝ մինչեւ անգամթոյն կը խմէ։

Շատակեր տիրոջ ծառան ու շունը միշտ անօթէ
կը մնան։

Սուտ խօսողը երկու բան շատ կը գործածէ, շատ
մը խօստումներ ու շատ մըն ալ ներողութիւն։
Մեղանի վրայ ամէն մարդ համաձայն կը գործէ։
Վիճաբանութիւնը թոքերու մենամարտ մըն է,
ամէնէն հուգկուն յաղթական կ'ելլէ։
Գէշ տրուած վարձատրութիւնները՝ արժանի
եղողները կը յուսահատեցնեն։

Պղտիկ գետակները շատ աղմուկ կը հանեն, որով-
հետեւ խորունկ չեն, մեծ գետերը լուռ կը հոսին։
Երբ սխալ մը գործենք, ջանանք անոր դարման
մը գտնել, և ո՛չ թէ ինքզինքնիս արդարացնել։
Աստուծոյ առջեւ խոնարհեցէք և պիտի փրկուիք։
Շատ մեծ անուն մը ունենալն, բաւական ծանր
բեռ մըն է։

Խելացի մարդը քիչ տեղ կը բռնէ և քիչ տեղ կը
փոխէ։

Աղէկ խօսիլը արժանիք մըն է, իսկ աղէկ գործելը
արժանիքներու ամէնէն մեծն է։
Իրական քաջութիւնը՝ մինակ ելլելու համար օդա-
նաւ մը չէ, այլ անկարգել մը իջնելու համար ալ,
բնաւ պատիւները չեն գար անձայն արժանիքը
գտնելու։

Բացարձակ անձնուիրութիւնը՝ միամիտ բնաւորու-
թիւն ունեցողներու համար գերագոյն համոյք մըն է։

Տեսակ մը փառք ալ իր պարտականութիւնները
կատարելն է մինչեւ ամենայետինը։

Ամէնէն աւելի յաջողութեան մէջ է որ խոհեմու-
թեամբ վարուելու է։

Անձնասիրութենէն կը ծնի ատելութիւնը։
Աւելի լաւ է չամիչի հատիկ մը ընդունիլ իրեն
համար, քան երկու հատ թուզ՝ դրացիին համար։
Խելացի մարդը չի նստիր լուռ, հապա եղածին

դարման տանելու համար զուարթութեամբ աշխատիլ
կ'սկսի։

Ետքէն եկողը՝ դուռը կը գոցէ։

Մէկը որ ողորմութիւն տալու համար ինքզինքը
բնաւ չի նեղեր, անիկա բնաւ բարեսրտութեան հա-
ճոյքը չպիտի վայելէ։

Զեր երջանկութեան վրայ մի՛ խօսիք ձենէ աւելի
դժբաղդի մը առջեւ։

Սիրելը՝ զինքը սիրողին բարիք կամենալ է։

Կիրակի օրուան անձրեւը՝ մինչեւ շաբաթ կը տեւէ։

Մէկը որ կը կարծէ թէ՝ կրնայ առանց ուրիշին
պէտք ունենալու ապրիլ, կը սխալի։

Ամէն մարդ կրնայ քիչ կամ շատ բան մը ընել, և
այդ կրցածը՝ իրեն պարտականութիւնն է։

Մէկը որ ձեռքը արօրին վրայ դնելով միշտ ետին
կը նայի, շուտով ետ պիտի երթայ։

Պղտիկ աղբիւրէն ուզածիդ պէս կը խմես։

Աշխատութիւնը՝ օրերը կը կարճեցնէ և կեանքը
կ'երկարէ։

Շողոքորթութիւնը կեղծ դրամ մըն է, որ մար-
դուս ունայնամտութեանը չնորհիւ յարգ կը գտնէ։

Երբ խիղճերնիս հանդարտ է և մարմիննիս հիւան-
դութենէ զերծ՝ ինքզինքնիս երջանիկ համարելու
ենք։

Բարիք գործելու համար արտասովոր պարագա-
ներու մի՛ սպասեր, սովորական առիթէն օգտուիլ
ջանայ։

Մի՛ վախնար, որովհետեւ քեզի հետ եմ, բանի մը
մի՛ զարմանար՝ որովհետեւ ես քու տէր Աստուածդ եմ։



Ա Ե Ր Ա Ս Ս Ե Խ Վ Ա

(ՄԵՆԱԿԱԾՈՒԹԻՒՆ)

ԱՇ, որչա'փ կը սիրեմ կեռասենին. այս սէրս ինծի համար կիրք մը, պաշտում մը եղած է: Ամբողջ երջանկութիւնս կեռասենիին կը պարտիմ: Ճիշդ երեք շաբաթ եղած է որ ելած էի վանքէն, ուր առած եմ զամտիարակութիւնս: Ամբողջ տունը տակնուվրայութեան մէջ գտայ. քոյրս Վարդուհի պիտի ամուսնացնէին: Քուրիկս իր անունին պէս գեղեցիկ է. ամէն մարդ վրան կ'սքանչանայ. մինչդեռ ես... աւա՛ղ:

Մայրիկս միշտ կ'ըսէ.

— Վարդուհի սքանչելի ամուսնութիւն մը պիտի ընէ, բայց Սիւզան, խեղճը, շատ գժուարահաճ ըլլալու չէ՝ թէ ոչ տունը պիտի մնայ:

Մեր բարեկամներէն տիկին մը, Վարդուհիի համար երիտասարդ բժիշկ մը առաջարկեց, շատ յաճախորդներու տէր, հարուստ, մեծ ապագայ կը խոստանայ:

Երկու կողմէ ալ պէտք եղած տեղեկութիւններն առնելէ ետք, առաջին տեսութիւնն որոշեցին: Տիկին որոշեալ օր մը մեր տունը պիտի բերեր երիտասարդն: Առաջուընէ մօրս ապապրեց.

— Առէնէն աւելի ուշադրութիւն ըրէ որ Տօքթօր Արման մինակ օրիորդ Վարդուհին տեսնէ: Եթէ ուրիշ երիտասարդուհիներ տեսնէ, կընայ ըլլալ որ շփոթի եւ հաւանութիւնն տայ այն աղջկան՝ որու համար չէ որ եկած էր:

Մայրիկը շատ խնդաց այս խօսքին վրայ: Ե՞ս, Սիւզանն էի որ Վարդուհիի ոտքը պիտի առագել Սիւզանն էի որ Վարդուհիի ոտքը պիտի առ-

նէի: Սակայն տիկին թ... ի հաճոյք պատճառելու համար հիւրասրահէն արտաքսուեցայ:

Նատ ցաւ չիմացայ այս տարագրումէս, որովհետեւ սաստիկ վախ կ'զգայի աեւնել այդ գիտուն երիտասարդն՝ կապոյա ակնոցով, խոժոռ դէմքով, ցամքած միտքով: Ուստի գիրք մը առի եւ պարտէզ վախայ. կեռասսենիի մը վրայ մագլցեցի ու ճիւղերուն մէջ տեղաւորուելով սկսայ գիրքս կարդալ ու կեռաս ուտել: Մայրիկը կ'ըսէ թէ իմ տարիքս աղջկան մը համար ամօթ է ծառերու վրայ ելլել, բայց հիմա զբաղած ըլլալուն, անշուշտ զիս չպիտի տեսներ:

Յանկարծ, ոտքի ձայն առի, եւ վար նայեցայ... Տէ՛ր Աստուած, ինչպէս ամցայ. ծառին տակը երիտասարդ մը կեցնը, եւ սքանչացումով մը ինծի կը նայէր: Նատ սիրուն կեցուածք մը ունէր: Բարակ պեխ, կրակոտ աչքեր. Անշուշտ քրոջս ձեռքը խընդրող խոժոռադէմ գիտունը չէր ասիկա: Նոյն իսկ եթէ ան ըլլար, ի՞նչ գործ ունէր պարտէզին մէջ:

— Օրիո՛րդ, հազար ներում կը խնդրեմ, ըստեւ, տան գուուը զարկի՝ բացող մը չեղաւ. ես ալ պարաէզին վանդակադռնէն ներս մտայ. բայց կը տեսնէք որ ճամբաս կորսնցուցի եւ ծառաստանին մէջ ինկայ, որու ամէն մէկ ծառն սքանչելի պտուղներ կը կրեն:

Կասկարմիր կտրեցայ ու թոթովեցի.

— Էսել է, Տօքթօր Արմանն էք դուք որ այսօր պիտի գար... (քիչ մնաց քոյրս աեսնելու պիտի ըսէի) ... մայրիկս տեսնելու:

— Ճի՛շդ է, օրիորդ. կը ներէ՛ք հարցնել թէ օրիորդ Վարդուհիի՞ հետ է որ պատիւ ունիմ խօսնելու: Ինծի Վարդուհիին հետ կը շփոթէր, զուարճալի բան շիտակը:

— Ո՛հ, ո՛չ, Պարոն, Վարդուհին քոյրա է, ես Սիւ-

զանն եմ թնաւ անոր չեմ նմանիր : Ան գեղեցիկ է ,
խելացի ու կրթեալ է :

— Հապա օրիորդ Սիւզանը , ա՞ն ինչպէս է :
— Ա՛հ , ես... մայրիկս « արապինա » դրած է
անունս :

— Ի՞նչ կ'ըսէք , այդ անունը ձեզի բնաւ չէ յար-
մարած . բայց , եթէ վար իջնէք , կրնանք աւելի դիւ-
րաւ խօսակցիլ :

Վար իջնելուս առաջին արգելքը , ինքը այդ պա-
րոնն էր :

—Պարո՞ն , ըսի , քիչ մը վարը , հաղարջենիներու
ետին սքանչելի կոճկածաղիկներ ունինք , չչ՞ք ուզեր
անգամ մը զանոնք տեսնել :

Մաղրածու ակնարկով մը ինձի նայեցաւ ու ամէն
մէկ բառին վրայ շարամտութեամբ յենլով ըսաւ .

— Միմիայն ձեզի հաճելի ըլլալու համար . օրի-
որդ , կ'երթամ կոճկածաղիկները տեսնելու :

Հեռացածին պէս , ծառէն վար ցատքեցի եւ քովը
վազեցի :

— Սրահն երթանք , պարո՞ն , ըսի , մայրիկը դըժ-
գոհ պիտի ըլլայ : Ձեզի տեսնելու չի ես :

— Իրա՞ւ , օրիորդ , եւ ինչո՞ւ համար զիս չպիտի
տեսնէք :

— Որովհետեւ ... որովհետեւ ... ոչի՞նչ . խենդ
քաներ կ'ըսեմ կոր ես ալ : Բայց դուք տիկին Ք... ի
հետ պիտի գայիք այսօր :

— Տիկին Ք... վերջին պահուն իմաց տուաւ . թէ
չպիտի կրնայ գալ , ես ալ համարձակեցայ մինակս այ-
ցելել հոս , եւ շիտակը չեմ զղջար այսպէս ընելուս :

Այս խօսքերն անանկ ձեւով մը ըսաւ որ նորէն
կարմրեցայ , իրաւ որ Վարդուհիի ապագայ ամուսինն

խիստ համակրելի անձ մըն է : Քեռայրս շատ պիտի
սիրեմ :

Կը հաւատա՞ք արդեօք , երբ Տիկին Ք... պաշ-
տօնապէս արտօնուեցաւ բանակցելու , եկաւ մայրի-
կէն... իմ ձեռքս խնդրեց Արմանի համար :

Մայրս սարսափեցաւ , Վարդուհի նեղացաւ եւ ես
այնքան երջանիկ եղայ , ա'յնքան որ չեմ կրնար ը-
սել :

Հիմա՞կ , դուք ըսէք , իրաւունք չունի՞մ կեռասե-
նիները սիրելու :

Թարգմ. Զ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԼԻԼԻ ՊԸԾՒԾՐ



ԵՐԿՐԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

ԿՈՎԵՐՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ

Կովերը՝ իրենց ցեղին համեմատ քիչ կամ շատ կաթ-
կուտան , նոյնիսկ միեւնոյն տեսակէ երկու կենդանի-
ներ խիստ տարրեր քանակութեամբ կաթ կ'արտադ-
րեն : Երկրագործները որոշիչ նշաններ ունին լաւ
կաթնտու կով մը զատելու համար : Հոս չպիտի խօ-
սինք այդ զանազանութիւններուն վրայ միայն պիտի
մատնանշենք սովորամոլութիւն մը , որու հետեւան-
քով կաթնտու եզները բոլորովին անշարժ վիճակի
մը մէջ կը պահուին : Այս կենդանիներուն առջեւ կը
դնեն առատ սնունդ մը , կարելի եղածին չափ շատ
կը փոխեն անոր խշտիքը , և ամէնափոքը աշխատանք

մը իսկ չեն ընել տար անոր; Դուրս հանելով աղբիւրէն ջուր խմցնել իսկ շատ կը համարուի; Մէկ խօսքով այս կովերը անշարժ կը մնան և բաց օդին չեն ելլեր:

Բայց կրնանք ըսել թէ՝ այդ կենդանիները դուրս հանելը անհրաժեշտ է, նոյն իսկ կարելի է աշխատցնել զանոնք թեթեւ գործերու առանց յոգնեցնելու: Այս կերպով, իրաւ, օրական կաթին քանակութիւնը կը քիչնայ, բայց այդ պակսածը ջուրն է միայն, չափաւոր շարժումներ կատարող և բաց օդին պտտող կովին կաթը անհամեմատ կերպով աւելի լաւ կ'ըլլայ և պարունակած սերին քանակն ալ գրեթէ կրկնապատիկ:

Ըսել է որ կովերուն կաթէն կարագ կամ պանիր հանող երկրագործը՝ իր կենդանիները գործածելու է թեթեւ աշխատութիւններու մինչդեռ կաթը ծախողը լաւ կ'ընէ երբ կը ձգէ որ կովերը անգործ մնան գոմին մէջ:

ԳԻՐՑՈՒԵԼԻՔ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Գիւղացիները շատ անդամ սա խորհրդածութիւնը կ'ընին: «Գէորգ աղբարին կովը շատ ծերացեր է, ալ չկրնար աշխատիլ, երթամ աժան մը գնեմ ու գիրցնեմ անիկա»:

Դիւրին է հասկնալ թէ՝ ասիկա ամէնէն անմիտ հաշիւն է: «Որովհետեւ նոյն իսկ գիւղացիներն ալ գիտեն որ կենդանի մը քանի ծերանայ, այնքան քիչ իւղ կը բռնէ»:

Երբ շատ մը մնունդ և ախոռին մէջ ալ լաւ տեղ մը կայ, պարարտացնելու համար ընտրուած կենդա-

նին պէտք է ըլլայ երկու երեք տարեկան բան մը, ամէնէն յարմար տարիքն աս է. իսկ հինգ տարեկանէն վեր բնաւ կենդանի մը գնելու չէ զայն պարարտացնելու յոյսով: Երեք տարեկան կով մը աւելի քիչ ժամանակի մէջ կը գիրնայ՝ քան թէ եօթը տարեկան մը:

Պարարտացնելու համար գնուած կենդանին սրունքները բարակ ու կարճ ըլլալու են, ուսերը քառակուսի կամ լայն, կոնակը և երիկամունքը լեցուն, մարմինը կայտառ և ծածկուած մազերով, որոնք ցից կը կենան և չէ թէ մորթին կը փակչն: Եթէ գնումի ժամանակ այս կէտերուն ուշադրութիւն ըլլուի և գիրցնելու ժամանակ ալ մնունդին վրայ կծծիութեամբ չվարուի, պարարտացած կենդանին խիստ շահաբեր կ'ըլլայ:

ՑՈՐԵՆԸ Ի՞ՆՉՊԵՍ ՑԱՆԵԼ

Ցորենը խիտ ցանելու է թէ ոչ բաց բաց. — Շատերը կ'ըսեն որ խիտ ցանելու է, իսկ ուրիշներ կը խրատեն բաց ցանել:

Երկուքն ալ իրաւունք ունին, որովհետեւ ամէն մարդ իր կարծիքը կը կազմէ նոյն իսկ իրեն փորձառութեան վրայ. առատ հունձք մը կախում ունի հունտին տեսակէն, ցանուելու եղանակէն, և իրեն հողէն, և այլն. այնպէս որ ամէն երկրագործ կրնայ իր փորձառութեան վրայ յենլով՝ ինքնիրեն օրէնք մը ձեւել այս հարցումին համար:

Ցանքը կատարուած ժամանակ՝ առաջին տարբերութիւնը կը դնէ. քանի կանուխ ցանուին այնքան քիչ հունտ դնելու է, որովհետեւ առաջին եղանակին

ցանուած ցորենին ծիլերը աւելի ոյժով կ'ըլլան, և դեռ սառոյցքի չի բռնուած կը խոչորնան, նոյեմբերի մէջ կամ աւելի ետքը կատարուած ցանքերուն, որչափ խիտ ցանուի, այնքան լաւ է:

Երկրորդ տարբերութիւն մը կը դնէ՝ ցանելու կերպը. Զեռքո՞վ կը ցանէք թէ ոչ ցանելու մեքենայ մը ունիք: Եթէ ձեռքով կը ցանէք՝ բնական է որ ցորենին մէկ մասը կը կորսուի. հատիկը՝ հողի չփշը բռնուած կոյտերու վրայ կ'ինայ կամ ծակի մը խորը կը կորսուի, հողը կամ բնաւ չծածկեր զայն և կամ ցորենը շատ խորունկ թաղուելով բնաւ չծլիր: Այս հաշւով երկու կամ երեք հատիկին մէկը պիտի կորսուի: Մինչդեռ ցանող գործիքը, պէտք եղած խորութեան մէջ պիտի զետեղէ հատիկը ուզուած հեռաւորութեամբ, այն ատեն կորուստ գրեթէ բնաւ չլլար և կէս առ կէս կամ երրորդ համեմատութեամբ խնայողութիւն մը կ'ըլլուի:

Հողին տեսակին համեմատ հունտը շատ կամ քիչ դնելու է: Լաւ պատրաստուած, խնամով աղբուած դաշտին վրայ, բնական է որ գրեթէ բոլոր հունտերը կը ծլին. մինչդեռ երբ հողին մէջ վայրի խոտերու հունտեր մնացած են՝ որոնք ցորենին հետ միեւնոյն ժամանակ կը ծլին, այս վերջինները դժուարաւ պիտի մեծնան քանի որ հողին սնունդին մէկ մասը խոտերուն կերթայ: Այս պայմաններուն մէջ լաւ մաքրուած արտը միեւնոյն հունձքը կուտայ՝ քան թէ չի խնամուած դաշտը՝ անոր կէսին չափ հունտ միայն ցանուելով:

Վերջապէս ցանքին քանակութիւնը որոշելու համար, ցորենին տեսակն ալ նկատի առնուելու է. Օրինակի համար, կան տեսակներ որոնց արմատները շատ մօտիկ ըլլալով զիրար կը նեղէն, մինչդեռ ուրիշ

տեսակներու արմատները քանի մը թելիկներ միայն ունենալով որչափ ալ խիտ ցանուին, իրարու վնաս չեն տար:

Ինչպէս կը տեսնէք, ցորենը ցանելու եղանակը կախում ունի շատ մը պարագաներէ, զորս խելացի երկրագործը լաւ մը ուսումնասիրելու է. միշտ յաջող հունքէ մը կը հասնի:

ՑՈՐԵՆԻ ՀԱՍԿԻՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Թափումը.— Երբ հովը կը փչէ ցորենի դաշտին վրայէն, բոլոր հասկերը կը ծռին, իրարու կը փակչին և հովին դէմ տեսակ մը պատուար կը դնեն՝ եթէ հովը քիչ մը սաստի՛ ըլլայ, դիւրաբեկ ցողունները չկրնալով դիմադրել անոր զօրութեան՝ մէկիկ մէկիկ կը կոտրին և հասկերը վար կը կախուին: Այս աղէտին առաջքը առնելու համար հովին փչած ու զղութեան մէջ կը ցանեն ցորենը, անանկ որ երբ ցողունները մեծնան, տեսակ մը անցք կը թողուն իրենց մէջտեղը, ուրկէ օդի հոսանքը կ'անցնի և իր ոյժը չկորսուի:

Տարբեր միջոց մըն ալ կայ թափումին առաջքն առնելու համար: Ծատ երկրագործներ խնամով կը զիտեն հունտին ծիլը, երբ ծիլերը զետեղէն վեր մէկ թզաշափ կամ քիչ պակաս բարձրութեան կը հասնին, մանգաղով մը կը հնձնեն երեսէն՝ կէսէն քիչ մը վեր բարձրութեամբ, անանկ որ երկու երկար տերեւնները իյնան, իսկ հասկը կրելիք ցողունը չվնասուի:

Այս միջոցով ցորենի բոյսերուն վրայ կանանչ քիչ մնալով՝ ցողունն ու հասկը զօրաւոր կ'ըլլան:

Պարզում.— Երբեմն հողին մէջ՝ ցորենի հունտին կազմութեան տարրերէն մին կը պակսի, այն ատեն

ցողունը թէե իր բնական բարձրութեան կը հասնի, և հասկը սովորականին պէս կը կապուի, սակայն հատիկը կամ բնաւ չկազմուիր և կամ շատ պզտիկ, տիեղծ կը մնայ:

Կը պատահի ալ որ, ճիշտ հունտը կազմուած միջոցները օդին տաքութիւնը շատ կը բարձրանայ և երաշտութիւն մը կը տիրէ, այն ժամանակ սնունջը չկարենալով ցողունէն վեր սինչեւ հատիկին ելլել, ցորենը շատ պզտիկ կը մնայ և կամ բնաւ չերեւիր:



ՄԵՂԱԼՈՒՄՆԻ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ՄՀ

Ընկերական պարտաւորիչ այցելութիւնները տալէ, երեկոյթներ ու ճաշեր սարքելէ վերջ, Վէթէօյլ ամոլը մեկնեցաւ գէպի Անգլիա, ամուսնական ճամբորդութիւնը կատարելու համար:

Ամէն ֆրանսացի նորապատկ ամոլ—անշուշտ ձեռքը բերանը հասնողները—գէպի իտալիա կը մեկնի Բայց տիկին ժան Վէթէօյլ, տակաւին օրիորդ տը լիւսեյ եղած ժամանակէն մեծ փափաք մը ունեցած էր ճամբորդութիւն մը կատարել Անգլիոյ մէջ, և մանաւանդ այցելել Սկովախոյ գեղեցիկ լիճները: Հիմակ որ իր ամուսինին՝ կասթօն Վէօթէօյլի մէկ բարեկամը, իրենց տրամադրութեան տակ կը գնէր լօմօնտ լիճին եղերքը ունեցած մէկ դղեակը, դիւրաւ կը բացատրուի թէ ժան չփնաց կտալիս՝ որ ա՛լ դասական բան մը եղած է ամուսնական ճամբորդութիւններու:

Անգլիոյ ցամաքը ելած, երկաթուղին բոլոր արագութեամբը գէպի լոնտոն կընթանային: Կասթոն լեզուանի տղայ մը չըլլալուն՝ տարբեր կերպով մը

կը ջանար սիրելի պառնալ իր կնոջ, այն է նէրա բոլոր ուզած կատարել: Կառախոսմը Քաթամի կայտանը կանգ առաւ: Հոն մօտիկը ծաղկեվաճառի մը խանութիւն մէջ սքանչելի վարդերու փունջ մը կար: Ժան տեսաւ զանոնք. «Տե՛ս, ըսաւ ամուսինին, ի՞նչ աղւոր են»: Եւ դեռ խօսքը չէր աւարտած, կասթօն վակոնէն դուրս ցատկեց:

* * *

«Երբ զոյդ մը, աչք աչքի, զուարթօրէն կը մեկնի, ա՛լ բնաւ չի մտածեր մնացողին վրայ: Անձնասիրութիւն...: Սակայն ի՞նչպէս կարելի է մեղադրել զանոնք քանի որ կը սիրեն զիրար: ապագան երազի մը պէս գեղեցիկ կը թուի անոնց, երանի թէ՝ այս սէրը տեւեր»:

Սյոպէս կը խորհէր տիկին տը լիւսիլ, աղջկանը մեկնելէն ի վեր: Ճունը պարապ կ'երեւէր իր աչքին: Կանուխէն այրիացած, ինքինքը ամբողջովին աղջկանը նուիրած էր, եւ հիմա եկեր այդ աղջիկը առեր էին իր ձեռքէն: Գէթ՝ երիտասարդ զոյդը խոստացած էր ամէն մէկ կայարան հասնելուն՝ հեռագիր մը զրկել:

Առաջին հեռագիր մը, Քալէէ քաշուած, մայրիկը կը հանդարտեցնէր՝ զուարթ ճամբորդութիւն մը յայտնելով: Երկրորդ մը՝ Տուվրէն՝ սիրուն բառերով կը բացատրէր թէ ի՞նչ գեղեցիկ էր չժողային կարձ ճամբորդութիւնը:

Երջանիկ լուրերու դիւրաւ կը վարժուի մարդո, երբ երրորդ հեռագիրը բերին, տիկին լիւսիլ կէս մը խնդալով բացաւ կային: Սակայն քար կարեցաւ, սիրա՞լ կը կարդար արդեօք, երեք չորս անգամ

իրարու վրայ կարդաց, հեռագիրը սա բառերը կը պարունակէր.

«Լոնտոն, Հաւ ճամբուղութիւն, Մինակ եմ, Կասթոն՝ Քաթամի հայարանը մնաց»:

Մինակ, Տակաւին՝ երէկ իր վարժուած Բարիզի փողոցները չէր պատեր առանց ընկերի, հիմա միսմինակ մնացեր է լոնտոնի պէս ահագին քաղաքի մը մէջ, Մայր եզիք և ելէք աղջիկնիդ ամուսնացուցէք: Ինչո՞ւ համար ամուսինը կայարանը մնացեր էր: Ի՞նչ անցեր էր մէջերնին, Անհամաձայնութի՞ւն մը: Կըռուած էին արդեօք: Գուցէ զատուած իսկ:

Ամբողջ մտատանջութիւնը մինակ իրեն չկարենաւ վերապահել, տիկին տը Լիւսիլ, իր փեսին հօրը պարոն Վէթէօյլի՝ մարդ զրկեց որ գայ և անմիջապէս հեռագիրը անոր կարդացուց:

—Ի՞նչ կ'ըսէք, պարո՞ն:

—Ճամբորդութիւններու մէջ ասանկ բաներ կը պատահին. վստահ եմ որ ետքէն մեր զաւակները շատ պիտի խնդան ասոր վրայ միասին:

—Միասին... Ասուուած տար: Բայց ինդիրը անանկ չէ': Իրարմէ զատուեր են. տեսէ՞ք: Արդեօք ինչո՞ւ համար... Իմ աղջիկս շատ հեղահամբոյր բնաւորութիւն մը ունի. գուցէ ձեր տղուն ընթացքը...:

—Ի՞նչ գաղափարներ, տիկին, բայց ո՞չ բաժանում կայ, ո՞չ կոխւ. Սլամամբ կասթօն կայարանը մնացած ըլլալու է, երբ ձեր զաւակը կառախոսմբին մէջ ճամբայ կ'ելլէք: Այս թիւրիմացութիւնը շուտով կը կարգադրուի. ահա՝ ձեր ծառան հեռագիր մը կը բերէ. պիտի տեսնէք որ իրաւունք ունի՞մ եղեք:

Շատան իրա՛ւ հեռագիր մը կը բերէք: Զորբորդը Տիկին տը Լիւսիլ փութով կարդաց:

—Հիմու ալ, պարո՞ն, ձեր որդին Լոնտոն հասեր է և անկէ կը գրէ:

«Ժան մեկնած է. կառախումբ կը նստիմ»:

—Բնականարար. քանի որ կինը Լոնտոն չէ, ինք ալ կառախումբ կը նստի ետեւէն երթալու համար:

—Ձեր պատճառաբանութիւններէն բան չեմ հասկընալ. պարո՞ն: Իմ գիտցածս մեր զաւակները իրարմէ բամենուած են: Կասթօն Քաթամ իջած է. սակայն ըրածին վրայ խպնելով ուզած է նորէն աղջկանու հետ հաշտուիլ և կառախումբ նստելով անոր ետեւէն Լոնտոն զացած է: Ժան հպարտ է, աղէկ գիտեմ, իր արհամարհանքը ցոյց տալու համար կասթօնի, Լոնտոնէ մեկնած է... Այս... անանկ բարեկիրթ երեցող երիտասարդէ մը ասանկ բան ա'լ կը յուսացուէ՞ր...:

Այս ողբ ու կոծը ընդմիջուեցաւ նոր հեռագիրով մը: Կասթօնի հայրն և Ժանի մայրը միասին կարդացին. և երկուքն ալ « հէ » մը արձակեցին:

Այս անդամ լուր տուողը ժանն էր, « Ողջ առողջ Քէնթըրպըրի հասայ, պարոն Հէրվարը գտայ, անհոգ եղիք »:

Կարգը տիկին տը Լիւսիլի եկաւ շփոթելու և պարոն Վէթէօյլ ձայնը բարձրացուց:

—Աս ի՞նչ ըսել է: Ձեր աղջիկը Քաթամ կը թողու որդիս, և երբ ան Լոնտոն կ'երթայ, նէ գէպէ Քէնթըրպըրի կը փախչի, քաղաք մը որ իրենց ճամբորդութեան ծրագրին մէջ չկար, և հոն կը զանէ պարոն Հէրվար մը: բայց նախ հարցնեմ թէ՝ ո՞վ է Հէրվարը. կը ճանչնա՞ք զինքը:

—Շատ մոերմօրէն. Սիրուն տղայ մըն է, խիստ լաւ ընտանիքէ: Կը զարմանայի որ ինչպէ՞ս կ'ըլլայ աղջիկս ամուսնութեան չուզեր:

— Գէշ չէ՛, շիտակը խօսելով՝ Զեր աղջիկը՝ իր ամուսնը կէս ճամբան ձգելով՝ կ'երթայ նախկին թեկնածու մը կը գտնէ՛ :

— Կը կարծէ՞ք, պարոն, թէ... :

— Զեմ կարծեր, ապահով եմ: Դուք բացատրութիւն մը տալու էք:

— Աւա՛զ, պարոն, ի՞նչ կ'ուզէ՞ք որ ըսեմ. քանի որ կը տեսնէք թէ՛ բան մը չեմ հասկնար:

Այս պահուն վեցերորդ հեռագիր մը հասաւ Լոնտոնէն քաշուած ժամի ստորագրութեամբ. « Հեռագրով քսան հազար ֆրանք զրկեցէ՞ք Լոնտոնի ընդհանուր դատախազին՝ իրը երաշխաւորութիւն»:

Կասկած չկար թէ՛ տուամ մը տեղի ունեցած էր: Ոստիկանութիւնը միջամտած էր: Ժան և Կասթօն ձերբակալուած էին և ազատ արձակուելու համար գրամական երաշխաւորութիւն կ'ուզէին: Ի՞նչ ըսել, ի՞նչ ընել. ամուսնութենէ երկու օր ետքը ասանկ խայտառակութիւն մը:

Զարիքը պատահած էր. ազատուելէ զատ ուրիշ բան չկար ընելիք. երկու ծնողքները զատուեցան իրարմէ:

* * *

Ամբողջ գիշերը, տիկին տը Լիւսիլ չկրցաւ աչքը գոցել: Առոտուան դէմ քիչ մը թմրութիւն եկաւ ու քնացաւ: Բաւական ուշ էր՝ երբ արթնցաւ Նամակները աչքէ անցնելու վրայ էր երբ Անգլ: Դատական նախարարութեան վերնատառերով խոշոր պահարան մը ձեռքին եկաւ: Հասցէին գիրը ժամի գիրն էր: Շուտով պատուեց զայն ու կարդաց:

«Աիրելի մայր իմ,

«Յուսամ թէ գոհ մնացիք ձեր զաւակներէն, որոնք

իրենց խոստումը բռնեցին, ամէն մէկ կայարանէ ձեզի հեռագրելով:

«Այսպէսով տեղեակ եղաք մեր յուզումնալից ճամբորդութեան: Ո՞հ, ի՞նչ յուզումնալից:

«Երբ Քաթամ հասանք. տեսայ որ կայարանին դուրսը սքանչելի վարդեր կը ծախեն: Ամուսինս անմիջապէս վակրնէն դուրս նետուեցաւ անոնցմէ գնելու համար, բայց կառախումբը չպիտի սպասեր այդ կայարանին մէջ, երբ ուղեւորները իջան՝ պաշտօնեաները սուլեցին և ճամբայ ելանք: Կասթօն թէ՛ ուզեց կառախումբին վրայ ցատկել, բայց չլուզուցին:

«Երբ Լոնտոն հասայ մինակս, մտածեցի ի՞նչ ընելու է: Անչուշտ սպասելու էի որ յաջորդ կառախումբով ամուսինս գայ: Բայց զարմանալի գաղափար մը արթնցաւ մտքիս մէջ, եթէ ես Քաթամ երթայի՝ Կասթոնը գիմաւորելու, շատ սիրուն բան մը պիտի ըլլար: Անմիջապէս տոմսակ մը առի և վակոն մտայ: Կառախումբը ճամբայ ելաւ: Բայց... Քաթամ կանդ չպիտի առնէ եղեր: Ստիպուեցայ Քէնթը ըրպիրի իջնել, բաւական շփոթեր էի, ինչ ընելիքս չէի գիտեր: Երբ լաւ հագուած պարոն մը մօտեցաւ ինծի: Երեւակայցէ՛ք թէ՛ ո՞վ էր: Պարոն Հէրվարը...: Գտնուած կացութիւնս բացատրեցի իրեն և ինքզինքը իմ տրամադրութեանս տակ դրաւ: Նորէն կառախումբ նըստանք Լոնտոն դառնալու համար: Ճամբան շատ մը խօսակցեցանք միասին մեր ճանօթներուն վրայ:

«Կառախումբը կանգ առաւ: Քաթամ: Յանկարծ դռնակը ուժգին բացուեցաւ և կասթօն ներս խուժելով պարոն Հէրվարի օձիքէն բռնեց, «Թշուառական» գոչելով: Հէրվար ինքզինքը պաշտպանեց: Նայիս բազմութիւնը խոնուեցաւ «Ամուսինս է» գո-

չեցի : Կասթոն՝ օտարական մը աեսնելով քովս՝
գլուխը կորսնցուցեր էր .

«Սոմիկա շատ լաւ նշան է, և ես խիստ գոհ մնացի :
«Մինակ, հասարակութեան առջեւ խայտառակու-
թիւն մը տեղի ունեցած էր, և Անգլիացիները այս
մասին չեն կատակեր բնաւ : Մեզի պահականոց տա-
րին ձամբան պարոն Հէրվարը ներկայացուցի : Հիմա
եթէ դրա ժական երաշխաւորութիւն մը տանք, աղատ
պիտի ըլլանք ճամբորդութիւննիս շարունակելու :

«Միրելի մայրա, արդեօք որչափ զուարճացաք
այս արկածովս : Իրաւ որ ես շատ գոհ եմ սովորա-
կան ճամբորդութիւն մը չըրած ըլլալուս համար : Մի-
րուն չէ՞ միթէ ամուսինը կորսնցնել, անոր ևտեւէն
երթալ երր անիկու քու ետեւէդ կուգայ և ծեծ-
կուուքի մը մէջ իրար գտնել, մեկնելէ առաջ դատա-
ւորին ներկայանալ . թող չըսեն թէ միօրինակ ճամ-
բորդութիւն մը ըրի : Իմ պղտիկ բարեկամուհիներս
եթէ արկածու լսեն նախանձնուն պիտի ճաթին : »

Թրգմ. Զ. Ն. Պ.



ՆՅԱՆ Վ. ՌԵՐՈՒԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ ՏՊԱԳՐԻՉ-ԼՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. Պոլիս, Պապը Ալի Ճատկախ, Իգտամ լրագրին դէմ

ԹԻՒ Յ Յ



ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Տիկին Ք. ի ուսերը այնքան գեղեցիկ են որ նէ
բնաւ չվարանիր ծայրայեղ տէգօլրի զրջազգեստներ
կրել : Դրամատէր մը, անցեալ օր, նէրա սեղանակից
ըլլալով՝ քովը նստած էր :

Յաջորդ օրը, դրամատէրին բարեկամներէն մին
հարցուց թէ չքնաղ բարեկամուհին ի՞նչ հագուստ կը
կրէր :

— Իրաւ որ չեմ գիտեր, պատասխանեց, հագուստը
սեղանին տակէն կ'սկզէր :

Նշանաւոր վիրաբոյժը հմբակում, հիւանդի մը
վրայ վիրաբուժական գործողութիւններ կը կատարէր
ի ներկայութեան խումբ մը ուսանողներու : Հիւանդը
ցաւէն՝ սոսկալի աղաղակներ կ'արձակէր :

— Լոէ՛, կը հրամայէ Ամբակում, ճայնս ըլսուիր
կոր

Խիկար ութը տարեկան շատակեր տղայ մըն է :
Օր մը, ճաշը լմնալէն ետքը աղուոր կարկանդակ մը
կը բերեն սեղանին վրայ :

— Ես ալ կ'ուզեմ, կ'ըսէ Խիկար :
— Դուն ալ կտացար, տղաս, կը պատասխանէ
մայրը :

— Զէ՛, մայրիկ, եթէ ստքի կենամ, ստամոքսիս
մէջ նոր տեղ կը բացուի :

Շատ պարտք ունեցող մը, որ տասը տարի դրամ
մը խկ չէր գճարած պարտատէրներուն, կը մեռնի :

— Հոգին տուաւ, կ'ըսէ մէկը;
— Հասլա ինք ողջութեանը երդում ըրած էր որ
բան մը չտուած պիտի մեռնի:

Պարոն մը զուարձանալու համար ձուկ կ'որսայ և
երեք ժամուան մէջ բան մըն ալ չռռներ, Պարապորդ
մը որ սկիզբէն ի վեր զայն կը դիտէր, յօրանջելով
կ'ըսէ ինքնիրեն՝ բարձր ձայնով.

— Օ՛ւֆ, ձուկ բռնելէն աւելի ի՞նչ ապուշ բան
կայ:

Անճարակ ձկնորսը կ'իմանայ ասիկա;
— Չուկ բռնողները դիտել, կը պատասխանէ:

Ամբակում ձեռքը սքանչելի քամէլիս մը ունի
զոր տիկինի մը կը ցուցնէ:

— Զարմանալի բան, կ'ըսէ նէ, սխտոր կը հոտի
կոր:

— Ո՛չ, կ'ըսէ Ամբակում կամաց մը, սխտոր հո-
տողը ես եմ:

Անգլիոյ դատարաններուն մէջ, ամբաստանեալ
կողմը իրաւունք ունի ուզած հարցումը ընել վկանե-
ներուն: Անգամ մը թունաւորումի վրայ կը դառնար
խնդիրը: Քիմիագէտ մը, որ թունաւորուած մարդուն
աղիքները տարբալուծած էր, իր վկայութիւնը տա-
լու կը պատրաստուէր, երբ պաշտպան փաստարանը
ոտք ելաւ և հրաման խնդրելէ ետքը հարցուց գի-
տունին:

— Կրնաք արդեօք ըսել թէ աղատքեղը (մայ-
տանօս) ի՞նչպէս կը տնկեն:

Վկան համր կը մնայ, առանց պատասխանելու:
— Ի՞նչ է լուսինին ազդեցութիւնը բուսաբերու-
թեան վրայ, կը կրկնէ փաստարանը,
Քիմիագէտ վկան ապշտ զարմացած երեսը կը
նայի:

— Տեարք երդուեալք, կը գոչէ անմիջապէս
փաստարանը, ի՞նչպէս կ'ուզէք հաւատ ընծայել մէ-
կու մը որ գիտութեան մէջ այսքան խակ է... գուք
ալ տեսաք:

Թաղական խորհուրդը կը կանչէ դպրոցին անօ-
րէնը ու կը հարցնէ խստիւ:

— Ինչու Բ...եան ուսուցիչը չէք ճամբեր:

— Ի՞նչ պակասութիւն կը տեսնէք վրան:

— Եհ... յարդի պէս մարդ է, . . . պաշտ նին
անյարմար:

— Յարդէ ըլլալուն համար ուտե՞լ կ'ուզէք կ'որ:

Ամբակումի ականջը կը հասնի թէ իր տուած
հացկերոյթներու միջոցին՝ քանի մը հրաւիրեալներ
իր կնոջը հնտ ծունդի կը սեղմեն: Ասոր ա-
ռաջքը առնելու համար կ'ստիպէ կինը որ ելեքտրա-
կան զանգակին կոճակը ծունդին վրայ գնէ:

Ամէն անգամ որ զանգակը կը զարնուի Ամբակում
մտքէն կ'ըսէ:

— Սա մարդն ալ հրաւիրելու չէ այլեւս:

Հինգ տարեկան աղջիկ մը իր մօրը:

— Մայրի'կ, դուն ստախօս ես:

— Զէ՛, զաւակ:


— Հապա հայրի՞կը ;
 — Ան ալ չէ' ;
 — Ե՛հ , հապա երբեմն դուք բան մը ըստծ ա-
 տեննիդ հայրիկը հակառակը կ'ըսէ .
 — Յ. Յ. Յ. Յ. Յ.

— Իրա՞ւ , այդ երիտասարդ Ք . . . ի ընկեր կ'ըլ-
 լաս կոր :

— Հապա' :

— Դուն շատ դրամ պիտի զնե՞ս .

— Ո՛հ , ո՛չ , ես իմ փորձառութիւնս կը բերեմ
 իսկ Ք . . . դրամագլուխը կը հայթայթէ , ընկերա-
 կցութիւնը Յ տարի պիտի տեւէ , այդ ատեն Ք . . .
 իմ փորձառութիւնս կ'ունենայ , իսկ ես՝ անոր դրա-
 մագլուխը .



ՀԱԶԱՐ ՈՒ ՄԷԿ ԿԵՐՊԵՐ ԺԱՄԸ ԳԻՏՆԱԼՈՒ

Շիտակն ըսելով՝ ապերախտ եղած ենք մեր դա-
 րու հանդէպ : Միշա կը գանգատինք քաղաքակիրթ
 կեանքին մեզ տուած ճանձրոյթներուն համար , և
 բնաւ չնորհակալ չենք բլլար որ մեզի ազատ կը պահէ
 այն նեղութիւններէն զորս մենէ առաջ մարդկու-
 թիւնը ստիպուած էր կրելու : Մենէ ո՞վ ժամացոյցը
 նայած ժամանակ խորհուծ է թէ՝ այդ փոքրիկ . օգ-
 տակար ու հասարակ առարկան ի՞նչ աշխատութիւն ,
 ի՞նչ յառաջդիմութիւն կը ներկայացնէ : Ատոր վար-
 ժուած ենք և ժամը չգիտցող այնչափ քիչ մարդ
 տեսած ենք որ՝ յառաջդիմութեան վրայ վայրկեան


մը իսկ չենք մտածեր . ժամը գիտնալը մեզի հա-
 մար սրունք ունենալու պէս բան մ'է : Կարծես թէ
 մարդս գրպանը ժամացոյցով մը ծնած է : «Քաղ-
 դէացի հովիւը՝ կ'ըսէ պարոն Տասդըր , հարկադրուած
 էր լուսաւորներու ընթացքին հետեւիլ երկնակամա-
 րին վրայ . արդի մարդը հետը կը պտտցնէ , ամէն
 տեղ և ամէն ժամանակ , տեւողութիւնները չափող
 գործիքը , ու իր աշքը միշտ կը գիտէ անխոնջ ասեղ-
 ներուն ընթացքը՝ աստիճանաւոր շրջացուցակին
 վրայ : Ներելի է ըսել թէ՝ արեգակնային ժամացոյցի ,
 ջուրի , պատի ու գրպանի ժամացոյցներու գիւտերը՝
 մէյմէկ հանգրուան կը նշանակեն ընկերային կեանքի
 զարգացումին մէջ : Աստեղագէտներն իսկ ժամանա-
 կին պզտիկ տեւողութիւնները չէին կրնար ճշդել :
 Պաղոմէսի ըրած բոլոր զննութիւններուն մէջ ճշդու-
 թեան մերձակէտը մէկ քառորդ ժամէ պակաս չէ :
 Այսօր ընդհանուր կերպով , վայրկեանով կը հաշուենք ,
 շատ պարագաներու մէջ երկվայրկեանով իսկ» : Բայց
 այս կէտին հասնելու համար քանի մը հազար տարի-
 ներ պէտք եղած են : Ամէն միջոց գործածուած է
 ժամանակի բաժանումը որոշելու համար :

Նախ արեւը առած են ժամը հաշուելու համար :
 Երր գետինը՝ արեւուն մէջ գաւազան մը տնկէք՝ չուք
 մը կը թողու , քանի օրը յառաջանայ՝ չուքը տեղ կը
 փոխէ . գաւաղանին չուքը կը դաւնայ . ահա այս է
 արեգակնային ժամացոյցի դրութիւնը . ասի կրնայ
 ըլլալ մակարդակային , կոնական կամ գունտի ձեւով ,
 զլիսաւոր կէտն է լաւ ուղղուած գաւազան մը և մա-
 գլխաւոր կէտն է լաւ ուղղուած գաւազան մը և մա-
 գլիսաւոյթ մը՝ նմանապէս պէտք եղած դիրքով՝ որու
 կերեւոյթ մը՝ նմանապէս պէտք եղած դիրքով՝ որու
 վրայ կ'իյնայ արեւուն չուքը : Եթէ մակերեւոյթին
 վրայ օրուան բաժանումներուն համարը կրող գիծեր
 նշանակուին , գաւազանին չուքը անոնց վրայէն

անցնելով՝ կը ցուցնեն ժամերը ըստ ինքեան։ Մարդոց ամէնէն հին գիւտը՝ արեգակնային ժամացոյցը՝ ամէնէն ճիշտ ժամը կը ցուցնէ, քանի որ արեւը ինքնին կը նշանակէ զանոնք՝ և ո՞չ ոք անկէ աւելի լաւ կրնայ զիտնալ ժամը քանին ըլլալը։ Ետ մնալէն կամ առաջ երթալէն ա՛լ չվախցուիր և ամէն ժամացոյցներէ ալ աժան է։ միայն վայրկեանի կամ երկվայրկեանի ճշդութիւնը չկրնար տալ։ Պէտքնի հովիւները՝ որոնք մինչեւ ցայսօր գլանաձեւ փայտէ արեգակ-



Աւազէ ժամացոյց



Արեգակնային ժամացոյց

նային ժամացոյցներ կը գործածեն՝ կրնան անով ալ գոհ ըլլալ, քանի որ զիտնալի քնին սա է թէ՝ ե՞րբ կենդանիները դուրս հանելու կամ հաւաքելու է։ Բայց այսօր կառախումբերու ժամանումին ու մեկնումին համար՝ արեգակնային ժամացոյցի մը ճգած շուքը չպիտի բաւեր կայարանապետին, մանաւանդ որ այս ժամացոյցը քալելու համար արեւ պէտք է։ Արև չեղած ատեն ժամը գիտնալու համար ուրիշ միջոց մը խորհեցան։

* * *

Զուրին երկարատեւ ու միօրինակ անկումը հիմքոնեցին ժամերը որոշելու համար։ Քրիստոսի ծննդենէն ի վեր ջուրի ժամացոյցներուն ամէնէն նշանաւորը՝ Հարուն-էլ-Ռաշիտի նուիրածն է Մեծն կարլոսի՝ յատուկ դեսպանի մը միջոցաւ։ Այս սքանչելիքը շին-

ուած էր ոսկի դրուագեալ անագապղինձէ, ժամերը շրջացուցակի մը վրայ կը նշանակուէին։ Ամէն անգամ որ ժամը լրանար՝ երկաթէ գնդիկներ՝ զանգակի մը վրայ իյնալով՝ ասեղին ցուցուցած ժամուն չափ կը հնչեցնէին։ Կէս օրին, տասներկու ծիաւորներ դուրս կ'ելէին՝ տասերկու պատուհաններէ։ Ամբողջ գործիքը ջրով կը բանէր։ Ասկէ շատ առաջ եւրոպայի մէջ, և ուրիշ երկիրներ, նախկին ժողովրդոց մէջ, ջրէ ժամացոյցը ժանօթ էր։ Զինացիք՝ Քրիստոսէ 2679 տարի առաջ կը գործածէին զայն։ Հնդկաստանի մէջ զարմանալի կերպ մը կար ժամը գիտնալու։ Ջրով լեցուն ամանի մը մէջ կը դնէին տակէն պզտիկ մը ծակուած նաւալի մը, ջուրը կամաց կամաց ներս կը մտնէր և նաւակը աստիճանաբար ընկղմելով՝ մէկէն ի մէկ յատակը կը գլորէր. այս նաւարեկութեան տեւողութիւնը միշտ միեւնոյնը կ'ըլլար։ Հին ջրային ժամացոյցները խիստ պարզ էին. երկու ամաններ՝ մին միւսին վրայ գրուած. վրայի ամանը՝ որ ջրով լեցուն կ'ըլլար՝ յատակէն ծակ մը ունէր, ուրիշ կը կաթկելէր ջուրը տակի ամանին մէջ։ Արդի ջրային ժամացոյցն աւելի կատարելագործեալ է։ կը բաղկանայ փայտէ բարձր շրջանակէ մը, վերի կողմը հաստատուած են երկու թելեր որոնց միւս ծայրերը պզտիկ թմբուկի մը առանցքին փաթթուած են. թըմբուկին մէջը շառաւղաձեւ սենեակներու բաժնուած է՝ որ ջուրը կը բռնեն։ Երբ թելերը ամբողջովին փաթթուած են առանցքին շուրջը՝ թմբուկը կը գըտնուի շրջանակին վերը՝ նման կախուած վարագոյրի մը (սրոց)։ Այս դիրքին մէջ թմբուկը կը ճգտի վարի իննել՝ թելերը քակելով։ Բայց եթէ սենեակներէն մէկուն մէջ ջուր դնենք, թմբուկը ինքն իր վրայ դառնալով իքակուելու ժամանակ անանկ դիրք մը

պիտի առնէ՝ որ ջրով լի սենեակը՝ փաթթուած թելին կռնակի կողմը քալով՝ մնացեալ պարապ սենեակնելուն ծանրութեան դէմ դնելով՝ հաւասարակութիւն մը պիտի հաստատէ և թմբուկը անշարժ պիտի մնայ չի կրնալով քակուիլ Արդ՝ եթէ սենեակները բաժնող երեսներուն վրայ մէկ մէկ ծակեր բանանք ջուրը ծանր ծանր անցնելով՝ թմբուկի դառնալուն դէմ դնող ոյժին մէկ մասը պիտի նուազի՝ որով այս վերջինը գանդաղօրէն պիտի իջնէ: Այս էջքին տեւողութիւնը ճանչնալով, դիւրին է շրջանակին վրայ ժամերը նշանակող աստիճան մը դնել: Ահա՛, ջրով ժամանակ գիտնալու միջոց մը: Սկզբունքը պահելով՝ կարելի է զատ միջոցներ յարմարցնել: Եյրող գաւաղան մը, հոսուն ջուր մը, թափող աւազը, քաղուող զապանակ մը՝ կրնան միեւնոյն նպատակին ծառայել: Միջին դարու մէջ կը գործածէին՝ ջուրի տեղ սև մարմարի նուրբ աւազ. զոր գինիի մէջ կայրէին, կը չորցնէին և ինն անգամ կը կրկնէին այս գործողութիւնը: Կը դնէին այս աւազը երկու ապակիէ ձագարածեւ գունտերու մէջ՝ մին միւսին վրայ հազորդակից փոքր ծակի մը միջոցաւ: Մէկ ժամ կը տեւէր առաջին վերի ամանէն վարինին մէջ աւազին հոսին, ուրիէ ետքը գործիքը վերիվայը կը դարձնէին: Էին ատեներ զօրանոցներու մէջ կը գործածուէր պահակներուն փոփոխութիւնը ծանուցանելու համար:

* * *

Զինացիք գործածած են առաջին անգամ կրակն իր միջոց ժամանակը չափելու: Տեսակ մը փայտ կը խարտոցէին ու կը ծեծէին և իւզոտ ու խժային նիւթերու հետ խառնելով գաւաղանիկներու ձեւ կուտային: Հարուստներու և մանտարիններու գոր-

ծածութեան համար կը պատրաստէին խիստ յարգի անուշահոտ փայտեր: Այս գաւաղանիկները գրշի մը հաստութիւն ունէին, եւ երկայնութիւննին՝ փայտի ազնուութեան համեմատ՝ մատի մը չափէն մինչեւ 1—2 մէթրի կը հասնէին: Ասոնք կրատուններու տաջեւ կը վառեն: Այս գաւաղանները այրելով լոյս չեն տար բնաւ, այլ միայն ժամը ցուցնելու համար կը գործածէն: Զինացիք, արթնցող ժամացոյցի տեղալ կը գործածէին հետեւեալ միջոցը, օրինակի համար, երբ կ'ուզէր գիշերը որ և է ժամուն արթննալ գործի մը պատճառաւ, պառկելէ առաջ կը վառէր իր գաւաղան-ժամացոյցն և ծիչտ այն կէտն՝ ուր կրակը պիտի հասնէր իր ուղած ժամուն, փոքր ծանրութիւն մը կը կախէր: Ճիշտ ատենին ծանրութիւնը կ'իջնար և հանած աղմուկը բաւական կ'ըլլար քնացող չինացին արթնցնելու: Ֆրանսայի մէջ, Ս. Լուի և Շարլ Ե. ժամը գիտնալու համար աստիճանաւորեալ մոմեր կը գործածէին: Գիշերային իւղի ճրագներն ալ (իսարէ Ֆիբիլի) կրնան իր ժամացոյց ժառայել:

Իւղին վրայ կը ծփայ սունկի կտոր մը՝ որ թելով մը՝ ժամերը ցուցնող շրջացուցակի մը վրայ դարձող առեղի մը հետ կապուած է, իւղը վառելով կ'սպառի, սունկը կ'իջնայ և ասեղը կը դառնայ ցուցակին վրայ, որուն առջեւ իսկ վառելով պատրոյգը՝ գիշեր ատեն կարելի է ժամերը տեսնել:

Արեգակի, ջրային և հուրէ ժամացոյցները տչքէ անցնելէ ետքը, կը հասնինք մարմնոյ ծանրութեամբ շարժող գործիններուն: Մեքենագիտութիւնը՝ պարզ բնական գիտութեան տեղը կ'անցնի. խոշոր ժամացոյցը կը հնարուի. թէկ գիւտը Ժ. դարուն կը վերաբերէն՝ սակայն ԺԴ. դարէն առաջ ժամացոյց տեսնուած չէ (ժամացոյցին մեր տուած իմաստով): Անկէ

ի վեր եղած կատարելագործութիւնները ոչ թէ միայն զայն աւելի օգտակար ընելու նպատակաւ էին, այլ և զուարձալի ու հետաքրքրաշարժ դարձնելու: Ժամերը նշանակող ասեղներուն միացած էին ուրիշներ, որոնք օրերը, շարաթներն, ամիսներն, լուսնոյ երեւոյթները, կենդանակերպերու նշանները ցուցնելու և ասոնց նման հաղարումէկ բաներ ցուցնելու կը ծառայէին:

Միջին դարու մէջ ամէնէն նշանաւոր, ամէնէն բաղադրեալ ժամացոյցն էր Սթրազպուրի մայր եկեղեցւոյնը: Ասոր շնութիւնը սկսած է 1352ին և լրացած է 1842ին: Հինգ հարիւր տարի ժամացոյց մը շինելու համար՝ քիչ մը երկար կ'երեւի, բայց սա ալ կայ որ ժամացոյցը երեք անգամ նորէն շինուեցաւ: Չորս պատկերներ՝ որոնք կեանքի չորս տարիքները կը ներկայացնեն՝ կուգան իրարու ետեւէ քառորդ ժամերը զարնելու: Առաջին քառորդին տղայ մը կը զարնէ ոսկորէ օղակով մը, կէս ժամին երիտասարդ մը՝ որսորդի հագուստով՝ կուգայ զարնել ձեռքը բըռնած նիզակով, երեք քառորդին՝ հարուածը՝ կուտայ մարտիկ մը՝ իր սուրով: չորրորդ քառորդին հարուածը կուտայ ծերունի մը՝ իր անթացուպով: Երբ այս վերջինը ետ կը քաշուի, մահը կուգայ և ոսկորով մը ժամը կը զարնէ: Վերեւը կը գտնուի Քրիստոսի պատկեր մը, երբ մահը կէս օր կը զարնէ, տասերկու առաքեալները կ'անցնին իրենց Տիրոջ ոտքին առջեւէն և գլխով կը բարեւեն: այն ատեն Քրիստոս կը խաչակնքէ: Առաքեալներն անցնելու միջոցին՝ աշտարակին գագաթը թառած աքաղաղը թեւերը կը թօթուէ, վիզը կը շտկէ և երեք անգամ կ'երգէ:

Միջին դարու քաղաքացիք, անոնք՝ որոնց քաղաքը զարդարուած էր ժամացոյցով մը, այնքան

նախանձախնդիր էին ատոր վրայ՝ որ ամէն միջոց ի գործ կը դնէին զայն շինող վարպետն արգիլելու համար ուրիշ նման մալ շինելէ: ԺԶ. զարուն՝ ժամագործ Քլավէ ողջ ողջ այրուեցաւ: նոյնպէս Սիրինս՝ որ 1598ին կիոնի ժամացոյցը շինած էր: Միջին դարէն ետքը՝ ինքնաշարժ արձանիկներով ու պատկերներով զուարձանալու տեղ՝ գիտական կատարելագործումներով զայն աւելի ճշդել ջանացին և երբ ճօճանակի օրէնքները հնարուեցան ու ճանչցուեցան՝ ժամացոյցին յարմարցնելով զայնս, կանոնաւորիչը հնարեցին: Սոյն միջոցաւ ստացան երկվայրկեանը: Հազարումէկ մեքենաներ երեւակայեցին, որոց ամէնէն հետաքրքրաշարժներէն մին հետեւեալն է: Հին ազնուական ընտանիքի մը անդամներէն մին ունէր անագէ սկավառակ մը՝ որու եղերքներուն վրայ փորուած էին ժամերը: Չուր լեցնելով մէջը կը դնէին կրիայ մը, որ դառնալով քիթն կը ներկայէր այդ միջոցին ժամուն համապատասխան թուանշանին վրայ: Եթէ զայն շեղէին՝ անմիջապէս առջի դիրքը կ'առնէր կը ըկին: Եթէ հանդարտ ձգէին, կրիան դառնալով՝ օրուան տասներկու ժամերը կը ցուցունէր ճշդիւ: Ասոր բացարութիւնը շատ դիւրին է: Ժամացոյցը ծածկուած է առուփի մը մէջ, որու վրայ դրուած է անագէ պնակը, ասեղը զօրաւոր մագնէտ մըն է հիւմիսային և հարաւային բեւեռներով: Կրիային մարմնոյն տակ ալ կը գտնուի ուրիշ մագնէտ մը՝ որ ունի երկու բեւեռները, արդ ասեղը հաստատուած ըլլալով, կրիային մարմնոյն մէջ զտնուող մագնէտը անոր համապատասխան դիրքը մը կ'առնէ որ միշտ միեւնոյն է մէկ ժամի համար, քանի՛ ժամացոյցին ասեղը դառնայ, կրիան ալ՝ իր մէջը գտնուած մագնէտին հետ դառնալով՝ դիրքը կը փոխէ և յաջորդական ժամերը կը

ցուցնէ՝ քիթը դէպի ի անոնց երկնցնելով։ ԺԼ. դարուն մէջ՝ Քաֆիէրի, հնարած էր ժամացոյցը որ երեք տարի մը կը բանէր առանց լարուելու պէտք ունենալու։ Այս ժամացոյցներէն չատերը գեղարուեստի հրաշալիքներ են։ Ամէնէն նշանաւորն է Երևել Շնորհինքը, մարմարիոնէ քանդակուած, անուանի Շալքօնէի ձեռամբ։ Լուի ԺԵ.Ի ժամանակ։ Ժամերը նշանակուած են հորիզոնական դարձող գլանի մը վրայ և շնորհքներէն միոյն մատն՝ անշարժ կը ցուցնէ ժամը՝ գլանին վրայ։ Այս ժամացոյցին արմէքը իրը գեղարուեստական գործ՝ խիստ մեծ է, տէրը զայն ցուցադրած էր 1900ի արուեստահանդէսին, ուր տեսնողներէն մին հիասքանչ մէկուկէս միլիոն ֆրանք տալ առաջարկեց անոր փոխարէն, բայց մերժուեցաւ։ 1797ին անգլիական կառավարութիւնը դրամի պէտք ունենալով՝ ժամացոյցներու վրայ տուրք մը դրաւ։ Պատի ժամացոյցները, տարին 30 դրշ. կը վճարէին, զըսպանի ոսկիէ ժամացոյցները 60 դրշ.։ Ասով՝ ժամացոյցը Անգլիոյ մէջ իրը պերճանքի առարկայ միայն գործած ուեցաւ։

Դրպանի ժամացոյցներուն գիւտը բաւական հին է։ Շարլ Ե.Ի ժամանակ է որ պողպատէ երիզ (Forskål) շղթայ մը ինքն իր վրայ փաթթուելու գաղափարն ունեցան։ Այն երիզը քակուելով՝ անիւները կը դարցնէ։ Սոյն զսպանակը քիչ տեղ բռնելով՝ ամէն ջանք ի գործ դրուեցաւ կարելի եղածին չափ փոքր ժամացոյցներ չինելու։ Ազարանջաններու, ազամանդեայ զարդերու, հովանոցի կոթերու, և մատնիի մը վրայ ժամացոյց զետեղելու գաղափարը նոր բան մը չէ։ Ժ.Զ. դարէն ի վեր ատոնք ճանչցուած էին։ ԺԼ. դարուն՝ ամէն ազամանդեայ զարդ՝ ժամը կը ցուցնէր։

Այսօր, ժամացոյցները այսքան ընդհանուր են որ ամենաչնչին գումարի մը փոխարէն կ'ստանաք գործիք մը՝ որ մեծն կարլոսի ջրային ժամացոյցէն շատ աւելի ճիշտ կը ցուցնէ ժամը։

Թարգմ.

Զ. Ն. ՊէրՊէրելն



Ժ Ս Ս. Ն. Փ Ս. Ռ Ս. Յ Ո Վ.

Ա Ծ Խ Ա Բ Հ Կ Ւ Բ Բ Ո Լ Ո Ր Ո Ս Կ Ի Ն

Քրիստոսի թուականին, այսինքն ասկէ 20 դար առաջ, տղու մը պէս զուարճանալով, 20 փարա, երկու տասնոց տարի Յոթ եւ Մարտսական դրամատան պահ տուի, բաղադրեալ տոկոսով։ Եւ հպարտ մէկու մը պէս որ միլիոններ աւանդ կը ճգէ զրամատուն մը, գործիս զացի։

Հիմա որ քսան դարեր անցան, եւ ես գործերէս քաշուեցայ, կուզեմ ունեցած չունեցածս հաշուել.

Հաշիւներս կանգ կ'առնեն 1895ին։ Անկէց ի վեր իմ
հարստութիւնս հարիւրին 5 տոկոսով գրեթէ 1/5ը ա-
ւելցած է, բայց ի՞նչ հոգս է հարիւր, միլիոն, եռիլի-
ոնները, ի՞նչ կ'ըլլայ երր միլիոն մը վակոններով՝ ոս-
կիէս մաս մը ինձի բերող քանի մը կառախումքեր
ճամբան կորսութիւնն այնքան անհաշ-
ուելի է որ պանքային դիմելով չեմ կրնար ունեցածս
պահանջել, որովհետեւ բառ մը չկայ գեռ այդ քանա-
կութիւնը չափող, քառիլիոնները, ութիլիոններ՝ բո-
լորովին անբաւական են։

Եւ ես Յորի պէս աղքատ եմ:

X

Հսել է Քրիստոսի թուականին առաջին տարին 20 փարա արժողութեամբ դրամ մը տարի դրամատուն մը ճգեցի, հարիւրին 5 բաղադրեալ տոկոսով։

Հարիւր տարի ետքը, երբ յաղթական թրաժան՝
Դանուբէն կանցնէր, իմ քսան փարաներս՝ 60 զրուշի
մօտ բան մը յառաջ բերած էին։ Երկու հարիւր տարի
ետքը տուն մը կրնայի գնել՝ ունեցածս 100 ոսկիի
մօտ բան մըն էր։ Երեք հարիւր թուականին աղւոր
գղեակ մը, պարտէզ մը, ախոռ մը կրնամ ունենալ.
12 հազար ոսկիի տէր եմ։ Զորս հարիւր տարիէն՝ մէկ
ուկէս միյիոն ունիմ։

Ոսկին՝ իր զաւակները չուտերը, բայց իր զաւակներն ոսկին կը խեղդեն, Ոսկին ու ժամանակին ծայրն ոչնչութիւն է:

Ութն հարիւր թուականին, երբ Շարլմայն, Արե-
մուտքի թագաւոր կը հռչակուէր, իմ դրամարկղնե-
րուս մէջ 470,000,000,000,000 ոսկի կար : Եւ հազարե-
բորդ թուականին Յոթ եւ Մարուսաղայ դրամատունը

ինծի պարտական էր 8,000,000,000,000,000,000 սոկի:

Ա՛լ յոյսս կտրեցի որ պանքէոս իր պարտքը ետ
կուտայ ինծի, որովհետեւ ամբողջ աշխարհս (Երկ-
րագունան ամբողջ) սոկիի զանգուած մը ըլլալու էր
որ կարենար իմ պահանջքիս փոխարժէքը հաւասա-
րակչուէր :

Հապա՛, հազար հինգ հարիւր թուականին, երբ
Քոլոմպոս Ամերիկան կը գտնէր, ես կարող էի Ամե-
րիկան ալ, անոր բնակիչներն ալ, Քոլոմպոսն ալ ծա-
խուռ առնել իմ պանքան զրած 20 փարայօվս՝ որ այն
ատեն 300,000,000,000,000,000,000,000,000,000,000,000,000,000,000
ոսկիի
կը հասնէր, Այն ժամանակ 50 հատ արեւներու ծան-
րութիւնը հաղիւ հազ իմ ոսկիներուս ծանրութիւնը
պիտի ներկայացնէր: Եւ եթէ ուզէի, շրջակայ մոլո-
րակներն երկրիս միացնող ոսկիէ կամուրջներ պիտի
կրնայի ձգել: Ես այս թիւր չեմ կրնալ ըլքոնել, մա-
թեմաթիկոսներն ալ զայն հասկնալու համար հաշիւներ
կը ցուցնեն, բայց իրենք ալ խելք չեն կրնալ հաս-
ցընել:

ԱՌ հաշիւնիս զաղրեցնենք. կը բաւէ այսքան հա-
րբառութիւն. հիմա 692,000,000,000,000,000,000,000,
000,000,000,000,000 ոսկիի տէր եմ, բայց եկու տես-
որ Յոր եւ Մարքսադայ գրամատունը սնանկացաւ,
մինակ հաշիւներս պատրաստելու ձեռնարկելով՝ ա-
ռանց տակաւին բան մը վճարած ըլլալու ։ Ի՞նչ կըր-
նամ ընել, եթէ լուսինը, երկիրս, արեւը, բալոր մո-
լորակները իրար գան ու ոսկի կտրին, նորէն իմ
պահանջքս չի վճարուիր :

Աշխարհիս սկիզբէն մինչեւ այսօր հողին տակէն կամ գետերու աւազներու մէջէն 5 միլիոն ոսկիի հաւասար այդ թանկագին մետաղէն հանուած է, այսինքն 1500 խորանարթ մէջը ծաւալով ոսկի: Բայց

ի՞նչ է այդ իմ ունեցածիս բաղդատմամբ։ Եթէ աշխարհիս 1500 միլիոն բնակիչներէն ամէն մէկը տարին ինձի 50 միլիառ ոսկի բերեր յանձնէր, 10 վեցիլիոն տարի դրամ պիտի գանձէի։ Սերոնդներ իրարու պիտի յաջորդէին և իմ ոսկիս պիտի գար լեցուէր ու լեցուէր, ծովերէն, հովիտներէն դուրս թափէր, լեռները ծածկէր, երկրագունդիս վրայէն վար պիտի վազէր՝ ձեւացնելով սնանկ հեղեղ մը որու հոսանքին մէջ աշխարհիս նման 20 միլիոն գունդեր պիտի կորսուէին։

Կ'երազեմ արդեօք, թէ ո՛չ խելքիս եկաւ։

Անհամար գործաւորներ ոսկիի կոյաէս մաս մը կ'առնեն եւ սեղան մը շինել կը ձեռնարկեն 800,000 քիլոմէթր իւրաքանչիւը կողմը՝ մէկուկէս քիլոմէթր թանձրութեամբ։ Հոգ մի՛ ընէք ամբողջ ոսկիի կոյտէն մատնոցի չափ բան մր իսկ պակսած չէ։ Այս սեղանին վրայ, որու երեսը տիեզերքի եթերին մէջ կը լողայ, աշխարհիս մէջ գտնուող բոլոր մարդիկ։ կին, տղայ, ծեր եւայլն, ոսկիի կտորներ կը նետեն անդունդին մէջ։ ամէն մէկը 6000 ոսկիի համարժէք, ամէն մէկ վայրկեանին, եւ հազար տարի ետքը, այս մարդիկը տակաւին 25 հազար երկիրին տարի եւս աշխատելու են ունեցած հատցնելու համար։

Մարդիկը կը ձանձրանան։ Կ'երթան իմ ոսկիէս երկու քարափներ կը շինեն, իւրաքանչիւրը 15 միլիոն քիլոմէթր երկայն, վեցուկէս հազար քիլոմէթր լայն ու 1300 քիլոմ բարձր։ Յետոյ 1500 միլիոն բընակիչները, ամէն մէկ վայրկեան մէյմէկ պանքնօթի ծըաբ կը նետեն անդունդին մէջ։ մէկ ծըարին արժէքը 25 միլիոն ֆր. է (Ֆրանսայի կառավարութեան պարտքը)։ նորէն հազար տարի ետքը հարստութեանս 1,940,000,000 բդ մասը միայն վատնուած է զեռ։

Երեւակայեցէք Նիակարայի ջրվէժ մը համակ ոսկիէ (ուրիշնը չհասկնաք՝ իմ ոսկիս) որ մէկ միլիոն տարի կը հոսի, ամէն մէկ երկվայրկեան 400 միլիոն ոսկի կ'անցնի ջրվէժին բերնէն, եւ իմ ունեցածիս ամենաոչինչ մասը դեռ չպիտի վատնուէր։ ամբողջ հարստութիւնս սպառելու համար ասոր նման 100 միլիոն Նիակարա պէտք էր, եւ որոնք աղմուկով ու խժլտուքով 30 միլիոն տարիներ պիտի հոսէին։

Երկաթուղիի ճամբայ մը շինենք, անանկ ճամբայ մը որուն մէկ ծայրէն մեկնող ճեպընթաց մը (ժամը 100 քիլոմէթր կտրող) միւս ծայրն հասնելու համար 78 տարի անդադար պիտի քալէ։ Օրինակի համար երկիրս արեգակին միացնող կամուրջ մը որ տասներեք ուկէս միլիոն քիլոմէթր լայնք ու նոյնքան ալ թանձրութիւն ունենայ։ Երկայնութիւնը արդէն 148 միլիոն քիլոմէթրի կը հաւասարի՝ ունեցած ամբողջ ոսկիներովս այս ճամբան շինելէ ետքն ալ դեռ բան կ'աւելնայ։

Եթէ ուզեմ հարստութիւնս բաժնել աշխարհիս բոլոր բնակիչներուն (15000 միլիոն հոգի) երկրագունդիս խոշորութեամբն ոսկիէ գունդեր կը շինեմ և այդ բնակիչներուն ամէն մէկին 16ական հատ կուտամ։ Այն ատեն ամէն մարդ հարուստ կ'ըլլայ, այսինքն ինձի չափ աղքատ։ Ոսկիին արժէքը կախում ունի իր առատութենէն կամ քիչութենէն։ Եթէ աշխարհիս վրայ միայն մէկ ցորենի հատիկ մը գտնուէր՝ երկրիս բնակիչներէն եւ ո՛չ մէկը պիտի կրնար գնել զայն, հակառակ իրեն ժառանգ ձգած 16 հատ սոկիէ գունդերուս։

Թարգմ. Զ. Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Միհիթարական Թուղթ

ԻՄ ՅՈՒՆՏԵՍ ԲԱՐԵԿԱՍԻՒԾ

(Զոր լիանելով սիրուհին, ամուսնացաւ ուրիշի մը հետ)

Կը խոստովանիմ որ կորուստնիդ անդարմանելի է, յանձին այն չքնաղագեղ հուրիին, զոր կը պաշտէիք լուելեայն ի բոլոր սրտէ, և որուն հետ սակայն, եթէ ոչ ամուսնանալով երջանիկ ընտանիք մը կազմել, գէթ մինչեւ աշխարհի վերջը զրօնուլ էր ձեր տենջը։

Թաշկինակներուս պաշտօն չպիտի յանձնեմ այս առթիւ ձեր կարծատես աչքերէն հոսած արցունքները սրբելու, — որովհետեւ անոնցմէ ոմանք աղտոտ են, և ոմանք ալ լուացարարին քով կը սպասեն — և ոչ ալ գանկս պիտի ճաթեցնեմ համոզելու համար զձեղ թէ գեղեցիկ սեռը ձեր կարծածին չափ տգէտ չէ, և թէ զանոնք գնահատելու համար դեռ բաւական պանիր հացի կը կարօտիք, այլ պիտի աղազեմ որ, տիրուր իրականութեան հետ այսչափ մօտէն չփուելէ ետք, թող տաք Շօրէնհառւրին օձիքը ու ինքնին երկասիրէք գործ մը, որ յունեստուրեան մարմնացումն ու վերջին խօսքը ըլլայ։

Բայց որո՞ւ կ'ուզզեմ ես այս տողերը, միթէ դուք իրօք լքուած սիրահա՞ր մը, կամ յուսավրէպնչանած մէք։

— Անշուշտ ո՛չ մին եւ ո՛չ միւսը, այլ վարպետ որսորդ մը, որուն լարած ցանցերէն այն ատեն մինակ

կընան պրծիլ օրիորդները, երբ տիսուր իրականութիւնը զայ հասնի, — 25-28 տարիքը, — ու դրականապէս համոզէ զիրենք որ, Ախերէն, օֆերէն, յաւիտենական երդումներէն, կը սիրեմ զեզներէն վերջ, բան մը կը պակսի իրենց, աշխարհիս մէջ ապրելու համար . . . ամուսին մը կարծեմ, և այն ատեն՝ երանի այն ամուսնոյն, որ ձեր հասուցած օրիորդներէն մին կ'ընտրէ իրեն կենակից։

Քու համոզումդ ի՞նչ է, այս ամոլներուն նկատմամբ այս երկու դժբաղդ ամուսիններէն ո՞րն է արդեօք արգահատելին կ'ըսեն, ահաւասիկ այս կէտն է որ կը չփոթէ զիս ու բացաքանչել կուտայ Պալզաքին հետ — ո՞ր Պալզաքն է ըսածս գիտե՞ս, խառամանցի Մինա Պալզաքը, որ Պոլսոյ հրապարակէ ապրանք գնելու եկած ժամանակ, երբ տեսնար որ վաճառականներու հանած — վարած գործակատարները զինք կատղեցնելու համար յատկապէս խենթ ու խելառ գիներ կը պահանջեն, իր խառամանցիական շեշտովը կը պոռար։

— Կուն լիվոը տա պէօյլէ հէսապ եօ՞խ։

Ձեր կուան լիվրին մէջ այսպիսի հաշիւ մը կա՞՞ր, որ այն, (ի՞նչ ըսեմ) հըեշը, ո՞հ, ներեցէք, կը չփոթիմ, չեմ կրնար ածական մը, տիսուս մը, հոմանիւ մը, պատուանուն մը, սահման մը տալ իրեն, իրեն՝ որ արդէն ինքնին տուաւ իր վճիռը, ու զծեց սահմանը, երբ ձեզի պէս սիրուն բանաստեղծի մը գողարիկ առղերը ոտքի տակ առնելով — կամ առ ոսն կոխելով, եթէ նեղուիք — զնաց կոթնեցաւ ոսկեղէն հորթի մը, որ աւա՛զ, պիտի ջախջախէ զինք, իր սուր եղջիւրներովն ու անտանելի լուծովը, թէն ըլլան ատոնք գոհարներով զարդարուած։

Հաւատացէք որ, դեռ հաւատալս չգար կոր այս

իւրօփիին ?? ըսենք որ հեղինակութիւններնիդ մոռցաւ, — թէւ բնաւ հաւանական չթուիր որ այնպիսի գրական գոհարներ, մոռացութեան տակ թաղուին կնոջական սրտի մը մէջ—, թարգմանութիւններնուզ ի՞նչ պիտի ըսէ, հապա այն ոտանաւորներնիդ ո՞ւլ դնենք, որոնք ընդհանրապէս աշխարհաբար կը ծնէին, ու գրաբար կ'ապրէին: Եթէ այս ամէնը մինչեւ իսկ առ լուսնակն, առ ձիւնածաղիկն ալ մոռնայ, բան մը զոր երբեք չպիտի կրնայ մտքէն հանել, ձաօակ Ոսկեղին Դպրութեանի մէջ կարգայ հրաշակերտնիդ ըսել կ'ուզեմ, այն խորիմաստ տողերը, որոնց իւրաքանչիւրին առջեւ ժամերով հիասքանչ չի մնալ չկրնար ընել ամէն արարած, որ յոռետես է, աւաղ, որ մեղացս շատութենէն ինձ համար միշտ գոց դուռ մը պիտի մնայ ան:

Մի՛ լաք, բարեկամ, ձեր դժբաղդութիւններուն վրայ, ողբը անկարողներուն բաժինն է, փառք Աստուծոյ, գուք դեռ Երիտասարդութիւն, հմտութիւն, դրամ, կորով, խորամանկութիւն ունիք, մանաւանդ որ յոռետես ալ էք: Այս ամէն առաւելութիւններն ունենալէ վերջ, ա՛լ ինչ կը պակսի ձեզ թեթեւսօլիկ կիներն ու աղջիկները զգիւելու. սակայն օգտուցէք անցեալին փորձառութենէն, Ռոմիկ եւ Ժիւլիերը ամեներին բերաննիդ մառնէք, մեղքիրնին շունն առնէ, ես այնպէս կը կարծեմ որ, այդ թշուառականները եղան պատճառ ձեր հրատոչոր սիրոյն այս ապարդիւն եղրակացութեանը, ո՞ւր է, կը յիշէք, ականջը խօսելիքին հետ ժամերով առանձնացած Ռոմիկ Ժիւլիերի այլ և այլ թարգմանութեանց բաղատութիւնը կ'ընէիք, ես այնպէս կ'ըսեմ որ անոնց դժբաղդ կեանքը ձեր վրայ ալ ազդեց և չոգեբանօրէն խօսելով՝ վարակուեցաք միեւնոյն ախտէն, որ ուրիշբանով չեր բժշկուէր,

եթէ ոչ իմ գրածներս չկարդալով, ու յոռետեսութեան վրայ երկար հատոր մը գրելով:

* *

Գրեցէք, բարեկամ, գրեցէք, կ'աղաչեմ գրեցէք յոռետեսութեան վրայ, երկար հատոր մը գրեցէք ոք ես ալ սորվիմ սա գետինը անցնելիք յոռետեսութիւնն ու մարդու մէջ մտնալու երես ունենամ, եթէ ոչ ի՞նչ է աս իմ քաշածս: Մինի մինի տղաքներ, դպրոցական պատանիներ, պեխերնին չբուսած խմբագիրներ ամբողջ յոռետես են, և ես, մեծ մարդ մը կեռ յոռետեսութեան վրայ գաղափար մը իսկ չունիմ:

Անցեալ օր, երեկոյթի մը մէջ, տասնըութը տարեկան սիրունիկ աղջկան մը հանդիպեցայ, զոր մատնանիւ կ'ընէին իբրեւ ծայրայեղ յոռետես, ու ինքն ալ թաքուն հպարտութիւն մը կ'զգաք իր այս տաղանդին վրայ, տաղանդ մը՝ որ փառք Աստուծոյ, մենաշնորհ չէ քանի մը հոգիի ձեռք, և այսօր մեր դպրոցականներուն ամէնքն ալ—հազուագիւտ բացառութեամբ—դեռ աչք չբացած, չորս կողմերնին չնայած, յոռին ու բարին չճանչցած, կատաղի յոռետեսներ են... թուզթի վրայ:

Ո՞գ կ'ըսէ որ Եւրոպայի մէջ մերիններուն չափ յոռետեսներ ըլլան, մեր խմբագրատուններուն զամբիւղներուն հարցուցէք թէ՛ օրական քանի՛ քանի՛ յօդուածներ, ոտանաւորներ, բանաստեղծութիւններ կը կլւեն, որոնց ամէնքն ալ ուրիշ բան չեն կրկներ, եթէ ոչ իրենց յաւիտենական երգը, յոռետեսութիւն: Մէկը կը գրէ, « պէտք է մեռնիլ », միւսը՝ « Ո՞հ, ծո՛վ, քանի քաղցր է ալիքներուդ տակ թաղուած մնալ », մէկ ուրիշ մը՝ « ո՞հ, ածո՛ւիս, ածո՛ւիս, կ'երկրպագեմ քու կարմիր կանանչ բոցերուդ, որոնք կրնան նպատակիս հասցնել զիս », չեմ գիտեր թէ՛ գեհենին կա-

րոտն ալ քաշողներ կա՞ն թէ ոչ՝ մեր յոռետեսներուն մէջ։

Եւ սակայն հակառակ այսքան աշխարհէ զզուղներու, յուսահատներու, մահ երազողներու, չտեսայ մեր յոռետեսներէ մին, որ վայրկեան մը հրաժարէր իր զուարձութիւններէն, տոփիներէն, զրօնանքներէն, սիրահարութիւններէն, ու իրականապէս գործադրէր ի՞նչ որ թուղթի վրայ կը քարոզէր ամէն օր, և ամէն մարդ ալ իմանար որ այս ինչ յոռետեսը, « նկատելով որ. . . » վերջ տուած է իր յոռետես կեանքին՝ ալիքներուն յանձնելով անկենդան զիակը։ Զէ՛, ատանկ բան ընող չկայ. հապա՛ — ամէն օր ա՛խ, օ՛ֆ, ոչնչութիւն, ունայնութիւն. ահաւասիկ այսչափ։

Ես կը կարծեմ որ մեր յոռետեսները այն յոռետեսներուն աշակերտներն են. որոնք իմիկար իմաստունը համոզեցին թէ՝ « այս աշխարհս ունայնութեան աշխարհն է. թէ չէր արժէր այսպիսի ցաւերով ու վիշտերով պաշարուած կեանքի մը համար չարչարուիլ, թէ քիչ օրէն պիտի թողէին երթային այս աշխարհը և թէ քանի որ Աիկար պարարտ ոչխար մը ունէր, այս աշխարհէս հրաժեշտ չտուած, պէտք էր որ ընկերովի զուարձութեան մը մէջ մորթէին ուտէին զայն »։ Աիկար իմաստուն՝ իրբեւ դիւրահաւան մարդ, համոզուեցաւ այս ամէնուն, և, հակառակ իր կնոջ բողոքներուն, ոչխարը առջեւը ձգած, ընկերներուն հետ գնաց գետին եղերքը։ Երբ ոչխարը կրակին վրայ զրին ու եփել սկսաւ, յոռետեսները հանուեցան ու սկսան գետին մէջ լողալ։ Աիկար նկատելով որ չէր արժեր այսպիսի վիշտերով պաշարուած աշխարհի մը համար զգեստ պահել, և թէ յօտ օրէն պիտի մեռնէին, իրբեւ ճշմարիտ յոռետես՝ մէկիկ մէկիկ ժողվեց յոռետեսը ընկերներուն լաթերն ու կրակի

տալով ամէնքն ալ մոխիր դարձուց։ Հա՛րկ է նկարագրել լողացողներուն վիշաը, երբ ցամաք ելլելով լաթերնուն տեղ մէկ սէկ մոխրակոյտ ու Խիկարին սա անմեղ պատասխանը գտան, « Այս անարժան կեանքին համար չէր արժեր լաթ պահել »։

* *

Գիտեմ արժանաւորութիւննիդ վիրաւորուած պիտի զգաք, երբ փոխանակ Ռուսոյի. Լամարթինի, Կէօթէի, Շօբէնհաուէրի, և ուրիշ հոչակաւոր հեղինակներու, Խիկարէն ապացոյցներ բերեմ ձեզի. բայց միթէ ի՞մա է յանցանքը որ կանուխ ծնած եմ ու պատեհութիւն չեմ ունեցած Եւրոպայի հեղինակներու անունները գոց սորվելու. միթէ ես չէի՞ ուզեր այս առթիւ գրել ձեզի. « միխիթարուեցէ՛ք, բարեկամ, միխիթարութիւնը տիսրութեան սպեղանին է, ինչպէս կ'ըսէ Ռասին, կամ Հիւկօ, կամ Շէյքսրիբ։ Ի՞նչ կը կարծէք, սիթէ ես նախանձ չե՞մ զգար երբ մեր գլոզներէն ոմանք ի գէպս կամ յանդէպս, սուտ կամ իրաւ, ամէն գրուծներուն մէջ տաս տասնըհինք Եւրոպացի հեղինակներ կը խառնեն։

Հիմա, ինչ որ է, գէշ աղէկ մերիններն ալ սկսան գաղափար ունենալու, հապա ասկէ ութը տասը տարիներ առաջ տեսնէիր, որուն բերնին էր ինկեր առանց առջեւէն ու ետեւէն տասը տասնըհինք հատ Եւրոպացի հեղինակներ ունենալու գրական ասպարէզը իջնել, ամենահասարակ բառերը անգամ անոնց բերնովը պիտի խօսուէին, և ո՛չ ոք արտօնութիւն ունէր մէկու մը « երջանիկ օրեր կը մաղթեմ ձեզ » ըսելու, այլ ստիպուած էր անմիջապէս պոչին փակցնել « որպէս կը մալթէր Լամարթին՝ այն աշխարհահոչակ բանասեղծը, որուն քնարերգութեանց ստուար հատորները գիզուած եմ այժմ գրասեղանիս վրայ ». արժանիք

մը՝ որ ամէնուն բերնին ջուրերը կը վազցնէր :

Բայց ինչո՞վ սկսանք և ինչո՞վ վերջացուցինք. իմ՝ զարդ բարեկամս, միթէ իրաւունք չունի՞ս յուսեաւ ըլլալու, երբ փոխանակ միմիքարականի, ասանկ երիմիական մը կարգալու պիտի ստիպուիս : Այս պարագային մէջ ո՞վ կ'ըսէ որ աշխարհս յոռի չէ, մարդիկ չար չեն : Լա՛նք, բարեկամս, լա՛նք քեզի հետ, և քեզ տեսնեմ, այսօրունէ սկսեալ այլ ևս ո՛չ ծխէ, ո՛չ խմէ, ո՛չ կեր, ո՛չ թատրոն գնա, և ո՛չ ալ գեղեցիկ սեռը հրապուրէ, որովհետեւ աշխարհ յոռի է :

ՔԱՅՄԱԿ



ՕԳՏԱԿԱՐ ԽՈՍՔԵՐ

Պնդելով չէ որ մարդ կը համոգուի :

Երբ հաճոյքները մեզ կը քնացնեն, կը կարծենք թէ մենք հաճոյքները սպառեցինք :

Ամէն բանի մէջ Աստուած միտքերնիդ բերէք, եւ անիկա պիտի յարդարէ ձեր ճամբան :

Լալով ցանողը՝ խնդալով կը հնձէ :

Երջանիկ ըլլալէ առաջ խնդալու է մարդ, որովհետեւ կրնայ ըլլալ որ առանց խնդալու մեռնի :

Տալու երջանկութիւնը, ընդունելու երջանկութենէն աւելի է, որովհետեւ մարդ տուածն աւելի երկար ատեն կը յիշէ՝ քան թէ առածը :

Գաղափարները դրամագլուխ մըն են, որոնք տաղանդի միջոցաւ շահ կը բերին :

Ծակաչք մարդն՝ ո՛չ մէկ բանով գոհ կը մնայ : Մարդիկ արձաններու կը նմանին, իրենց տեղէն պէտք է դիտել զանոնք :

Քու անունդ ճանչցողները քեզի կը վատահին, ո՛վ Աստուած, որովհետեւ դուն քեզի փնտորդը երեսի վրայ չես թողուր :

Առանց չնորհքի գեղեցկութիւնը՝ առանց կերի կարծ մըն է :

Անօթութիւնը աշխատողին դոնէն կը նայի, բայց ներս մտնել չհամարձակիր :

Կասկածողը չի խարուիր :

Մարդս իր անցեալը միշտ աչքին առջեւ ունենալու է, փորձառութիւն ըսուածն այս է :

Բարեկամնիս իրենց պակասութիւնովը միաւին սիրելու է :

Աշխարհս կլոր է. գառնալ չգիտցողը չուտով կը գլորի :

Շատ գիտցողները շատ քիչ կը խօսին, բան մը չդիտցողները՝ շատ կը խօսին :

Կըակը փչողը՝ կայծերէն զգուշանալու է :

Ուշ տալը՝ մերժել ըսել է :

Ծերունիներու խրաները՝ ձմրան արեւուն կը նմանին, կը լուսաւորեն առանց տաքցնելու,

Փորձառութիւնը բժիշկի մը կը նմանի, որ հետանջութիւնը անցնելին ետքը կուգայ :

Աստուծոյ ձեռքին տակ խոնարհեցէք, որպէս զի պէտք եղած ժամանակը ձեզի բարձրացունէ :

Դրելէ առաջ խորհիլ սորվեցէք,

ենթադրելը զիւրին է՝ բայց գիտնալը դժուար :

Բաղզը չի փոխեր մարդիկը, զանոնք դիմակի տակ կը ծածկէ :

Յանցանք մը չունեցողը երբ ներում կը խնդրէ, յանցանք գործած կ'ըլլայ :

Փառասէրը շատ քիչ անգամ փաղձանքին կը տիրանայ, բայց գրեթէ միշտ ունեցածը կը կորսնցնէ :

Մուլութիւնը աղքատութեան բանալին է :
Առանց կեղեւի ընկոյզ չըլլար :
Ակռանին կճրտող շատ մարդիկ , խածնելէ կը վախսան :

Փութով որոշում տուողը՝ շուտով կը զղջայ :
Բնաւ կրթութիւն չառնող մէկը գէւ կրթութիւն
առնողէն նախամեծար է :
Տոպրակին՝ մէջի եղածը կը հաւնուի :
Նախատինքը աւազի վրայ գրեցէք , իսկ բարեգործութիւնը մարմարիոնի վրայ :
Գեղեցկութիւնը ծաղիկ մըն է , որու հոտը բարեգործութիւնն է :

Երկար վիճաբանութիւններու մէջ ճշմարտութիւնը
շուտով կը կորսուի :

Սգահները՝ ժառանգորդնին խնդացնելու համար
կը դիզեն :

Օրինակիը՝ բոլոր քարոզներէն ամէնէն պերճախօսնէ :
Կրցած ատեն չուզողը՝ ուզած ատենը չպիտի կը բնայ :

Կիներուն համար , իրաւունք վաստկելու լաւագոյն
միջոցը , անուշութիւնն է :

Մինակ իրեն օգտակար եղողը՝ բանի մըն ալ օգուտ
չունենար :

Երջանկութիւնը ընդհատուելու է որ զգալի ըլլայ .
Երբ ցաւ մը չկրնար այլեւս մեծնալ , քիչնալ
կ'սկսի :

Երբ մարդ իր ծնողքներուն ըրած բարիքները կը
յիշէ՝ ժամանակ չունենար այլեւս անոնց պակասութիւններով զրաղելու :

Աղքատութենէ հարստացողը՝ հպարտներուն
մեծն է :

ԿՐՈՆՔՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Եգիպտացիներու կրօնքը . — Եգիպտացիները շատ կրօնային ժողովուրդ մը եղած են : Ամէնէն առաջ սկսան պաշտել նեղոս գետն , Արեւն , Լուսինը և բոլոր երկնային մարմիններ և ընդհանրապէս բնութեան բոլոր երեւոյթներն , Յետոյ ձեւերնին փոխուեցաւ . Ամէն նահանգ , ամէն քաղաք իր աստուածն ունէր , որ Արեւն մէջ կերպարանափոխուած էր : Օսիրիս՝ Սէթ աստուածը ծովը նետեց : Իր կինը՝ իսիս երկար ատեն փնտուելէ ետքը՝ վերջապէս գտաւ Օսիրիսը՝ ուրկէ ունեցաւ զաւակ մը՝ Հօրոս : Օսիրիս բարի ոգին էր , իսկ Սէթ՝ չարը : Հօրոս իր վրէժն առնելու համար սպաննեց Սէթ աստուածը : Եգիպտացիները կը պաշտէին նաև կենդանիները , որովհետեւ կը հաւատային թէ աստուածները՝ սովորաբար անսառններու մարմինն մէջ մտնելով երկրիս վրայ կ'իջնեն մարդոց վրայ հսկելու համար : Ամէնէն շատ սիրուած կենդանիներն էին՝ կոկորդիլուր , կատուն , բազէն , այծն և մանաւանդ ֆիւնիկ թռչունն եւ Ապիս կովը : Փիւնիկը հրաշալի թռչուն մ'էր որ ամէն հինգ հարիւր տարին անգամ մը կը յայտնուէր եւ որ իր աճիւններէն վերակենդանանալու շնորհը կը վայելէր : Ապիս կովը Օսիրիսի հոգին էր եւ Ֆթահի երկրորդ կեանքը , Սէմիփիսի մէջ կը պաշտուէր եւ մեռնելէն ետքը կը թաղուէր յատուկ շիրիմի մը մէջ :

Կարդ մը Եգիպտացիներ աւելի բարձր կրօնք մը դաւանէին , կը հաւատային միակ Աստուծոյ մը գոյութեան , որ ստեղծած է ու աէրն է ամրող աշխարհի , նոյնպէս կ'ընդունէին թէ՝ մարդս չորս տար-

ըերէ բաղկացած է : Մեռնելէ ետքը կը կարծէին որ հոգին կը ներկայանար ատեանի մը առջեւ, որու կը նախագահէր Օսիրիս: Եթէ մեղաւոր դատապարաբ-
ւէր, ամենասոսկալի տանջանքներու զոհ կ'ըլլար, իսկ եթէ իբր արդար ընդունուէր՝ մասնակից կ'ըլ-
լար յաւիտենական երջանկութեան :

Եգիպտական տաճարները ահռելի մեծութիւն մը ունին . նշանաւոր է Քարնաքի տաճարը, որու շինու-
թիւնը և կահաւորումը 3000 տարիներ տեւած է . նուիրուած է Թեփիեսոսի աստուածին՝Ամմոնի, կէս քի-
լոմէդր երկայնութիւն ունի, Սփինքսներու ճամբով մը
միացած է Լիւքսորի տաճարին՝ որ երկու քիլոմէդր
հեռուն կը գտնուի :

Քաղդէացիներու եւ Ասորեստանցիներու կրօնէր . — Շատ քիչ բան ծանօթ է Քաղդէացիներու հին կրօն-
քին վրայ: Քարերու, գետերու և կենդանիներու
պաշտամունքը մեծ տեղ մը գրաւած էր: Հին քաղ-
դէական աւանդութեան մը նայելով Օանէս աստուա-
ծը որ քաղաքակրթութեան առաջին սկզբունքները
տուած էր մարդուն, ձուկի մարմինով և մարդու
գլխով ու ձայնով եկած է աշխարհ:

Յետոյ պաշտեցին բարի ու շար ոգիները, որոնք
կ'անցնին սահող ամպերուն մէջէն, փայլատակող
կայժակին ու անտառին ծառերուն միջեւ չնչող փո-
թորիկին մէջէն: Ոգիներու հաւատքէն ծնաւ մոդու-
թեան արուեստը, այսինքն ինքզինքը անոնց հաճելի
ընելու միջոցը, որուն գաղտնածածուկ մեքենայու-
թիւնները մոգերն ու կախարդները գիտնալ կը ձե-
ւացնէին: Քաղդէացիները աստղահմայներուն և բաղդ-
նայողներուն մեծ հաւերն են: Ասորեստանցիք ու
Քաղդէացիք ամենամեծ կարողութիւն մը կ'ընծայէ-

ին երկնակամարը լուսաղարդով գունտերուն և ա-
նոնց մէջ ապագային գալիք գաղտնիքը ջանալով
գուշակել՝ ասաղաբաշխութիւնը հնարեցին: Իրենց
գերագոյն աստուածն էր իլու և անոր յաջորդներն
էին Անու, Պէլ և Էա:

Ասորեստանի իշխանները՝ Նման Եգիպտոսի Փա-
րաւոններուն, կրօնական յատկանիշ մը կը ներկայա-
ցնէին . գտնուած խորաքանդակ հնութիւններուն
վրայ միշտ ներկայացուած են աստուածներու զոհ
մատուցանելու գիրքին մէջ :

Քաղդէական տաճարները շինուած են զանազան
գոյններէ աղիւսներով և հինգ կամ վեց յարկերէ կը
բաղկանան սոկեզօծ գմբէթսավ մը ծածկուած . այս ա-
հազին շէնքերը նուիրուած էին ամէնէն ամենի ու ե-
րեւելի աստուածներուն . միւս երկրորդական աստ-
ուածները աւելի պղտիկ տաճարներով կը գոհանա-
յին: Շատեր կը պնդեն թէ Հերոդոտոսի ժամանակ
Բարելոնի մէջ տեսնուած տաճարը՝ Ս. Գրքի Նկարա-
գրած Բարելոնի աշտարակի հիմերուն վրայ կը բարձ-
րանար:

Փիւնիկեցիները եւ Կարգեղոնացիները . — Երկար, շատ
երկար ժամանակներ՝ գետերը, լեռները, ծառերը
Փիւնիկեցիներու պաշտամունքին առարկայ դարձան,
Հաղարաւոր տարիներ այս ժողովուրդը ուխտի գնաց
Ատոնիս գետին ակունքին՝ որու կարմրուկ ջուրերուն
համար կ'ըսէին թէ Աստուծոյ երակներէն վազած է: ։
Փիւնիկեցիք զարմանալի պաշտամունք մ'ալ ունէին .
այն է Պիրիլներու՝ կոնածեւ կամ հաւկթածեւ քարե-
րու, մանաւանդ երկինքէն ինկած օդաքարերու պաշ-
տօնը: Կամաց կամաց Փիւնիկեցիները փոխեցին ի-
րենց աստուածները, որոնք իւրաքանչիւր քաղաքին
համար տարբեր անուն մը կ'առնէին, բայց դիտելի է

որ մէկ բառ մը միայն Բաաղ, միշտ կ'ընկերանար այդ զանազան անուններուն։ Մէլգաք Բաաղը իրենց բերած էր այբ ու բէնի անվիճելի բարիքը։

Կարգետոնացիններունը՝ Թանիք աստուածուհին էր որուն պատկերը կը զարդարէ բոլոր դրամներնին ու գերեզմաննին։ Բաաղ-Համեօն կամ Մոլիք այրող աստուածն էր որու մարդկային զոհեր կ'ընծայէին երբ մեծ վտանգ մը կ'սպառնար երկրին։

Փիւնիկեան կամ Կարգեդոնի տաճարներէն եւ ո՛չ հատ մը կանգուն կը մնայ այսօր. մինակ գիտենք թէ անոնք կը բաղկանային ընդարձակ շրջափակերէ, որոնց չորս կողմը գոցուած էր չենքերով, մէջտեղը կը բարձրանար սեղան մը՝ քարէ շինուած՝ որ էր տեղի սրբութեան։

Յունական աստուածներ. — Յոյները կը հաւատային մարդոց նմանող աստուածներու, որոնց վերագրեալ արկածները կը ձեւացնեն դիցաբանութիւնը։

Դիմաւոր աստուածներն էին Զեխւս (Արամազդ), Երկինք աստուածն, ասոր հայրն էր Քրօնոս (Կրօնոս), Արամազդի կինն էր Զերա, դիցուհի լուսինին, եւ թագուհի կիններուն. Արես՝ փոթորկի ու պատերազմի աստուածը. Նեֆախսրու՝ կրակի աստուածը. Արենէ (Աթենաս) գիտութիւն աստուածը, Հերմէս՝ քաջերու աստուածը եւ բանբեր Արամազդի, Աքոլօն՝ արեւու եւ երաժշտութեան աստուածը, Արտեմիս (Անահիտ) ակերու եւ որսերու դիցուհին, Աֆրօտիսէ՝ (Վէնիս) սիրոյ ու գեղեցկութեան դիցուհին։ Յոյները կը հաւատային թէ՝ բոլոր այս աստուածներու խումբը Ողիմպոս լերան վրայ կը բնակի։

Զուրեբուն աստուծութիւնները կը հպատակէին Բուհիսօնի (Պիսիդօնի) ծովերու աստուածին, իսկ աստորեբերեայ ոգինները՝ Հարեսի (Պլուտոնի)։

Երկրիս գլխաւոր աստուածութիւն էր Տէմերէր (Դեմետրէ)՝ դիցուհի հունձքերու, իր աղջկէր ներս ւիօն՝ դժոխքներու չաստուածին ամուսինն էր։

Յոյները բազմաստուածեան ժողովուրդ մըն էին, կը հաւատային իրենց աստուածներուն անմահութեանը սակայն կ'ընդունէին միեւնոյն ժամանակ թէ անոնք կը տառապին, կը վշտակրին, կը սիրահարին, կը նախանձին, կը վիրաւորուին եւայլն։

Հոռմայեցիններու աստուածները. — Հոռմէացիք՝ Յոյներու հաւատալիքներն ու ծեսերը ընդունած էին։ Գրեթէ բոլոր Ողիմպական աստուածները իրենց յատկացուցած էին տարբեր անուններով. եւ անոնց վրայ ունեցած գաղափարներէն ձեւացում մը երեւակայելով՝ մէյմէկ կուռքեր կը շինէին իրը թէ այդ աստուածներու ներկայացուցիչներն են ու զոհ կը մատուցան էին անոնց առջեւ. Ոյդ պաշտօնը կը կայանար որոշեալ ծեսերով ու պաշտօնական հանդիտակատարութիւններով զոհարերում կատարել եւ սրբազնացեալ աղօթքներ կարդալ։

Հոռմայեցիք կը պաշտէին մեռեալներուն հոգին և ուրուականներուն (խօրթլաք) կը հաւատային։ Քաղդէացիններուն պէս անոնք ալ կը յաւակնէին ապագան գուշակել եւ մասնաւոր բաղդահմայներ ունէին։

Իշխանութիւնը՝ պէտն էր Սիպիլեան գրքերուն, (յունարէն լեզուալ գրուած), որու կը դիմէին վըտանգի ժամանակ։

Քրիստոսէ 200 տարի առաջ թէեւ կարգ մը արեւելեան ժողովուրդներու հաւատալիքներ Հոռմի մէջ մուտ գտան, սակայն շուտով մարեցան ինքնին։

Քրիստոնէութիւնը իտալիոյ մէջ թափանձեց առաջին դարուն, նախ հալածանքներ կրեց, յետոյ 311ին, կալերիանոս կայսրն թոյլատութեան հրովար-

տակ մը հանեց որով քրիստոնէութիւնը ազատ կը-
րոնք մը կը հռչակուէր . վերջապէս 325ին Կոստան-
դիանոս կազմակերպեց քրիստոնեայ եկեղեցին :

Տրուիսներու կրօնիք . — Այս կրօնքը կը դաւա-
նէին Կոլուացիներն . ո՛չ կուռք ունէին , ո՛չ տաճար .
պաշտամունքներնին կը կատարէին կաղնիի անտառ-
ներուն խորերը : Տարւոյն առաջին օրը Տրուիսները
(կրօնական պաշտոնեայ) հանդիսաւոր կերպով կաղնիի
ծառերուն վրայէն կը հաւաքէին ոսկի դանակով կիյ
կոչուած տեսակ մը սունկի : Այս ժամանակներէն մնա-
ցած է Տօլմէն , մանիթր կոչուած անուաշ ահագին քա-
րերու չարքը , որոնք ամբողջ տարածութիւններ կը
ծածկէին :

Սկանինաւեան դիցօբանութիւնը . — Ետտայի եր-
գերը մեզի կը ծանօթացնեն այս դիցարանութիւնն
որ կոթայի եւ Տեւոն ազգերու վրայ ունեցած ազ-
գեցութեան համար շատ կարեւոր է՝ երբ ճշդել ուզ-
ուի անոնց պատմութեան ոկիզրներն : Հիւսի ՚ հին
ցեղերու կրօնական հաւատալեաց պատմութիւն . շատ
մութ է . սա գիտենք թէ անոնց առաջին առուու-
ային ցեղէն իբր նախահայր ունեցած է Խմար , Երկ-
րորդ ցեղին աստուածները Աս կը կոչուին եւ ի գը-
լուի ունին Օսին՝ պաշտուած Դանիացիներէն ու կո-
թացիներէն իբր առաջին աստուածը . Մինչդեռ Նոր-
վեկիացիներն այդ պատիւը կուտային Թօրի և Շը-
ուետցիները՝ Թրայի :

Երբ աշխարհիս վախճանն հասնի , Օսին աստ-
ուածներու գլուխը անցած պիտի վանէ միւսքիմա-
ները (կրակի որդիները) եւ նոր մարդկային սերունդ
մը պիտի սկսի :

Ծեսերը կը բազկանային աղօթքէ ու զոհարերու-
թենէ : Ամէն մարդ , իր վիճակին համեմատ՝ պտուղ-

ներ , կենդանիներ կամ մարդկային զոհեր կը մատու-
ցանէր . Խրսալայի հրաշագեղ տաճարը նուիրուած էր
Օտինի , որուն պատին մէջ քանդակուած պատկերին
առջեւ միշտ կենդանի զոհի մը արիւնով լեցուած
տաշտ մը կը գտնուէր . Բոլոր քրմութիւններ
ունք ունէին ապագային համար գուշակութիւններ
ընելու :

Պրահմականութիւնը . — Պրահմականութիւնը բնաւ
հիմնադիր չէ ունեցած : « Մանուի Օրէնքները » մի-
ակ գիրքն է որ այս կրօնքին ամենազուտ արտա-
յացութիւնն է :

Վերջացող դարուն ետքերը՝ սահսրիտ լեզուին
եւ հնդկական գաւառաբարբառուներու ուսումնակրու-
թիւնը մեծ լոյս սփռեց այս ծածկուած կրօնքին վր-
բայ : Հնդիկ Պրահմիններու սրբազն գիրքերուն մէջ
առաջին աեղը կը գրաւէ Վէսան՝ որ Պրահմականու-
թեան Աստուածաշունչն է : Յետոյ կուգան Մանարա-
Տարմա-Սասրա (Մանուի օրէնքը) եւ մեծ գիւցազ-
ներգութիւններ՝ Մահապ Արարա , Ռամայանա , վեր-
ջապէս Բուրանաները :

Քանի մը հեղինակներ դիտել կուտան թէ՝ բարիին
ու չարին՝ երկու աստուածներու աւանդութիւնը կը
նմանի Զրադաշտի դաւանանքներուն : Նոյնպէս հին
Գերմանները իբենց իբր նախահայր կ'ընդունէին
Մանիսը . Հելլէններն ալ իբենց Մինօս աստուածովը
համանանութիւն մը կ'ունենային Հնդիկներու Մա-
նուին :

Մանուի օրէնքները . — Ամբողջ հատորը գրուած
է Աստուածոյ ներշնչունով՝ ինչպէս որ Եփրայեցիներու
օրէնքները Աստուած տուած էր Մովսէսի՝ Արնա լե-
ռան վրայէն : Հնդիկ աստուածաշունչին առաջին
մասը շատ նմանութիւններ ունի Ծննդոց գրքին հետ ,

ասկէ կը հետեւցուի թէ՝ ամենայետնեալ ժամանակ-
ներ հրեաներն ու Արիանները միեւնոյն ցեղին կը
պատկանին :

Այս առաջին Մանուկի կը յաջորդեն վեց ուրիշներ
ալ՝ որոնց իւրաքանչիւրը արարածներու նոր սե-
րունդ մը ստեղծած և աշխարհ կառավարած է ժա-
մանակ մը։ Արդ, իւրաքանչիւր Մանու տասն և մէկ
աստուածներու կեանքին տեւողութեան չափ ապրած
է, իւրաքանչիւր աստուած՝ 32000 տարի կեանք ու-
նեցած է. Հոս կը տեսնուի թէ Հնդիկ աւանդութիւնը
ահագին ժամանակի տեւողութիւն մը կուտայ աշխար-
հիս ստեղծման ու անոր զարգացման համար, ինչ որ
համապատասխան է արդի գիտութեան կարծիքներուն։
Դիտելի է նաև այս վեց մանուներու թիւն որ կը հա-
մապատասխանէ աշխարհիս ստեղծման վեց օրերուն։—
Հիմա եօթներորդ Մանուն է որ կը տիրէ հնդիկ կրօ-
նին մէջ։

Արդի պրահմականութեան մէջ, Պրահմա տէրն է որ
ինքնիրեն գոյութիւն ունի և որ և է զգայարանքի
տակ չիյնար, այլ միտքը միայն կ'ըմբռանէ բոլոր արա-
րածներուն ստեղծիչը և աշխարհիս հոգին՝ որով
տիեզերքը գոյութիւն ունի։ Պրահմայէ յառաջ կու-
գան երեք աստուածային անձնաւորութիւններ, որոնք
են Պրահմա (ստեղծող աստուած), Վիժնու (պահպանիչ)
և Սիլվա (աւերիչ աստուած)։ Ասոնք կը կազմեն հըն-
դիկ երլորդութիւն։

Յետոյ կուգայ Սահրի, Պրահմայի կինը՝ Արեանե-
րու գիցուհին՝ պաշտպան գեղարուեստի ու խաղաղու-
թեան։

Սիլվայի կինն է Բարվարի, լեռան աղջիկը՝ պատե-
րազմներու գիցուհին և աւերածներու ոգին։
Երջանկութեան ու բարեբերութեան գիցուհին է

Լահիմի կամ Քրի՝ Վիշնուի ամուսինը՝ որ ծնունդ առած
է ալիքներու ծոցէն։

Երկու մեծ յղացումներ կը ներկայացնեն Պրահ-
մական բնազանցութիւնը, համասուածութիւնը՝ այ-
սինքն Պրահմա և նոգեվիշութեան հաւատալիքը։

Առաջինը ամէնքս ալ գիտենք։ Գալով երկրորդին՝
սապէս կը մեկնուի. հոգին սկիզբէն ի վեր գոյութիւն
ունենալով՝ հիմա կը պատժուի իր անցեալ մեղքերուն
համար և ասկէ վերջն ալ պիտի ապրի՛ արդի կիանքի
յանցանքները քաւելու համար, առանց սակայն անց-
եալին մեղքերը յիշելու կարողութիւնը ունենալու։

Հնդիկը՝ սոսկալի ապաշխարանքներու կ'ենթարկէ
ինքինքը, կամաւոր մարմնական տանջանքներ կը
կրէ՝ գործած մեղքերը քաւելու համար։

Հնդկաստանի տաճարները տարօրինակ ոճով մը
շինուած են։ Քրիստոնէ առաջ շինուածներէն շտա-
քիչեր, այսօր կանգուն մնացած են, մեծագոյն
մասը միջին դարու տեւողութեան միջոցին կառուց-
ուած են։

Պուտայութիւն։—Երկրագունդիս բնակչութեան քա-
ռորդը պուտայադաւան է։ Քրիստոնի թուականէն 7
դար առաջ հնդկաստանի մէջ այս կեանքը քարոզած
է Սահեամուհի իշխանը՝ մականուանեալն Պուտա իմաս-
տուն, (լուսաւորեալ)։ Պուտասայանութիւնը շուտով
տարածուեցաւ հնդկական ցամաքակղղին մէջ՝ ուրկէ
արտաքսուեցաւ ալ վերջէն։ և չուտով ընդունուե-
ցաւ Զինաստանի, Ճարոնի, Սէլլանի, Ճավայի, Քո-
չինչինի, Պիրմանիոյ, Թիակէթի բնիկներու ու Մո-
զոլներու և Թաթարներու երկրին մէջ։

Սաքեամունիի օրէնքները երկու օրինակ գրուած
են, մին սանսկրիտ լեզուաւ՝ զոր Հօտիսն գտաւ նէ-

բոլի մենաստանին մէջ, երկրորդը կը գտնուի Սէյլանի քուրմերուն ձեռք և Բալի լեզուաւ գրուած է:

Պուտտայականութեան մէջ ամէն բան երկու գըլխաւոր գաղափարի վրայ կը դառնայ հոգեփոխութիւնը՝ որ անվախճան ապաշխարանքի մը գաղափարն է և որ կը նկատուի իրը միակ նշանակութիւնը կեանքի գոյութեան: Յետոյ, Նիրվանայի գաղափարը՝ որ իրը գերազոյն հատուցումի և տառապանքներու վախճանի գաղափարի յղացումն է:

Պուտտայական վարդապետութեան հիմը կը կաղմեն չորս գերազոյն նւմարտութիւնները, որոնք բոլոր հաւատացեալներէ ընդունուած են:

Առաջինը սա է թէ՝ ցաւը անբաժան է կեանքէն որովհետեւ ծերութիւնը, հիւանդութիւնն ու մահը բաժինն են ապրող էակին:

Երկրորդը՝ ցաւը զաւակն է բաղձանքին որով մարդիկ կը կապուին նիւթին, երիտասարդութեան, առողջութեան, կեանքին:

Երրորդ ճշմարտութիւնը տեսակ մը միւթարութիւն կը բերէ երկու առաջիններուն՝ թէ կեանքն ու ցաւը կրնան դադրիլ Նիրվանայով (էութեան ոչնչացումը):

Չորրորդ՝ հասնելու համար ներվանային, պէտք է իր էութեան մէջ ջնջել բաղձանքը և հեռացնել բոլոր արգելքները, որոնք կ'ընդդիմանան նսէն հրաժարելուն:

Մեծ Լամայի (պուտտայականութիւն) դաւանանքի ծէսերն ու հանդիսաւորութները խիստ շատ նմանութիւններ ունին հռոմէական եկեղեցւոյ ունեցածին: Թարթարներուն մէջ արդարեւ կը տեսնուին մեծ քահանայապետը, հոգեւոր իշխանութիւնը ունեցող նահապետներ, Լամաներու Ընդ. ժողով մը, որու մէջ

Կ'ընտրուի կրօնապետը, վանքեր ու միաբանութիւններ, մեռեալներուն համար ազօթք ընել (հոգեհանգիստ), գաղտնի խոստովանանք, սուրբերու քարեխօսութեան կոչում, ծոմապահութիւն, ոտնալուայ, թափորներ, օրհեալ ջուր, և այլն: Ասիկայ կրնանք մեկնել՝ եթէ ի նկատի առնենք թէ՝ այն ժամանակները երբ Թարթար հայրապետներ հաստատուեցան թիւպէթի մէջ, ըրջակայ երկիրները լեցուած էին քրիստոնեայ բնակչութիւններով:

Պրահմականութիւն և Պուտտայականութիւն գրեթէ 750 միլիոն հաւատացեալ ունին:

Մովիսականութիւն. — Երայական կրօնքի հիմը այնքան ամուր եղած է և հրեաները այնքան փարած են իրենց հաւատալիքներուն որ 18 դարերէ ի վեր ցրուած այս ժողովուրդին մէջ դեռ հաստատ կը մնայ ան:

Մովիսականութեան սկիզբներէն միայն կը մնայ հնգամատեանը՝ որ բաժնուած է Ծննդաց Գրքի, Ելից գրքի, Ղեւականներու, Թուոց և Երկրուդ. Օրինացի:

Ղեւական ցեղը միայն կրնար կատարել կրօնական պաշտամունքները և հսկել Տապանակ Ուխտիի վրայ, որու մէջ կային պահուած տասնաբանեայ պատուիրանքի երկու քարետախտակները: Ժամանակէ ետք այս կրօնական իշխանութիւնը անցաւ Յուդայի ցեղին—Յուդայէն ծնաւ Յիսուս Քրիստոս, որուն Մեսսիան ըլլալը շուկեցին ընդունիլ հրեաները:

Երբ Մովսէս օրէնքներ կը դնէ հասարակաց օգուտին անուամբ, մէջ խառնելով Աստուծոյ կամքը, շատ խիստ է, բայց երբ պէտք կ'ըլլայ բարոյականի կէտ մը կարդագրել, այն ատեն սքանչելի փիլիսոփայութեամբ մը կը գործէ: Իր օրէնքով կինը հաւա-

սար կը դնէ մարդուն բայց շատ թեթեւ պայմաններով :

Թալմուտը կը բովանդակէ Երբայական տւանդական օրէնքները՝ և կամ բարունիներու տուած բացատրութիւնները՝ Մովսէսի գրեալ օրէնքին վրայ . . .

Մովսէսական կրօնքին յարողներուն թիւը գրեթէ 5 միլիոնի կը հասնի :

Մազդէզականութիւն . . . — Զօրօասթրի կրօնքը, կը կոչուի Մազդէզականութիւն կամ համաշխարհային գիտութիւն և իրը օրինագիրք ունի Ավեսրան, որուն մէկ մասը միայն Վանիւրա՝ (աստանաներու դէմ գիրք) կը մնայ Բարսիս կոչուած ժողովուրդին ձեռքը :

Զօրօասթրը Քրիստոսէ 25 դար առաջ կ'ապրէր, և Որմիզդի ձեռքէն ընդունեց օրէնքներու գիրքը (Ավեսրա) : Որմիզդ՝ բարի հոգին էր՝ իսկ Ակրիմանը՝ չար :

Մազդէզականութիւնը բարձր ու սուրբ բարոյական մը ունի : Հաւատացեալ մարդը պէտք է ըլլայ բարի, յաւ խորհուրդներ ունենայ և բարին խօսի : Ընտանիք մը պահել, դաշտը մշակել, մէյմէկ առաքինութիւններ նկատուած են . . .

Ծէսերու ամբողջութիւնը կը կայանայ տաճարին կրակը վառ պահել և ազօթել : Որմիզդ ո՛չ արձան ունի, ո՛չ տաճար . իր միակ պատկերը կրակն է :

Մինչեւ այսօր գեռ կան Հնդկաստանի մէջ ժողովուրդներ (ինչպէս բարսիսները) որոնք սոյն կրօնքին հաւատարիմ պաշտողներն են :



ԶՈՒԱՐՃԱԼԻ ԴԱՏԱՍՏԱՆ

Աղէկ սկսող և գէշ վերջացող բաներուն գլուխը գնելու է գինովներու կերուխումը . Զուարթութեամբ գաւաթ գաւաթի զարնելով կը խմեն, և երբ լաւ մը գինովնան գզուըտիլ կ'ըսկին և բանտ երթալով կը վերջացնեն :

Այսպէս, երեք ընկերներէ երկուքը օր մը ոստիկանութեան դատարանի առջեւ կը հանուին, մին՝ Կանըվալ իրը գանդասող, միւսը Ֆլիւրիօ՝ ամբաստանեալ : Երբորդը՝ որու վրայ պիտի խօսուի՝ Տընէօ կը կոչուի :

Կիրակի օր մը երեքն ալ Կանըվալի տունը հաւաքուելով կ'երթան ընկերովի գինովնալու : Դուրս ելլելէ քանի մը ժամ ետքը Տընէօ՝ անծանօթ կնոջ մը դէմ յարդանքի պակասութեան մէջ գտնուելով անմիջապէս կը ձերբակալուի : Իրիկուան դէմ Կանըվալ՝ որ գէշ գինովութիւն մը ունի, ինքզինքը գետը նետելու կ'ըլլայ, բայց ոստիկան մը օձիքէն բռնելով ոստիկանատուն կ'առաջնորդէ :

Կը մնայ Ֆլիւրիօ, որ գինովցած ժամանակը գործնական մարդ կ'ըլլայ : Գիտնալով որ Կանըվալ պահած դրամ ունի, կը վազէ գրապանելու . բայց շուտով ինքզինքը բանտը կը գտնէ :

Հիմա խնդիրը դատաստանի ձգուած է . Կանըվալ կը խօսի . — Ասանկ բաներէն շատ ցաւ կ'իմանամ, Ֆլիւրիօ հին բարեկամ մըն է . (Խօսքը ամբաստանեալին ուղղելով) Ֆլիւրիօ, երեսդիտեսնել չեմ ուզեր :

Ֆլիւրիօ . — Զիս չե՞ս ուզեր, չե՞ս ուզեր : Երկուանգամ չթողուցի որ ինքզինքդ գետը նետես ; Կանըվալ . — Այս', բայց այս անգամ թողուցիր :

Ֆլիւրիօ. — Զեմ կրնար բանս գործս ձգել, ետեւէդ պտտիլ որ գետը չիյնաս :

Նախագահիր. — (Ամբաստաննողին) Ատոնք ձգեցէք հիմա, գողութեան պարագաներուն վրայ խօսեցէք :

Կանրվալ. — Ահաւասիկ. Տընէօ եւ Ֆլիւրիօ տունս զարով, մէկտեղ սենեակս ելանք եւ թաշկինակիս մէջ պահած դրամներէս ութը Փրանք առնելով դուրս ելանք :

Նախագահիր. — Հապա ըսիր որ, Ֆլիւրիօ, ձեր պայուսակին մէջէն գողցած է դրամը :

Կանրվալ. — Այո՛, մանրուք դրամը թաշկինակիս մէջ կը պահեմ, բայց պայուսակիս մէջ ցուցուցած էի իրեն Յ հատ 100 Փրանքնոց պանքնօդ եւ 10 Փրանքնոց ոսկի մը : Ուստի 8 Փրանքն առնելնուս վերջը դուրս ելանք զուարձանալու համար : Ճամբան Տընէօ անվայել բան մը ըրբաւ եւ օծիքը ձեռք տուաւ : Ֆլիւրիօ ու ես գացինք այնչա՞փ խմեցինք, այնչա՞փ խմեցինք որ ինքզինքս ջուրը ձգելս եկաւ :

Նախագահիր. — Աւելի լաւ էր քիչ մը ջուր խառնէիր գինիիդ հետ. այն ատեն դուն ալ ջուրը չէիր իյնար :

Կանրվալ. — Իրաւունք ունիք, տէր նախագահ, բայց ամէն բան չեմ կրնար մտածել :

Նախագահիր. — Հսել է Ֆլիւրիօ տեսնելով որ ձեզ պահականոց կը տանին, ինք վազեր սենեակդ ելեր ու դրամներդ առեր է :

Կանրվալ. — Երբ հարցաքննութենէ մը ետք ինծի թող տուին, գացի պառկեցայ. առտուն տեսայ որ պահած դրամներս չկային :

Ամբաստանեալը նախ կ'ուրանայ եւ պատմութիւն մը կ'ընէ ըսելով որ այդ գիշերը՝ գիւղը ծերուկ սպասուէի մը տունը անցուցած է : Այդ սպասուէին

հարցաքննուելով կը պատասխանէ. « Գիշեր ատեն Ֆլիւրիօ կառքով տունս եկաւ, 25 Փրանք ձգեց . նորէն կառքով դուրս ելաւ ու քանի մը ժամ ետքը վերադարձաւ . կառավարին 15 Փրանք վճարելով ճամբեց . ինքը գինովութենէն ոտքի վրայ կենալու կարողութիւն չունէր . գնաց պառկեցաւ : Առտուն հարցուցիթ թէ այդչափ դրամ ուրկից ձեռք անցուցեր է . մէկ մօրեզմօրմէս ժառանգ ինկաւ, պատասխանեց :

Միւս կողմէ, Կանըվալի բնակած տան վարձակալներէն մին, տեսած էր Ֆլիւրիօն նոյն տան նըրահանցքներուն մէջ, գողութիւնը կատարուած ժամուն : Վերջապէս Ֆլիւրիօ, առջի օրը գրպանը հինգ փառա չունենալով, Կանըվալի դիմած էր կ' Փրանք փոխառնելու համար :

Ֆլիւրիօ կ'ստիպուի խոստովանիլ թէ գողցածն 130 Փրանք էր . իր բանալիով Կանըվալի սենեկին դուռը կը բացուէր . իրը զղջում յայտնեց որ գինէն էր գողութիւն ընել տուողն :

Դատարանը չորս ամսուան բանտարկութեան դատապարտեց զայն :

Կանրվալ. — Վա՛խ, բարեկամս, սիրտս կը խշխըշայ, երկու անգամ կեանքս աղատեցիր :

Նախագահիր. — Դուրս հրամմեցէ՛ք : Կանրվալ. — (Դուրս ելլելով). Սէնի քովիկը մինակ ձգեցիր ինձի :

Թարգմ. Զ. Ն. ՊէրՊէրեԱն

ՊԱՐՈՆ ՔՕՐՆԻՉՅՈՆԻ ԵՐԱՋԸ

Պարոն Քօրնիչօն՝ Ք. ընդարձակ առեւտրական տան գրադիրներէն մին է :

Երեսուն և մէկ տարիներէ ի վեր,— ըսողը ինք է— երեսուն և մէկ բանթալոնի յատակ հրնցուցած է միեւնոյն սև կաշխով ծածկուած թիկնաթոռին վրայ :

Իր տունէն գրասենեակ կ'երթայ՝ ինչպէս հանրակառքի մը ձիերը երկու կայարաններու միջեւ կ'երթեւեկեն, առանց ո՛և է երազ մը կազմելու իրենց մտքին մէջ, վստահ թէ՝ իր աշխատութիւնովն է որ կը յառաջանան այդ ընդարձակ գործածութիւնները :

Պարոն Քօրնիչօն, իր վաթսուն տարեկան հասակին մէջ՝ տակաւին երիտասարդ է ինչու որ կեանքը անցուցած իր թիկնաթոռին վրայ հանգիստ նստած, առանց մտահոգութիւններու, ինչպէս որ ճամբորդները գիւեր ատեն երկաթուղիի վակոնին մէջ առանց հոգ ընելու կը կտրեն կ'անցնին ամէնէն ցից լեռներուն կողերը :

Պարոն Քօրնիչօնի փառքն ու պարծանքը իր Սօֆի աղջիկն է. բաւական սիրուն ու տնարար օրիորդ մը, որուն բարձր դասէն կենակից մը գտնելը հայրը վրան առած էր :

Աւելի ճիշտը ըսելով՝ իր փեսան գտած էր արդէն յանձին պարոն Քապասօնի՝ իր ծառայած հաստատութեան տնօրէնին :

Օր մըն ալ ճաշի հրաւիրեց . . . պարոն Տնօրէնը, որ չմերժեց իր 30 տարուան պաշտօնեային խնդիրքը: Սեղանին տակ փոխանակուած քանի մը բարեկամական խօսքեր անանկ կարծեցնել տուին պարոն Քօրնիչօնի թէ՝ իր տնօրէնը զգլիսած Սօֆիի հրապոյրնե-

ըէն՝ ներս ձեռքը պիտի խնդրէ : Մերուկը հաւատաց ասոր, տոգորուեցաւ այս գաղափարով և շաբաթ մը չանցած՝ գրասենեակին մէջ ամէն մարդ գիտէր Օր. Սօֆիի ապագայ նշանախօսութիւնը :

— Հէ՛, հայր Քօրնիչօն, իմացանք որ օրիորդը կ'ամուսնացնէք կոր :

— Հապա՛, հապա՛ :

— Կ'երեւի թէ հարուստ նպարավաճառ մը ընտրած էք . . .

— Քօրնիչօնի աղջիկը շուտով չամուսնանար ստորին մարդերու հետ :

Եւ այս ստորին բառին արտասանութիւնը իր բերնէն լսելու էր :

Տասն եւ հինգ օր անցաւ :

Տասն և հինգ անգամ արեւը ծագեցաւ ու մարը մտաւ այն օրէն, մարտի 16էն ի վեր, որ հռչակաւոր ճաշը տրուած էր, Բայց պատասխան մը չէր առած դեռ Պ. Քօրնիչօն - արդեօք իր յոյսերը պարապը պիտի ելլէին :

Ապրիլ 1ի առտուն տունէն դուրս ելլելու վրայ էր, երբ դռնապանը նամակ մը տուաւ իրեն : Հասցէին գիրը անօրէնին գիրն էր : Գիշ մնաց ծերուկը նուազէր յուզումէն . ինքզինքը ժողուեց ու պահարանը բացաւ:

« Սիրելիս պարոն Քօրնիչօն .

« Իմ ապագաս ձեր ձեռքն է : Սօֆիի հօրմէն կախում ունի իմ երջանկութիւնս : Ո՞վ կրնայ գեղանի օրիորդը տեսնել ու չիրահարիլ :

« Որով պատիւ ունիմ օրիորդ Սօֆիի ձեռքը խնդրել :

« Հաճեցէք ընդունիլ և այլն .

ԻԶԻՏՈՐ ՔԱՂԱՔԻՑՆ

Ծերուկը ուրախութենէն կը ցատկըոտէր . տասն անգամ կարդաց նամակն և թուղթը ձեռքը ծածանելով , վազեց դէպի պաշտօնատեղին . չար բաղդէն Սէնի վրայ ձգուած կամուրջէ մը անցնելու պահուն . հովը խլեց ձեռքէն թանկագին նամակն և տարաւ ջուրը ձգեց : Պահ մը ապշած մնաց : Քօրնիշօն թուղթին ետեւէն նայեցաւ , յետոյ շարունակեց ճամբան խոր մտածումներու մէջ թաղուած : Գրասենեակ հասաւ , ծանր ճայնով մը հարցուց .

— Քապառօն եկա՞ծ է :

— Այո՛ , պարոն Քօրնիշօն :

Գրագիրը առանց նշմարելու՝ իր ընկերակիցներուն փոխանակած ակնարկները , շիտակ տնօրէնին սենեակը մտաւ :

— Ի՞նչպէս շնորհակալ ըլլալ , պարոն Քապառօն այն պատիւին համար , զոր ինձի պէս պարզ պաշտօնեայի մը կ'ընէք :

— Ի՞նչ պատիւ , պարոն Քօրնիշօն :

— Այս առտուան գրած նամակնիդ զիս . . .

— Բայց ես ձեզի գրած չեմ :

— Հապա այս առտուան նամակովնիդ Աղջկանս Սօֆիի ձեռքը կը խնդրէիք :

— Ո՞ւր է այդ նամակը , տեսնեմ :

— Դժբաղդաբար հովը թոցուց :

Տնօրէնը անանկ կարծեց որ խեղճ պաշտօնեային կորսնցուցածը միտքին հաւասարակշռութիւնն է , և չուզելով հակառակ խօսելով ծերուկը վշտացնել , ուստի ըսաւ :

— Իրաւունք ունիք , հայր Քօրնիշօն , բայց հիմա ատենը չէ ատոր վրայ խորհելու : Վաղը միասին կը խօսակցինք այդ մասին :

Իրաւ ալ յաջորդ օրը հոգեբան — յիմարաբոյժ մը

զննեց ծերունին և վճիռ տուաւ թէ փառամոլութեան ախտին ծայրագոյն աստիճանէն վարակուած է :

Ամբողջ ամիս մը՝ նախուին գրագրին ճաղատ գլուխը տուշով ջրեցին , և եթէ լերկ գանկին վրայ խոտ չբուսաւ , տակէն սա գաղափարը անեցաւ թէ՝ կրնայ սխալած ըլլալ , և թէ նամակը կրնար գոյութիւն չունենալ :

Հիմա իր պաշտօնատեղին է նորէն , և երբեմն կը խօսի իր անցած հիւանդութեան վրայ : Էնկերները կը վախնան յանցանքնին խոստովանելու , որովհետեւ կրնայ ըլլալ որ վոնտուին :

ԺԱՄԱՑՈՅՑ ՄԼ ԿՏՆՈՂ ՊԱՐԱՆՑ

Հանրակառքին վրայէն նշմարեցի Պրըլօք բարեկամն , որու դէմքն ու հագուստը տակնուվրայ էին : Շուտ մը վար իջայ վազեցի քովը դացի :

— Ատ ի՞նչ է , Պրըլօք , դէմքդ աւրուեր է :

— Մի՛ հարցներ , քիչ մնաց բանտ պիտի երթայի : Կարծեցի թէ անպարկեշտ բան մը ըրած ըլլալու է , ուստի ձայնս խստացուցի :

— Կը սիսակի՛ս , պատասխանեց . . . բանտ պիտի երթայի , որովհետեւ Սեն-Միշէլի ծառուղիին վրայ ժամացոյց մը գտայ եւ հաւատարմաբար տարի Բարիդի առաջին գոմիսէրին յանձնեցի . բայց ի՞նչ կ'ըսես , պատմեմ մտիկ ըրէ :

— Սիրով կ'ունկնդրեմ :

— Աղէկ ուշագրութիւն ըրէ . թող քեղի խրատ ըլլայ ասիկա , երբոր ժամացոյց մը գտնես : Իմ գը-

- Ո՞ւր կը բնակիք :
- Պլանչ փողոց, թիւ 26 :
- Ի՞նչ է ձեր ապրուստին միջոցները :
- Բացարեցի թէ 600 ոսկի եկամուտ ունիմ :
- Ժամը քանի՞ն կար, վեր ի վերոյ, երբ ժամացոյցը գտաք :
- Առտուան Ժամը տասներկուքին :
- Իրա՞ւ, ըստ խօսակիցն ծաղրական շեշտով մը :
- Ի՞նչ կ'ընէիք այդշափ կանուխ Սէն-Միշէլ փողոցին մէջ . դուք որ Պլանչ փողոցը կը բնակիմ կ'ըսէք :
- Ի՞նչպէս, ես կ'ըսէմ :
- Այո՛, դուք այդպէս կ'ըսէք, նայի՞նք . . .
- Բայց ճիշդը կը խօսիմ կոր ես :
- Ատիկա հաստատել պէտք է, ինչ եւ է . հիմա հարցումներուն միայն պատասխան տուէք . այդշափ կանուխ ի՞նչ գործ ունէիք այդ հեռաւոր թաղին մէջ :
- Պա՛հ . բարեկամի մը տունէն երեկոյթէ մը կը վերադառնայի :
- Ասկէ առաջ ուրիշ գատապարտութիւն կրա՞ծ ես, Պրլոք, հարցուց զօմիսէրը :
- Դատապարտութիւն . . . ի՞նչ կ'ըսէք, պարոն, դիմացիննիդ ճանչցէք :
- Խօսքս շաւարտած դիմացինս ոտքի վրայ ցատկեց եւ վրաս խնդալով, Օրէնքն ալ ծաղրել . դուն կ'ըսես թէ անունդ Պրլոք է, թէ Պլանչ փողոց կը նստիս, թէ 600 ոսկի եկամուտ ունիս . բայց ես ինչէ՞ն գիտնամ ասոնց շխտակ ըլլալը . գուցէ այս գտայ ըստած ժամացոյցդ ալ գողցած ես, եւ թէ . . . ոստիկաններ սա մարդուն վրան պլատեցէք :
- Ակնթարթի մը մէջ վրաս գլուխս մերեկացուցեր էին :

- ատածս ոսկիէ խոշոր ժամացոյց մըն էր, շիտակ գացի Տիւրբէ փողոցի առաջին գօմիսէրին եւ խնդրեցի որ քանի մը վայրիեան իրեն հետ տեսակցիմ, ներս մըտցուցին զիս, ուզած մարդս առտուան չօքոլան խմելու վրայ էր :
- Ի՞նչ կ'ուզէք, հարցուց :
- Պարոն գօմիսէր, ըսի, պէտք եղած ձեւով, ձեզի բերի ժամացոյց մը զոր երեկ գիշեր գտայ :
- Խօսքս աւարտելու ժամանակ չտուած գօմիսէրը ոտքի ցատկեց, կրկնելով .
- Ժամացոյց մը . . . ժամացոյց մը . . .
- Յետոյ խօսքն երկու ոստիկաններուն ուզելով .
- Դուռն ինչո՞ւ չէք գոցեր . ջաղացքի պէս ամէն մարդ ներս կը մտնէ դուրս կ'ելլայ կոր :
- Եւ մինչեւ որ հրամանը չկատարուեցաւ, ոտքի վրայ կեցաւ անհանդարտ դիրքով մը : Յետոյ աթուախն վրայ տեղաւորուելէն ետքը .
- Հաճեցէք այդ առարկան ինծի յանձնել :
- Հանեցի իրեն տուի ժամացոյցը զոր անմիջապէս դրամարկղին մէջ դնելով երեք անգամ կլպեց :
- Ո՞ւր գտաք, հարցուց ինծի :
- Սէն-Միշէլի ծառուղիին վրայ, պատասխանեցի :
- Գետի՞նը ձգուած, սալայատակի՞ն վրայ :
- Պատասխանեցի թէ այդպէս է :
- Զարմանալի՞ բան, աւելցուց, վրաս կասկածոտ նայուածք մը ձգելով . ժամացոյցի մը տեղը սալայատակի մը վրայ չէ :
- Իրաւունք ունիք, ըսի ժպտելով :
- Կը բաւէ՛, բացարութիւն չեմ ուզեր, հրամայեց զօմիսէրը, չոր ձայնով մը :
- Ի՞նչ է անուննիդ, հարցուց :
- Անունս տուի :

Այս պատմութեան միջոցին Պըլօքի ձայնը կը դողար տակաւին . իսկ ես զուարթ քահ քահ մը ձըգեցի :

— Եթէ անգամ մըն ալ ժամացոյց մը գտնեմ, կրկնեց բարեկամս, մարդու բան չպիտի հարցնեմ:

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Ամրակում կինը կորսնցուցած է . անդարմանելի կորուստ, խեղճն անմիտար է :

— Ութ օր չտեւեր, կ'ըսէ, երկրի վրայ ոտք չը պիտի դնեմ:

— Անձնասպա՞ն պիտի ըլլաս :

— Ռ'չ, նուով ճամբորդութիւն պիտի ընեմ:

Նամակագրութեան դժուարութիւններ :

— Ինչ որ ալ ըլլայ Ք . . . անուն հանած մարդ է, նամակին գլուխր « Մեծանուն տէր » պիտի դնեմ:

— Զգէ, ապուշը դուն ալ, աւանակին մեծն է :

— Դուն ի՞նչ պիտի դրէիր :

— Բայց պարզապէս « Սիրելի ընկերակիցս » :

— Գիտե՞ս, զոքանչիս հետ ամուսնացայ :

— Ինչո՞ւ համար :

— Երկու զոքանչ չունենալու համար :

Գիւղացի մը՝ բաղդագուշակի մը կը դիմէ ապագան գիտնալու համար :

— Մինչեւ քառասուն տարեկան աղքատ պիտի միաս, կ'ըսէ գուշակը :

— Անկէ հօտքը :

— Աղքատութեան պիտի վարժուիս :

Անգլիացի մը Փրանսուհիի մը հետ կ'ամուսնանայ . մեղրալուսնի ճամբորդութեան միջոցին անանկ կը պատահի որ հանրակառք նստին :

— Օ՛հ, հանգիստ է՞ք, կը հարցնէ ամուսինը :

— Այս, բարեկամ :

— Նստարանը կակո՞ւղ է :

— Խիստ կակուղ :

— Շատ չէ՞ք ցնցուիր կոր :

— Բնա՛ւ :

— Արեւն աչքերուդ չզա՞րներ :

— Ռ'չ, շուք է սիրելիս :

— Օ՛հ, եէ՛ս, տեղերնիդ ինձի տուէք ուրեմն :

Տիկին Մ. իր ամուսինը կորսնցնելու դժբաղդութիւնն ունեցաւ, թարեկամուհի մը կը ջանայ զայն միսիթ արեւ :

— Ինքզինքդ ատանկ մի՛ ձգեր, սիրելիս, սանկ քիչ մը զօրաւոր եղիր ցաւիդ դէմ :

— Ախ, շատ ջղային եմ . . . ձեռքս չէ . . . ասանկ պղտիկ պատճառ մը ջիղերս ոտք կը հանէ :

- Կիրակո՞ս :
 - Էֆէնտի՛ս :
 - Աս նամակները թղթատուն չե՞ս տարեր :
 - Բայց, էֆէնտի՛, ես իմ գործերս չլմնցուցի դեռ, ի՞նչպէս ձերինները կատարեմ:
-

Ոստիկանութեան պահականոցը.

- Ամբաստանեալ, ապրելու միջոցներ ունի՞ս :
 - Հապա՛, տէր նախագահ տեսէ՛ք, և գրպանէն հացի խոշոր կաոր մը կը հանէ :
-

- Տօքթօր, շատ հիւանդ եմ. կովի պէս կ'աշխատիմ, գայլի պէս կ'ուտեմ, շան պէս կը յոգնիմ...:
 - Անանկ է նէ, պարոն, անասնաբուժի մը դեմքէք :
-

Պանքեռներու միջեւ :

- Այս տարի ի՞նչ շահաբաժին վճարեցիր :
 - Անցեալ տարուանին կրկինը :
 - Աղէկ գործերդ յարմարցուցեր ես. անցեալ տարի ի՞նչ վճարած էիր :
 - Ոչի՞նչ :
-

Կենդանիներու ձայնի նմանցնող մարդերու տալնդին վրայ կը խօսուի.

- Ես, կ'ըսէ Ամբակում, բարեկամ մը ունիմ, երբ աքաղաղի ձայն հանէ... արեւը կը ծագի :
-

- Սօփի գծագրութեան մրցանակը առած է. իր պարզեւին, թղթէ պսակին և գծագրութեանը հետ տուն կը դառնայ: Պատկերը կը ներկայացնէ հին հռոմայեցի մը դէմքը:
 - Բայց, կ'ըսէ հայրը, աչքը չե՞ս գծեր:
 - Հայրի՛կ, դպրոցը աչք ընելը արդիլուած է.
-

Ամբակումի ագահութիւնը ամէնուն բերանը ինկած է:

Օր մը ստիպուած ըլլալով հարուստ տիկնոջ մը ծանրագին նուէր մը ընել, անքիւնիի մը խանութը կը մտնայ: Բայց ամէն բան սուղ կ'երեւի իրեն. ի վերջոյ առանց բան մը գնելու դուրս ելլելու վրայ էր երբ կորտած պնակի մը փարբները աչքին զարկաւ:

— Այս ի՞նչ է, հարցուց :

- Ոչի՞նչ, պարոն, սպասաւորը դուրս պիտի նետէ :
- Լաւ ուրեմն, շուտ մը ծրարեցէք այդ կտորները և Տիկին Ք...ի տունը զրկեցէք:

Հրամանը կատարուեցաւ: Ամբակում մոքէն կ'ըսեր: — Երբ ծրարը տիկինին ձեռքը հասնի, պիտի կարծէ որ սպասաւորը տարած ժամանակը կոտրած է: Այս գաղափարէն ոյժ առած՝ անմիջապէս կ'երթայ տիկինին այցելութիւն մը տուլու: Քիչ մը ետքը պնակն ալ կը հասնի: Ամբակում կը պատրաստուի պնակը բերողին անձարակութեանը վրայ հայհոյանքներ թափելու, երբ ծրարը կը քակուի, սոսկո՞ւմ... պնակին ամէն մէկ վշտուած կտորը զատ թուղթերու մէջ ծրարուած էին:

Նիակարայի ջրվէժին մօտ,
Զբոսաւշը մը .— Արդեօք ջրվէժին մօտեցա՞նք .
Առաջնորդը .— Սյո՛, պարոն, գրեթէ քովմ ենք .
Եթէ տիկինները հաճին քիչ մը լռել, ջրվէժին հա-
նած սոսկալի աղմուկը պիտի լսենք :



Թ» Օ Թ» Օ

Կէս օր է : Հայրիկը սանդուղէն վեր կ'ելլէ դան-
դաղ քայլերով կէսը չհասած դեռ, սովորական պոռ-
չըտուքներուն ձայնը կ'առնէ :

— Նորէն Թօթօն սկսեր է , թշուառականը սկսաւ
տունը տեղը տակնուվրայ ընելու :

Թօթօ մէկհատիկ տղան է տունին . կը հասկնաք
թէ ամէն բան անոր հրամանին յատկացուած է . հա-
պա եթէ տղան ելլայ բան մ'ըլլա՛յ : Եւ գիտէ՞ք, պըզ-
տիկ պատճառէ մը , չեխելէ մը , տղան բան մը կ'ըլ-
լայ , կը մեռնի : — Թօթօ ալ գիտէ թէ պզտիկ բանէ
մը կը մեռնի ինք , ուստի ուզածը չուուածնուն պէս
ձայնը կը ձգէ . անանկ ձայն մը որ սպասուհիններն
ահարեկ վեր կը վազցնէ եւ դրացի պառաւները պա-
տուհան կը հանէ :

Հայրիկը սանդուղին վրայէն կը գուշակէ տղուն
վիճակը և նեղացած շարժումով մը գուաը կը զարնէ :

— Քիչ մը կամաց զարնէիր , տղուն հանած աղ-
մուկը բաւական է :

— Ի՞նչ եղաւ նորէն , ստահակը ,
— Սպասուհին չեխեց զայն :

— Սուս եղի՛ր , աղմոր տղաս , Մարիամ չար աղ-
իկ մըն է . ցամաք հաց պիտի ուտէ :

Եւ մայրիկը՝ տղուն մազերուն գանգուրները կար-
դի կը դնէ ու մարգարտանման արցունքը կը սրբէ :

— Հիմա՛ ապուր պիտի ուտես . . . գիտե՞ս ապուրն
կը մեծցնէ քեզի . . . մայրիկին ճատո ըրէ . . .

Թօթօ բնաւ տեղէն չերերար :

— Ա՛ռ , նայէ , ի՞նչ աղմոր դգալ է ,

Թօթօ դգալը կ'առնէ եւ . . . բռա՛ֆ պատուհանէն
դուրս կը նետէ ապակին կոտրելով :

— Զե՛մ ուզեր . . . նա՞ :

— Զափը կ'անցնի կոր . կ'ըսէ հայրիկը , ապուրդ
խմէ , եթէ ոչ կը սորվեցնեմ քեզի :

Իրը պատասխան , Թօթօ պնակը կ'առնէ եւ պաղ-
արիւնութեամբ , հօրն աչքին մէջ նայելով , դգալին
ետեւէն դուրս կը նետէ :

Ակնթարթի մը մէջ , պատմելու համար պէտք ե-
զածէն աւելի քիչ ժամանակի մէջ . հայրիկը կը բռնէ
Թօթօն եւ վերի սենեակը տանելով՝ ուր հին կարա-
սիներ լեցուած էին , հոն կը ձգէ ու վրայէն կղպելով
վար կուգայ սեղան նստելու :

— Քիչ մը հանգիստ ուտենք հացերնիս , կ'ըսէ ,
բայց տեսնելով որ մայրիկն աչքերը վար կ'առնէ :

— Ի՞նչ , գէ՞շ ըրի , կ'աւելցնէ : Քիչ մըն ալ մնար՝
երեսնիս թքներ պիտի :

— Թքնելի ի՞նչ ըսել է : Տղան ապուրը չուտեր , գուն
ալ բռնի կերցնել կ'ուզես : Քու չսիրած կերակուրդ
եթէ եփեմ , վրան անգամ չես նայիր . հիմա ելեր
պզտիկ տղան կ'ստիպես որ ընէ , ինչ որ դուն չես
կրնար ընել . . .

Հայրլ . . .

Նէ . — Եթէ գործիդ մէջ նեղացար այսօր , պատ-

Ճառ մը չունիս բարկութիւնդ տղուդ վրայ առնելու :
 Հայր. — Գէ՛շ ըրի կ'ըսես ;
 Նէ. — Մահիկ ըրէ՛ :
 Իրաւ ալ, սոտահակը, ձայնը վարի յարկէն իմացը-
 նելու համար կրցածին չափ կը պօռար ;
 Հայր. — Գնա՛ վար բեր սըվիկա :
 Մայրիկը կը վազէ եւ թեւերուն վրայ առած կը
 բերէ Թօթօն, կասկարմիր կտրած, բարկութենէն
 հեւալով :
 — Խե՛ղճ տղայ : Տե՛ս, արիւնը դարձեր է . . . ա-
 նուշ, նայէ՛, սա միսէն կ'ուտե՞ս ;
 — Զէ՛ :
 — Ինծի սիրելդ ցուցունելու համար ;
 — Զէ՛ :
 Եւ Թօթօ պնակը անդին ասդին կը հրմշտկէ :
 — Հապա ի՞նչ կ'ուզես, ըսէ աեսնեմ :
 — Նա՛ կ'ուզեմ, կ'ըսէ Թօթօ, եւ մատովը սեղանին
 վրայ սոսինձի ամանը ցոյց կուտայ :
 — Բայց անիկա սոսինձ է, տղաս, չե՞ս գիտեր
 մէկտեղ պատկերներ փակցուցինք անով :
 — Անկէ կ'ուզեմ :
 Հայր. — Ի՞նչ կը տուտուայ նորէն :
 Նէ. — Սոսինձը կ'ուզէ :
 Հայր. — Խե՞նդ է, ի՞նչ է :
 — Նորէն մի սկսիր, Աստուածդ սիրես : Սոսինձը
 կ'ուզէ կոր նէ, կտոր մը տուր :
 — Ա՛ս, թշուառական, կեր որ կոկորդդ փակչի,
 Աստուած տար լեզուդ փակչէր, ձայնդ կարէիր :
 — Ի՞նչ անսիրտ մարդ ես :
 Թօթօ հեծկլտալ կ'սկսիր հայրիկը սոսինձին ամանը
 մէկ ձեռքն անոր կ'երկնցնէ, Թօթօ չունչը կը ծան-
 րացնէ՝ նշան է թէ նորէն պօռալ պիտի սկսի :

— Նայինք, նորէն ի՞նչ պիտի ուզես :
 — Առաջ դուն կեր :
 — Ի՞նչ, սոսինձը ուտե՞մ :
 — Հա՛, կեր :
 — Սոսինձէն մարդ չմեռնիր, ի՞նչ կ'ըլլայ սանկ
 քիչ մը առնես նէ, աւելցուց մայրն :
 — Շնորհակալ եմ, կշտացայ :
 — Գէթ ուտելու պէս մը ըրէ, դուրսը կը թքնես :
 — իւհի՛ւ . . . իւհի՛ւ . . . իւհի՛ւ . . .
 Հայրը զինաթափ, դգալը սոսինձին երեսը կը
 պտտցնէ եւ բերանը կ'առնէ առանց կլլելու՝ դէմքը
 ծամածուելով :
 Մայրը յաղթական, կը գրկէ Թօթօն, — Տեսա՞ր
 աղաս, ի՞նչ աղւոր հայրիկ է :
 Թօթօ կատաղութեամբ դէպի ետեւ կը նետուի
 եւ դէմքը բարկութենէն կասկարմիր կտրած կը պօռայ .
 — Հա՛ . . . ամբողջ երեսի սերը ան կերա՞ւ . . .
 ամբողջ սերը կերա՞ւ . . . :

Թարգմ.

Զ. Ն. ՊէրՊէրԵԱՆ

Գ Ի Ւ Պ Ա Յ Ա Ր Ա Ր Ա Ր

Գիւղերու տուներու ներքին և արտաքին կազմա-
 կերպութիւնը մեծ մասամբ առողջութեան հակա-
 ռակ է :

Գաւառներու տուները առհասարակ հերբին ըսուած
 հողէ և յարդէ խորիչ բաղկացած աղիւսներով շին-
 ուած են, այս պատճառաւ տուներու մէջ փոշին ան-
 պակաս է : Մաքրելու համար երբ աւել սկսին փո-
 շի ամպ մը կը կազմեն, որու վասակար մթնոլոր-

տին մէջ շնչելով բնականաբար կը վնասուի առողջութիւննին : Հարկ է ուրեմն աւելիէ առաջ սենեակը ջուր սրսկել ու յետոյ թեթեւ և կամաց աւելի, որպէս զի փոշիները օդը չլեցուին :

Դեղջակական տուներու մէջ փոշիի շատութեան մէկ պատճառն ալ իրենց երկրագործական զբաղմունքն է, այսինքն հողի և յարդի փոշիներու մէջ գործելէ վերջը, առանց մաքրուելու տուն կը մտնեն : Միշտ մաքուր պահելու համար, հարկ է, սովորական հագուստներէ զատ, հողագործութեան համար յատկապէս շինուած հագուստները ունենալ, զորս տուն մտած միջոցին հանելով՝ սովորական հագուստները հագնին, ինչպէս որ շատ մը երկիրներու հողագործները կ'ընեն, որով իրենց բնակարանները կը մնան միշտ մաքուր :

Գաւառական տուներու համար քոնիր ըսուած կրա կարանները անհրաժեշտ դարձած են, թէ՛ կերակուր ու հաց եփելու և թէ՛ ձմեռը տաքնալու համար : Հացի և կերակուրի թոնիրները ձմրան մէջ երկու տեսակ վնաս կը պատճառեն : Նախ կերակուրներէ ելած շոգին, որ երբեմն գարշելի հոտ մո ունի, թոնիրը նստողներուն մեծապէս կը վնասէ, շատ անգամ հիւանդները և նորածին մանուկները տաք մնալու համար թոնիրին վերմակներուն տակ կը պառկեցնեն, որ չափազանց վնասակար սովորութիւն մըն է : Երկրորդ թոնիրներու վերմակներու ներքեւ նըստելով տաքնալ ուզողները, յաճախ տաք տեղերնուն ցուրտը ելլելով սրզը ու են (բիւմաթիզմ) ըսուած հիւանդութեանց ենթակայ կ'ըլլան . ուրեմն թոնիրները նստելու սովորութիւնը վնասակար ու հակառազարանական է, թոնիրները՝ նստելու կամ պառ-

կելու սենեակներուն մէջ շինելու չէ, այլ անոր համար տեղ մը որոշելու է :

Գեղջկական տուներու մէջ լուսաւորման միջոցները զանազան են . որոնց մէջէն վնասակարներն են, առանց շիշի կազի լամբարներ գործածել պարզ պատրյագով, որմէ ելած մուխին չվարժուողը կարծես պիտի խեղդուի : Այս սովորութիւնը գրեթէ ամէն տան մէջ ընդհանրացած է . իրենց հին և մաքուր սովորութիւնը, այսինքն մոմ վառելը ձգելով հետեւած են քաղաքակրթութեան միայն կեղեւին : Ուրեմն խպառ ջնջելու է առանց շիշի կազի լամբարներ գործածելը, և պիտի համարձակիմ ըսել թէ՛ այն գիւղացին որ Պոլիս մասնաւոր վարժութիւն ըրած չէ կազի լամբարի գործածութիւնը, երբէք տունը կազմացնելու չէ : Ամենաաղքատ գիւղացին եթէ իր տունը լուսաւորել ուզէ, մոմ պէտք է գործածէ և կամ եթէ մոմ վառելու կարողութիւն չունի . կազէն աւելի լաւ է վառել իւղուա մարխ (շրջա) :

Թոնիրէն զատ, գաւառական տուներու մէջ օճախներ կան ուր կը վառեն լուացք ընելու և կերակուր եփելու համար փայտ, որմէ ելած մուխը կը լեցուի ամբողջ շէնքին մէջ և կը վնասէ աչքերու և թոքերու : Ասոր իբր գարման օճախները լաւ կերպով շինելու է, այնպէս որ երբէք մուխը դուրս շտան :

Պառկելիք և նստելիք սենեակները, գըֆարի և մալի ախոռներու հետ հազորդակցութիւն ունենալու չեն, անկից բուրած վնասակար և գարշահոտ օդն առողջութիւնը կը խանդարէ : Երկյարկ տուներու մէջ ընդհանրապէս ախոռի վրայ կը շինեն ձմրան սենեակները, որպէս զի անասուններու շունչով տաք մնան . Չափազանց վնասակար և տգէտ գաղափար մըն է այս . այդ կարգի սենեակներուն օդը վնասա-

կար նիւթերով լեցուն է, որ յառաջ կուգայ անտառուններու շունչն . Ուրեմն պէտք չէ ախոռներու վրայ սենեակ շինել և ախոռներու մէջ պառկիլ : Այս բարեկարգութիւնները մեծ ծախքերու չեն կարօտիր, ի՞նչ որ պիտի ծախսուի սխալ և վնասակար եղանակով շինուած գեղջկական տան մը, նոյն ծախքը կ'երթայ նաև առողջաբանական տեսակէտով շինուած տան մը համար :

Գիւղացին՝ մարդութիւնը ամէն բանի մէջ իրեն նշանաբանն ընելու է. մաքուր պառկելու է, կերակուրի ամանները, սենեակները, վերջապէս ամէն բան :

* * *

ՆՅԱՆ Վ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

Կ. Պոլիս, Պապը Ալի Ճաստէսի, Խօսամ լրագրին դեմ

ԹԻՒ Յ Տ Տ

5345-5346

